Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

A 44632 [illegible]

[illegible]

55

7/VII 70	31/VII 52		1319

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

Г. Б. ДЖАУКЯН

АРМЯНСКИЙ И ДРЕВНИЕ ИНДОЕВРОПЕЙСКИЕ ЯЗЫКИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

A 44632

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

Խմբագրությամբ

Է. Բ. ԱՂԱՅԱՆԻ

7—1—3

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայերենի և Բալկանյան թերակղզու ու Փոքր Ասիայի հին լեզուների փոխհարաբերության հարցերը միշտ էլ գտնվել են հայոց լեզվի պատմության և հայերենի համեմատական քերականության մասնագետների ուշադրության կենտրոնում։ Այդ հարցերի ուսումնասիրության մեջ իրենց կարևոր լուման են մուծել նաև հայ գիտնականները, մասնավորապես, Հ. Տաշյանը, Հ. Աճառյանը և Գ. Ղափանցյանը։ Նրանց աշխատություններում բերված փաստական հարուստ նյութը ժամանակին խիստ կարևոր է եղել։ Սակայն վերջին տասնամյակներում հնդեվրոպական հին, անհետացած լեզուների ուսումնասիրության բնագավառում կատարված հսկայական առաջընթացը անհրաժեշտ է դարձնում վերստին անդրադառնալու այդ լեզուների և հայերենի փոխհարաբերության հարցին՝ նկատի ունենալով հայոց լեզվի ծագման ու վաղ պատմության համար դրանց ունեցած ողջ կարևորությունը։ Այս նպատակով է, որ վերջին տարիներս ձեռնարկել ենք հայերենի և իլիրերենի, հին մակեդոներենի, թրակերենի, պելասգերենի, փռյուգերենի, խեթերենի (նեսիտերենի), լուվերենի, պալայերենի, հիերոգլիֆյան խեթերենի, լիկիերենի, լիդիերենի, կարիերենի փոխհարաբերության հարցերի ուսումնասիրությունը։ Այդ ուսումնասիրության արդյունքները 1967—1968 թթ. ընթացքում հրատարակվել են առանձին հոդվածների ձևով զանազան պարբերականներում՝ «Պատմա-բանասիրական հանդես» («Հայերենի և խեթա-լուվիական լեզուների բառային կազմի ծագումնային զուգադիպումները», 1967, № 4, «Հայերենը և փռյուգերենը», 1968, № 2), «Բանբեր Երևանի համալսարանի» («Հայերենի բառապաշարի խեթա-լուվիական տարրերը», 1967, № 2, «Հայերենը և թրակերենը», 1968, № 2), «Հասարակական գիտությունների լրաբեր» («Հայերենը և պելասգե-

րենը» 1967, № 7, «Հայերենը և հին մակեդոներենը», 1968, № 8)։ Ներկա աշխատության մեջ դրանք ակնարկների ձևով ի մի են բերված՝ ենթարկվելով մասնակի ճշտումների ու փոփոխությունների։ Առանձին դեպքերում կատարված են հավելումներ, և ամբողջովին ավելացված է հայերենի ու խեթերենի փոխհարաբերության հարցին նվիրված մի հատված։

Հեղինակը համոզված է, որ ներկա աշխատությունը կնպաստի հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման ու վաղ պատմության հարցերի լուսաբանությանը, այլև խթան կդառնա հետագա ավելի խորացված ուսումնասիրությունների համար։ Այն չի կարող չհետաքրքրել նաև հնդեվրոպական հին լեզուների բոլոր մասնագետներին, որոնց համար հայերենը եղել է և մնում է համեմատության կարևոր եզրերից մեկը։

Հեղինակը սիրով կընդունի բոլոր օգտակար դիտողությունները և դրանք հաշվի կառնի հետագա աշխատանքների ժամանակ։

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԻԼԻՐԵՐԵՆԸ

§ 1. *Իլլիրիացիները Եվրոպայի ամենաբազմամարդ հին ժողովուրդներից մեկն են եղել։ Հնդեվրոպական միասնության շրջանում իլլիրիական ցեղերը արևելքից սահմանակից էին բալթերին-հյուսիս-արևմուտքից՝ վենետներին։ Հետագա տեղաշարժերի հետևանքով նրանք բնակություն են հաստատում Բալկանյան թերակղզում և հյուսիս-արևելք ընկած շրջաններում՝ սահմանակցելով հյուսիս-արևմուտքից դարձյալ վենետներին, արևելքում՝ թրակացիներին, հարավում՝ մակեդոնացիներին ու հույներին, ընդ որում սահմանակից վայրերում եղել են խառը բնակչություն ունեցող շրջաններ։ Իլլիրիացիների բնակության տերիտորիան տարածվել է Էպիրոսից մինչև Դանուբ գետը։ Բուն իլլիրիական շրջաններ են համարվում այժմյան Ալբանիայի և հին Դալմատիայի ու Պանոնիայի տերիտորիաները։ Սակայն իլլիրիացիների՝ այլ ժողովուրդների հետ ունեցած տևական շփումը և տեղաշարժերը խիստ դժվարացնում են բուն իլլիրիական տերիտորիաների և լեզվական մնացորդների որոշումը։ Նախկինում իլլիրիական էին համարվում նաև մեսապական և վենետական ցեղերը, որոնց լեզուների՝ անկախ միավորներ լինելու հարցը այժմ կարելի է հիմնականում լուծված համարել։ Որոշ հեղինակներ իլլիրիացիներին արտակարգ լայն տարածում են վերագրում, և գրեթե ողջ Եվրոպայում իլլիրերենի հետքեր որոնում։ Այս կապակցությամբ է, որ խոսում են այսպես կոչված «պանիլլիրիզմի» մասին։ Հարցը բարդանում է նաև նրանով, որ մ. թ. ա.* IV *դ. իլլիրիացիների տարածման տերիտորիան են ներխուժում կելտերը և այն ողողում լեզվական օտար տարրերով։ Մինչ այդ իլլիրիացիները կելտերի հետ հեռավոր շփման մեջ են եղել։ Կարծիք կա, որ թրակացիների հետ միասին Փոքր Ասիայում երևացել են նաև իլլիրիական որոշ խմբեր։ Թրակյան և իլլիրիական տարր է ենթադրվում Տրոյայի* VII b *շերտում։*

Մ. թ. ա. III դ. Ադրիատիկական ծովի հյուսիս-արևելյան մասում առաջանում է իլլիրիական ինքնուրույն պետությունը, որ իր իշխանությունն է տարածում իլլիրիացիների բնակության մի մասում: Սակայն շուտով այդ պետությունը ստիպված է լինում երկարատև պայքարի մեջ մտնել հռոմեացիների հետ իր ինքնուրույնությունը պահպանելու համար: Մ. թ. ա. 229—228 թթ. և 219 թ. տեղի են ունենում հռոմա-իլլիրիական առաջին և երկրորդ պատերազմները: Երկարատև պայքարը ավարտվում է Հռոմի հաղթանակով, որ մ. թ. ա. 29 թ. կազմում է Իլլիրիկյան պրովինցիան բաղկացած Դալմատիայից (Վերին Իլլիրիկ) և Պանոնիայից (Ներքին Իլլիրիկ): Իլլիրիայում սկսվում է ռոմանացման ուժեղ պրոցես: Կոստանդին կայսեր (306—307) ժամանակ Բալկանյան թերակղզում կազմվում է Իլլիրիա պրեֆեկտուրան: V դ. այն ընկնում է վեստգոթերի և ապա օստգոթերի իշխանության տակ: VI դ. կեսերից ուժեղանում է սլավոնական տարրը և աստիճանաբար գերիշխանություն հաստատում:

§ 2. Իլլիրերենը հնդեվրոպական լեզու է և, ինչպես նշվել է, սկզբնապես միջին տեղն է գրավել բալթիական և վենետական լեզվական նախավիճակների միջև՝ կազմելով սատեմային լեզուների նախավիճակի արևմտյան սահմանը: Իլլիրերենը հետագա շփումների ու կապերի շնորհիվ ձեռք է բերում այնպիսի նոր տարրեր, որ դժվարացնում են նրա բնույթի որոշումը: Հետազոտողների մի մասը այն համարում է կենտումային, մյուս մասը՝ սատեմային լեզու: Սակայն այժմ կարելի է պարզված համարել, որ սատեմայնությունը իլլիրերենի համար բնորոշ գիծ է, իսկ կենտումային գծերը արդյունք են կամ սատեմային և՛ կենտումային նախավիճակների սահմանում գտնվելու կամ կենտումային ենթաշերտի ու փոխառությունների: Այս կապակցությամբ առաջ է քաշված իլլիրա-ալբանական լեզվական փոխհարաբերության հարցը: Ոմանք իլլիրերենը համարում են ալբաներենի ուղղակի նախորդը, մյուսները ավելի հակված են ալբաներենը բխեցնելու թրակերենից: Հարցի վերջնական լուծումը կախված է իլլիրերենի և թրակերենի վերաբերյալ մեր գիտելիքների ծավալից, որ առայժմ չի կարելի գոհացուցիչ համարել:

Իլլիրերենը կապակցված տեքստեր չունի: Միակ քիչ թե շատ հավաստի իլլիրիական արձանագրությունը երեք բառից է բաղկացած: Գլոսսաների թիվը ևս մեծ չէ: Իլլիրերենի վերաբերյալ մեր իմացության գլխավոր աղբյուրը հատուկ անուններն են, որոնցից

համեմատաբար վստահելի են աշխարհագրական անունները. անձնանունները ավելի քիչ են վստահելի՝ շնորհիվ իրենց շրջիկության և հեշտ փոխառելիության։ Իլլիրիական հատուկ անունների թիվը հազարից անցնում է, բայց դրանց բուն իլլիրիական լինելու հարցը շատ դեպքերում դժվար լուծելի է կամ անլուծելի։ Իլլիրիական անձնանունները գերազանցապես միահիմք են. բարդ անձնանունները մեծ թիվ չեն կազմում (շուրջ երեք տասնյակ)։ Մեծաթիվ չեն նաև բարդ տեղանունները (հինգ տասնյակ)։

Մոտավոր հաշիվներով իլլիրիական հատուկ անուններում պահպանված հնդեվրոպական արմատների թիվը երկու հարյուրից անցնում է[1]։

§ 3. Իլլիրերենը բնութագրվում է հնչյունական հետևյալ առանձնահատկություններով[2]։

1) Հ.-ե. շնչեղ ձայնեղները (bh, dh, gh) ներկայացված են որպես պարզ ձայնեղներ (b, d, g)։

2) Հ.-ե. պարզ ձայնեղները (b, d, g) սովորաբար ներկայացված են որպես պարզ ձայնեղներ (b, d, g)։ Ձայնեղների և խուլերի որոշ տատանումը (b, d, g-ի փոխարեն p, t, k) բացատրվում է մասամբ դիրքով (ձայնորդներից, հատկապես r-ից հե-

---

[1] Իլլիրերենի համար հիմնական աղբյուրներ են ծառայել հետևյալ աշխատությունները. *H. Krahe*, Lexikon altillyrischer Personennamen, Heidelberg, 1929. Նույնի Die Sprache der Illyrer. I. Die Quellen, Wiesbaden, 1955. Նույնի Die Struktur der alteuropäischen Hydronymie, „Abh. d. Ak. d. Mainz", 1962, էջ 287—342. *J. Pokorny*, Urgeschichte der Kelten und Illyrer, Halle, 1938. Նույնի Indogermanisches etymologisches Wörterbuch, Bern, 1959. *A. Mayer*, Die Sprache der alten Illyrer. I—II. Wien, 1957—1959.

[2] Ի. Ի. Ռուսուն („Вопр. языкозн.", 1956, 4, էջ 81) թրակերենի և իլլիրերենի միջև տեսնում է հնչյունական հետևյալ ընդհանուր գծերը՝ անորոշ երանգի ձայնավորների առկայությունը (a—e տատանումը), ձայնեղ և խուլ բաղաձայնների արտասանության առանձնահատկությունները (այդ թվում շնչեղների շնչի թուլությունը), o—a տատանումը, բաղաձայնների տարբերային (սպոնտանային) կրկնությունը և այլն։ «Հնչյունների այս խմբի ներսում,— նշվում է այնուհետև,— կան բարբառային կարգի տարբերություններ (երկբարբառայնության բնույթը, սկզբնային վանկի թուլությունը, պալատականների այսպես կոչված «հորիզոնական» քմայնացումը), որոնք չեն համընկնում հյուսիս-բալկանյան հին լեզուների բաժանման հետ թրակյանների և իլլիրիականների»։ [Իլլիրերենի և թրակերենի կարևոր տարբերություններից մեկն էլ համարվում է իլլիրերենին հատուկ t—k, p—k, d—g, b—g տատանումը, որ չկա թրակ. անունների մեջ և կա դակո-ռոմանական լեզվում։

տո), մասամբ լեզվական որոշ (միջերկրակա՞ն) ենթաշերտի ազդեցությամբ:

3) Հ.-ե. խուլերը (p, t, k) ներկայացված են որպես պարզ խուլեր (p, t, k)։ Իլլիրիական անունների գրառման ժամանակ երբեմն նկատվող տատանումը պետք է համարել հիմնականում միջերկրական (?) ենթաշերտի ազդեցության արդյունք:

4) Հ.-ե. քմայնացած ետնալեզվայինները (g'h, g', k') ներկայացված են սովորաբար որպես z, s, այսինքն՝ իլլիրերենը սատեմային լեզու է։ Հակառակ փաստերը, երբ g'h, g', k'-ի դիմաց առկա են կենտումային լեզուներին հատուկ ետնալեզվայիններ՝ g, k, բացատրում են կամ որպես փոխառություններ, կամ որպես կենտումային և սատեմային շրջանների սահմանում եղած տատանումներ (հմմտ. իլլր. kleu- «համբավ» և հ.-ե. k'leu- «լսել»), կամ էլ որպես հ.-ե. քմայնացած (դեռևս չշփականացած) ետնալեզվայինների ապաքմայնացում։

5) Հ.-ե. շրթնայնացած ետնալեզվայինները (g^uh, g^u, k^u) ներկայացված են որպես չշրթնայնացած ետնալեզվայիններ (g, k)։ Շրթնայնացած ետնալեզվայինների դիմաց շրթնային բաղաձայնների առկայությունը (b, p) պետք է դիտել որպես ոչ իլլիրիական լեզվական ներդրում։

6) Հ.-ե. s-ն իլլիրերենում պահպանվում է։

7) Հ.-ե. ոչ վանկարար ձայնորդները (r, l, m, n, i̯, u̯) իլլիրերենում պահպանվում են (r, l, m, n, i̯, v)։

8) Իլլիրերենում տեղի են ունենում բաղաձայնական խմբերի հետևյալ փոփոխությունները՝ ա) առաջնալեզվային պայթականների անկում s-ի մոտ. բ) պայթականների և ձայնորդների, այլև նայերի ու ռնգայինների կապակցությունների մեջ տեղի է ունենում առնմանում և պարզում՝ dl, tl>ll. bn, pn>m. ln>n[2]. գ) բաղաձայնների և i̯-ի կապակցությունների մեջ տեղի են ունենում զանազան փոփոխություններ՝ ti̯>s, di̯>z, si̯>ss, ni̯>nn, ri̯>rr, li̯>ll. Հիշյալ պատճառներով իլլիրերենում կրկնավոր բաղաձայնները բավական տարածված են. դ) առկա են առնմանության և տարնմանության զանազան դեպքեր։

9) Հ.-ե. ձայնավորների քանակական և որակական տարբերությունները հիմնականում պահպանվում են, կարելի է հիշել միայն ŏ>a փոփոխությունը։

10) Հ.-ե. երկբարբառները պահպանվում են հիմնականում որպես երկբարբառներ, միայն թե ei-ը փոխվում է ī-ի։ Կարճ o

[2] Այս փոփոխությունը կա և հայերենում՝ *pel-nu-mi>ելնում:

պարունակող երկբարբառներում այն փոխվում է a-ի (հ.-ե. oi, ou> իլիր. ai, au)։

11) Հ.-ե. ə-ն փոխվում է a-ի։ Նշենք նաև ṛ(r)>i և ḷ(r)>u անցումները։

§ 4. Իլիրերենի և հայերենի փոխհարաբերության հարցին հատուկ ուսումնասիրություն չի նվիրվել, թեև իլիրերենի հետազոտողները օգտագործել են և հայերենի նյութը։ Իլիրերենի և հայերենի հնչյունական փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով (անտեսվում է բառասկզբի դիրքը)։

Հ.-ե.	Իլիր.	Հայ.	Հ.-ե.	Իլիր.	Հայ.
bh	b	բ	ṛ	ri	ար
dh	d	դ	ḷ		ալ, աղ
ǵh	z	ձ	ṃ		ամ
gh	g	գ	ṇ	a	ան
$g^{u}h$	g	գ	i	i	ի
b	b	պ	ī	ī	ի
d	d	տ	u	u	ու
ǵ	z	ծ	ū	ū	ու
g	g	կ	e	e	ե
g^{u}	g	կ	ē	ē	ի
p	p	հ	o	a	ո
t	t	թ	ō	ō	ու
ḱ	s	ս	a	a	ա
k	k	ք	ā	ā	ա
k^{u}	k	ք	eu	eu	ոյ
s	s	հ, յ, —	ou	au	ոյ
r	r	ր	au	(au)	աւ
l	l	լ, ղ	ei	i	է
m	m	մ	oi	ai	է
n	n	ն	ai	(ai)	այ
i̯	i̯	ջ	ə	a	ա
u̯	v	գ			

§ 5. Իլլիրերենի և հայերենի միջև կարելի է սահմանել ձայնային հետևյալ զուգադիպումները.

1. Հ.-ե. bh, dh, gh.

bantiā «տեղ, վայր», baurium, bariam «տուն», bullid [bhō(u)-dhlo-, -tlo-] «ամրոց, ապաստան», bun-, but- «բնակվել» (հ.-ե. bheu- «աճել, ծագել, դառնալ, լինել, բնակվել». հմմ. հին հնդկ. bhav-ana-m «տուն»)— բուն, բույն, բույս.

bel-: bal- «սպիտակ» (հ.-ե. bhel- «փայլուն, սպիտակ») — բալ «մեգ».

berz-: barz-: briz- «բարձր», այլև burg «ամրոց, ապաստան»[4] [հ.-ե. bher(e)g'h- «բարձր»]— բարձր, բերձ, բարձում.

blōd- «ծաղկել» (հ.-ե. bhlē-, bhlō- «ծաղկել», bhlō-d-՝ bhel-ից «ուռչել, բխել»)— բեղուն, բեղմնաւոր, բողբոջ, բող, բողկ, թերևս նաև բղխել.

damas- «բնակավայր» (հ.-ե. dhē- «դնել»)[5]— դնեմ, դիրք.

del(m)- «ոչխար» [այլ. dels, delms «ոչխար»՝ dhē(i)-ից «ծծել, ծծել տալ, սնել»]— դալ, դալլ, դիեմ[6].

dizā «ամրոց, ապաստան» (հ.-ե. dheig'h- «կավը թրծել և դրանով ծեփել, շինել»)— դէզ, դիզանեմ.

dokl- «ապաստան», թերևս նաև Dualis— Դիոնիսիոս (հ.-ե. dheu- «փոշիանալ, պատվել. փոշի, ծուխ, գոլորշի», dhoukl-) — դեղնիմ, դի.

durn- «բնակարան» (հ.-ե. dhuer- «դուռ»)—դուռն.

auda- «երջանկություն, հարստություն» (հ.-ե. audh- «երջանկություն, առնեցվածք, հարստություն», au-, aue- «հյուսել, գործել»)—գ-ուդ, գ-ուդեմ, յուդ, ուդ «երշիկ».

glavas «խելոք» (հ.-ե. ghleu-: ghlau- «ուրախ լինել, կատակել»՝ ghel-, g'hel-ից «փայլել, շողալ»)— ձաղ «ծաղր. ծաղրելի», ձաղել «ծաղրել, հեգնել, հաղթել, նվաստել».

2 Հ.-ե. b, d, g.

da- «տալ», dōt- (եթե կապ չունի իլիր. daut «տուր, գետակ» բառի հետ) (հ.-ե. dō- «տալ»)— տամ, տուրք.

---

[4] Ա. Մայերը իլիր. բառը համարում է փոխառություն գերմաներենից։

[5] Ա. Մայերը մերժում է կապը dem- «կառուցել» արմատի հետ, որտեղից հայ. տուն։

[6] Դակյան բառը, որ գտնում են այստեղ, հավանաբար իրան. փոխառություն է։

dasimas «տասներորդ» (հ.-ե. dokʹьmos՝ dokʹm̥-ից «տաս»)— տասն.

dē «Զևս, աստված» (հ.-ե. dieu-՝ dei-ից «շողալ, փայլել»)—տիւ, ինչպես նաև տի- (տի-այր>տէր, տի-կին, տի-եզերք բառերում).

deru- «ծառ, անտառ» [հ.-ե. dereu(o)- «ծառ»]— տրամ, տարգալ.

di- «երկու», dita- «երկրորդ» [հ.-ե. duō(u), dui-, di- «երկու», d(u)i-to- «երկրորդ»]— երկու, երկի-, երկո-.

dra-, dri- «վազել» (հ.-ե. der- «վազել»)— արտորալ «շտապել, փութալ»[7].

ud-r/n- «ջուր» (հ.-ե. ued-, ud-r/n- «թրջել, հոսել»), այլև adri- «ծայր, խութ» (uədriā՝ ued-ից)[8]— գետ, -ոյ.

3. Հ.-ե. p, t, k.

palā «լեռնային մարգագետին» (հ.-ե. pelə-, plā- «լայն և հարթ»)— հող.

pantas «հինգերորդ» [հ.-ե. pьnkᵘtos՝ penkᵘtos-ի («հինգերորդ») կողքին, penkᵘe «հինգ»]— հինգ.

par «մոտ, երկարությամբ», per- (per-rēn «առջևից, առաջ» բառում), prāvas «առաջինը» (հ.-ե. per-, pr-, pьr- «առաջ, միջով, գլխը»)— առ, հեռի.

pard- «անցահուն, ծանծաղուտ» (Pardua տեղանվան մեջ) (հ.-ե. per- «անցկացնել, անցնել», por-dh-, որտեղից հուն. πορ-θ-μός «անցահուն, ծանծաղուտ, գետանց»)— հորդ «կոխված, շիտակ (ճանապարհ)», հորդեմ «ճանապարհ բանալ, մաքրել, պատրաստել», հորդիմ «երթալ, տարածվել», այլև հերթան.

patur «հայր» (հ.-ե. pətḗr «հայր»)— հայր.

pelag-, pelvā, pelso- «ծով», pels- «դժգույն» (հ.-ե. pel- «գորշ, դժգույն»)— ալի-ք, ալի- (ալեհեր բառում).

pet-unt- «զառիվայր» (հ.-ե. pet- «վրա ընկնել, թռչել, ընկնել»)— թռչիմ, թաքչիմ, թեր, թերթ, թիթեռն.

---

[7] Հայ. բայի ստուգաբանությունը հեղինակինն է։

[8] Որպես «ջրային» (?)։ Ա. Մայերը հնարավոր է համարում բառի համեմատությունը նաև հին հնդկ. adri- «սար, ժայռ» կամ ավ. adu- «առու», լիտ. ad-menis «գետաբերան», հուն. ὄζος «ճահիճ» բառերի հետ (հ.-ե. ad-<akᵘ-d- կամ aku-d- «ջրի հոսանք, ջուր»՝ ap-ի կողքին)։

Plu(v)inna (պայոնական անվանում), Plavis (գետանուն), թերևս նաև Splonum (ցեղանուն) [հ.-ե. plēu- «հոսել, հորդել, լողալ, թափել»՝ pel-ից («թափել, լցնել, հոսել»), որտեղից հայ. հեղում, գ-եղում, լի, լնում]— լուանամ.

apa (apas, apis) «ջուր, գետ» (հ.-ե. ăp- «ջուր, գետ»)—հաւ (հաւ-ասի «գետառ, մայր գետ, որից առում է բաժանվում» բառի մեջ, ըստ Երեմիայի բառարանի)[9].

epi, pi «մոտա-, վերին» (նախածանց) (հ.-ե. epi, opi «մոտ, առ, վրա»)— և.

tilur «կամուրջ» (հ.-ե. tel- «հարթ, հարթ գետին, տախտակ», որտեղից լիտվ. tiltas «կամուրջ»)— թիթեղն[10].

trita-s «երրորդ» (հ.-ե. tri-to-s, որտեղից ալբ. tritɛ, tretɛ, հուն. τρίτος «երրորդ», tri- «երեք»)— երեք.

Turo (անձնանուն) (=հուն. Τυρώ, հ.-ե. tu-ro- «բխող, ուռչող»՝ tēu-: təu-: tū-ից «ուռչել»)— թիւ, թուփ, թումբ.

kamam «գարեջուր» (հ.-ե. kem-: kom- «ճնշել»)— քամել.

kar- «քար» (հ.-ե. kar- «կոշտ. քար»)— քար[11].

kel- «աղմկել» (հ.-ե. kel- «կանչել, կոչել, աղմկել, հնչել») — աղաղակ, աքլոր.

kerp- «ծալք», krum-era «եզր, սահման», skerd-: skard- «զանհավեմ, զառիթափ, կտրուկ» [հ.-ե. (s)ker- «կտրել», (s)kerep- (որտեղից ալբ. karpɛ «խութ», karmɛ «ծալք»), krēm-, krōm- (որտեղից ռուս. кромá «եզր, շերտ, կողմ», кроме «բացի»), sker-d-: skor-d-]— քերել, քորել, քերթել, քերծել.

4. Հ.-ե. g'h, g', k'.

ա. Իլիր. z (d), s.

zentā «գետ» (հ.-ե. g'heu- «թափել, լցնել»)— ձև, ձոյլ, թերևս նաև ձոր, ձագար.

darda «տանձ» (=ալբ. dardhɛ «տանձ. տանձենի», այլև հուն. ἄχερδος «վայրի տանձենի», թերևս հ.-ե. g'her-, g'hers- «սկսել, հառել. տաշել, ամրանալ. խստանալ»)— ձար «մազ, մազեղեն», ձառ «ծուռ, տգեղ, կոշտ».

---

[9] Ստուգաբանությունը հեղինակինն է։

[10] Ըստ Պետերսոնի Ա. Աճառյանը կապում է pter-ի հետ (հմմտ. բիր, բիրբ), որ անհավանական է։

[11] Եթե իրոք կարելի է վերականգնել՝ հ.-ե. kar- «քար» արմատ՝ kar- «կոշտ» և (s)ker- «կտրել» արմատների կողքին։

ozera- «լիճ» (հ.-ե. eg'hero- og'hero- «լիճ», որտեղից ռուս. озеро «լիճ»)— եզր։

as- «քար. ժայռ» (հ.-ե. ak'- «սուր. քար»)—ասեղն, Թերևս նաև հասկ.

բ. Իլիր. g, k.

ged- (Bi-geste և gedate) (=Թրակ. gesti, փռյուգ. ζετνα) (հ.-ե. g'hed- „cacare. անցք»)— ձետ «պոչ».

agra-s «դաշտ, հարթավայր» (հ.-ե. ag'ro-s «արտ»)— արտ, արտաքս, արտա-

argu- «փայլուն, սպիտակ» [հ.-ե. ar(e)g'- «փայլուն, սպիտակ»]— արծաթ, արծնել «տաք երկաթով կամ դանակով մոմով փայտի վրա նկարել», արծարծանել, արծարծել.

kan- «շուն» (հ.-ե. k'uon- «շուն»)— շուն, սկունդ(?).

kleu- «համբավ» (հ.-ե. k'leu- «լսել», k'leuos- «համբավ, լուր»)— լուր, լսեմ.

akr- «ծայր» (հ.-ե. ak'- «սուր», ak'-r- «սուր քար»)— ասեղն.

ik(k)as (նաև epas, hippas) «ձի»[12] (հ.-ե. ek'uos «ձի»)—էշ.

5. Հ.-ե. $g^{u}h$, g^{u}, k^{u}.

gal- «վերջ, ծայր, եզր» (հ.-ե. g^{u}el-:g^{u}ol- «ծակել, խայթել. ծակոց. խայթ, խոց, ցավ, մահ», որտեղից լիտվ. gālas «վերջ, վախճան, մահ»)— կեղ, -ոյ «խոց, ուռույք, վերք, պալար», կեղեքել, կեղեբջ «գանգատ, տրտունջ»[13].

gen- «սպանել» (հ.-ե. g^{u}hen- «սպանել, բախել»)— յաղթ, -ութ.

germas «ջերմ, տաքին» (հ.-ե. g^{u}her-, g^{u}hermo- «ջերմ, տաք»)— ջերմ, ջեր, ջեռանիմ, ջեռնում.

erig- «մութ» [հ.-ե. (e)reg^{u}os- «մութ, մթություն, խավար»] — երեկ, երեկոյ.

kel «անիվ, շրջան» (հ.-ե. k^{u}el- «պտտել, պտտվել. բնակվել»)— հոլ, հոլով, եղ, եղանիմ, եղանակ, լեղ, լեղում «փոխել», յաղ[14].

6. Հ.-ե. s.

---

[12] Որևէ ձևը իլլիրական լինել չէն կարող. ընդհանուր իլլիրական Ա. Մայերը համարում է միայն առաջինը։

[13] Վերջին բառի ստուգաբանությունը հեղինակինն է։

[14] Հմմ. ձևերի համար հմմտ. հուն. πέλομαι «շարժվել, լինել»։

sank- (հ.-ե. senk- «ցած հոսել, թափվել, իջնել»)[15]— անկանիմ (հ.-ե. seng$^{u̯}$- «ընկնել, իջնել»).

sestas «վեցերորդ» [հ.-ե. s(u̯)ek's-to-s «վեցերորդ»՝ su̯ek's-ից «վեց»)— վեց.

stulp- «ցից, սյուն, գերան» [հ.-ե. stel- «կանգնեցնել, դնել, կայուն. հենակ, սյուն, բուն», stel-p-]— ստեղծանեմ, ստեղն, -ունք.

7. Հ.-ե. r, l, m, n, i̯, u̯.

rēn (per-rēn «աղբյուր, առու»= ալբ. pərrua, pərrue «գետահուն, գետ, առու»), Raetinium[16], ῥινός «ամպ» (=ալբ. ren «ամպ»), riz, ris «գետ», ər- «հոսող ջուր» (?)[17] (հ.-ե. er-: or-: r- «շարժվել-շարժել, հուզել, բարձրացնել»)— յ-առնեմ, յ-որդոր, արմ, գ-արմ, որեար, թերևս նաև որդի.

ara- «անեծք» (հ.-ե. ōr-: ər- «խոսել, կանչել»)— ուրանալ, ուրաստ[18].

arb- «մութ» [հ.-ե. er(e)b(h)- «մուգ-կարմիր, շագանակագույն, դարչնագույն, թուխ», որտեղից հուն. ὀρφνός «մութ, խավար»]— երեւել «բույսերի մի հիվանդություն՝ քոս, ժանգ կամ ոչիլ» (հին աղբյուրում մեկնված որպես «գայլուկն, ժանկ, գայլուկն անկենդանն»)[19].

ars- (Arsia գետանվան մեջ), ir- «սիրել» (հ.-ե. eres- «հոսել», որտեղից հ. հնդկ. irsyati «նախանձում է», թերևս նաև հուն. ἔρος «սեր», ἔραμαι, ἐράομαι «սիրել»)[20]— եռամ, եռանդն, հեռ.

ūr- «ջուր, լիճ, ծով» (հ.-ե. ūr-, u̯ūr- «թրջել, հոսել»)— ջուր, գուր.

lak- «ոտք» (հ.-ե. lek-, lēk-: lək- «մարմնի անդամ, վերջավորություն. ծռել, պտտել, ցատկել»՝ ēl-ēk-ի կրկինը, որտեղից հայ. ոլոք)— լոք (բրբռ.) «մեծ քայլ».

leuk-: lauk- «լուսավոր» (հ.-ե. leuk- «լուսավորել. լուսավոր»)— լույս, -ոյ.

---

[15] Ըստ Ա. Մայերի տված այս ձևը չկա Պոկոռնու բառարանում։

[16] Եթե համեմատելի չէ հին հնդկ. rátha- «սայլ» բառի հետ՝ հ.-ե. reth-ից «վազել, պտտվել»։

[17] Վերջին արմատը ըստ Ա. Դուգայի։

[18] Եթե հայ. բառերը իրոք պատկանում են հ.-ե. այս ոչ թե ar- «հերքել, մերժել» արմատի հնչյունական տարբերակին։

[19] Ստուգաբանությունը հեղինակինն է. նկատի է առնվում ժանգի մուգ-կարմիր գույնը (հմմտ. հուն. ἐρυσίβη և լատ. robigo համանիշները, որոնք ծագում են «կարմիր» նախնական իմաստից)։

[20] Հուն. բառի պատկանելիությունն այս խմբին համարվում է կասկածելի։

alb- «սպիտակ (բծերը)» (հ.-ե. albh- «սպիտակ, փայլուն»՝ alou-ի կողքին)[21]— աղավնի, ալա(ս)ունք «համասեռություն».

Alisca (=մակեդ. ἀλίζα «սպիտակ կաղամախի, սպիտակ բարդի»)[22] (հ.-ե. el- —գույնի նշանակում)[23]— եղևին.

maz- «մեծ» [հ.-ե. meg'(h)-: mьg'(h)- «մեծ»]— մեծ.

med- «բուժել» (հ.-ե. med- «չափել», mēd- «բժիշկ»)— միտ-ք.

medja- «անտառ», metu- «միջև» (հ.-ե. medhio-, medhi-, meti- «միջին»)— մէջ.

mend-: mand-: mad- «ուրախ. խելոք» (հ.-ե. men-dh- «միտքն ուղղել. աշխույժ լինել»՝ men-ից «մտածել, խորհել. հոգեպես հուզվել»)— ի-մանամ.

mukuru- «ապաստան» (հ.-ե. meukh-: mukh- «ներս մտնել. ներս սողոսկել»)— մուխ, մխեմ[24].

ner-: nar- «ընկղմվել, սուզվել» (հ.-ե. ner-: nor- «ընկղմել, մխել. փախստական, ապաստան, անձավ», թերևս ner-ից «ներքևում»)— ներ-քին (ner- «ներքևում»), այլև, թերևս, ներկել (ner- «ընկղմել, սուզել»), ներքան (ner- «ներքևում»)[25].

nik- «ցած, ցածրադիր» (հ.-ե. ni-, nei- «ցած, դեպի ցած», որտեղից հ. հնդկ. nicá «ցած, դեպի ցած»)— նի- [նի-ստիմ, նի-ստ, ն-եցուկ՝ յենում-ից (յեց-ալ)].

an «վրա, մոտ» (հ.-ե. an «ինչ-որ հարթության վրայով գնալ, վրա»)— ան- (ան-ձեռացիկ, ան-բանի, ան-կողին բառերում), ամ- (ամ-բառնամ բայի մեջ).

ana, anna «մայր» (հ.-ե. an- —արական կամ իգական սեռի նախնու նշանակում)— հան «տատ».

and- «խոտ» (հ.-ե. andh- «դուրս գալ, աչքի ընկնել, բուսնել, բողբոջել, ծաղկել»)— անդ, հանդ, անդեայ.

ank- «թեքություն, կորություն, անկյուն» (հ.-ե. ank-, ang- «ծռել, թեքել»)— անկյուն.

---

21 Հնարավոր է, սակայն, բառի ոչ հնդեվրոպական ծագումը։

22 Քանի որ մակեդոներենում s-ն չի փոխվում ζ-ի, ապա պետք է ենթադրել բառի՝ իլլիրերենից փոխառյալ լինելը։

23 Ըստ Ա. Մայեի՝ հնարավոր է բառի ծագումը նաև հ.-ե. (s)p(h)el- «ճեղքել» արմատից։

24 Այսպես բառը համարում են մկրտեմ-ի հնչյունական տարբերակը։ Վերջինիս մասին տե՛ս G. R. Gardona. Armeno *mkrtel* „battezare" ed un hapax biblico, „Annali d'Istituto orientale di Napoli", 1966, VII, էջ 89 և հջ.

25 Վերջին երկու բառերի ստուգաբանությունը հեղինակինն է. հմմտ. տողորել «թաթախել», տողոր «ներկ»։

A 44632
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

enenas «ինններորդ» (հ.-ե. eneunos՝ e-neu̯n-ից «ինն»)— ինն.

engel- «օձաձուկ, ձուկ» (= հուն. ἔγχελυς «օձաձուկ») [հ.-ե. engᵘh-՝ angᵘ(h)i-, egᵘhi-, ogᵘhi-, eg'hi- «օձ, որդ» ձևերի կողքին]— ավձ, իժ.

valu- «փայտ, ձող, ճիպոտ, այլև թերևս Illyrii (ցեղանուն, համա. Հեսիքիոսի ավանդած ἰλλός-ը «շեղ, ծուռ, շիլ»[26] (հ.-ե. u̯el- «պտտել», որտեղից գոթ. walus «փայտ, ձող», լատ. vallus «ցից, ձող»)— գելում, գլեմ, գել, գլոր, գալար, այլև լար, լարբ.

var- «շուք, ճաճանչ» (հ.-ե. u̯er- au̯er- «շուք, ջեռ, անձրև») — վառ.

verz-, urz- «գործել» (հ.-ե. u̯erg'- «գործել»)— գործ, գործեմ.

vesu- «լավ», vesela- «երջանիկ» (հ.-ե. u̯esu- «լավ», որտեղից ռուս. веселый «ուրախ»)— հ(ու)- (ստորադասական նախամասնիկ հ-յու, հ-մուտ և այլ բառերում), թերևս նաև գոհ.

volt- «շուք, շքեղություն» (հ.-ե. u̯el- «տեսնել», u̯l-tu- «տեսք»)— գեղ, գեղ-եց-իկ.

8. r̥, l̥, m̥, n̥, i, ī, u, ū.

a-, an- «ան-» (հ.-ե. n̥- «ան-»)— ան-.

Artas «թագավոր (?)» (իբրև անձնանուն ընկալված) (հ.-ե. «համապատասխանել», art-, r̥t- «կցված, միացված»)— արդու, զարդ, արդար, արիւն.

9. Հ.-ե. e, ē, o, ō, a, ā, ei, eu- և այլն.

a-, e- [հ.-ե. e-, o- —անվանական և բայական մասնիկ, հնդկականում դեռ նախդիր՝ հին հնդկ. ā «դեպի, առ (հայց.). առ, վրա, մոտ (ներգ.)]—ե- (եթէ).

Քիչ են փռյուգերենի և հայերենի միջև եղած այն մերձավոր զուգահեռները, որոնք բնութագրվում են արմատի ընդհանուր տեսքով, իմաստային միատեսակ զարգացումով, հիմքերի կազմության զուգահեռությամբ և այլն։ Եղածներն էլ մեծ մասամբ առանձնահատուկ չեն, այլ զուգահեռներ ունեն նաև այլ լեզուներում։

durn- «բնակարան» (հ.-ե. dhu̯ĕr- «դուռ»)— դուռն[27].

enenas «ինններորդ» (հ.-ե. eneunos՝ e-neu̯n-ից «ինն»)— ինն.

---

[26] Նկատի է առնվում օձը (որպես «գալարվող»), որի կերպարանքով իլլիրիացիները պաշտում էին Կադմոսին (երկրի առաջին կոչվի հայրը)։

[27] Եթե հայ. -ն-ն չի ծագում հայկականի վերջնավորությունից, այլ ածանցական մասնիկ է, ինչպես փռյուգերենում։

germas «ջերմ, ամզլին» (հ.-ե. g^{u}her-mo- «ջերմ, տաք»)— ջերմ, -ոյ.

mukuru- «ապաստան» (հ.-ե. meukh-: mukh- «ներս մտնել, ներս սողոսկել»)— մուխ, մխեմ.

ozera- «լիճ» (հ.-ե. eg'hero-, ag'hero- «լիճ»)— եզր.

pard- (Pardua տեղանվան մեջ) «անցահուն, ծանծաղուտ» (հ.-ե. por-dh-՝ per-ից «անցկացնել, անցնել». այստեղից հուն. πορ-θ-μός «անցահուն, ծանծաղուտ, գետանցք»)— հորդ «կոխված, շիտակ (ճանապարհ)», հորդեմ «ճանապարհ բանալ, մաքրել, պատրաստել», հորդիմ «երթալ, տարածվել»:

§ 6. Մի շարք դեպքերում իլլիրիա-հայկական զուգահեռների սահմանումը հավաստի բնույթ չի կրում:

1) Իլլիրիական բառերի ստուգաբանությունը կասկածելի է.

aspala- «մի տեսակ ձուկ» (ըստ Հեսիքիոսի՝ ἄσπαλος «մի տեսակ ձուկ») (հ.-ե. skeu- «ծածկել»)[28]— ջիլ, թեփեռ նաև խուղ.

Βαιάκη (քաղաքանուն) (հ.-ե. bhā- «փայլել, լուսավորել»)[29]— բանամ.

lik- «թաց, հոսուն» (հ.-ե. u̯leik^{u}- «թաց, հոսուն լինել, ծորալ», որտեղից լատ. liquō «հեղուկացնել. զտել»)— լիալ (բբռ.) «հոսել». լիլիալ (բբռ.) «թույլ շարժվել»[30].

---

[28] Իլիր. բառի պատկանելիությունը և ստուգաբանությունը կասկածելի են. համեմատվող լատ. squalus-ը («շնաձուկ») ավելի հակված են միացնելու հ. պրուս. kalis «լոքո (ձուկ)», հ. իսլ. hualr «կետ (կենդ.)» (առանց s-ի) [հ.-ե. (s)k^{u}alo-s «մեծ ձկան մի տեսակ». Pok., I, էջ 958] և հ. հնդկ. chāla- «քաղցրահամ ջրի կարմիր ձուկ» (s-ով) բառերի. իսկ լատ. squālus-ը («թեփոտ, կեղտոտ»)՝ հուն. πηλός «կավ, կեղտ, ցեխ, մրուր» և հ. սլ. kalŭ «կեղտ» բառերի հետ. հմմտ. *A. Ernout et A. Meillet*. Dictionnaire étymologique de la langue latine, 4-me éd. Paris, 1959, էջ 645:

[29] Ըստ Ա. Մայերի։ Սակայն ավելի հավանական է համարվում այս անունը. baid(a)-, baida-ra- «լուսավոր» բառերի հետ միասին, բխեցնել հ.-ե. g^{u}hei-: g^{u}hai- «լուսավոր, պայծառ» արմատից. ըստ Հ. Աճառյանի (Հայ. արմ. բառ., 3, էջ 930—931)՝ այս արմատից է ծագում հայ. կայծ-ը, մի բառ, որ հնարավոր չէ, եթե նկատի առնենք հուն. ձևերը (φαιδρός «պայծառ, լուսավոր» և այլն), որոնք ենթադրում են g^{u}h-ով և ոչ g^{u}-ով նախաձև: Վերջին ստուգաբանության դեպքում հիշյալ բոլոր բառերը բնիկ իլլիրիական չեն կարող լինել (հմմտ. հ.-ե. $g^{u}h > b$ անցումը):

[30] Հնարավոր է ենթադրել հայ. բառերի՝ փոխառյալ լինելը:

Σελλοί (ցեղանուն) (հ.-ե. sed- «նստել», sedlā)[31]—նստիմ.

Tabia (ցեղանուն) (հ.-ե. teu-, -m-, -bh- «ուռչել», որտեղից հուն. τύμβος «բլուր, թումբ», մ. իռլ. tomm «բլուր, բլրակ»)[32], toulant «ծիծեռնակ» [= ալբ. taland-(ushe), dallend-(yshe) «ծիծեռնակ»][33], tauro- «լեռ. ցուլ» (tәu-ro- «ցուլ»)[34], Τηλάνιος (ցեղանուն. եթե ճիշտ է այս ընթերցանությունը մեջ. Պլինիոսի Telavius-ի, ապա այն ծագում է tēu- «ուռչել» արմատից՝ *Teudanius ձևից)— թումբ, թուփ, թիւ, թաւ.

thana- (հ.-ե. gᵘhen- «հնչել», որտեղից. ալբ. zą «ձայն»)[35]—ձայն.

Titus (անձնանուն) (հ.-ե. dei- «շողալ», որտեղից «երկինք. աստված. օր»)[36]— տիւ, թերևս նաև տի- (տէր<տիայր, տիկին, տիեզերք բառերում).

Τριβαλλοι [Τρι- «երեք» <հ.-ե. tri- (:trei-) (+βαλλι, հմմտ. փռյուգ. համարվող βαλήν «թագավոր»)][37]— երեք.

tritō «երրորդ» [հ.-ե. ter «տրորել, պտտելով մաշեցնել», tr-tó(n)]— թուր. թրթուր. թուրծ. թրծել, արածել.

2) Հայերեն բառերի ստուգաբանությունը կասկածելի է.

ber- «թխաթույր» (հ.-ե. bher- «փայլուն, թխաթույր, բաց-դարչնագույն»)— բորենի (բորեան, բորեայ, բորէ)[38].

---

[31] Սակայն բխեցնում են նաև հ.-ե. sel-ից «վերցնել, գրավել» կամ se-los-ից «ճահիճ, լիճ»։

[32] Սակայն հիթթ. տեղանունը համեմատում են նաև կար. τέβα «ծմակ» (Հեսիքիոս), ասոր. teba «բլուրք» բառերի հետ։

[33] Ըստ Ա. Մայերի, կասկածելի է։

[34] Հ.-ե. ծագումը կասկածելի է. հմմտ. նախասեմ. tauru (արաբ. twr). ըստ ոմանց՝ նախահնդեվրոպական։ Հյ. տուար (դուար) բառը («արջառ») բխեցնում են հ.-ե. dipəro- նախաձևից։

[35] Սակայն համեմատում են ալբ. zāna, zānε «լեռնային հավերժահարս» (<(Diana), ռում. zina «հավերժահարս» բառերի հետ։

[36] Սակայն այս անձնանունը համեմատում են մես. Τιτυρ- և հուն. Τίτυρος անձնանունների հետ, որոնց համար ենթադրում են ոչ հ.-ե.՝ փոքրասիական ծագում (հմմտ. հիթթ. Terititunis դիցանունը). համապատասխան Τιτάν-ի համար («աստված, հայրը») հմմտ., սակայն, հուն. τιτώ «արշալույս կամ օր» (Հեսիքիոս) և, ըստ Հ. Հիրտի, հ. հնդկ. tithis «այն ժամանակամիջոցը, որ հարկավոր է լուսնի համար՝ արևից 12° հեռանալու համար»։

[37] Սակայն ավելի հավանական է համարվում բխեցնել հ.-ե. trēb- «բնակարանակառույց շինություն, շենք, բնակարան», որտեղից գերմ. Dorf «գյուղ»։

[38] Հնարավոր է փոխառություն լինելը իրանական աղբյուրից։

apl-, opl- «ուժ, ուժեղ» (հ.-ե. opelo- «ուժ»)— աւելի, յ-աւե-լում, առ-աւել[39].

kat- «պայքար» (հ.-ե. k'at- «պայքարել»)—ատել[40].

keun-: kun- «փոքրիկ, մանր, նուրբ» [հ.-ե. keun-: kun- «փոքր, չնչին, ստոր», որտեղից հուն. καυνός «վատ. կոշտ» (Հեսի-քիոս), գոթ. hauns «ստոր. խոնարհ», հ. վ. գերմ. hôni «արհա-մարհված», hôna «ծաղր», լատվ. kàuns «ամոթ»][41]— խուն (և սուն) «սակաւ, քիչ»[42].

lav- (=հուն. λãFός «ժողովուրդ»)— լաւ[43].

liz- «աղտոտ» [հ.-ե. (s)leig'-, (s)lig'- «լորձնոտ, լպրծուն. սահել»՝ lei-ից]— լիժ (բրբռ.) «աղտոտ», ալիզել (բրբռ.) «սահել»[44].

peuk- «եղևնի» (հ.-ե. peuk'- «ծակել»)— փուշ[45]։

§ 7. Իլլիրերենի և հայերենի բառապաշարի միջև կարելի է սահմանել ոչ ծագումնային հետևյալ զուգադիպումները.

balda-ra- «լուսավոր» (Baedarus=հուն. φαιδρός «պայծառ») (հ.-ե. gʷhai-d-)— պայծառ.

barb- «ճահիճ» (հուն. βόρβορος «ցեխ, տիղմ», հին հնդկ.

---

[39] Հայ. բառը համեմատում են հուն. ὀφέλλω «ավելացնել, բազմացնել» բառի հետ և վերականգնում հ.-ե. obhel- արմատը (Pok., I, 772)։ Սակայն հնարավոր է հունարեն բառի աղբյուր դիտել պելազգերենը և, կապելով հ.-ե. apelo-ն op-ի հետ («աշխատել, խրագործել, վաստակ, հարստություն»), որտեղից լատ. ops «ուժ, հզորություն, կարողություն, հարստություն»), բխեցնել այն opel-ից (հայերենը հնարավոր է այդ դեպքում բխեցնել կամ apel-ից, կամ ուրարտ. abili-ից (abili-du- «ավելացնել»)։

[40] Հայ. բառի ծագումը այս արմատից կասկածելի է. այն հենվում է հայերենի հետ համեմատվող և փոխառ. համարվող σατίλλα «համառատեղու-թյուն», σατίνη «կառք» բառերի համար ենթադրվող «մարտակառք» նշանա-կության վրա, մինչդեռ ա) այդ բառերի փոխառական ծագումը հավաս-տի չէ. բ) «մարտակառք» նշանակություն ունենալը կասկածելի է. գ) հայ. բառը ամենայն հավանականությամբ փոխառություն է փոքր ասիա-կան մի լեզվից, որին պատկանում են նշյալ բառերը։

[41] Հ.-ե. այս արմատը Պոկոռնիի մոտ չկա։

[42] Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, 657) համեմատում է այլ. un', hun' «պակասեցնել, ստորացնել, խոնարհեցնել», ռուս. хинить, хилый բառերի հետ՝ բխեցնելով հ.-ե. qun-, qhun- արմատից (ըստ Բեռնեկերի)։

[43] Այս համեմատությունը հնարավոր է, եթե հուն. λãFός բառը կապ-ված է λαίω «ավելի լավ» և ἀπο-λαύω «վայելել» բառերի հետ։

[44] Հայ. բառերը ամենայն հավանականությամբ բնիկ չեն։

[45] Հայ. բառը ամենայն հավանականությամբ բնիկ չէ։

barbúram «ջուր», Barbara— գետանուն, հին բուլղ. bara «ճահիճ», ալբ. berrák, brrak «ճահիճ, կրկնավոր»[46]— բորբոս.

bard- «փայլուն, սպիտակ» (հ.-ե. bhьrə-g'o-, bherē-g'- «փայլել, սպիտակ»)— բարդի.

bilia «դուստր» [=հուն. φίλος՝ հոլ. bil «լավ», գոթ. Bil-, հին վ. գերմ. Bili-, bil-lich «պատշաճ», միջ. վ. գերմ. bil(e)wiz «բարի ոգի»][47]— բեղուն «համակիր, սիրող».

Dando [անձնանուն=հին սաքս. Dando, հին վ. գերմ. Tanto, թերևս միջ. վ. գերմ. tant «դատարկաբանություն, չար կատակ, դավ», tanten «կատակել», հին վ. գերմ. tantarôn «շփոթվել»՝ dand-ից («դատարկ, անմշակ»), որտեղից անգլ. dandy «դենդի, պճնամոլ»]— դանդաղ, դանդալոշ.

kamba- «ծուռ» [հ.-ե. (s)kemb-, (s)kamb- «ծռել, թեքել»]— կամա-կոր, ծամ-ա-ծուռ.

katar- «ամբոխ, ապստամբ» (հ.-ե. kat- «միահյուսել, շղթայակցել, ցանկապատել», որտեղից սերբախորվ. kotar «ցանկապատ», kotār «շրջան, սահման»)[48]— կատար, կատարել.

nāras «գետ» (հ.-ե. snā- «հոսել, թացություն»)— Նար [Ծովի-Նար անվան մեջ (?)].

pai- «խոտ, մարգագետին» (Παίονες և Παιόπλαι ցեղանուններում) [հ.-ե. pei̯(ə)-, poi̯(ə)- «պարարտ լինել, առատ բխել», որտեղից հուն. πόα ποία «խոտ, մարգագետին»][49]— հայ, -ող[50].

Scirtones (ցեղանուն) [ըստ Պոնտոսի հուն. σκιρτᾶν «ցատկել, պարել» (հ.-ե. sker- «ցատկել, շուրջը ոստոստալ»), որ Ա. Մայերը անհավանական է համարում՝ ավելի շատ հարմար համարելով կրետացիների համար՝ Σκιρτίας]— խրտնում, սարսռում։

---

[46] Համեմատությունները կասկածելի են. հուն. βόρβορος-ը Հ. Աճառյանը համեմատում է հայ. կորկ-ի հետ («եփած ձավար կերակուր»), որ ընդունում է Պոկոռնին [I, 482՝ gʷor-gʷ(or)o- «կեղտ, աղբ»]։

[47] Կրեչմերը հուն. φίλος-ը համարում է նախահուն. փոխառություն և կապում լիդ. bilis-ի հետ։

[48] Հնարավոր են համարում բխեցնել նաև հ.-ե. ket-, kot- «բնակարան» արմատից։

[49] Ցեղանունները արված են ըստ բնակավայրի։

[50] Եթե կապ ունի պայոնացիների անվան հետ, ինչպես կարծում են։ Սակայն հմմտ. հ.-ե. po(i)-: pai-?:) pi- «արածեցնել, պահել», poi̯u- «պահապան», ալլև pā- «կերակրել, արածեցնել» (>հովիվ, հարևան, հոտ), poi-s «տեր»։

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՀԻՆ ՄԱԿԵԴՈՆԵՐԵՆԸ

§ 1. *Պատմական Մակեդոնիան գտնվել է Բալկանյան թերակղզու կենտրոնական մասում և սահմանակցել է Թրակիային, Իլիրիային և Հունաստանին։ Նրա տերիտորիան այժմ բաշխված է Հարավսլավիայի (հարավ-արևելյան մասը), Հունաստանի (հյուսիս-արևելյան մասը) և Բուլղարիայի (հարավ-արևմտյան մասը) միջև։ Բացի բուն մակեդոնացիներից այդ տերիտորիաներում բնակվել են նաև թրակացիները և իլիրիացիները։ Մասամբ էլ այս է պատճառը, որ դժվար է որոշակի սահման անցկացնել մակեդոնական, թրակյան և իլիրիական որոշ հատուկ անունների միջև։*

Մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկզբներից Մակեդոնիայում ուժեղանում է հունական ազդեցությունը, տարածվում են հունական լեզուն ու մշակույթը, հետագայում սկսում է օգտագործվել հունական գիրը։ Մ. թ. ա. V դ. 1-ին կեսին մակեդոնական թագավորության մեջ միավորվում է Ներքին Մակեդոնիան, իսկ ավելի ուշ՝ Փիլիպ 2-րդի ժամանակ (359—336) նրան միացվում է Վերին Մակեդոնիան։ Փիլիպ 2-րդը իր գերիշխանությունը տարածում է և Հունաստանի վրա։ Փիլիպի որդու՝ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ Մակեդոնիան մեծ հզորության է հասնում և շատ կարևոր դեր խաղում հին աշխարհի պատմության մեջ։ Ալեքսանդրի հաջորդների ժամանակ սկիզբ է ունենում մակեդոնական պետության թուլացում և տրոհում։ Հռոմի հետ վարած պայքարի ընթացքում Մակեդոնիան թուլանում է և 148 թ. վերածվում Հռոմեական պրովինցիայի։ Մ. թ. IV դ. Հռոմեական կայսրության՝ արևմտյան և արևելյան մասերի բաժանվելուց հետո այն մտնում է արևելյան կայսրության կազմի մեջ։

Մ. թ. VI դ. և VII դ. սկզբին Մակեդոնիայում բնակություն են հաստատում և աստիճանաբար գերակշռող դառնում սլավոնական ցեղերը, որոնք խոսում էին բուլղարերենին մոտ հարավ-սլա-

վոնական մի բարբառով։ Այս բարբառն այժմ դարձել է մակեդո-նական գրական լեզվի հիմքը, որ Հարավսլավիայի Ֆեդերատիվ Ժողովրդական Հանրապետության կազմի մեջ մտնող 6 հանրապետություններից մեկի՝ Մակեդոնիայի հիմնական լեզուն է։ Բուն մակեդոնների հետ չշփոթելու նպատակով սա կարելի է կոչել սլավոնական մակեդոներեն։

§ 2. Մակեդոներենի մասին մեր ունեցած տեղեկությունները հենվում են սակավաթիվ գլոսների և հատուկ անունների վրա։ Մակեդոներենի բնույթի հարցին անդրադարձած գիտնականները[1] հակված են այն մոտ համարելու հունարենին՝ ընդհուպ մինչև բարբառային մերձավորության սահման։ Մակեդոնացիների՝ իրենց սկզբնական բնակավայրից (Հալիակմոն գետի հովտից) դեպի հյուսիս ու արևելք տարածվելու և փռյուգացիների, միզիացիների, թրակացիների ու իլլիրիացիների հետ խառնվելու հետևանքով մակեդոներենն զգալի չափով ենթարկվել է դրանց ենթաշերտային ազդեցությանը և համեմատաբար հեռացել հունարենից։ Ավելի ուշ, հունարենի և հունական մշակույթի ուժեղացման պայմաններում, սկսվում է հակառակ պրոցեսը։ Ոմանք հին մակեդոներենի մեջ յուրահատուկ կապող օղակ են տեսնում հունարենի և փռյուգերենի միջև՝ ընդունելով, սակայն, որ այն ավելի մոտ է եղել առաջինին, քան երկրորդին։ Հին մակեդոներենի և փռյուգերենի փոխազդեցությունն առանձնապես ուժեղ է եղել Փոքր Ասիայում, որ մ. թ.

---

[1] Տե՛ս O. Hoffmann, Die Makedonen, ihre Sprache und ihr Volkstum, Göttingen, 1906 (հմմտ. Մ. Ի. Ձավենի գրախոսականը՝ „К вопросу о языке древних македонян", „Журн. Мин. нар. просв.", 1908, 13, էջ 22—35). Նույնի հոդվածը Pauly-Wissowa-ի „Realenzyclopädie"-ում, 14, 1928, էջ 681—697. V. Pisani, La posizione linguistica del macedone, „Revue internationale des études balkanique", I, 5, 1937, էջ 8 և հշ. I. I. Russu „Ephemeris dacoromana", 8 1938, էջ 105—232. J. N. Kallériś, Les anciens Macédoniens, études linguistiques et historiques, I, Athènes, 1954. Ч. Погирк. Отношение древнемакедонского языка к древнегреческому, канд. дисс., Л-д, 1958 (автореферат, Л-д, 1959). C. Poghirc, Considérations sur le lexique de l'ancien macédonien, „Revue de linguistique", V, 1960, էջ 130 և հշ. V. Georgiev, La toponymie ancienne de la peninsule balkanique et la thèse Mediteranéenne, Sofia, 1961, էջ 24 և հշ. A. P. Dascalakis. The Hellenism of the Ancient Macedonians, Salonika, 1965. O. Haas, Die phrygischen Sprachdenkmäler, Sofia, 1966. P. Chantraine, La langue des Macédoniens et leur onomastique, „Bulletin de la Société de Linguistique de Paris", 1966, I, էջ 157 և հշ.։

ա. IX—VIII դարամիջին տեղափոխվել է մակեդոնական մեծաթիվ մի ցեղախումբ և բնակություն հաստատել Գորդիոն, Անկարա, Պեսինոս և այլ քաղաքների շրջանում. այդ ցեղախումբը մեծ դեր է խաղացել փռյուգական պետության կազմում։

Հունարենի և մակեդոներենի մերձավորության մասին է խոսում այն փաստը, որ իբրև մակեդոնական վկայված ութսուն բառից (գլոսսից) մոտ 60%-ը հունական (այդ թվում՝ բարբառային) բառերի հետ ընդհանուր ծագում ունի (40%-ը հավաստիորեն, 20%-ը հավանականորեն), իսկ 15%-ը փոխ է առնված հունարենից։ Մնացած բառերը, եթե բացառենք ծագումով անհայտները, կամ անհնար փոխառություններ են շրջակա այնպիսի լեզուներից, ինչպիսիք են փռյուգերենը (βεδυ ?), թրակերենը (ἄργελλα), իլիրերենը (σιγύνη, թերևս նաև ἄλιζα), կամ համապատասխանություններ ունեն հնդեվրոպական այլ լեզուներում (ծագումնային զուգահեռներ և, թերևս, փոխառություններ ընդհանուր աղբյուրից)՝ լատիներենում (ἄλαξ, κίκερροι, թերևս նաև βίρροξ)[2], հին հնդկերենում (ἄβαρκνα, γόδα, γοταν), բալթիկ-սլավոնականում (κοῖος)[3]։

Մակեդոնական մի քանի հարյուր հատուկ անունների ուսումնասիրությունը մեզ բերում է գրեթե միևնույն եզրակացություններին։ Այս տեսակետից ամենից ավելի բնորոշ են ամսանունները ու անձնանունները։

Մակեդոնական 12 ամսանունից 4-ը նույնն են հունականների հետ (᾿Απελλαῖος, ᾿Αρτεμίσιος, Δῖος, Πάναμος), 2-ը՝ հունականների կրճատ ձևերն են (Δαίσιος, Λῶιος՝ հմմ. Θεο-δαίσιος-ի և ᾿Ομο-λώϊος-ի դիմաց), 4-ը ածանցվել են հունական արմատներից [Δύστρος (=Θύστρος, հմմտ. հուն. Θυῖος, այլև Διός-θυος ամսանունը, θυσ- «կատաղել, էքստազի մեջ լինել», θυσ-τάς «բակխանուհի»), Ξανδικός (=Ξανθικός, հմմտ. Ξανθικά տոնանունը՝ ξανθός-ից «ոսկեգույն»), Περίτιος (հմմտ. հուն. Περίτια «երթ, շրջերթ» տոնանունը՝ περι-ίεναι-ից «շրջանցել, շրջել»), ῾Υπερβερεταῖος (մի տոնի անունից, հմմտ. հուն. ὑπερφέρω «փոխադրել, գերազանցել»)], միայն 2-ն են, որ հունական հավաստի զուգահեռներ չունեն (Αὐδναῖος, Γορπιαῖος, վերջինս հազիվ թե կապ ունի Δορπία-ի կամ καρπός-ի հետ։

Մակեդոնական անձնանունների զգալի մասը հունականների հետ նույնն է։ Մնացած անձնանունների գերակշռող մեծամասնու-

---

[2] Հմմտ. V. Pisani, նշ. աշխ., էջ 11։

[3] Ч. Погирк, նշ. աշխ. էջ 67—68։

թյունը (շուրջ հարյուր) հունական (այդ թվում բարբառային) որոշակի զուգահեռներ ունի։ Մնացածներից էլ պակաս է այն անձնանունների թիվը, որոնք հունական քիչ թե շատ հավաստի զուգահեռներ չունեն, ծագումով մասամբ իլլիրիական են, մասամբ թրակյան կամ թրակա-փռյուգական զուգահեռներ ունեն՝ Αἰδάτα- (իգ. <իլլիր.), Κύννα (Κυννάνα՝ իգ.) (<իլլիր.), Σίρρας (իլլիր.), Βυργῖνος Κρατεύνος (թրակյան ծագմամբ իշխանի անուն), Σαβατταράς (հմմտ. փռյուգ. Σαβάζιος դիցանունը կամ թրակ. Sabatium տեղանունը), Σειληνός [հմմտ. Σειληνός՝ Բաքոսի դաստիարակն ու ուղեկիցը՝ հ.-ե. (s)k'el- «ցատկել» > թրակ. σιλ- կամ թրակ. ζίλας «գինի»], Ἀρύββας (հմմտ. համապատասխան անձնանունը Էպիրոսում՝ Ἀρύββα քաղաքի անունից), Δάδων (հմմտ. թրակ. Dada՝ փոքրասիական և սկյութական զուգահեռներով), Δέρδας (հմմտ. Δάρδανος ?) Διρβί(ας) Μαρσυας, Μόλυκος, Μόλων, Σιβύτιος։

Մակեդոնական դիցարանական անունները մեծ մասամբ հունական են կամ հունարենով ստուգաբանելի՝ Ζεύς, Θαῦλος (համապատասխանում է հունական Արեսին, Θ-ն փոխանակ Δ-ի հունական ազդեցության արդյունք է), Ψευδάνωρ (համապատասխանում է Դիոնիսիոսին), Ἀρανπίδες [համապատասխանում են հուն. էրինիներին (Ἐρινύες)՝ վրեժխնդրության աստվածուհիներին, հմմտ. հուն. ἀρά «անեծք»], Δάρρων (բժշկության աստված, հմմտ. հուն. θάρσος «խիզախություն, խիզախության աղբյուր»), Θούριδες «հավերժահարսներ, մուսաներ» (=հուն. Θευρίδες, Θ-ն փոխանակ Δ-ի հուն. ազդեցության արդյունք է)։ Կան թրակա-փռյուգական զուգահեռներ ունեցող դիցարանական անուններ՝ Σαυάδαι (Սիլեններ, հմմտ. փռյուգ. Σαβάδιος, Σαυάζιος), Κλώδωνες և Μιμαλλόνες (Դիոնիսոսի հետևորդներ՝ իգ. սեռի), Ζειρήνη (համապատասխանում է Աֆրոդիտեին, թրակ. Ζειρηνία տեղանունից), βέδυ [մակեդ. քրմերի աղոթքներում հանդիպող բառակապակցության՝ «օդ(?)» (հ.-ե. ṷē- «փչել»), «ջուր»(?)]։

Մեծ թիվ են կազմում նաև հունական զուգահեռներ ունեցող կամ հունական արմատներով ստուգաբանվող տեղանունները (պահպանվել են 160 քաղաքանուններ, մոտ երկու տասնյակի հասնող գետանուններ, 60-ից ավելի ճանապարհային կայանների անուններ, որոնք մասամբ համընկնում են քաղաքանունների հետ, լեռների, լճերի, անտառների անուններ)։

Հին մակեդոներենը բնութագրվում է հնչյունական հետևյալ առանձնահատկություններով.

1) Հ.-ե. շնչեղ ձայնեղների (bh, dh, gh) և ձայնեղների (b, d, g) դիմաց առկա են ձայնեղներ (β, δ, γ), խուլերի (p, t, k) դիմաց՝ խուլեր (π, τ, χ), ընդ որում՝ ա) kt-ն փոխվում է ττ-ի, բ) dhu̯-ն՝ δ-ի, գ) du̯-ն՝ β-ի, դ) միջձայնավորային -γ-ն ուշ շրջանում վերածվում է զրոյի։ Տեղաշարժ կամ ձայնեղների ու խուլերի շփոթում (ինչպես թրակերենում և փռյուգերենում) չի նկատվում։ Այլացման և շնչեղացման լրացուցիչ երևույթներով բացատրվող մի շարք հատուկ [κάναδοι, κομβος (*g'-ով սկսվող), κεβαλή (*ghe-bhₑl-), ἀρφύς, βαθάρα, Ζέραθρον, ἄγγαρμον, γάρων (շնչեղ խուլեր՝ փոխանակ պարզ ձայնեղների)] և հատուկ անուններ կամ աղճատվել են, կամ մակեդոնական չեն, կամ ենթարկվել են լրացուցիչ օրենքների ներգործության, կամ արդյունք են այլ լեզուների (հատկապես հունարենի՝ δ/θ-ի, β/φ-ի դեպքում) ազդեցության։

2) Հ.-ե. քմայնացած հետնալեզվայինների (g'h, g', k') դիմաց առկա են չքմայնացած հետնալեզվայիններ (γ, χ), այսինքն՝ մակեդոներենը կենտումային և ոչ սատեմային լեզու է (ի տարբերություն թրակերենի և փռյուգերենի, այլև հայերենի)։

3) Հ.-ե. շրթնայնացած հետնալեզվայինները (gᵘh, gᵘ, kᵘ) a, o-ից առաջ փոխվում են շրթնայինների (β, π), e-ից առաջ [եթե ճիշտ են Ζέραθρον (=հոմեր. βέρεθρον և ἰζέλα (հ.-ե. gᵘhel- «ուզել»>հուն. θέλω) օրինակները]՝ ատամնալեզվայինների (δ, ζ, τ)։ Միևնույն բառի մեջ երկու շրթնայնացած հետնալեզվայինների առկայության դեպքում տարնմանության հետևանքով տեղի է ունենում առաջինի ապաշրթնայնացում։

4) Հ.-ե. s-ն (այլև su̯-ն) բառասկզբում ընկնում է կամ վերածվում է շնչի. միջձայնավորային դիրքում ընկնում է, բառավերջում պահպանվում։ Միջձայնավորային s-ի ձայնեղացում (ինչպես ենթադրվում է թրակերենի և փռյուգերենի համար) չի նկատվում. ἄλιζα «սոսենի» բառը պետք է համարել փոխառություն հյուսիսային հարևաններից։

5) Հ.-ե. r, l, m, n ձայնորդները հիմնականում պահպանվում են, ընդ որում՝ ա) λσ, λν (λι)-ն վերածվում են λλ-ի, բ) ρσ, ρν (ρι)-ն՝ ρρ-ի, գ) νσ, σν-ն՝ νν-ի, դ) σρ-ն՝ ρρ-ի, ե) բառավերջի m-ն դառնում է ν (ինչպես հունարենում, փռյուգերենում թրակերենում, այլև հայերենում, կելտական, գերմանական և սլավոնական լեզուներում), զ) վանկարար ձայնորդները վերածվում են a+ձայնորդ կապակցության (ինչպես հունարենում և հայերենում)՝ անգամային տարրի անկումով (ինչպես հունարենում), r-ն թերևս փոխվում է նաև ρρ-ի։

6) Հ.-ե. ոչ վանկարար i̯-ն և u̯-ն (կիսաձայնները) անհետանում են, ինչպես հունարենում. երկու հատուկ անվան մեջ միջձայնավորային u̯-ն պահպանում է (Σαυάδαι, Γαυάνης):

7) Հ.-ե. i-ով և u-ով երկբարբառները (ai, ei, au և այլն) պահպանվում են, բացառությամբ բացարձակ սկզբնադիրքում անշեշտ a: անցող ἀδῆ «երկինք» (=հուն. αἰθήρ) և ἄδραια (համա. հուն. αἴθρια «պայծառ երկինք, լավ եղանակ») բառերի, որոնց մեջ տեղի է ունենում ai>a անցումը (մինչդեռ u-ով երկբարբառները մենաբարբառացել են թրակերենում և փռյուգերենում ու մեսապերենում):

8) Հ.-ե. e, o, a-ն ներկայացված են որպես ε, ο, α (o>a անցում, ինչպես թրակերենում և մեսապերենում, չի նկատվում). ē, ō, ā-ն՝ որպես η, ω, ᾱ, i, u, ī, ū-ն՝ որպես ι, υ, ῑ (?), ῡ (?), ընդ որում՝ ա) երկար o-ն (ω) մակեդոներենում փակ ձայնավոր լինելով գրության մեջ սովորաբար արվում է որպես ου (ըստ ոմանց՝ 5-րդ դարից փոխվում է ου-ի. այսպես է վիճակը նաև հունարենի թեսալական բարբառում, հայերենում, փռյուգերենում, թրակերենում և իլլիրերենում), բ) e-ն n-ից առաջ փոխվում է ι-ի (ինչպես հայերենում), գ) a-ն m-ից առաջ դառնում է ο:

Հին մակեդոներենից պահպանված բառաթեքական և բառակազմական ձևերը հիմնականում համընկնում են հունականների հետ: Ահավասիկ մի քանի նախածանցներ՝ α- «ան-» (ἄχρον «անզորություն, պարապություն» բառում, համա. հուն. α-, հայ. ան-), εν- «մեջ, միջա-» (εν-δέα «միջ-օրե» բառում, համա. հուն. ἐν-, հայ. ի, ըն), αν- (ἄγχαρμον «նիզակածայրը վե՛ր» բառում, համա. հուն. ἀνα-, հայ. ան-՝ անկողին, անձնացիկ բառերում), απ-, (ἄσπιλος>ἀπ-σπίλος «լեռնային գետ» բառում, համա. հուն. ἀπο-), παρ- (Παρμενίων անվան մեջ, համա. հուն. παρα-, հայ. առ-), περ- (Περδίκκας անձնանվան մեջ, համա. հուն. περι-) և այլն:

§ 3. Հայերենի և հին մակեդոներենի փոխհարաբերության հարցին մինչև այժմ որևէ ուսումնասիրություն չի նվիրվել: Մակեդոներենի և հայերենի հետազոտողները բավարարվել են միայն հայ-մակեդոնական զուգահեռների մատնանշումով: Սրանց մեջ հատուկ հիշատակության արժանի են Օ. Հաասի՝ փռյուգերենին և փռյուգերենի ու հայերենի փոխհարաբերությանը նվիրված ուսումնասիրությունները, որոնց մեջ ուշադրություն է հրավիրվում նաև հայերենի՝ մակեդոներենից կատարած փոխառությունների հար-

ցին[4]: O. Հաասը տեսականորեն հնարավոր է համարում հայերի և մակեդոնացիների շփման ու փոխառությունների երեք հնարավոր ժամանակաշրջան տարբերել՝ 1) Բալկանյան թերակղզում հայերի բնակության, 2) հայերի՝ Փոքր Ասիայում գտնվելու ու մակեդոնական բրիգների ճնշման հետևանքով հետագա տեղաշարժման և 3) Ալեքսանդր Մակեդոնացու ռազմական արշավանքների ազդեցության: Իրականում, սակայն, փոխառությունների այս երեք շերտերի տարբերակման հարցը թողնելով մի կողմ՝ O. Հաասը զբաղվում է միայն բառի փոխառության հարցով[5], այսինքն նշում Հեսիքիոսի ἀργίπους «արծիվ» մակեդոնական գլոսայի և հայ. արծիւ-ի զուգադիպությունը, որ, սակայն, համարում է քիչ հավանական՝ շնորհիվ մակեդ. բառի՝ հունարենից փոխառյալ լինելու հնարավորության:

Ինչ վերաբերում է հայերենի և մակեդոներենի ցեղակցական հարաբերությունների բնույթին, ապա այդ հարցի լուծումը կախված է մակեդոներենի բնույթի պարզաբանումից: Քանի որ մակեդոներենը մոտ է եղել հունարենին և յուրատեսակ կապող օղակ հանդիսացել նրա և փռյուգերենի միջև, ապա պետք է ենթադրել հայերենի և մակեդոներենի ցեղակցական զգալի մերձավորություն: Ցավոք սրտի, մակեդոներենի նյութի աղքատությունը հնարավորություն չի տալիս պարզելու քերականական զուգադիպումների բնույթը: Բառային զուգադիպումների քննությունը թողնելով հաջորդ պարագրաֆներին՝ այստեղ բերենք հայ-մակեդոնական հնչյունական փոխհարաբերությունն արտահայտող մի աղյուսակ (տե՛ս էջ 30):

§ 4. O. Հոֆմանը և մակեդոներենի մյուս հետազոտողները սովորաբար տարբերում են մակեդոնական համարվող բառերի 3 շերտ՝ 1) հունական բառեր (մասամբ բարբառային որևէ ձևով), որոնք կապված են մակեդոնական կյանքի հետ և հավանաբար մակեդոնական ծագում ունեն. 2) հունական արտաքին զուգահեռ ունեցող, բայց ոչ հունական կերպարանքով բառեր՝ մասամբ որպես մակեդոնական վկայված, մասամբ որպես այլազգին ենթադրվող (ըստ հնչյունական օրենքների). 3) հունական հավասարի

[4] Հմմտ. հատկապես O. Haas, Armenier und Phryger, „Linguistique balkanique“, III, 2, 1961, էջ 51—54 և Die phrygischen Sparchdenkmäler, „Linguistique balkanique“, X, 1966, էջ 253—254:

[5] Այս մասին տե՛ս մեր «Հայերենը և փռյուգերենը» հոդվածում, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2 (հմմտ. և ներքևը աշխ.):

Հ.-ե.	Մակեդոնե-րեն	Հայերեն	Հ.-ե.	Մակեդոնե-րեն	Հայերեն
bh	β	բ	r̥	αρ	ար
dh	δ	դ	l̥	αλ	ալ, աղ
g'h	γ	ձ	m̥	α	ամ
gh	γ	գ	n̥	α	ան
$g^{u}h$	β,δ	գ	i	ι	ի
b	β	պ	ī	ῑ	ի
d	δ	տ	u	υ	ու
g'	γ	ծ	ū	ῡ	ու
g	γ	կ	e	ε	ե
g^{u}	β,δ	կ	ē	η	ի
p	π	հ	o	ο	ո
t	τ	թ	ō	ω (ω)	ու
k'	χ	ս	a	α	ա
k	χ	ք	ā	ᾱ	ա
k^{u}	π,τ	ք	ei	ει	է
s	—	հ,յ,—	oi	οι	է
r	ρ	ր	ai	αι, α	այ
l	λ	լ, ղ	eu	ευ	ոյ
m	μ	մ	ou	ου	ոյ
n	ν	ն	au	αυ	աւ
i̯	—	ջ	ə	α	ա
u̯	—	գ			

դուգահեռներ չունեցող մակեդոնական բառեր (որոշ մասով փոխառություններ)։

Մակեդոնական բառերի այս երեք շերտերի և հայերենի բառապաշարի միջև առկա են ծագումնային հետևյալ զուգադիպումները։

1) Հ.-ե. bh, dh, gh.

δάνος *«մահ» (=հուն.* θάνατος *«մահ») [հ.-ե.* dheu-, dhu̯en(ə)-

«փոշիանալ, ցնդել, ցրվել. ամեն շարժվել. փոշի. մուխ»]— դե-
ղձիմ, թերևս նաև դի, -ոյ (հ.-ե. dheu- «անհետանալ, ուշագնաց լինել, մեռնել»)[6].

δώραξ «փայծաղ» (=հուն. θώραξ «զրահ, կրծքապահ. պահպանիչ. կուրծք. իրան») (հ.-ե. dher- «պահել»)— զարեմ, դադար.

2) հ.-ե. b, d, g.

δαιτας «անչրպետ, բաժանիչ» [հ.-ե. dā(i)- «բաժանել»]— տաւն, տի «տարիք» («ժամանակահատված»).

δάρυλλος «ծառ», -δρυμη «անտառ, պուրակ» (Διν-δρυμη տեղանվան մեջ) [հ.-ե. deru-, dǝru-, dr(e)u-, drou-: dreu̯ǝ-: drū- «ծառ»]—տարգալ, որած «ամուր, պինդ».

-δεα «օր» [ἐν-δεα (*en-diu̯ijā] «կեսօր, միջօրե» բառի մեջ] (հ.-ե. dei- «շողալ, փայլել»)— տիւ.

ἰδέατρος «արքունի ծառայապետ. արքունի սեղանապետ» (հ.- ե. ed- «ուտել»)[7]—ուտեմ.

γόδα «փորոտիք, ընդերք» (հ.-ե. geu- «ծռել, թեքել», gud-, geud-, այլև gudo-m «աղիք»)—կուտ. այլև կուռն, կրունկ, կոր, կորիզ.

γῶπας (հոգն. հայց.) «սև ագռավ, արջնագույն, եղջերուկ» (համմտ. հուն. γῦπας՝ γύψ «ուրուր, գիշ») (հ.-ե. geu- «ծռել, թեքել»)—կուռն, կրունկ, կոր, կորիզ, կուտ.

γύαλας «գավաթ» (հ.-ե. geu- «ծռել, թեքել»,—կուռն, կրունկ, կոր, կորիզ, կուտ.

3) հ.-ե. p(h), t(h), k(h).

πέλλος «ծերունի» (բռց. «ալեւոր») (հ.-ե. pel- «գորշ, գոմ-գույն»)—ալի-ք «սպիտակ մազ» (համմտ. ալեւոր, ալեհեր, ալեզարդ).

ἄ-σπιλος «լեռնային գետ» (ἀπ-σπιλος=հուն. ἀπό-σπιλος «լեռնամայակերից իջնող». σπίλος «քարաժ, ատամնոտ ժայռ») [հ.-ե. (s)p(h)ēl-: (s)p(h)ī- «սուր, սրածայր փայտ»]—փիլին «ձնաւ» (phī-kīno-), թերևս նաև փայտ.

καρπαα[8] «մակեդոնական մի պար» [հ.-ե. (s)ker- «կտրել», (s)kerp-, որտեղից հուն. καρπός «պտուղ», հ. վ. գերմ. herbist «աշ-

[6] Վերջին համեմատությունը (դի) հնարավոր է, եթե հ.-ե. երկու արմատները կապված են։

[7] Ըստ O. Հոֆմանի՝ ἰδέατρος=հուն. ἐπι-θέατρος «վերակացու»։

[8] Փխկ. καρπαία-ի, որ ավանդված է որպես թեսալական ձև. αι-ի փոխարեն ε-ով գրությունը գրիչների ուշ արտասանության արդյունք է համարվում։

շանը («պտղաքաղի ժամանակը»)][9]—քերել, քորել, քերթել, քեր-ծել.

4) Հ.-ե. g'h, g', k'.

ագ- [ἄγημα «թիկնազոր՝ մակեդոնական ընտիր հեծելազորից (ἑταῖροι) բաղկացած», ταγον-αγά «մակեդոնական մի պաշտոն» բառե-րում) (հ.-ե. ag'- «քշել, շարժման մեջ դնել, առաջնորդել»)—ածել.

ἀργίπους «արծիվ» (հ.-ե. reg'- «ուղիղ. ուղղել», ṛg'i-p-)[10]—արծուի, -ոյ.

κάρανος «իշխան, իշխող» [հմմտ. մակեդ. դիցաբանական արքայանունը՝ նույնպես մակեդ. (բրբռ. այլ ձև) Κάρανος անձնանու-նան կողքին] (հ.-ե. k'er- «մարմնի վերջնամաս՝ գլուխ, եղջյուր»)—սար.

ακρινᾶῖος, այն, թերևս κάρνος «աղորիքի արգի» (որպես «աղջը-կա. կույսի զավակ». հմմտ. հուն. κόρη «աղջիկ, կույս»), ἀκραία (ακρέα) «աղջիկ. կույս». թերևս նաև κοράσιον «աղջիկ» (հմմտ. մա-կեդ. փոքրացուցիչ ածանցը. որանց ս-ն ti-ից) (հ.-ե. k'er- «աճել, աճեցնել, սնել»)—սեր. սերմ. սերունդ, սերմն, սնա[11].

ἀκρουνοί «սահմանանիշ քարեր», -ακρ- (Βάλακρος անձնանվան մեջ) (հ.-ե. ak'- «սուր. քար»)—ասեղն.

5) Հ.-ե. gᵘh, gᵘ, kᵘ.

βαβρήν «յուղի նստվածք (ὑπόστασις ἐλαίου)» [հ.-ե. gᵘēbh- կամ (gᵘābh-:) gᵘəbh- «սուզ(վ)ել, ընկղմ(վ)ել», որտեղից հուն. βάπτω «ընկղմել»]—կաւ, -ոյ[12].

ἄβαρυ «ստասամբար. խնկածաղիկ, մարեմ (եթերատու բույս. Majorana hortensis)» [հ.-ե. gᵘer-, gᵘerú-s «ծանր», որտեղից

---

[9] Ստուգաբանությունը կասկածելի է. հմմտ. H. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, I, 1960, էջ 791։ Ավելի շուտ հավանական է հուն. καρπαῖος «արգասաբեր, պտղատու» բառի հետ, որ ըստ Ֆրիսկի ծագում է հ.-ե. (s)ker-ից («կտրել»)։

[10] Ըստ Հոֆմանի՝ -πους-ով («ոտք») ձևը ժող. ստուգաբանության արդյունք է՝ փխ. ἀργίπος-ի. սակայն նա հնարավոր է համարում բառը դիտել որպես բուն հունական (հմմտ. հոմեր. ἀργί-πους «արագավազ»՝ ἀργός-ից «ճեր-մակ, արագ»)։

[11] Հմմտ. նաև ցորեն, ցարասի (մի այլ հ.-ե. լծորդից)։

[12] Կաւ-ի ստուգաբանությունն ըստ Պատրուբանյանի։ Հր. Աճառյանը չի ընդունում։ Հմմտ. սակայն հ.-ե. gᵘebh- «լպրծուն, ցանցառամած. ճահ-ճային, խոնավ», որ թերևս կապված է gᵘebh- «սուզ(վ)ել» արմատի հետ

gʷrau-ō(n)-, gʷrānā «աղաց». այս արմատից է գոթ. quíarrus-ը «քնքուշ, մեղմ»]—երկան.

τελεσίας «մակեդոնական մի զինապար» [հ.-ե. kʷel- «պտտ(վ)ել»]—եղ-անիմ, եղան, եղանակ, լեղամ «փոխել, դարձնել», յաղ- (յաղապարծիմ, յաղակարծ բառերի մեջ).

ζέρεθρον «վիհ, վիրապ» (հմմտ. հուն. βέρεθρον, βάραθρον «վիհ, վիրապ») (հ.-ե. gʷer- «կլանել, կլանք»)—կեր, կերակուր, կոկորդ.

6) Հ.-ե. s.

ἄδισχος «խառնուրդ-ըմպելիքի փունջ». 'Αδίμος (անձնանուն), 'Αδία (իգ. անձնանուն) (հմմտ. հուն. ἀδύς, ἡδύς «քաղցր») (հ.-ե. suād- «քաղցր»)—քաղցր, -ու[13].

ἀλίη «վարազ» (հ.-ե. sel- «ցատկել»)—յաղթեմ[14].

ἀερτί «համարձակ, գլխապտույտ, պատյան» (հմմտ. հուն. ἀερτί «առտու. համարձակ», ἀερτήρ «փոկ, ձգափոկ», ἀείρω «բարձրացնել») (հ.-ե. uer- «կապել, զուգակցել, կախել»՝ uer- «բարձր տեղ» արմատի կողքին)—վեր «վեր»[15].

ἑταῖρος «մակեդոնական հեծյալ ազնվական, ասպետ» [հ.-ե. se, s(e)ue «միևնույն, ինքնին, ինքը», s(e)uo- «իր, յուր», se-t-, որտեղից ռուս. по-сетить «այցելել»]—ինքն, իւր, թերևս նաև հետ.

ῥοφεῖν «խյուս, ջրալի կերակուր» (հմմտ. հուն. ῥόφημα «խյուս, ջրալի կերակուր») (հ.-ե. srebh-, sr̥bh-, serbh- «ծծել, խղճալել»)—արբի «խմեցի».

ὄξος «անտառ» (հ.-ե. os-, os-k- «հացի, հացենի», որտեղից հուն. ὀξύη «հաճարի, հաճարենի»)—հացի.

7) Հ.-ե. r, l, m, n, i, u.

ματτύη «մի տեսակ համեղ կերակուր» [հ.-ե. mag'- «ճնշել, սղմել, շաղախել»՝ menk-ի («սղմել, ճնշել, մանրել») կողքին][16]—մածուն, մածնում[17].

ἀμαλός «քնքուշ, թույլ, նուրբ» (հ.-ե. mel- «մանրացնել, ա-

---

13 Հայ. բառի ծագումը պարզ չէ. կապված են համարում suād-ի և dik'u- (այլև sal-d-u-) «քաղցր» ձևերի կոնտամինացիայով։

14 Հայ. բառի ստուգաբանությունը Հր. Աճառյանինն է։

15 Հր. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 2, էջ 142—143) համեմատում է հուն. ἀείρω-ի հետ, որ, սակայն, Փոկորնու բառարանում դրված է uer- «կապել» արմատի տակ՝ uer- «բարձր տեղ» արմատից առանձին։

16 Ավելի հակված են ընդունելու երկրորդը։

17 Բխեցնում են նաև mad- «թաց. հյութալից» արմատից՝ մատղ. մատղաշ բառերի հետ միասին։

ղալ, խփել, ընդոստչ, մեղմ»)—մայլեմ, մլմլեմ, մլավոց, մամալ, մեղմ.

ἀγκάλη «մանգաղ» (հ.-ե. ank-, ang- «ծռել»)—անկիւն, անգիւն.

-ειδής [εἶδος (ϝεῖδος) «հանդերձանքին ձևը», բայց «հանդերձանք»] (հ.-ե. u̯eid-: u̯id- «տեսնել, գիտենալ, գտնել»)—գիտեմ, գէտ, գտանեմ (եգիտ «գտավ»).

ἑστιακαί (հոգն. հյց. «չներբին», այն է՝ «տնային սեղանից կերակրվող չներբին», համմտ. հուն. ἑστία «տնային օջախ, տուն») (հ.-ե. u̯es- «անցկացնել, բնակվել, գիշերել»)—գոլ, -ի, -ից, գոմ (գաս, գոյ):

§ 5. Մի շարք դեպքերում դժվար է խոսել հին մակեդոներենի և հայերենի միջև որոշակի զուգահեռների գոյության մասին:

1) Համեմատվող բառերի մակեդոնական լինելը կասկածելի է կամ, որոշ դեպքերում էլ, մակեդոնական բառերը անհայտորեն փոխառյալ են.

ἄλιζα «սպիտակ բարդի» (հ.-ե. el- —գույն նշանակող արմատ, որից կազմված են բույսերի և կենդանիների անուններ)[18]—եղևին, այլև եղն, եղնիկ.

ἄππα «հայր» [հ.-ե. appa «հայր» (մանկական բառ)]—ապա «հայր» (բրբռ.).

ἀρκόν «պարապ ժամանակ, σχολή (հույգ.)» (Հեսիքիոս) [համմտ. հուն. ἀργός «անգործ, ծույլ»<ἀ-(ϝ)εργός] (հ.-ե. u̯erǵ- «գործել»)[19]—գործ, -ոյ.

βέδυ «օդ» (?<փռյուգ.?) [հ.-ե. au̯(e)-, u̯ē- «փչել»]—աւդ, օդ.

δέκανος «զեկուրիոն, տասնապետ, վերահսկիչ, պետ» (հ.-ե. dek'm̥ «տասն»)—տասն.

κάναδοι «ծնոտներ» (=հուն. γνάθοι) (հ.-ե. g'enu- և gonədh- «ծնոտ»)[20]—ծնաւտ.

---

18 Հավանաբար իլիրական ազդեցությամբ:

19 Կամ *g>γχ փոփոխությունը պետք է ունենալ ուշ շրջանում, կամ թերևս, բառը փոխ է առնվել (փռյուգերենի՞ց): Վերջին դեպքում համմտ. հայ. երկ:

20 Մակեդոներենի համար անսովոր է g'>κ անցումը, եթե իրացումը կապված չէ n-ի մոտ գտնվելու հետ: Թեանը ենթադրում են իլիրիական ծագում:

κόμφος (հոգն. հայց.) «սեղանատամներ» (հ.-ե. g'embh-, g'm̥bh- «կծել», g'ombho-s «ատամ»)[21]—ծամել.

γέρων «ծերուկ» (հմմտ. հուն. γεραιός «շողաշլը, մարտական ընտանիքյան փորձված» Հոմերոսի մոտ «ծերունի» բառի նշանակությամբ) (հ.-ե. g'her- «ծերանալ»)[22]—ծեր-ք.

2) Մակեդոնական կամ հունական բառերի ստուգաբանությունը կասկածելի է.

ἀδῆ «երկինք», ἄδραια «պայծառ երկինք», ἀδαλός «մուր» (հմմտ. հուն. αἰθήρ «եթեր, օդ, երկինք», αἴθρη «պայծառ երկինք», αἴθαλος «մուր») (հ.-ե. ai- «այրել, լուսավորել», ai-dh-)—այգ «առավոտ»[23].

γόταν «խոզ» (հ.-ե. gᵘuō-, gᵘū- «կենդ, արջ, կենդանիք»)[24]—կով. -ոյ, այլև թերևս ճի, ճճի.

κοῖος «թիվ» [հ.-ե. (s)keu- «ուշադրություն դարձնել»)][25]—ցույց, ցուցանել.

παραός «արահետ» (հ.-ե. per- «անցկացնել, անցնել, թռչել»)[26]—հորդ «կոխված, շիտակ (ճանապարհ)», հորդեմ «ճանապարհ բանալ», հորդիմ «գնալ, առաջանալ», այլև հերիւն.

3) Հին մակեդոներեն և հույներեն բառերը պատկանում են տարբեր, թեև մերձավոր արմատների կամ միևնույն արմատից եկող հիմքային տարբեր ձևերի. երբեմն էլ կասկածելի է վերականգնվող հնդեվրոպական նախաձևի բուն հնդեվրոպական լինելը.

ἄλιζα «սոսի, բարդի» (հմմտ. հուն. ἀζαλέον «չոր» < ἄζα «չորացած կեղտ, քարի, ժանգ» + ὄζος «չոր»). Ἀλλαῖος (անձնանուն) (հ.-ե. as- «այրել, վառել, վառվել», az-d-)—ազազիմ (az-g'h-) «չորանալ», աճիւն.

ἄργελλα «գետնափոր լողարան» (<թրակ.?) (հ.-ե. areg- «փակել» areq-ի կողքին «պաշտպանել, փակել»)—արգել, արգելում, թերևս նաև որմ (ork-mo-) (հ.-ե. areq-).

---

[21] Մակեդոնական լինելը կասկածելի է հմմտ. g'>χ անցումը։

[22] Բառի մակեդ. լինելը կասկածելի է (հմմտ. χ՝ փոխանակ γ-ի). ըստ Օ. Հոֆմանի՝ հուն. γεραιός-ի կրճատ ձևն է։

[23] Այգ բառի ստուգաբանությունը հնդիրանականն է։

[24] Այսպես ստուգաբանությունը կասկածելի է դարձնում gᵘ>γ համապատասխանությունը։

[25] Սակայն համեմատում են և լիտվ. skaitýti «կարդալ, համարել» բառի հետ, որ բխեցնում են հ.-ե. kᵘ-ei-t- «ուշադրություն դարձնել, պատվել» հիմքից (այս դեպքում kᵘ>χ անցումը մակեդոներենին հատուկ չէ)։

[26] Ստուգաբանությունը ըստ Պիզանիի և Թումանի։

κίκερρος (հգն.) «ոլոռ» (հ.-ե. k'ik'er- «ոլոռ, սիսեռ»)[27]—սիսեռն:

§ 6. Ավելորդ համարելով հատուկ անուններում պահպանված և հայերեն զուգահեռներ ունեցող բոլոր արմատների մատնանշումը՝ բերենք հավաստի ստուգաբանությամբ մի շարք այդպիսի կարևոր զուգահեռներ.

1) Հ.-ե. bh, dh, gh.

Βάλακρος (անձնանուն) (=հուն. φαλακρός «ճաղատ»), Βάλας (հատուկ անուն), Βαλια (<Βαλια<ΒαλιFα) (հ.-ե. bhel- «փայլուն, սպիտակ»)—բալ «մեգ, մշուշ, մառախուղ».

Βερ- [Βερενικα անձնանվան (Թեսալիա նաև Βερεκκα), Βέροια տեղանվան[28], Ὑπερβερεταῖος (մակեդոնական ամիս՝ Զևսի պատվին) բառի մեջ] (հ.-ե. bher- «բերել»)—բերեմ.

2) Հ.-ե. b, d, g.

Be- (Be-gorrites լճի անվան մեջ) [հ.-ե. du̯ai «երկու» (հգն.)] —երկու, երկի-, երկո-.

Διν «Զևս» (Διν-δρύμος տեղանվան մեջ) (հ.-ե. «շողալ»)—տիւ, այլև տի- «մեծ» (տի-կին, տի-եզերք, տէր<տի-այր բառերում).

-οιδ- (Παροιδαι հատուկ անվան մեջ) (հ.-ե. oid- «ուռչել»)—այտնում.

3) Հ.-ե. p, t, k.

Πρεπ- (Πρέπελαος անձնանվան մեջ) (հ.-ե. prep- «աչքի ընկնել, երևալ, երևույթ, տեսք»)—երևիմ.

4) Հ.-ե. g'h, g', k'.

Αἰγανέη (տեղանուն, այծերի տեղ, -γ-ի անհետացումը. Αἰανή) (հ.-ե. aig'- «այծ»)—այծ.

-γον- (Ἀντίγονος անվան մեջ. հմմտ. և Geneates) (հ.-ե. g'en- «ծնել»)—ծին, ծնանիմ.

Κυνα (<Κυν-ja) (անձնանուն) (<իլլիր.?) (հ.-ե. k'u̯on-, k'un- «շուն»)—շուն, թերևս և սկունդ.

---

[27] Հնդեվրոպական լծորդը կասկածելի է. ավելի հավանական է ենթադրել հին փոխառություն լինելը:

[28] Իսկ և նույնանուն Թրակյան քաղաք. Դ. Դեչևը մակեդ. քաղաքը համարում է բրիգների կողմից հիմնված. Թրակյան տեղանվան հետ նույնությունը նկատի ունենալով մենք ասում ենք հիշյալ ստուգաբանությունը: Ըստ Վ. Գեորգիևի՝ bheru(i)ia ձևից (հ.-ե. bher- «հուզվել, եռալ» ձևից, որտեղից թերևս հայ. բուռն):

Κεῦος (<Κεϝ-jος) (տեղանուն) (հ.-ե. k'eu̯- «ուռչել, գոգավորություն»)—սոր «փոս, խոռոչ».

5) հ.-ե. gᵘ̯h, gᵘ̯, kᵘ̯.

Bora (mons—լեռ), այլև Be-gorrites (լճի անուն՝ du̯—gu̯> du̯—g տարնմանությամբ) (հ.-ե. gᵘ̯er-, gᵘ̯or- «լեռ»)—կարկառ «քարակույտ», կատուցանել(?)[29].

ἵππος (Bil-ιππος անձնանվան մեջ) (=հուն. ἵππος «ձի») (հ.-ե. ek'u̯o-s «ձի»)—էշ, -ոյ.

6) հ.-ե. s.

7) հ.-ե. r, l, m, n, i̯, u̯.

Ὀρέστια, Ὀρέστις (տեղանուն, ցեղանուն) [հ.-ե. er- «շարժ(վ)ել, բարձրացնել, հուզել»]—յառնեմ, յորդոր, արմ, գ-արմ, արմատ, յորդ, յորձ, որեար, որդի(?).

Λεύγαια (անձնանուն) (հ.-ե. leug'- «կոտրել»)—լոյծ, լուծանեմ.

Ἔδεσσα (տեղանուն, արդի Voden «ջրային») (հ.-ե. u̯ed- «թրջել, հոսել», u̯edesi̯a[30]—գետ, -ոյ.

Εἰδομένη (քաղաքանուն) (հ.-ե. u̯eid- «տեսնել»)—գիտեմ, գտանեմ, գիւտ.

8) հ.-ե. r̥, l̥, m̥, n̥.

Ἀρράβαιος [հ.-ե. r̥sen- «այրական, տղամարդկային», r̥su̯-bh(o)-]—առն «արու վայրի ոչխար»:

§ 7. Ինչպես նշվել է (տե՛ս § 2), մ. թ. ա. IX-VIII դարամիջյին Մակեդոնիայից Փոքր Ասիա է գաղթել մի ցեղախումբ, որի լեզուն զգալի հետքեր է թողել փռյուգիական հուշարձաններում և գլոսաներում: Այդ լեզուն ունի մակեդոներենի համար բնորոշ այնպիսի մի կարևոր առանձնահատկություն, ինչպիսին է հ.-ե. ետնալեզվայինների փոփոխությունը շրթնայինների և առաջնալեզվայինների: «Հայերենը և փռյուգերենը» գլխում[31] բերված են մակեդոնական փռյուգերենի (նույն իրավունքով կարելի է ասել՝ փռյուգական մակեդոներենի) այն բառերը, որոնք հայկական զուգահեռներ ունեն: Անդրադառնանք դրանց:

---

[29] Հայ. բառերի ստուգաբանությունը հեղինակինն է:

[30] Մ. Ֆասմերը նույն արմատից է բխեցնում Հեսիքիոսի ավանդած βέδυ: [illegible] բառը՝ համարելով այն մակեդոնական, որ, սակայն, հավանական չէ (հմմտ. u̯>β):

[31] Հմմտ. և «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2: Տե՛ս նաև O. Haas, LB. X, էջ 148—152:

βατος (νι-βατισμος «դիմադարձ՝ ցած գցելու, գետին զարկելու պար») (հ.-ե. gʷhen- «խփել, սպանել»)—գան, ջին, ջինջ, ջունջ, ջնջեմ.

βεννος «ընդմնավորություն, զոհաբերություն», βεννα «salve, ո՞ղջ լեր, ո՞ղջ եղիր(?)», βεννέχω «բարգավաճում եմ» (Ջեսի մակեդոնանք) (հ.-ե. gʷhen- «ուռչել, բղխել, լիություն»)—յողն, -ունք.

διαιτιν «կենդանիներին», διαιτιας «Զևս—կենդանու» (հ.-ե. gʷei- «ապրել»)—կեանք, կեամ, կենդանի.

τι(τ) «ինչ», τιτ-κε «ով էլ որ» (հ.-ե. kʷei- «ինչ»)—ի-նչ, ի-ք, ի-մն, ի-ր, -չ (ո-չ, ի-ն-չ).

διθυρ «չորս, քառ-» (διθυρ-αμβος՝ θρι-αμβος-ի կողքին՝ «քառաքայլ», «եռաքայլ» իմաստներով, որպես պարի տեսակի նշանակում), θιδρα- (θιδρακινη=հուն. τετρακίνη), հ.-ե. kʷetuōr, kʷe-tur-, kʷetra- և այլն)—չորք, քառ[32]:

Օ. Հասսը մակեդոնական փռյուգերենին հատուկ գիծ է համարում նաև երկու հաջորդական չնչեղ բաղաձայններից երկրորդի ապաշնչեղացման երևույթը.

Bερεκυντια (տեղանուն՝ «բարձրավանդակ, լեռնաստան») (հ.-ե. bhereg'h- «բարձր»)—բարձր, բարձրաբերձ:

§ 8. Մակեդոներենը հայերենի հետ շփվելու ընթացքում պետք է նրան տված լինի զգալի քանակությամբ բառեր: Սակայն մակեդոներենի վերաբերյալ մեր տեղեկությունների աղքատությունը, այլև առկա նյութի անմիանշանակությունը մեզ զրկում են հայերենի մեջ մակեդոնական փոխառությունները քիչ թե շատ լրիվությամբ բացահայտելու հնարավորությունից:

Ինչպես կտեսնենք «Հայերենը և փռյուգերենը» գլխում[33], այդպիսի փոխառության կարևոր նմուշ է հայ. սիբին-ը, որի աղբյուրն է մակեդ. σιβίνη «վարազորսի կարճ նիզակ» բառը (հ.-ե. sū- «խոզ» և gʷhen- «խփել»):

Թերևս մակեդոնական փոխառություն է նաև հայ. իժ բառը՝ *εχις-ից [հմմտ. Հեսիքիոսի ավանդած ἔχιν «ամբարտավանություն, պա-

32 Օ. Հասսը (նշվ. աշխ., էջ 151) մակեդոնական է համարում նաև Հեսիքիոսի ավանդած ἀβίες «օձեր» բառը (հ.-ե. ogʷ(h)i-), որ այս դեպքում զուգահեռ կունենա հայ օձ (og'hi-) և իժ (eghi)- բառերի մեջ: Ուրիշները այն դիտում են որպես իլլիրիական բառ (հմմտ. J. Pokorny, Idg. etym. Wb., I, էջ 44):

33 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2:

բաղադրյալ բառը =հուն. ἄεργός<ἀ-(F)εργός<n̥-u̯ergos]: Այս փոխառությունը պետք է կատարված լինի համեմատաբար ուշ շրջանում, երբ անցի էր ունեցել rg<rk փոփոխությունը. Ինչպես այս դեպքում, ինչպես նշվել է, հնարավոր է ենթադրել մակեդոնական բառի փոխառյալ լինելը փռյուգերենից: Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա պետք է բացառել Սրկ բառի իրանական ծագումը, ինչպես կարծում է Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 2, էջ 285). Նրա բերած բոլոր զուգահեռներում, ինչպես և սպասելի էր, հայ. Ս-ի դիմաց առկա է գերազանցապես з-՝ բայց չկա ɕ-ով ձև:

Մի շարք դեպքերում հայերեն բառերի համար կարելի է մատնանշել հին մակեդոնական ոչ ծագումնային զուգահեռներ, որոնք, սակայն, հանդես են բերում իմաստային ու հնչյունական որոշակի տարբերություններ և, հետևաբար, հայերենի անմիջական աղբյուրը համարվել չեն կարող: Այդ բառերի մի մասի համար ընդունելի է հնչյունական անդաշնակը, և եթե հայերենի աղբյուրը մակեդոներենն է կամ նրան մերձավոր մի լեզու, այլև եթե, թերևս, երկուսը ունեցել են մի երրորդ փոխատու աղբյուր, ապա հայերենը դրանք փոխ է առել մինչև Փոքր Ասիայում երևան գալը, հավանաբար Բալկանյան թերակղզում եղած ժամանակ:

βατάρα «գարենի հաց»[34]—պատառ «կտոր, բեկոր (մանավանդ հացի)»[35].

βίρροξ «խիտ, գաւգ»[36]—պիրկ[37].

---

34. Գրված է βαтάρα, բայց ուղղելի է վերևում բերված ձևով. արտահնչական տարբերակային գրչով Հեսյքիոսի բառարանում գտնվում է βατανίη-ի և βάτιον-ի միջև: Վ. Պիզանին ընդգծում է հ.-ե. bhōg̑-ից («տաքացնել, խորովել, եփել, թխել»), որ քիչ հավանական է:

35 Հմմտ. նաև բաղարջ(?):

36 Հմմտ. նաև βερρόν «խիտ» (պատկանելիությունն անհայտ է) և (-ιξ ածանցի համար) βέβριξ «բորդ» (Հեսյքիոս): Վ. Պիզանին համեմատում է լատ. hirsutus «փշփշված գանգ». կարծիսը բառի հետ և վերականգնում g̑ʰirs- նախաձևը, սակայն լատ. բառը ավելի հակված են բխեցնել g̑ʰer-s- «հառնել, ցցվել, տոռչել, փշաքաղվել» նախաձևից, որտեղից հայ. ձար «մազ» (ձարի «մազոտ, թավ»), ձառ «ծուռ, ալեհ, կոշտ»:

37 Հմմտ., թերևս, նաև բիրտ «պիրկ, ամուր, պինդ (փայտ), կոպիտ» և պիրտ «ծանր կամ կարծր» (բոլոր երևեմեյան բառարանի):

38 Բառի ընդգումը հ.-ե. g̑ʰōu-, g̑ʰu- «ձեռք, կռիվ», ... կասկածելի է (g̑ʰ>դ փոփոխությունը մակեդոներենին հատուկ չէ):

γίτταν «խոզ»[38] —կռճան «խոզ»[39].

δάρυλλος «կաղնի»[40]—տարիղան «մի տեսակ բույս, տապար(?)»[41].

ματτύη «մի տեսակ համեղ ուտելիք»[42]—մատու-տակ «քաղցրարմատ մի բույս», մատուկ «մի բույս, թերևս մատուտակի մի տեսակը»[43].

κοριναῖος, այլև թերևս κόρης «ապօրինի զավակ» (որպես «աղջկա, կույսի զավակ». համա. հուն. κόρη «աղջիկ, կույս»)[44]—խորթ «պոռնկորդի, անհարազատ որդի. կոշտ, անհարթ»[45]:

Որոշ դեպքերում հայերեն բառերի համար մատնանշվող հին մակեդոնական զուգահեռները հայերենից ավելի հեռու են, քան այլ լեզուների համապատասխան ձևերը, և, հետևաբար, այդ բառերի աղբյուրը հին մակեդոներենը չէ:

ἄκρουνοι «սահմանանիշ քարեր» (համա. հուն. ἄκρα «ծայր, գագաթ» < հ.-ե. ak'-, -r- «սուր քար»)—ակուռ (բրբռ).

βιλ- «սիրել, համակրել, բարեկամ» (=հուն. φιλ-) [Βιλ-ιππος (=հուն. Φίλ-ιππος), Βιλιστίχη հատուկ անուններում] (համա.

---

39 Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1307) խոճ «խոզ» (խոճ-կոր բառի մեջ) և, որոշ կասկածով, խոզ բառերի հետ միասին համարում է կովկասյան փոխառություն [նկատի ունի բարբ. ɣor- (վրաց. ɣor-, մեգր.-ճան. ɣeǯ-) «խոզ» արմատին պատկանող ձևերը, որոնց համար նշում են աբխազ-ադըղեյան (աբխ. -хьəə, ադըղ. кхъуэ) և նախյան (չեչ. хьака, բացբ. кха) զուգահեռները]։

40 Բխեցնում են հ.-ե. deru-, dŏru- «ծառ» նախաձևից, որտեղից հայ. տարգալ և տրամ:

41 Համեմատությունը կասկածելի է:

42 Համեմատում են հուն. μάσσω (ատտիկ. μάττω) «ճմլել, ճզմել, դանգել, շոշափել» բայի հետ, որ բխեցնում են հ.-ե. mag'-ից («ճմլել, ճզմել, դանգել, շոշափել») կամ men(ə)k-ից («ճմլել, ճզմել, դանգել, մանրել»): Համապատասխան հայ. մածուն-ը բխեցնում են mag'-ից կամ mad-ից («թաց, հյութալից». վերջինից հայ. մատաղ):

43 Ըստ Կանինիի՝ հ.-ե. medhu- «մեղր»+հայ. տակ «արմատ», ինչպես կազմությամբ համապատասխանող հուն. γλυκύρριζα բառը: Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 4, էջ 877—878) ստուգաբանությունը հարմար համարելով ըստ իմաստի՝ անհարմար է համարում հնչյունապես (մատու-ն չի կարող գալ ոչ հունական, ոչ էլ իրանական աղբյուրից):

44 Հ.-ե. k'er-ից («աճել, աճեցնել, սնել»), որտեղից հայ. սեր, սերունդ, սեռ, սերմ(ն):

45 Համեմատությունը կասկածելի է:

լիգ. bili- «նիզակ»՝ bi- նախ դիրանվան սեռականը, հուն. բառը համարում են հին անատ. աղբյուրից)—բերան «համակեր, սերող».

γαγγαν (հայց. հ.) «ճյուղ, փայտ, ճիպոտ»[46]—կառ «ծառի մեծ ճյուղ», կառ «փուշ»[47].

Հետաքրքրական է նշել, որ «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» գրքի՝ V դ. կատարված թարգմանության մեջ[48] հանդիպում է կարանն «մակեդոնական կանացի մի զգեստ» բառը «Առաքեցի բերել ձեզ զկարանն մակեդոնականն» նախադասության մեջ։ Այս բառը, անշուշտ, նույնն է Հեսիքիոսի հիշատակած κάρανος «կանացի գլխակալ, վարսակալ» էոլիական բառի հետ, որ հավանաբար եղել է նաև մակեդոներենում. այն մակեդոնական κάρανος «իշխան, թագավոր» բառի հետ միասին ծագում է հ.-ե. k'er- «մարմնի վերնամաս՝ գլուխ, եղջյուր» արմատից[49]։

Մակեդոնական կամ մերձավոր հունական աղբյուր կարելի էր ենթադրել հայ. քաղիրթ «անասունի ստամոքս, փորը» բառի համար՝ նկատի ունենալով մակեդ. Celetrum քաղաքանունը՝ համապատասխան հուն. κέλετρα-ին (համե. հայ. Զորափոր, Կողբոփոր տեղանունները), բայց այս բառերի համար ենթադրում են «մարգագետին, արոտավայր» (հուն. κέλλω «քշել») կամ «ձիթհանք» (հուն. κελετρόω «տրորել»)[50] իմաստները։

---

[46] Օ. Հոֆմանը համեմատում է լատվ. žàrs «ճյուղ» բառի հետ։ Ստակայն համե. հ.-ե. g'er-s- «ծռել, ճյուղ, թուփ», որտեղից հայ. ծառ, ծուռ և որտեղից, մի այլ լծորդի միջնորդությամբ, ծագած են համարվում համեմատվող հայ. կառ «ծառի մի ճյուղ» և կառ «փուշ» բառերը (տե՛ս հեղինակի „Очерки по истории дописьменного периода арм. языка" աշխատությունը, Երևան, 1967, էջ 185—186)։ Վերջին գլոսում համե. γάγγαν «ճյուղ, փայտ, ճիպոտ» (ըստ Հեսիքիոսի)։

[47] Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1000) համեմատում է հ.-ե. g'ers-ին պատկանող հուն. բառերի հետ, բայց տալիս է g^{u}rro- նախաձևը, որ Պոկոռնու մոտ չկա (կա g^{u}eru- «ձող, նիզակ»)։

[48] Սուտ-Կալիսթենէս, Վենետիկ, 1842։

[49] Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ. 3, էջ 1034) բերում է կարանն բառը առանց ստուգաբանության։ Հուն. κάρανος-ի համար համե. H. Frisk. Griechisches etymologisches Wörterbuch, I, էջ 788։

[50] Մեր „Очерки по истории дописьменного периода армянского языка" գրքում (Ереван, 1967, էջ 124) քաղիրթ-ը համեմատված է հուն. χόλιξ «փորոտիք» և ռուս. желудок բառերի հետ՝ որպես մի այլ հ.-ե. լծորդից հայերենին անցած բառ։ Այն կարելի էր համարել պելազգյան κέλετρον-ից, բայց բառի «փորի» իմաստը այդ իրավունքը չի տալիս։

Հատուկ անունների բնագավառում մակեդոներենից կատարված անմիջական փոխառություններ ամենայն հավանականությամբ չկան։ Հունաստանում և Մակեդոնիայում ընդհանուր գործածություն ունեցող Ἀλέξανδρος անվան հայ. Աղեքսանդր ձևը, որ հանդիպում է VIII դարից սկսած, հունական փոխառություն է։ Անձնանունների մեջ հանդիպող Ἀρραβαῖος և Առաւան, Βάλακρος և Բաղակ, Δέρδας և Դադէ (Դադիա) զուգահեռները կասկածելի են։ Պարզ չէ մակեդ. Ὀρόντας և հայ. Ὀρόντης անձնանունների փոխհարաբերությունը. հայ թագավորի Ὀρόντης անունը նույնացվում է Երուանդ-ի հետ (նաև Երվանդ, Երուանդ գրված)։ Ὀρόντης, Ὀρόντας անձնանունները հանդիպում են նաև իրանական ծագման անձերի համար և ներկայացնում են պհլ. Arvand-ի հունականացված ձևերը, մի անվան, որ փոխ է առնվել հայերենում Երուանդ ձևով. ամենայն հավանականությամբ իրանական ծագում ունի Երուանդ անունը (հմմտ. Եր բաղաձայնախումբը, որով սկսվող բառերը հայերենում իրանական ծագման են, եթե Եր-ն Եուր-ից չի ծագում)։ Սակայն մակեդոնական անվան համար իրանական ծագում ենթադրել դժվար է, մանավանդ որ -ντας-ը մակեդոնական սովորական ածանց է։

Կասկածելի են նաև տեղանունների և ցեղանունների բնագավառում հանդիպող այնպիսի զուգահեռները, ինչպիսիք են Sakos (գյուղանուն) և Սիսական[51], Ὄρμα (քաղաքանուն) և արմեն (=Urme, Arme՝ ուրարտական արձանագրություններում)։

§ 9. Մակեդոնա-հայկական ծագումնային զուգադիպումները գնահատելիս պետք է նկատի ունենալ հունա-հայկական զուգադիպումները, եթե հաշվի առնենք հունա-մակեդոնական լեզվական մերձավորությունը։ Հայտնի է, որ հայերենի և հուներենի զուգադիպությունների քանակը և որակը վկայում են այդ երկու լեզուների նախամիջնակների բարբառային նշանակալից մերձավորության մասին։ Դրանց հետ կարող են համեմատվել միայն հնդիրանա-հայկական զուգաբանությունները։ Եթե նկատի ունենանք մակեդոնական նյութի սղությունը, մակեդոնա-հայկական բառապաշարի ծագումնային զուգադիպումների քանակը փոքր չէ։ Որոշ կարգի բառային զուգահեռներ խոսում են հատուկ մերձավոր կապերի մասին. դրանց թվին են պատկանում ոչ միայն ἀργίπους— արծուի զուգահեռ ձևերը, որոնց մասին խոսվել է, այլև κίγ- [illegible]

[51] Ենթադրվում է սակերի անունից։

(Λίγχνίς անվանման մեջ)—այծ. πέλιος «ծերունի» (բաղ. «ալեհեր») ալի-ք «ալիքավոր մազ» (հմմտ. ալեոր, ալեհեր, ալեզարդ) զուգահեռները: Շատ կարևոր է նաև κίκερροι (հգն.) «ոլոռ» և սիսեռ զուգահեռը, որ հավանաբար վերականգնվող k'ik'er-ի ոչ հնդեվրոպական բնույթ ունենալու դեպքում էլ խոսում է մակեդոնա-հայկական հնագույն կապերի մասին (նախքան հայերենում հ.-ե. քմայնացած ատամնաշրթնայինների՝ կիսաշփականների ու շփականների վերածվելը):

Մակեդոնա-հայկական հնչյունական զուգահեռները մեծ մասամբ ընդհանուր են նաև հունարենի համար: Դրանց թվին են պատկանում բառասկզբնային s-ի անկումը, վանկարար ձայնորդների՝ a ձայնավորումն ստանալը, միջձայնավորային i̯-ի անկումը (հայերենում միայն մասնակի դեպքերում) և այլն: Կան նաև մակեդոնա-հայկական առանձին հնչյունական զուգահեռներ, որոնց դեպքում հունարենը շեղվում է՝ հ.-ե. bh, dh, gh-ի դիմաց մակեդ. β, δ, γ և հայ. բ, դ, գ (հուն. φ, θ, χ)[52], հ.-ե. ō-ի դիմաց մակեդ. ω և հայ. ու (հուն. ω), հ.-ե. en-ի դիմաց մակեդ. ιν և հայ. ին (հուն. εν) և այլն:

§ 10. Եթե Βέρ(ρ)οια-ն նաև բուն մակեդոնական քաղաքանուն է (և ոչ թե միայն Թրակիայում), ապա պետք է նշել նրա զուգադրումը հայոց Barrai̯a (Parrai̯a) քաղաքանվան հետ: Այդ դեպքում թերևս կապ կարելի է տեսնել նաև Almana և Ḫalimana, Ἄρνισσα և Arnii̯a անվանումների, Γυγαία և Ḫugganaš, Κάρανος (Κόρανος) և Karanniš, Κεβαλῖνος (և այլ Κέβαλος) և Gabildii̯iš անձնանունների միջև:

---

52 Ավելորդ չենք համարում նշել, որ մակեդ. β, δ, γ—հուն. φ, θ, χ համապատասխանությունը խոսում է հ.-ե. bh, dh, gh շնչեղ ձայնեղների վերականգնման հավաստիության մասին:

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԹՐԱԿԵՐԵՆՆ ՈՒ ԴԱԿԱ-ՄԻԶԻԵՐԵՆԸ

§ 1. Թրակացիները հին աշխարհի մեծաթիվ ժողովուրդներից մեկն են եղել: Հին աղբյուրներում պահպանվել են մի քանի տասնյակ թրակյան ցեղանուններ: Թրակյան (ներառյալ և դակա-միզիական) ցեղերը[1] մեծ դեր են խաղացել բուլղարների, ռումինների, հունգարների, ալբանների կազմավորման մեջ՝ դառնալով նրանց կարևոր բաղադրամասերը: Հին ժամանակներում թրակացիները (լայն առումով) զբաղեցնում էին Բալկանյան թերակղզու արևելյան մասը՝ Ստրիմոն (այժմ՝ Ստրումա) և Դանուբ գետերի միջև ընկած տարածությունը: Պատմական Թրակիան այժմ բաշխված է Բուլղարիայի (հյուսիսային մասը), Հունաստանի (արևմտյան մասը) և Թուրքիայի (արևելյան մասը) միջև: Արևելյան կողմում թրակյան ցեղերը շփման մեջ էին սկյութացիների հետ՝ մինչև խառնվելու աստիճան: Թրակյան տարրեր են հանդիպում նույնիսկ կիմերների մեջ: Թրակացիները զգալի դեր են խաղացել նաև Փոքր Ասիայում, որտեղ նրանք երևացել են աստիճանաբար, հարյուրամյակների ընթացքում: Մ. թ. ա. XII դ. փռյուգացիների հայտնի արշավանքի ժամանակ Փոքր Ասիա են ներխուժում նաև թրակյան ցեղեր: Փռյուգացիների հետ են եղել և միգերը, որոնց, ինչպես կտեսնենք ստորև, ոմանք նույնացնում են մուշկերի հետ. սրանց հետևել են թյուններն ու բիթյունները (հմմտ. Բիթյունիա): Տրոյայի պատմության մեջ ևս կարևոր դեր է խաղացել թրակյան տարրը:

Մ. թ. ա. I հազարամյակի սկզբներին թրակացիները արդեն հասել էին կուլտուրական զարգացման բավական բարձր մակարդակի: Դանվելով առևտրական մի շարք կարևոր ճանապարհների

[1] Դակա-միզիերենը սովորաբար նույնացվում է թրակերենի հետ: Այդ երկու լեզուների տարանձնացնելու գիտական լուրջ փորձ կատարվել է միայն վերջերս՝ հատկապես Վ. Գեորգիևի կողմից:

վրա և ունենալով աշխարհագրական կարևոր դիրք՝ Թրակիան հաճախակի է ենթարկվում նվաճողական արշավանքների, դառնում պայքարի ասպարեզ և ավելի կամ պակաս չափով կախման մեջ ընկնում զանազան ժողովուրդներից: Թրակիայի պատմական բախտի մեջ առանձնապես կարևոր դեր են խաղում հույները, պարսիկները, մակեդոնացիները, հռոմայեցիները: Վերջիններս մ. թ. ա. I դ. վերջնականապես նվաճում են Թրակիան և կազմում առանձին պրովինցիա՝ Միզիա (Մյուզիա) անունով: Արևելյան Հռոմեական կայսրության կազմվելուց հետո Թրակիան մտնում է նրա կազմի մեջ: Մ. թ. V—VI դդ. Թրակիայում սկսում են մասսայական բնակություն հաստատել սլավոնները, որոնք կարճ ժամանակում համաձուլում են տեղական բնակչությանը: Թրակերենը դադարում է որպես կենդանի լեզու գոյություն ունենալուց՝ դառնալով մի շարք լեզուների համար ենթաշերտ:

§ 2. Թրակերեն լեզվի մասին մեր ունեցած տեղեկությունները շատ մեծ չեն: Նրա մասին գաղափար են տալիս քսանհինգի չափ համառոտ արձանագրություններ (հունական տառերով), հունական և լատինական տեքստերում պահպանված բառեր (գլոսսաներ), բավական մեծ քանակությամբ (հազարի հասնող) տեղանուններ և անձնանուններ, այլև բալկանյան մի շարք լեզուների անցած զանազան բառեր:

Թրակերենի վերաբերյալ առաջին լուրջ ուսումնասիրությունը պատկանում է Վ. Տոմաշեկին, որի «Հին թրակացիները» աշխատության մեջ ի մի է բերվել թրակերենի մասին այն ժամանակ հայտնի ողջ նյութը[2]: Այդ աշխատության հրատարակությունից հետո կատարված նոր հայտնագործությունները, թրակերենի վերաբերյալ նոր նյութերի հանդես գալը անհրաժեշտ են դարձնում Վ. Տոմաշեկի աշխատության հետագա լրացումը և համապատասխանաբար նրա եզրակացությունների վերանայումը: Այդ աշխատանքը կատարում է բուլղարացի լեզվաբան Դ. Դեչևը[3],

---

[2] W. Tomaschek, Die alten Thraker, „Sitzungsberichte der Wiener Akademie der Wissenschaften, Phil.—hist. Klasse“, 128, 130, 131, 1893—1894.

[3] Д. Дечев, Характеристика на тракийский език, София, 1952 [Charakteristik der thrakischen Sprache. գերմաներեն մասի վերամշակված (համառոտ) հրատարակությունը լույս է տեսել „Linguistique balkanique“-ում, II, 1960, էջ 145—213]. D. Detschew, Die thrakischen Sprachreste, Wien, 1957.

որի հայտնած տեսակետները թրակերենի բնույթի մասին, սակայն, ընդունելություն չեն գտնում[4]: Թրակերենի ուսումնասիրության մեջ նշանակալից ավանդ է մուծել նաև մի ուրիշ բուլղարացի լեզվաբան՝ Վ. Գեորգիևը, որի գիրքը հատկապես կարևոր է թրակերենի բնույթի և այլ լեզուների հետ նրա ունեցած փոխհարաբերության վերաբերյալ մեր ունեցած պատկերացումները ճշտելու հարցում[5]:

§ 3. Թրակերենի հնդեվրոպական բնույթի հարցը լեզվաբանության մեջ երբեք կասկածի տեղիք չի տվել: Սակայն մինչև օրս էլ լրիվին պարզված չի կարելի համարել թրակերենի՝ հնդեվրոպական այլ լեզուների հետ ունեցած հարաբերության հարցը: Երկար ժամանակ տարածված էր այն կարծիքը, որ թրակերենը մոտ է փռյուգերենին և նրա հետ միասին կազմում է հնդեվրոպական լեզուների առանձին ճյուղ: Վ. Տոմաշեկի և Պ. Կրեչմերի կողմից պաշտպանվող այս տեսակետը բնականաբար ազդում է նաև հայագիտական ուսումնասիրությունների վրա, որոնց մեջ հայ-թրակյան զուգահեռները երբեք չեն տարբերակվում հայ-փռյուգական զուգահեռներից[6]:

Դ. Դեչևը իր ուսումնասիրությունների հետևանքով գալիս է այն եզրակացության, որ թրակերենը և փռյուգերենը մերձավոր ցեղակիցներ չեն. դրանցից առաջինը satəm տիպի լեզու է, երկրորդը՝ centum: Սակայն դրա հետ միասին Դեչևը հայտնում է այն կարծիքը, որ թրակերենը իրանացած էտրուսկյան կամ էտրուսկատիպ լեզու է, այսինքն՝ առաջացել է որպես արդյունք իրանական և էտրուսկյան լեզուների խաչավորման, ընդ որում Դ. Դեչևը էտրուսկերենը դիտում է որպես ոչ հնդեվրոպական, ամենաշատը հնդեվրոպատիպ լեզու: Դրա հետ միասին՝ Դեչևը թրակերենը համարում է ալբաներենի հիմքը և որպես satəm տի-

[4] Տե՛ս. В. И. Абаев, „Вестник древней истории", 1954. 2, էջ 86—90. Б. И. Надэль, „Вопросы языкознания", 1955, 2, էջ 138—143. M. Lejeune, „Bulletin de la Société linguistique de Paris", L. 2, 1954, էջ 86—90. B. Saria, „Südost-Forschungen", XIV, 1955, էջ 330—331. S. Bondarczuk, „Wiener slawisches Jahrbuch", IV, 1955, էջ 171—182 և այլն։

[5] В. Георгиев, Тракийският език, София, 1957. Նույնի Исследования по сравнительно-историческому языкознанию, М, 1958 և այլն։

[6] Տե՛ս., օրինակ, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940, էջ 128 և հհ. (տե՛ս հատկապես 131—132 էջերում անցկացված համեմատությունները)։

այն չէր արմատապես տարբերվում centum տիպի լեզուներից: Թրակերենի հնչյունական ընդհանուր բնութագիրը բավականաչափ մոտ է պելազգերենին, և հետևաբար հարց է առաջանում թրակա-պելազգյան մերձավոր կապերի մասին:

Թրակերենի հետագա հետազոտողները, հատկապես Վ. Գեորգիևը, նշում են, որ եղած նյութի մեջ պետք է տարբերել առնվազն երկու շերտ՝ բուն թրակերենը և դակա-միզիերենը: Առաջինը ենթարկվել է բաղաձայնների տեղաշարժի և իր բնույթով հեռու է ալբաներենից, երկրորդը բաղաձայնների տեղաշարժի չի ենթարկվել և մերձավոր ցեղակից է ալբաներենին՝ հանդիսանալով նրա հիմքը[7]: Այս դեպքում, սակայն, դեռևս լիովին պարզ չէ դակա-միզիերենի և իլլիրերենի փոխհարաբերության հարցը. ինչպես նշվել է, որոշ հետազոտողներ մերձավոր կապեր են տեսնում իլլիրերենի և ալբաներենի միջև՝ ընդհուպ մինչև ալբաներենը իլլիրերեն լեզվի հաջորդ համարելը:

Առանձնապես կարևոր է նշել, որ Վ. Գեորգիևը, նույնացնելով միզիերենը մուշկերենի հետ (μυσοί—μόσχοι), հայերենի մեջ տեսնում է երկու շերտ՝ փռյուգա-հայկական և թրակյան կամ միզիական[8]:

§ 4. Թրակերենին հատուկ են հնչյունական հետևյալ կարևոր առանձնահատկությունները:

1) Հ.-ե. պայթականները ենթարկվում են տեղաշարժի՝ հ.-ե. bh, dh, gh > թրակ. b, d, g. հ.-ե. b, d, g > թրակ. p, t, k. հ.-ե. p, t, k > թրակ. ph, th, kh[9], ընդ որում ա) dht, dt կապակցությունները փոխարինվում են st-ի. բ) տեղի է ունենում g(h)-ի և d-ի քմայնացում i-ից (i-ից) առաջ գտնված դիրքում. գ) բառի մեջ երկու

---

[7] Հմմտ. В. Георгиев, Исследования..., էջ 136. Տե՛ս նաև V. Georgiev, Albanisch, Dakisch-Mysisch und Rumänisch. Die Herkunft der Albaner, „Linguistique balkanique", II, 1960, էջ 1—19. Նույնի Die dakischen Glossen, „Linguist. balk.", VIII, 1964, էջ 5—14: Ռումիներենի մեջ դակա-միզիական ենթաշերտի (սուբստրատի) բառերին կողմի ուսումնասիրությանն են նվիրված Ի. Ռուսուի հոդվածները՝ „Рассуждения о дако-мизийском субстрате румынского языка" „Linguist. balk.", VIII, 1964, էջ 15—45 և „Современное состояние вопроса о субстратных элементах румынского языка", „Linguist. balk.", XI, 2, 1967, էջ 21—56:

[8] В. Георгиев, Тракийският език, էջ 77—83:

[9] Քանի որ մոտավորապես մ. թ. ա. III դ. հետո φ, θ, χ-ն փոխվում են շփականների, ուստի և թրակ. ph, th, kh-ն արտահայտվում են π, τ, κ-ով:

շնչեղների ակլայության դեպքում առաջինն ապաշնչեղանում է. գ) այլ բաղաձայնից առաջ գտնվող դիրքում (tr, kr և այլն), այլև s-ից հետո (sp, st, sk) խուլերի շնչեղացում տեղի չի ունենում. ե) mp, այլև երբեմն nk, nt, rt, rk և pr, tr, kr կապակցություններում տեղի է ունենում խուլերի ձայնեղացում. զ) l-ից հետո գտնվող դիրքում ձայնեղները կարող են պահպանվել. է) մի շարք կապակցություններում տեղի է ունենում, առնմանում, տարնմանում և պարզում՝ kt>θ (th, t). dht, dt, tt>st. dhs, ts>ss. kþ> s. dl>cl (=kl), pt>tt:

Դակո-միզիերենում անցաշարժ չկա. նշելի է միայն, որ շնչեղ-ձայնեղները խառնվում են ձայնեղների հետ:

2) Հ.-ե. քմայնացած ետնալեզվայինները (g'h, g', k') ենթարկվում են satəm լեզուների համար ընդհանուր փոփոխությունների՝ վերածվելով z-ի (ð) և s-ի (θ):

3) Հ.-ե. շրթնայնացած ետնալեզվայինները ապաշրթնայնանում են:

4) Հ.-ե. s-ն պահպանվում է՝ նախաձայնավորային և միջձայնավորային դիրքում հանդես բերելով ձայնեղանալու (z-ի վերածվելու) միտում. sr կապակցությունը տալիս է str, sn-ն՝ n(n)[10]:

5) Հ.-ե. r, l, m, n ձայնորդները հիմնականում պահպանվում են, ընդ որում նկատվում է m-ի և b-ի շփոթում. վանկարար ձայնորդները (r̥, l̥, m̥, n̥) վերածվում են ur, ul, um, un-ի, դակո-միզիերենում՝ ri-ի (?) և a(n)-ի:

6) Հ.-ե. u̯-ն հիմնականում պահպանվում է՝ որոշ դիրքերում [r-ից, (g'>) z-ից, dh-ից առաջ և g'h-ից, g'-ից հետո] տալով b (h) և կրելով որոշ այլ մասնակի փոփոխություններ (u̯l)>ll և այլն):

7) Հ.-ե. ձայնավորների քանակական տարբերությունները մ. թ. ա. V դարից սկսած վերանում են. հ.-ե. ŏ-ն փոխվում է a-ի: Համեմատաբար ուշ շրջանում տեղի է ունենում երկբարբառների մասնակի պարզեցում:

Հնչյունական զուգահեռների լույսով հայերենը ընդհանրապես ավելի մոտ է թրակերենին, քան դակո-միզիերենին. հայե-

---

10 Հետաքրքրական է հ.-ե. rs կապակցության փոփոխության մասնակի զուգահեռությունը՝ հայ. թառամ—թարշամ և թրակ. Δαρζος (գետանուն)—Δερσαι (ցեղանուն) (հ.-ե. dhers-«համարձակվել»): Սակայն Δαρζος ձևը հավանաբար բուն մակեդոնական է:

րենին և թրակերենին հատուկ են և բաղաձայնների տեղաշարժը, և ստամնայնությունը, իսկ հայերենին և դակո-միզիերենին՝ միայն ստամնայնությունը: Հնչյունական տեսակետից հայերենի և թրակերենի հարաբերությունը մոտավորապես նույն տիպի է, ինչ հայերենի և պելասգերենի հարաբերությունը. ընդհանրապես թրակերենը խիստ մոտ է պելասգերենին՝ մինչև բարբառային ընդհանրության աստիճան: Հայերենը թրակերենից տարբերող հնչյունական գծերից նշելի են հ.-ե. քմայնացած ետնալեզվայինների, վանկարար ձայնորդների, օ-ի, բաղաձայնական որոշ կապակցությունների փոփոխության տարբերությունները: Ընդհանուր գծերից մատնանշելի են ստամնայնությունը, բաղաձայնական տեղաշարժը, հ.-ե. քմայնացած ետնալեզվայինների հետագա՝ մասնակի քմայնացումը, ձայնորդներից հետո գտնված դիրքում խուլերի ձայնեղացումը (հայերենում՝ բոլոր, թրակերենում՝ մասնակի դեպքերում) և այլն:

§ 4. Հնդեվրոպական հնչույթային համակարգի՝ թրակերենում, դակո-միզիերենում և հայերենում կրած փոփոխությունները կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով[11] (տե՛ս էջ 50).

§ 5. Հայ-թրակյան ծագումնային զուգադիպումները թեև չեն խոսում հ.-ե. միասնության ներսում հայերենի և թրակերենի նախամիջնականների հատուկ մերձավորության մասին, բայց ցույց են տալիս, որ նրանց կապերը այնուամենայնիվ ավելի մերձավոր են եղել, քան, օրինակ, հայերենի և խեթա-լուվիական լեզուների նախամիջնակներինը: Հայ-թրակյան հիմքակազմական, արմատակազմական, հնչյունափոխական, իմաստային մերձավոր զուգադրությունները (իզոգլոսները) ավելի մեծ թիվ են կազմում, քան խեթա-լուվականները: Կարելի է ասել, որ հայ-թրակյան բարբառային իզոգլոսները իրենց քանակով և որակով միջին տեղն են գրավում մի կողմից՝ հայ-հնդիրանական և հայ-հունական, մյուս կողմից՝ հայ-խեթա-լուվական, հայ-կելտական, հայ-իտալական զուգադրությունների միջև:

Հայ-թրակյան ծագումնային զուգադիպումները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) մերձավոր և բ) սովորական (հնդեվրոպական ընդհանուր արմատ ունեցող): Առաջին կարգի զուգադիպումների համար բնորոշ են հետևյալ ընդհանուր գծերը.

---

11 Նկատի ենք առնում հիմնականում բառակզբնային դիրքը հին շըրջանի վկայություններում և դրանց առնում զուգորդումները:

Հ.-ե.	Թրակերեն	Բալթ-սլավ.	Հայերեն	Հ.-ե.	Թրակ.	Բալթ-սլավ.	Հայերեն
bh	b (m)	b	բ	r̥	ur	ri (?)	ար
dh	d	d	դ	l̥	ul	?	ալ, աղ
g'h	z (ž)	z (ž)	ձ	m̥	um	?	ամ
gh	g	g	գ	n̥	un	a(n)	ան
gʷh	g	g	գ	i	i	i	ի
b	p	b	պ	ī	ī	i	ի
d	t	d	տ	u	u	u	ու
g'	s (š)	z (ž)	ծ	ū	ū	u̯>ū	ու
g	k	g	կ	e	e	ie (e), ia (a)	ե
gʷ	k	g	կ	ē	ē	ä>ā>o	ի
p	ph	p	հ	o	a	a	ո
t	th	t	թ	ō	ō	o̯>e	ու
k'	s (š)	s (š)	ս	a	a	a	ա
k	kh	k	ք	ā	ā	ā>o	ա
kʷ	kh	k	ք	ei	ei	e	է
s	s	s	հ, յ,—	oi	ai	ai>a (?)	է
r	r	r	ր	ai	ai	ai>a	այ
l	l	l	լ, ղ	eu	eu	e	ոյ
m	m	m	մ	ou	au	au>a	ոյ
n	n	n	ն	au	au	a	աւ
i̯	?	?	ջ	ə	a (e)	a	ա
u̯	u (b, β)	?	գ				

1) Հիմքերի կազմության համառոտություն.

Βόλουρος (տեղանուն) (հ.-ե. bhel- «ուռչել»)—բուլոր, բլուր, -ոյ, այլև բլրան.

-βουνον, -βοννον (Κασι-βουνον, Κασι-βοννον տեղանուններում) (հ.-ե. bheu- «աճել, լինել. բնակվել»)—բուն, -ոյ. բույն,-ոյ.

Δούνον (τεῖχος), Δαύνιον (տեղանուն) (հ.-ե. dheu-n- «պատսպարել», համմտ. հին անգլ. dūn «բլուր, լեռ»)—Դունի։

-ελῆται, -eleti, -ηλῆται, -ήλητοι, -ελῆται (Δενθ-ελῆται, Denth-eleti, Δενθ-ελῆται, Δενθ-ήλητοι, Δαντ-ελῆται ցեղանվան մեջ) (հ.-ե. el- «շարժել, շարժվել»)—ելանել, այլև ելուզանել.

Γερμ(ι)- (Γερμανια~Γέρμας, Γερμαζα տեղանուններում, Germetitha գյուղանվան մեջ) (հ.-ե. gʷher-, gʷher-mo- «ջերմ»)—ջերմ, -ոյ.

Marene (տեղանուն) (հ.-ե. mer- «առկայծել»)—մառն «մթություն».

-μαρτος (Ζι-μαρτος, Ισ-μαρτος անձնանվան մեջ), Σμερτο-, Ζμερτο- (Σμερτο-μαρα, Ζμερτο-μαρος անձնանուններում) [հ.-ե. (s)mer-d-, mer- «տրորել»]—մարտ «կռիվ»[12].

Παιταλία, Peutalia (տեղանուն), Παιταλος (անձնանուն) (հ.-ե. beu-d- «ուռչել»)—պոյտն, թերևս նաև պտուղ.

-σιρα, -σιρος (Μαι-σιρα, Μα-σίρος, անձնանուններում՝ իգ. և ար.) (հ.-ե. k'ei- «պառկել», k'ei-ro-)—սէր, -ոյ.

-spardo (Natu-spardo անձնանվան մեջ) [հ.-ե. (s)p(h)ered(h)- «ցնցվել, ցատկել»]—սպրդել.

Στευρμαιος (մականուն) (հ.-ե. st-eu- «հոծ, պինդ, ամուր, հաստ, ստվար»)—ստուար.

-ταρος, -ταρις-, -thari-, -tarus, -ταρις, -ταρης, Ταρο- (Βειθ-ταρας, Βεσ-ταρας և այլ անձնանուններում, Συρο-ταρης գյուղանվան մեջ) (հ.-ե. dō- «տալ», dō-ro-, də-ro- «նվեր»)—տուր-ք.

Τιλθ- (Τιλθ-αζεις գյուղանվան մեջ) (հ.-ե. del- «ճեղքել»)—ատաղձ[13].

2) Արմատի կազմության և ձայնավորման համընկնում.

Αἰζική (տեղանուն)[14] (հ.-ե. aig'- «այծ»)—այծ, -ի, -ից.

Iuras (գետանուն) (հ.-ե. u̯er-, ūr- «ջուր, անձրև, գետ»)—ջուր, -ոյ (*i̯uro-)[15], այլև գայլ (*u̯erı̯o-) տիպի».

---

12 Ըստ Վ. Տոմաշեկի, որ հիշում է նաև mr-to- (հ.-ե. mer- «մեռնել») ձևից ծագելու հնարավորությունը:

13 Տոլի «խաղողի որթ» բառը գալիս է ուրարտերենից:

14 Հմմտ. և դակյան Αἰζιζις տեղանունը:

15 Եթե ջուր բառը ծագում է g̑ʷhdōro- ձևից (հ.-ե. g̑ʷhder- «հոսել»), ապա թերևս ճիշտ է Վ. Տոմաշեկը, որ Թրակ. Zyras գետի անունը համեմատում է ջուր. Zorlanae տեղանունը՝ ջրեղեն բառերի հետ: Նույն ջուր բառի հետ համեմատվող Τζουρουλός, Τζυρολλός տեղանունները ավելի շուտ նման է հայ. ձորել (հմմտ. և քորել, սորել) բայերին (քորել-ը ծագում է հ.-ե. (s)ter- «ճզմելով հեղուկը արտամղել»)։

Πλείστωρος (դիցանուն), Πλείστωρ (անձնանուն), πλεῖστοι «գա-կերի մոտ հարգված քուրմեր (Ζάλμοξις աստծու) և ճգնավորներ» (հ.-ե. plei-s-, pel- «լցնել»)— լի, թերևս նաև լցի.

Ὕπιος, Ὕππιος (գետանուն) (հ.-ե. ub- «սեղմել, հուպ տալ») —հուպ[16].

3) Իմաստային զուգահեռություն.

Κεβλος (գետանուն) (հ.-ե. geu- «ծռել»)—կոր «ոլորքեկ ջը-րանցք, առու».

4) Ձայնավոր նախահավելվածի առկայություն.

Ἀνά- (Ἀνα-γογκλί, Ἀνά-δραμος տեղանուններում) (հ.-ե. eneṷn «ինը»)—ինն.

5) Համալեզվային բաղաձայնների քմայնացման զուգահե-ռություն.

Ζερμι- (Ζερμι-ζεγα տեղանվան մեջ՝ Γερμί-ζερα ձևի կողքին) (հ.-ե. g^{u}her-, g^{u}her-mo- «ջերմ»)—ջերմ, ջերմն, ջեռ

§ 6. *Բերենք թրակա-հայկական երկրորդ կարգի ծագումնա-յին զուգադիպումները՝ ըստ հ.-ե. հնչույթների խմբերի.*

1) Հ.-ե. bh, dh, gh.

Βα-, -βα; (Ba-cauca տեղանվան մեջ, Βα-ιστας, Βαρσα-βας, Βοτ-βας, Βυρ-βας, Βυ-βας անձնանուններում) (հ.-ե. bhā- «փայլել»), Βενναῖοι, Βεννασιοι (Beni-ի կողքին) (ցեղանուններ), Βεννικά (երկրի անուն) (հ.-ե. bhō-s-: bhə-s- «փայլել»), -βαιλος, -βαλον, -balus, -βαλις (Κερσι-βαυλος, Deci-balus, Δρει-βαλις անձնանուններում և Τρι-βαλλοι, Tri-balli ցեղանվան մեջ) (հ.-ե. bhāu- «փայլել»)[17]—բանամ.

Βαλας, Βαλης, Balius (անձնանուններ) (հ.-ե. bhel- «փայլել, սպիտակ»)—բալ «մշուշ».

Βενδῖς, Βένδις, Μενδις (դիցանուն), Βενδις, Βενδον, Βενζεις, Μεν-δεις, Ουενδις (անձնանուն) (հ.-ե. bhendh- «կապել»), Βεσσοι (ցեղա-նուն) (հ.-ե. bhendh-so-, bhendh- «կապել»)—պինդ (bendh- <bhendh-), պարապանձիմ[18].

---

[16] Եթե հայ. բառը կապ չունի հ.-ե. upo-ի հետ («տակ, հուպ, ընդհուպ»), որ համարժեքն է. լատ. sub-ը, որ համեմատվում է հայ. հուպ-ի հետ, ծա-գում է (ek)s-+ub/up-ից: Սակայն համեմատում է ըստ. upe «վեր» բառի հետ:

[17] Մեկ l-ի գծագրում հնարավոր է ենթադրել նաև հ.-ե. bhel- «փայ-լել»:

[18] Μενδόκης «ծերձակալ», ջոկի բառը, որ ստուգաբար բխեցնում են bhendh- արմատից, Գ. Ղեչեր ավելի ճիշտ է համարում հանգեցնել հ.-ե. mand- «ճյուղերից հյուսված բան (զամբյուղ, կապ)» արմատին: NB Թը-րակ. Հ—: և հայ. դ—ձ անցումը:

Βέργη, Βέργα, Βέργιον, Βεργε-πολις, Βεργούλη, Βεργε-δαβα, Βερ-βεγα (տեղանուններ) (հ.-ե. bherg'h- «բարձր»)[19] — բարձր, բարձ-րաբերձ, բառնամ.

Βερόη (տեղանուն և անձնանուն), Βέρ(ρ)οια, Βερόεια, Βερ(ρ)όη, Bero(e)(a), Biroe (տեղանուն), Βεροαίος, Beroeaeus (ցեղանուն), Βηρει-, Βηρη-, Βηρι-, -βηρας (Βηρει-σαδης, Βηρι-μαρος անձնանուն-ներում, Βηρη-ταρος, Βηρί-παρα տեղանուններում. համեմ. և Ξαι-βηρας), βερ-, βηρα-, βειρα-, βερ-, βερ,-βηρα, -βερ «այր, մարդ» (անձնանունների բաղադրիչ) (հ.-ե. bher- «բերել»)— բերեմ, բերրի.

Βι- (Βι-Βυσοι ցեղանվան մեջ, Βι-βαστος, Βι-ραζος տեղանուն-ներում) (հ.-ե. ambhi : m̥bhi «երկու կողմից, շուրջը, շուրջ»)—ամ-բողջ.

Βλοσ- [Βλοσ-ρατιες ցեղանվան մեջ (Արտեմիսի մակդիրը)] (հ.-ե. bhel- «տերև, ծաղիկ, բողբոջ, բողբոջել»)—բող, բողբոջ, բողկ, բողջ «պալար».

Βου-, Βυ- (Βου-βας, Βου-ταρας, Βυ-τορμα անձնանուններում և Βυ-ραζος տեղանվան մեջ) (հ.-ե. bheu- «աճել»)—բույս, բույն, բուն[20].

βρῦτος, βρῦτον, βρῦτος «գարուց պատրաստված խմիչք, գարե-ջուր» [հ.-ե. bh(e)reu-, bher- «հեղվել, եռալ»]—բրոր «պղպջակ» (հատկապես խմորումից պղտորված), ալէ բարկ, արբեր (ար-բեր)[21].

Βύζας (-αντος, համեմ. Βυζάντιον), Βύζης, Βυζος (անձնանուն) (հ.-ե. bhūg'o-s «արու այծ, քաղ»)—բուծ «կաթնակեր գառ կամ ուլ».

Αβρο- (Αβρο-ζελμης, Αβρο-ζεος, Αβρού-πολις անձնանուններում) (հ.-ե. abhro- «ուժեղ, զորեղ»)[22]—աբրուն «շքափառություն, զո-րություն, աստվածություն»[23], թերևս նաև Աբրուն (անձնանուն).

Πυνδα (քաղաքանուն) (հ.-ե. bhudh-, bhudhno->bhundho- «գետին, հատակ, տակ»)[24]—անդունդ.

-δαβα, -δαυα, -deba, -deva (բազմաթիվ տեղանունների բա-

---

19 Կենտումայնություն։

20 Գ. Ջահուկյանը միտում է թրակ. βυσ-, βυ- արմատի հ.-ե. g^{u}ou-ից ծա-գելու հնարավորությանը (համեմ. Վ. Տոմաշեկի մոտ)։

21 Բրոր բառի ստուգաբանությունը հեղինակինն է։

22 Գ. Ջահուկյանը կապում է Ἕβρος, Hebrus, Ebrus գետանվան, ցեղանվան և անձնանվան (հետ. ըստ Հեսիքիոսի նշանակում է «այծ, ոչխար»)։

23 Հայ. բառի ստուգաբանությունը հեղինակինն է։

24 Ըստ Վ. Գեորգիևի։

գաղթիչ), Δάτον, Δάτον, Δατος, Datos (տեղանուն), Δατος, Datus, Δατας (անձնանուն). Δατο- (Δατο-λαπτοι ցեղանվան մեջ) (հ.-ե. dhē- «դնել»)—դնել, դիր-ք.

Δαλα-, Δαλαι-, Δαλη- (Δαλα-ζελμις, Δαλαι-τραλις, Δαλη-πορις անձնանուններում) (հ.-ե. dhăl- «ծաղկել, կանաչել»)—դալուկն, դալար, դեղ «բույս», դեղր, դեղձ, դեղին (հ.-ե. dhel-)[25].

Δαρζαλας, Δερζαλας (ցեղանուն), Δαρικος (անձնանուն), այլև թերևս Δάρανδος, Τάρανδος (քաղաքանուն) (հ.-ե. dhereg'h-, dher- «պահել»)—դարեմ, դադար.

Δεβελτός, Δευελτος, Develton, Deultum, Dibaltum, Δουελτος (տեղանուն) [հ.-ե. dh(e)u̯el-, dheu- «շնչել, պտտվել, փչել, ծուխ և այլն»)—դեղևիմ.

Δελικος (լճի անուն) (հ.-ե. dhel- «փայլել»)—դեղին[26].

Δερει-, Δερο- (Δερει-ζενις, Δερο-ζανθης անձնանուններում) (հ.-ե. dhu̯er- «դուռ»)—դուռն (հմմ. դուրս).

-διζα, -διζος, -disza, -dizos (Τυρό-διζα, Κιστι-διζος, Oru-disza, Tarpo-dizos «ամրոց, բերդ»)—դէզ, դիզանել.

Δοτ-, Dot-, Δυτ-, Διτ- (Δοτιος, Δοτους, Dotus[27], Δυτανις, Δυτον-πορις, Δυτου-τραλις, Διτυ-βιστος, Διτυλας, Διτυ-παιβις անձնանուններում) [հ.-ե. dhē-, dhē-dhē-] —մանկական բառ՝ ընտանիքի մեծ անդամներին նշանակելու համար]—դա՛դէ «ո՛վ քույր» (Վանի բրբռ.), դադո «մեծ քույր» (Մուշի, Սալմաստի բրբռ.).

-γανα (Μαγανα անձնանվան մեջ, հմմ. և Μαλα-γανα) (հ.-ե. ghou- «նկատել»)—գովել.

2) Հ.-ե. b, d, g.

Παλα- (Παλα-δενηνός ցեղանվան մեջ) (հ.-ե. bol- «պալար, գնդաձև ուռուցք»)—պալար[28].

*Ταρασις (անձնանուն՝ Ταρασι-δανα տեղանվան մեջ) [հ.-ե. da(i)- «բաժանել»]—տուն (*dāp-ni-).

Tarsus, Tarsa (անձնանուններ) (հ.-ե. derk'- «նայել»)—տեսանել.

Τηρεύς, Τήρης (անձնանուններ), Tierna (տեղանուն) (հ.-ե.

---

25 Հմմտ. և Δελκος։ հ.-ե. dhal- և dhel- արմատները ակնհայտորեն կապված են։

26 Հմմտ. Δαλα-։

27 Ըստ Ցանկերի՝ արմատական ձայնավոր ունի։ Դ. Դեչևը համեմատում է սա և մյուսները սիրիլ. Δοταις, Δοτας, Δοταρης անձնանունների հետ։

28 Հմմ. բառի մեջ օ>ա անցումը ցույց է տալիս նրա ոչ բնիկ լինելը։

der- «քերթել», որտեղից հուն. δέρας «մորթություն, պայքար, մարտ»)—տանեմ, տես «կռշատել».

Τι-, Tiu- (Τι-τορμος, Τι-τορμις անձնանվան մեջ և Tiu-tiamenus տեղանվան մեջ), Σι-, Σει-, Si- (Σιαλεται ցեղանվան մեջ, Σειταλκης, Siburrenus անձնանուններում), Τιον (քաղաքանուն), -titha, -tita, Tith- (Germe-titha գյուղանվան և Nusa-tita, Τιθα, Titha, Tithutes, Τιθυτα անձնանունների մեջ) (հ.-ե. dei- «փայլել», dit- «փայլ»)—տիւ.

Τόμοι, Τόμις, Τόμις (քաղաքանուն) (հ.-ե. dem- «կառուցել»)—տուն[29].

Δινι-, -dinus (Δινι-κανθης, Dini-bales, Dias-dinus անձնանուններում) (հ.-ե. duei- «վախենալ»)—երկիւղ.

-τωνειος (Ειζωνι-τωνειος անձնանվան մեջ) (հ.-ե. dō- «տալ»)—տամ, տուր-ք.

Δισκο- (Δισκα-δυσρα-τιρα ցեղանվան մեջ) (հ.-ե. duōu «երկու»)—երկու, երկի-, երկո-.

Utus (գետանուն), Οἰτήνσιοι (ցեղանուն)՝ *Ujtus<Utjus գետանունից) (հ.-ե. ued- : ud- «թրջել»)—գետ, -ոյ.

Κεβρος (գետանուն) (հ.-ե. geu- «ծռել»)—կուռն, կոր, կորիզ.

Κιφος (գետանուն) (հ.-ե. ger- «ծռել, ոլորել»)—կեռ[30].

Κοιλα, Κοιλια, Κοιλιος (անձնանուններ) (հ.-ե. geu-l- «այրվող ածուխ»)—կրակ (հ.-ե. gu-r-)[31].

Κυζικος, Κοιζικος (տեղանուններ) (հ.-ե. geu-s- «ծռել»)—կուզն, կռունկն, թերևս նաև կոր, կորիզ.

-κενθος (Ῥησ-κενθιον Ὄρος—լեռ) (հ.-ե. gem- «ճնշել, սեղմել»)—ճմռել, ճմլել.

3) Հ.-ե. p, t, k.

-παιβις, -paibes (Διτου-παιβις, Ζι-παιβις, Μαστο-παιβης, Muca-paibes անձնանուններում), Παιβιλας, Παιβις, Παιβης, Paibes (անձնանուններ), -paus, -παυς, -πουις, -puis, -pus (Vitu-paus, Μουκα-πουις, Muca-puis, Deo-pus և այլ անձնանուններում) (հ.-ե. pōu-: pəu-: pū- «փոքր»)—ոյ, ամ-ոյ, այլև փոքր (տես. փոքու).

-phara, -para, -παρα(ν), -paro, -παρος, -παρου, -παρον, -παρα «գետափ անցատեղ» կամ «շուկա» (Bre-iero-phara, Βε-παρα, Aga-

29 Հմմտ. և տամալ(ի), տանուտէր:

30 Միջնավոր կոր բառը հանգում էր հատկապես goyero- ձևից (հ.-ե. geu- «ծռել»):

31 Կրակ բառի ստուգաբանությունը կասկածելի է:

ta-para, Δριζι-παρα և այլ տեղանուններում) (հ.-ե. per- «անցկացնել, անցնել»)—հորդ «կոխված, տրորված, շիտակ (ճանապարհ)», հորդեմ «գնալ, տարածվել», այլև հերկել.

Παρις, Παρος, Περις (անձնանուններ), -parus, -per, -περις, -porus, -por, -πορις, -ποραις (Zi-parus, Zi-per, Λυκο-περις, Na-to-porus, Muca-por, Δεις-πορις, Μουκα-ποραις և այլ անձնանուններում) (հ.-ե. per- «ծնել»)—որթ (հորթ), թերևս և որդի[32].

Πατρος (անձնանուն), Patrus (գիրանուն, լատին. մականուն) (հ.-ե. pətér «հայր»)[33]—հայր.

Ποτας, Πατης (անձնանուն), Ποτα-, Ποτυ- (Ποτα-ζενος, Πατου-ρασης, Ποτυ-ραστης (անձնանուններում), թերևս նաև Potazis, Ποταζεις, Πατασεις[34] (հ.-ե. pot- «տեր»)—հոյ- (հոյակապ բառում).

Per-, Περι-, Πρι-, Pri- (Per-buri-davensi ցեղանվան, Περι-σπειος, Πρι-απος, Pri-apos գիրանվան, Πρι-ζαος տեղանվան մեջ և այլն) (հ.-ե. per-, pri- «միջով, առաջ, գլուխ»)—առ, առաջ.

Πε-, Pe- (Πι-ασται, Pe-hasti ցեղանվան մեջ) (հ.-ե. epi «մոտ, վրա»)—ե.

πῖνον «գարուց պատրաստված խմիչք, գարեջուր» (հ.-ե. pōi-: pəi-: pī- «խմել»)—ըմ-պեմ.

Πυρον, -πυρον (Πυρο-ρ-ηθης, Πυρου-ζεια, Ζει-πυρον, Ζι-πυρον անձնանուններում) (հ.-ե. peu̯ōr, pūr «կրակ»)—հուր, հն-ոց.

Φυλλις, Phullis (գետանուն) (հ.-ե. pel- «հոսել, լցնել, թափել»)—հեղում, գ-եղում, հեղեղ, ողողեմ, հալեմ, լի, թերևս յղի.

Ιαμβα- (Ιαμβα-δουλη գիրանվան մեջ) [հ.-ե. o(m)p- «աշխատել, կատարել, վաստակ, հարստություն»], այլև Epta-, Epte-, Επτει-~ Ette-, Ετα-, Ετει-, Ετι- (Eptala, *Epta-zeta, Epte-centus, Επτα-κενθος~Ettela, Eta-zeta, Ετει-κενθος, Eti-centus անձնանուններում) (հ.-ե. ep-t-՝ op-ի կողքին), -οπτης (Δη-οπτης գիրանվան մեջ) (հ.-ե. ōp-t-)—ուն «ունեցվածք».

Σπαθιζος (անձնանուն) [հ.-ե. (s)p(h)ē- «փայտի երկար, տափակ կտոր» և (s)p(h)ĕi- «սուր, փայտի սուր կտոր»)—փքին «նետ» այլև թերևս փայտ.

---

[32] Վերջինս ավելի հավանական է բխեցնել er- «շարժ(վ)ել, ծագել» արմատից (հմմտ. արմ, գ-արմ, որձար, յորդոր):

[33] Ըստ Ցոկլի՝ հ.-ե. pot- «տեր» արմատից, որ Դ. Դեչևը համարում է քիչ հավանական:

[34] Վերջինս, ըստ Ցոկլի, իրանական ծագում ունի:

Θυνοι. Thynii *(ցեղանուն)*, Τυντα. Τυντης. Tutius. Turesis *անձնանուններ)*. Τυτης *(գետանուն) (հ.-ե.* tēu-: tū- *«ուռչել»)—թիւ, թու, թուփ.*

-τα (Ζη)-τα *«բոցավառված քաղաք») (հ.-ե.* -to- *—ածանց)—-թ-, -դ- (արծաթ, -ոյ, հիւթ,-ոյ, մարդ,-ոյ).*

Tri- *«երեք, եռակի»* (Τρι-κεντιος, Τρι-κασις *անձնանուններում*, Τρι-καρμιον, Τρι-φυλλον *տեղանուններում)*, *այլև* Dri-, Δρι- (Τρι-βαλλοι~Dri-balus, Δρι-βαλις)*—երեք, եռ-.*

-χαιτης,-chaetes,-chetes (Δρομι-χαιτης, Dromi-chaetes, Dromo-chetes *անվան մեջ)* [*հ.-ե.* (s)k(h)ai-, -d-, -t- *«խփել, հրել»*]*—խայթ, խէթ*[35].

-κερος,-κερς (Δαιδι-κερς, Επτα-κερος *անձնանուններում*, Βλε-κερηνοι *ցեղանվան մեջ) թերևս նաև* Σκυανης *(տեղանուն)*, Σκυ-ζελας, Σκυ-ηζεις *(անձնանուններ)* [*հ.-ե.* (s)keu- *«ծածկել, փաթաթել»)*]*—քիւ, ցիւ, խուփ(?), խուզ.*

Σκαιοι, Σκαιβοαι *(ցեղանուն)* [*հ.-ե.* (s)kāi- *«լուսավոր»*]*—խայս, խայծ, խայտամ, խայծաղ «աղանձ».*

Οικουι-, Οικ-, Υκο- (Οικου-ζερης, Οικ-ορασις, Υκο-νης *անձնանուններում)*, Ucus, Οὔκος *(անձնանուն) (հ.-ե.* euk- *«ընտելանալ, սովորել, վարժվել»)—ուսանիմ, ամ-ուս-ին.*

4) հ.-ե. g'h, g', k'.

-ζαλας,-zala,-sala (Δι-ζαλας, Di-zala, Πυρου-ζαλα *և այլ անձնանուններում)*, Ζαλδ(α)-, Σαλδ(ο)-, Σαλτ(ο)- (Ζαλδ-απα, Ζαλδ-αβα, Ζαλδ-απα *տեղանվան*, Saldaecaputenus, Σαλδηνος, Σαλδοβυσηνος *ցեղանվան մեջ) (հ.-ե.* g'hel- *«փայլել, շողալ»)—ձաղ «ծաղր».*

Ζερα-, Zere, Zaera- (Zerai-), -ζερας,-ζερης,-ζερις,-zaeras (Ζερα-ζενις, Zere-dulis, Zaera-zistes, Μουκα-ζερας, Οικου-ζερης *և այլ անձնանուններում) (հ.-ե.* g'her- *«ցանկանալ, սիրել»)—ձիր-ք, ձրի.*

ζειραια *«կայծ ամառ, կնունճ»*, Σειθης *(հունականացված անձնանուն)*, Γειλος *(գետանուն) (հ.-ե.* g'heu- *«թափել»)—ձև, ձոյլ թերևս նաև ձուն*[36].

---

35 *Ցուկայծ, ավելի հավանական է բխեցնել հ.-ե.* (s)kai-,-d-,-t- *«լուսավոր» արմատից, որտեղից* Σκαιοι *ցեղանունը և հայ. խայս, խայտամ:*

36 *Ուրիշ կարծիքով ձուլնմ-ը գալիս է հ.-ե.* g'hau- *«ծանծել» արմատից:* Γειλος *գետանվանը, ի տարբերություն թրակյան նախորդ երկու հատուկ անունների, բնորոշ է կենտումայնությունը:*

-ζενης,-zenus,-senus (Διζο-ζενης. Dia-zenus. Maca-senus և այլ անձնանուններում) (հ.-ե. g'en- «ծնել»).-δενθης. -dentes. Δεντου-. Dentu-. Δεντι-. Denth- [Διζο-δενθης. Βεσ(σ)ου-δενθης. Καρ-δεντης. Car-dentes. Δεντου-πης. Dentu-staina. Δεντι-πορις. Δενθι-πορις, Δενθις. Δεντις. Δενδις անձնանուններում և Δενθ-ελῆται. Denth-eleti ցեղանվան մեջ) (հ.-ե. g'en-to-)—ծին. ծնունդ.

Zinama. Zinima. Ζεινωρα (անձնանուն) (հ.-ե. g'en- «ճանաչել, իմանալ»)—ճանաչեմ (<ծանաչեմ), ծանօթ.

Ἄρζος Arsus (գետանուն) (հ.-ե. arg'- «փայլուն, սպիտակ»)—արծաթ, արծնեմ.

Βυζας. սեռ. Βυζαντος[37] (հ.-ե. bhūg'- «այծ. քաղ»)—բուծ «կաթնակեր գառ կամ ուլ».

Σαρ-, Σαρα-, -σαρα-, -σαρος (Σαρ-βαλος. Σαρα-τοκος. Ασ-σαρα-ος. Σειτο-σαρος անձնանուններում), -σαριος,-σαρις,-sarius,-σαρου (Βειθυ-σαριος. Κοσο-σαρου անձնանուններում) (հ.-ե. ke'r- «մարմնի վերնամաս, գլուխ»)—սար.

-sucu,-σουκος,-σουκος,-σακος,-συκης,-σουκς (անձնանունների բաղադրիչ) (հ.-ե. k'eu- «լուսավորել, լուսավոր», k'eu-g-)—շող, -ոյ, շող, ճշոյլ, թերևս նաև շանթ (k'u-).

Σουρα-,-συρος,-συρας,-ζυρις. Συρο-. Σουρα- (Σουρα-τραλις, Δι-ζυρος. Δι-συρας. Αυλου-ζυρις, Συρας. Σουρας անձնանուններում և Σουρε-γεθης, Συρο-τερης ցեղանուններում) (հ.-ե. k'eu-: k'u- «ուռչել. կամար»)—սուր (սուր) «սայր, հուր, թափ»[38], այլև սոր «ծակ, խոռոչ».

-θιτης,-θιας,-thia-,-θιτη-,-τιτη- (Αβισο-θιτης անձնանվան մեջ, Βορκη-θιας. Βασιδι-θιας. Ebesti-thia ցեղանուններում, Γαια-θιτηνος ցեղանվան մեջ) (հ.-ե. k'ei- «պառկել. ճամբար. բնակատեղի. հարազատ, սիրելի»)—սէր,-ոյ.

Τσα- (=Τσοα-) (Τσαρος գետանվան մեջ) (հ.-ե. k'eu- «ուռչել. կամար» և «փոս, գոգավորություն»)—սոր «փոս, խոռոչ».

Asamus (գետանուն), Σαμος (անձնանուն), թերևս նաև ἀσᾶ «խճի, խճաքարի, ավազակ» (բառանուն) (հ.-ե. ak'- «սուր»)—ասեղն.

---

37 Հմմտ. Բուզանդ անձնանունը։

38 Ստուգաբանությունը հեղինակինն է։ Հմմտ. հին հնդ. śūná- «ուռած»։

-εσπ, -ασπ-, Esb-, εζβ-, Hezb- (Βιτ-ασπιος, Οιατ-ασπιος, Οιτ-ασπιος գիցա-մականուններում և Εζβενις, Εσβενειος, Esbenus, Hezbenus անձնանուններում) (հ.-և. ek'uo- «ձի»)—էշ, -ոյ.

ե) հ.-և. $g^{u}h$, g^{u}, k^{u}.

-γενθης, -gentus (Κελα-γενθης, Ditu-gentus անձնանուններում) (հ.-և. g^{u}hen- «սպանել, խփել, կռվողներ»)—յաղթ, ...

γεντον «միս, մսի կտոր» (հ.-և. g^{u}hen- «խփել»)— գան, գանել, ջին «ծեծելու փայտ», ջինջ, ջախջ, ջնջել.

Γερμ(ε)- (Γερμανία~Γέρμας, Γερμαιζα տեղանուններում, Germetitha գիցանվան մեջ) (հ.-և. g^{u}her-mo- «ջերմ, տաք»)—ջեր, ջերմ, ջեռնուլ.

Καρα-, Καρι-, Καρ-, Car- (Καρα-βιθυς տեղանվան, Καρι-στορηνός ցեղանվան և Καρ-δενθης, Car-dentes անձնանվան մեջ) (հ.-և. g^{u}er- «չեռ»)—կարկառ «քարակույտ», կառուցանել (?)[39].

Κοαστας [գետանուն, այսպես է անվանված բառ κτῆμα (ունեցվածք, կալվածք) Κοαστῶν-ի] (հ.-և. g^{u}ou- «խոշոր եղջերավոր անասուն»)—կով.

զ) հ.-և. s.

Salm-, Σαλμ- (Salmorude, *Salmuris, Σαλμ-ύδησσος տեղանուններում, հավանաբար ջրի հետ կապված) (հ.-և. sal- «աղ»)—աղ, աղձ.

ζειρά, ζιρά, ζυρά.-ζειρον (մի տեսակ հագուստ) (հ.-և. ser- «շարել, կցկցել»)—յեռուլ «ընդելուզել, շարել»[40].

σκάλμη «թրակյան սուր» (ըստ Հեսյքիոսի), այլև թերևս Σκαλγης, Σκέλλις (անձնանուններ) [հ.-և. (s)kel- : (s)kol- «կտրել»]—ցելում «ճեղքել», ցեղ. քերթ «ցելք».

Scaporenus (ցեղանուն՝ *Scapora տեղանունից), Σκαπτή ὕλη, Σκαπτησύλη (տեղանուն), Σκαπτοπαρηνοί (ցեղանուն) [հ.-և. (s)kăp-, (s) kĕp-, (s)keb(h)- «կտրել, ճեղքել»]—ցաք, այլև թերևս չիւ, չիւղ.

---

39 Հայ. բառերի ստուգաբանությունը հնդեվրոպականին էլ Հմմտ. և կասկածելի, որ համեմատում են հուն. κορυφή «գագաթ» բառի հետ (<գեղագագաթներից):

40 Վ. Տոմաշեկը բերում է հ.-և. g'her- «ցանկանալ, սիրել» արմատից, որից հայ. ձիր-ք, ձրի:

Σμερτο-, Ζμερτο- (Σμερτο-μαρα, Ζμερτο-ρεζος (անձնանուններում), Σμερδίης (անձնանուն), Σμερδο- (Σμερδο-τορμος անձնանվան մեջ) [հ.-ե. (s)mer-' «տրորել»]—մաշել (<մարշել)[41].

Σολδαι-, Σολδι (Σολδαι-κενθος, Σολδι-κενθος անձնանվան մեջ), Σολδος, Σολδας (անձնանուն) [հ.-ե. se-, s(e)u̯e «ինքը», seu̯o- «յուր, իր», su̯ē-dh-]—իւր.

-spardo (Natu-spardo անձնանվան մեջ) [հ.-ե. (s)p(h)erd(h)- «ցնցել, ցատկել», (s)p(h)er- «ցնցել, հրել»]—սպառնալ.

Στρυμών (գետանուն) (հ.-ե. sreu- : sru- «հոսել»)—առու, առոգանել, ոռոգանել.

Στολος, Stolos (քաղաքանուն) (հ.-ե. stel- «դնել, կանգնեցնել, կանգառն»)—ստեղծանել.

7) Հ.-ե. r, l, m, n, i, u̯.

Ῥησ(σ)ος, R(h)esus (անձնանուն), Ρασο- (Ῥασο-πυρανις մականվան մեջ), Ρησκου-, Ραισκη-, Ραισκου-, Ρασκου-, Rascu-, Ρασκυ-, Rhascy-, Ρασκου-, R(h)escu- (Ρησκου-πορις և այլ անձնանունների բաղադրիչ), այլև Ραιζδος, Ραιζας, Ραιστνης (անձնանուններ) (հ.-ե. reg'- «ուղիղ, ուղղել», rēg'-s- «թագավոր», rēg'io- «թագավորական»)—արքայ, -առյ.

Ῥῆσος (գետանուն), Ρεσγος (անձնանուն) (հ.-ե. ere-s-, rēs-, rō̆s- «հոսել»)—հոսել, գ-հոսել, հոսանք.

Αργαιος (անձնանուն), Αργι- (Αργί-δαυα տեղանվան մեջ), Ἄργιλος (քաղաքանուն) (հ.-ե. arek- «պաշտպանել, փակել» և areg- «փակել»)—արգել, արգելում, այլև արմ (*ork-mo- ?).

-αρδις (Αμ-αρδις, αμ-αρδιακος անձնանվան մեջ) (հ.-ե. ardh- «ձող»)—արդն «նիզակ».

Αρνη (տեղանուն) [հ.-ե. er- «շարժ(վ)ել, բարձրացնել, հանգել»][42]—յառնել, յարգար, արմ, գ-արմ, արմատ, յարդ, յարձ, որեար.

Art-, -arta, -αρτας, -ερτας ~ -αρδις (Artila, Bi-arta, Bi-αρτας, Bi-ερτας ~ Αμαρδις անձնանուններում) (հ.-ե. ar- «համապատասխանել», art-, r̥t- «համապատասխանեցված»)—արդ, -ու, զ-արդ, արդ «այժմ», արդար, արդիւն, այլև առնել (արարի).

---

41 Հմմտ. և մարշ:

42 Կապակցվում է, որոշ հետազոտողների կարծիքով, նաև Ἀρίννα դիցանվան (հմմտ. խեթ. Arinna)։

Μαζαῖον (տեղանուն), Μάζαιος, Μαζανεια, Μαζηνίας (անձնանուն), -μαζος,-masos,-μασης (Μανι-μαζος, Πατρο-μασης անձնանուններում, Βύ-μαζος տեղանվան մեջ) [հ.-ե. meg'(h)- «մեծ»]—մեծ, -ի,-աց, այլև թերևս մաղ «մեծ, զորեղ».

Marene (տեղանուն), Μαρων, Maro (անձնանուն) (հ.-ե. mer- «առկայծել»)[43]—մայր «մթություն», մարել.

Ματα, Ματια, Μαστας, Μαστος, Μαστους, Μεστας, Μεστεις, Mesto (անձնանուններ), Μεστος, Mestus (գետանուն) (հ.-ե. mad- «թաց, խոնավ, յուղոտ, հյութեղ»)—մատաղ[44].

Μεσσαπιον ὄρος (լեռնանուն) (հ.-ե. medhjo- «միջին»)—մէջ, միջին.

Μηδα, Medora, Μηδος (անձնանուններ), -μηδης,-medes, -medus, Μηδο- (անձնանունների բաղադրիչներ) (հ.-ե. mēd- «չափել»)—միտ, -ի, -աց.

midne «գյուղ, շեն» [հ.-ե. mei-,-d(h)-, -t- «ամրացնել»]—մույթ «հենակ, սյուն»[45].

Μυγδονες, Mygdones (ցեղանուն) [հ.-ե. meug(h)-, meukh- «սահել, սահուն»]—մուխ, մխալ[46].

Νηρις (անձնանուն) (հ.-ե. ner- «այր, տղամարդ»)—այր, առն.

Ἄγγρος, Ἀγγίτης (գետանուններ) (հ.-ե. ank-, ang- «ծռել»)—անկյուն, անգյուն.

Βαστα-, Βαστο-, Ουαστο- (Βαστα-κιλας, Βαστο-καιλας, Ουαστο-βαλος) (հ.-ե. ues- «լինել, գիշերել»)—գոյ, -ի, -ից, գոմ (գոռ, գոլ).

Αυλου-, Αβλου- (=Aulu-), այլև Αυλο(υ)-, Αυ- (Αυλου-ζενθης, Αυλου-ζανος, Αυλου-πορις, Αβλου-ζελμις, Αβλου-θυης, Αυλου-πορις, Αυλιος, Aliulas և այլ անձնանուններում) (հ.-ե. au- «գիշերել, քնել») —ագանիմ «գիշերել», վայր-ագ, աւթ, աւթևան.

---

43 Ըստ Վ. Տոմաշեկի, Դեչևը բխեցնում է mari- «ծով» ձևից: Հայ. բառերի ստուգաբանությունը հեղինակինն է. ըստ այդմ հ.-ե. mer- «առկայծել», և mer- «սևացնել» արմատները (այստեղից մութ, մառախուղ) պետք է միացնել:

44 Այս նույն արմատից բխեցվող մած- արմատը (մածուն, մածանիլ, մածնում) ավելի հավանական է բխեցնել mag'-ից «ճնշել, քսել»:

45 Սակայն մույթ-ը կարող է ծագել միայն meuthi- ձևից (*mei-th->*մէթ): Մյուս կողմից՝ midne-ն բխեցնում են և meit(h)- «բնակատեղի» ձևից:

46 Ըստ Վ. Տոմաշեկի, որ նկատի ունի հուն. μυχός «ներքին անկյուն, ծոց, կիրճ» բառը, բայց այն բխեցնում է mukh- և ոչ mugh- ձևից (պետական փոխառությո՞ւն):

-βλεπτης (= -ṷleptes<ṷelptes) (Κερσο-βλεπτης անձնանվան մեջ) (հ.-ե. ṷel- «ցանկանալ»)—գել. գեղձ «ցանկություն, փափագ».

βερα «քաղաք» (հ.-ե. ṷer- «բարձր վայր»)—գեր.

§ 7. Հենվելով հատկապես Վ. Գեորգիևի տվյալների վրա՝ փորձենք պարզել նաև հայ-դակո-միզիական բառային որոշ զուգահեռներ.

1) Հ.-ե. bh, dh, gh.

βιλα, βηλα «բույս, ցեղաբույս» (հ.-ե. bhū-, bheu- «աճել»)—բույս, բույն, բուն.

Δακοί, Δᾶκοι (ցեղանուն) (հ.-ե. dhāg- «սրել, սուր»)—դակու(ր) «տապար, կացին»[47].

-dava, -deva (Aci-dava, Rusi-dava, Saci-dava և այլ տեղանուններում) (հ.-ե. dhē- «դնել», «հաստատել, հիմնել»)—դնեմ, դիր-ք.

διέλλινα «բանգի, բարբաղ» (թունավոր խոտ) (հ.-ե. dhel- «փայլել»)—դեղին, այլև դեղձ, դեղր, դեղ[48].

2) Հ.-ե. b, d, g.

δαμα (κα-δαμα «մի տեսակ եղեգ, ποταμογείτονα»)—տան[49].

διεσεμα, diesapter «մի տեսակ վառվող բույս» (հ.-ե. dies- «լույս, օր, երկինք», dei- «շողալ»)—տիւ.

Dio-, Dios-, Deo-, Deos-, Zi- (Dio-panes, Dios-cuthes~Deo-pus, Deos-por, Zi-per անձնանուններում), Dida, Didas, Διδας, Διδας, Δειδας, Zia (անձնանուններ), Ζουσίστρα (բուսանուն) (հ.-ե. diṷo- «երկնային, աստվածային երկինք, աստվածային», dei- «շողալ», որտեղից լիտվ. didis)—տիւ, տի- (տի-կին, տի-այր>տէր, տի-եզերք).

3) Հ.-ե. p, t, k.

---

[47] Ըստ Դեչևի՝ Գ. Կրեչմերը նույնացնում է դակերի անունը Δᾶοι անվան հետ (հմմտ. Graeci և Γραικοί)։ Սրա հիման վրա դակերի անունը Գեորգիևը բխեցնում է հ.-ե. dhaṷo-s, dhau-ko-s «գայլ» ձևից (ինչպես Δᾶοι> հ.-ե. dhaṷ-o-ից) (dhau- «խեղդել, ճնշել», որտեղից ռուս. давить)։ Կապ չունի՞ Diauḫi երկրի անվան հետ, որ հանդիպում է ուրարտական արձանագրություններում (տարբեր. Daiani, Daiaeni).

[48] Վերջին երկուսի համար հմմտ. dhāl- «ծաղկել, կանաչել», որտեղից դալար։

[49] Հնարավոր է համարվում համեմատել նաև հին հնդկ. dhāman- «բնակավայր» (հ.-ե. dhē- «դնել») բառի հետ։

Pata- [Pata-vissa, Pata-bissa, Πατρούισσα (փխն. Πατάουισσα) տեղանուններում), հմմտ. և Patavis(s)e(n)sis ցեղանունը՝ Potaissa-ի կողքին] (հ.-ե. pətr-՝ (s)p(h)ēi-ից «բարգավաճել, աճել, առատանալ»)—փարթամ.

Pelen- (<pölōn-<pōlōn-) (Pelen-dava քաղաքանվան մեջ) (հ.-ե. pō-lo-, pō- «փոքրիկ»)—ուլ, ամ-ուլ.

-per (Zi-per անձնանվան մեջ) (հ.-ե. per- «ծնել»)—որդի, որթ (հորթ).

πιθλα (ζαρα-πιθλα բուսանվան մեջ) (հ.-ե. pōi-: pəi-: pī- «խմել»)—ըմ-պել.

τευ- (τευβρία (բուսանվան մեջ) (հ.-ե. tēu-, -l- «ուռչել»)—թիւ, թաւ, թուփ.

Καρπάτης (լեռնաշղթայի անուն) [հ.-ե. (s)ker-p- «կտրել», որտեղից այլ. karpe, karm «ժայռ, խութ»)—քերել, քարել[30].

σκάρη «ակքան» (բուսանուն) հ.-ե. (s)ker «կտրել»)—քերել, քարել.

4) Հ.-ե. g'h, g', k'.

-dela, -δηλα, -διλ(λ)α, -zila, -tilia «դեղաբույս» (հ.-ե. g'hel- «փայլել, շողալ»)—ձող «ձողը»[31].

Αἰζισις, Aizis (տեղանուն) (հ.-ե. aig'- «այծ»)—այծ, ի, -իկ.

σῖβα «թանթրվենի» (հ.-ե. k'eu- «ուռչել, զորավորություն»)—սոր «խոռոչ, ծակ».

σικυ- (σικυ-πνὶξ «ընկույզ. capitulum cardus») [հ.-ե. k'ē(i)- «սուր, սրել». հմմտ. հին հնդկ. s'ikha- «ծայր»]—սուր, սայր.

5) Հ.-ե. $\overset{u}{g}$h, $\overset{u}{g}$, $\overset{u}{k}$.

Γερμι-, Ζερμι- (Γερμι-ζερα, Γερμι-ζιργα, Ζερμι-ζεργα, Ζερμι-ζιργα քաղաքանվան մեջ) (հ.-ե. $\overset{u}{g}$her-mo- «տաք, ջերմ»)—ջերմ, ջերմն, ջեր.

βου-, bu- [βουδαθλα, budama (*budadla «եզան լեզու»)] (հ.-ե. $\overset{u}{g}$ou- «խոշոր եղջերավոր անասուն»)—կով, -ու.

6) Հ.-ե. s.

---

30 Հմմտ. ալբան. qarbi/e «ժայռ»:

31 Ըստ Վ. Գեորգիևի՝ Սակայն ավելի ճիշտ կլինի համեմատել հայ-դեղին բառի հետ, որի հետ Հյուբշմանը միացնում է նաև դեղ. դեղր, դեղձ բառերը, այլև դալար-ը, որ բխեցնում են հ.-ե. dhəl- «ծաղկել, կանաչել» արմատից:

Σαλδηνόσοι (*ցեղանուն*). Salsovia (*տեղանուն*) (*հ.-ե.* sald-, sal- *«աղ»*)—*աղ, աղժ.*

sipo(t)-ax *«ջրախոտ, եղան լեզու, գաղտիկուր»* (*հ.-ե.* septm *«յոթ»*)—*եօթն.*

-οστος (Ζεροστος *բնակավայրի մեջ*) (*հ.-ե.* ost- *«ոսկր»*)— —*ոսկր.*

7) *Հ.-ե.* r, l, m, n, j, ų, *այլև* r̥, l̥, m̥, n̥, i, u.

Cerasus, Κέρασος (*գետանուն*) (*հ.-ե.* ere-s- *«հոսել»*)—*եռամ, դ-եռամ, եռանդն.*

μέζυλα *«ծածքրին»* (*միզաբեր բույս*) (*հ.-ե.* meig'h- *«միզել»*) —*միզ, միզեմ.*

α- (Ἄ-ξιος *«անլույս» գետանվան մեջ*) (*հ.-ե.* n̥- *«ան-»*)—*ան-:*

§ 8. *Բերենք նաև մի շարք այլ զուգադիպումներ, որոնք բնութագրվում են բուն թրակերենի համար բնորոշ հնչյունական համապատասխանություններից տարբեր օրենքներով (տեղաշարժի բացակայություն, կենտումայնություն, վանկավոր ձայնորդների այլ կարգի փոփոխություն՝* r̥, l̥, m̥, n̥>ar, al, am, an *և այլն).*

Δανθ-, Δενθ-, Denth-, Dens- (Δανθαλῆται, Δανθηλῆται, Dentheleti, Δενθελῆται, Δεννήληται, Denseletae *տեղանվան մեջ*), Δενζου-, Δεντου-, Dentu-, Δεντι, Δινδι, Δεντι- (*անձնանունների բաղադրիչ*) (*հ.-ե.* g'en-t-, g'en- *«ծնել»*)—*ծին, ծնանիմ.*

Δεο-, Deo-, δεα, Διο-, Dio-, Deu-, Διου-, Diu-, Deos-, Διοσ-, Διος-, Dios-, Dias-, Διας-, Δια-, Dia-, Δι-, Di-, δι-, Δει-, *այլև* Ζι-, Ζει-, Ζη-, Ζια-, Ζιε-, Ζιο-, Ζιω-, Ζου-, Ζy- (*բազմաթիվ անձնանունների բաղադրիչ*) [*հ.-ե.* dei- *«փայլել, շողալ»,* dejeu(o)-, diuo-, dju- *«շողացող, որպես աստված պաշտվող երկինք և շողացող օր»*]—*տիւ.*

-ζηρας (Δι-ν-ζηρας *տեղանվան մեջ*), Ὀζήσσαι (*ցեղանուն*) (?). Δορο-, doro- *«ամուր»,* (Δορο-στορον, Dorostorum *քաղաքանվան մեջ*)[32] [*հ.-ե.* d(o)ru- *«ծառ»*] — *որպէս «ամուր»* (*drū-ro-m-), *տարդալ.*

Giri- (Giri-dava *քաղաքանվան մեջ*) (*հ.-ե.* gʷer- *«լեռ»*)— —*կարկառ «քարակույտ», կառուցանել* (?).

---

32 *Վ. Գեորգիևը* Δοροστορος *անձնանունը մեկնաբանում է որպես հայ. Տրամ-ա-խարը, բայց այս դեպքում տակա կլինի երկու տարբեր հնչյունական օրինաչափությունների զուգորդում՝* d > t *և* k > χ: *Ըստ Դեչևի՝* duro-, doro- < *հ.-ե.* g'her- < *«ցանկապատել».*

-κερσα, -κερσος (Ἀξιο-κέρσα, Ἀξιό-κερσος դիցանուններում) [հ.-ե. (s)ker- «կտրել»]—քերել, քորել.

Ἄβα (ջրանցքի անուն), Ἄβαι, Ζαλδ-αβα (տեղանուններ), ἄβα «հոսանք» (ըստ Հեսիքիոսի) (հ.-ե. ɱbh- «ջուր, անձրև, ամպ»)[53]—ամպ,-ոյ.

γάνος (γάνος) «բորենի» (հ.-ե. g'hau- «կանչել»)[54]—ձայնեմ (?)։

§ 9. Մի շարք դեպքերում մենք գործ ունենք կասկածելի զուգահեռների հետ, երբ թրակյան բառերի առանձնացումն ու ստուգաբանությունը, այլև հայերեն բառերի ստուգաբանությունը հավաստի չեն.

1) Այս կարգի բառերի առաջին խումբը կազմում են երկուստեք կասկածելի ստուգաբանություն ունեցող զուգահեռները.

Κανδαῖος, Κανδάων (Արես աստծու մականունը կրեստոնների մոտ) [հ.-ե. (s)kand- «լույս տալ, փայլել, լուսավոր»]—խանդ,-ոյ (այլև -ի,-իւ), խանձ (նա-խանձ), խաղ «մոլեգնած»[55].

Κάρποι, Καρπιανοί, Καρπίδαι, Καρπο-δάκαι (ցեղանուն) (հ.-ե. kʷerp/b- «շրջվել, պտտվել», որտեղից հուն. καρπός «դաստակ»)—կռուփ,-ի,-աց «բռունցք»[56].

κολᾶ (κολᾶ), κολία «պարահանդես», κολάσαι «պարել» (Հեսիքիոս), κολαβριστής «զինապար», κόλαβρος «զինապարի ժամանակ երգվող երգ»—խաղ, խաղամ[57].

Κομβατος (գետանուն) (հ.-ե. gambh- «ծուռ» > հուն. γαμψός «ծուռ»)(?)[58]—կամակոր «ծուռումուռ», կամչել «մեջքը կռացնել»[59].

Μυργίσκη (Μυγτίσκη ձևի կողքին, դիցանուն) (համեմ. հին բրգ. murgr, ալբ. murk, murga «սև, մթին»)—մուրկ[60].

---

53 Սովորաբար ɱ > um, բայց այս դեպքում ɱ > a(m)։

54 Կենտումայնությունը։

55 Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 369–371) հայերեն բառերը համարում է բնիկ հնդեվրոպական՝ դ-ի և ձ-ի առկայությունը դիտելով որպես նախորդ ռնգականի արդյունք (կա և խանճ)։

56 Եթե հայ. բառը չի ծագում gru-ph- նախաձևից (հ.-ե. ger- «ծռել»)։

57 Վ. Գեորգիևը բխեցնում է kʷel- «պտտվել» արմատից, որտեղից սովորաբար հանում են եղանիմ, եղանակ, ճոլ, ճոլել, չլսում «ծռվել» բառերը։

58 Հ.-ե. արմատի առանձնացումը կասկածելի է։

59 Ավելի հավանական է հայ. կամ-ը հանել հ.-ե. kam-ից՝ մի այլ հ.-ե. լեզվի միջնորդությամբ։

60 Սակայն հայ. բառը բխեցնում են smug-ro- ձևից [հ.-ե. smeu-g(h)-, -kh- «ծխել, ծուխ», որտեղից մուխ]։

'Ορδησσός, Ordesos [գետանուն (թերևս արդի Ardžiš-ը) և քաղաքանուն, այժմ Օդեսա]—յորդ[61].

2) Երկրորդ խումբը կազմում են այն զուգահեռները, որոնց թրակյան եղբերը հանդիպում են արձանագրություններում: Ինչպես հայտնի է, թրակյան արձանագրությունների վերծանությունը մեծ մասամբ պայմանական է՝ կապված խաթարված տեղերի լրացման և անընդմեջ տառաշարքի մեջ բառերի առանձնացման դժվարությունների հետ: Ստորև բերենք այդ կարգի որոշ բառեր՝ հենվելով գերազանցապես Վ. Գեորգիևի վրա.

*βράτερας «եղբայրներին» (հ.-ե. bhrāter «եղբայր»)—եղբայր, սեռ. եղբաւր.

δαλα, δαλα «պաշտպանի՛ր» (հ.-ե. dhāl- «ծաղկել, կանաչել»)—դալար.

δεν «սատկած, Զևս» (հ.-ե. dei- «շողալ»)—տիւ.

πατερ «հորը», πατερα «հայրերին» (հ.-ե. pətḗr «հայր»)—հայր, սեռ. հաւր.

per «որդին» (հ.-ե. per- «ծնել»)—որթ «հորթ», թերևս նաև որդի.

ας «ես» [հ.-ե. eg'(h)om «ես»]—ես.

ζυπτας «ննջեցյալ, քնած» (հ.-ե. sụep-, sup- «քնել»)—քուն, -ոյ (*sụop-no-).

ερα «երեխաներին» (հգն. հայց.) (հ.-ե. er- «շարժվել, շարժել, հուզել, բարձրացնել», որտեղից փոխաբ. ερο «երեխաներ»)—որեար, որդի(?)[62], արմ, զ-արմ, արմատ, այլև յառնեմ, յորդոր.

με «ինձ», μεαν «ինձ» (հայց.) (հ.-ե. me- —1-ին դ. անձնական դերանվան թեք ձևը)—իմ, ինձ (*emég'h-). իս (eme-g'e):

§ 10. Թրակյան և փռյուգիական ցեղերը տարբեր ժամանակներում շփման մեջ են եղել հայկական ցեղերի հետ: Այդ շփումը պետք է հանգեցներ բառային որոշ կարգի ընդհանրությունների ծագման: Սակայն հատուկ անունների մեջ այդ կարգի ընդհանրությունների բացահայտումը կապված է զգալի դժվարությունների հետ, որովհետև թրակյան և փռյուգիական նյութը հենվում է գերազանցապես հատուկ անունների ստուգաբանության վրա, որը կարող է պայմանական լինել: Որոշ կարգի զուգադիպու-

61 Հնարավոր է, որ այս բառը ծագում է հ.-ե. er- «շարժել, հուզել» արմատից (հմմտ. յորդորեմ):

62 Եթե per- «ծնել» արմատից չէ (հմմտ. որդ, հորթ):

թյուններ էլ ոչինչ չեն տալիս. որովհետև թրակյան և դակո-միզիական շատ անունների քիչ թե շատ հավաստի ստուգաբանությունը հայտնի չէ: Անհավատալի մի քանի օրինակ: Հունարենում հանդիպող βαβαί, παπαῖ ձայնարկությունները (զարմանքի բացականչություններ), որոնք զուգահեռ ունեն հայ. բարէ ձայնարկության մեջ, սովորաբար բխեցվում են հ.-ե. baba- բնաձայնական կրկնավոր արմատից. մինչդեռ Վ. Գեորգիևը համարում է թրակյան փոխառություն և համեմատում «հայրիկ» իմաստը: Հավանական է հայ. սկայ, հ-սկայ բառերի աղբյուր համարել Σκαιοί ցեղանունը, որ բխեցվում է հ.-ե. skāi- «լուսավոր» արմատից. այս դեպքում ավելի քիչ հավանական է երևում Գ. Ղափանցյանի կարծիքը (հ)ըսկայ բառի՝ ասկերի անունից ծագելու մասին: Հիշյալ ստուգաբանությունը հաստատվում է Սկայորդի անձնանվամբ, որ տալիս է Խորենացին Հայկի հաջորդների ցուցակի մեջ (Կայպակից հետո և Պարույրից առաջ): Հնարավոր է որոշ կապ տեսնել Sausa անձնանվան և սասն ծառանվան միջև (հմմտ. Խորենացու հիշատակած Անուշաւան Սօսանուէր-ը), սակայն Sausa անձնանվան ծագումը հայտնի չէ: Պատահական պետք է համարել Οσκιος ցեղանվան և հայ. ոսկի բառերի համընկնումը. եթե ճիշտ է Ս. Մլադենովի կարծիքը հիշյալ ցեղանվան՝ իռլ. usce. uisce «ջուր» բառի հետ ունեցած կապի մասին: Թերևս կարելի է որոշ կապ տեսնել Πεύκη, Pecetum տեղանունների (հ.-ե. peuk- : puk- «բրդոտ, փշոտ») և հայ. պոչ. -ոյ բառի, Πευκινόν տեղանվան (հ.-ե. peuk'- : puk'- «ծակել») և հայ. փուշ բառի, -φυλον «ամբոխ» (Τρι-φυλον «եռացեղ ամբոխ») տեղանվանական բաղադրիչի և հայ. փող. -ոյ բառի միջև. բայց այս բոլորը մնում են ենթադրությունների սահմանում:

Ավելի վստահելի են հատուկ անունների բնագավառում եղած զուգադիպումները: Անձնանունների և ցեղանունների դեպքում այս կարգի զուգահեռները հատկապես կարևոր են, որովհետև հնարավոր է ենթադրել թրակյան և դակո-միզիական որոշ կարգի անձնանունների ու ցեղանունների գործածություն հայերի մոտ՝ անմիջական կամ միջնորդված փոխառությամբ: Սակայն մի շարք դեպքերում այդպիսի զուգադիպումները ոչինչ չեն տալիս հայ-թրակյան կապերի մասին, որովհետև՝ ա) թրակյան անունները իրենց հիմքին զուգահեռներ ունեն փոքրասիական ու իրանական անձնանունների մեջ, և, հետևաբար, հայկական անձնանունների անմիջական աղբյուրները կարող են լինել վերջինները, բ) հնարավոր են մանկական բառերից ու բնաձայնություններից ծագող,

այլև պատահական բնույթ ունեցող զուգադիպումներ: Այսպես, Երի-
ցայի եպիսկոպոս Պապիասի անունը, որ Հ. Աճառյանը համարում
է «Պապ անվան հունական ձևը», մանկական բառ լինելու հետևանքով
նրա լայն տարածման պայմաններում, զուգահեռ ունի թրակ. Παπιας,
Παπας անձնանունների մեջ: Համանման պատահական բնույթ է
կրում Αμαζιας թրք. անձնանվան և Ամասիա ար. անձնանվան զուգա-
դիպությունը. վերջինս ըստ Հ. Աճառյանի՝ համարվում է Մ. Խո-
րենացու կողմից՝ Մասիս լեռան անունը ստուգաբանելու համար,
ընդ որում նկատի է ունեցել հրեական Ամասիա թագավորի անու-
նը (amṣ «հզոր»+Jāh «Եհովա»)[63]: Պատահական պետք է համա-
րել նաև Θαμυρας, Θάμυρις հունական կամ հունականացված թրակ-
յան (*Δαμυρας-ից) անձնանվան և հայ. Թամր անձնանվան զուգա-
դիպությունը: Ավելի քիչ հավանական է թրակյան անունների մեջ
հայերենի հետքեր տեսնել. այսպես, կարելի էր ենթադրել Ζαρμας
անձնանվան փոխառյալ լինելը հայ. զ-արմ-ից (համա. Զարմ-այր),
բայց այդ քիչ հավանական է[64]:

Էլ ավելի քիչ հավանական է թրակյան անմիջական ազդե-
ցություն տեսնել միջնադարյան բնույթի որոշ տեղանունների
մեջ, ինչպես այդ արվում է, օրինակ, մեղրական ցեղի՝ մուշկերի
և Մուշ քաղաքի անունների զուգադիպության դեպքում: Ավելի
հավանական է կարծել, որ այս համընկնումների մեծ մասը պա-
տահական նմանության կամ տարբեր աղբյուրներից եկող ծագում-
նային ընդհանրության արդյունք է:

Սարև բերենք անձնանունների և տեղանունների առավել
աչքի ընկնող զուգադիպումները՝ առանց տարբերակման.

1. Անձնանուններ և ցեղանվանական անուններ.

*Αβζους (Սկյութիայում ծնված թրակացու անուն)— Աբե-
րիոս (Aberius).

*Αδαμ, Αδαμα «սիրեցյալ» (ամուսթրակյան անձնանուն)

---

63 Տես համ. Ամասիա քաղաքը Կապադովկիայում:

64 Այնուհետև չենք համարում ճիշտ, որ Հովհաննես Դրասխանակերտցին
Հայկ նահապետի պապին՝ Թիրասին համարում է թրակացիների նախա-
հայրը: Որոշ հեղինակներ (Լեո, Մորգան) սրա մեջ տեսնում են հայ-թրակ-
յան կապերի արձագանքը և կարծում, որ Դրասխանակերտցին հենվում է
ժողովրդական ավանդության վրա: Սակայն Հ. Մանանդյանը գտնում է, որ
Դրասխանակերտցու համար աղբյուր են ծառայել հին կտակարանի մեկնիչ-
ները (տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Ա, Երե-
վան, 1944, էջ 16, ծան.):

(համմտ. լատ. amō,-āre «սիրել». ad-amō)— Ադամ (եթե ուղղելի չէ Աստտ), ինչպես նաև Ադամ (անձնանուններ).

-αἰγηται,-αἰεται (ցեղանունների կազմիչ), -αἰθης (Ζαι-αἰθης անձնանվան մեջ). "Αἴδανης (տեղանուն) (հ.-ե. al-,-t-,-dh- «աճել, աճեցնել, սնել»)— Հալդիտա (անձնանուն՝ Դարեհի Բեհիսթունի արձանագրության մեջ հիշատակված)[65].

Απφος, Αφφος, Απφους, Αφφους, Αφους (անձնանուն՝ տարածված նաև Փռյուգիայում, Լիկիայում, Կարիայում, Պիսիդիայում և Լիկաոնիայում. համմտ. և լատ. Appius)— Ափուզ (անձնանուն).

Αρανταις (անձնանուն. համմտ. կելտ. Arantius, Arantillus)— Առանձար.

"Αραντος (անձնանուն=հուն. "Αρατος «աղաչելի, ցանկալի». համմտ. և "Αρατος՝ հույնի և տրոյացու անուն)— Առատան (անձնանուն) (??).

Αρβιλαι (գյուղանուն). 'Αρβ(ε)ιλανοί (այդ գյուղի բնակիչները) (համմտ. սիցիլ. 'Αρβέλη և պարսկ. "Αρβηλα քաղաքանունները)— "Αρβηλος (անձնանուն, հայ, որ Աղեքսանդրի ժամանակ գնացել է ալանների դեմ).

Αργαμα (տեղանուն), Αργαιος (անձնանուն)— Արգամ, Արգաւան (անձնանուն. Մուրացան նախարարության նահապետի անունը):

'Αρεας, "Αρης (թրակյան պատերազմի աստծու անունը. համմտ. մակեդ. 'Αραϛ— պատերազմի և սրի աստված) (հ.-ե. er- «շարժվել, շարժել, հուզել, բարկացնել, բարձրացնել», որտեղից հայ. արմ, գ-արմ յանել, յորդորել, յարդ, յարձ)— Արա (դիցաբանական անուն)[66].

'Αρτάνης (գետանուն) (հ.-ե. ered- «հոսել»)— Արտանես ('Αρτάνης) (անձնանուն. Ծոփքի թագավոր Զարեհի որդու անունը)[67].

---

65 Ըստ Բասմաջյանի՝ Ḫaldi աստծու անունից:

66 Նման է հնչում, բայց տարբեր է "Ηρως. 'Ηρως— թրակյան ձիավորների աստվածը, որ համեմատում են ռուս. юрить, юркий, հին հնդկ. jūrṇ «շտապել, հարձակվել, արագ» բառերի հետ (համմտ. D. Detschew, նշվ. աշխ., էջ 200). Պլատոնի մոտ հիշատակվում է "Ηρος զինվոր. անձնավորությունը, որի հայրը Αρμενιος-ն էր Բեթյունիայում [illegible] [illegible] անունը կոչվում էր "Αραιος, որի "Αρης-ի հետ ունեցած կապի համար համմտ. հայ. արաց ամանունը (հայոց ամսերի 6-րդ ամիսը): Պլուտարքոսի մոտ հիշատակված է Արտա թագավոր: Համմտ. և ուրարտ. Araza դիցանունը:

67 Մովսես Բյուզանդացին գրում է Արշակ: Գարագաշյանը և ուրիշները մեկնում են որպես Արշակ կամ Վարդան, Հ. Աճառյանը՝ որպես Արտէն (<իրան.):

'Αστακαί (տարածքային անուն)—Աստղ=Աշտատ(?).

Αὐλα-, Αὐλι-, Αβλου-, Αὐλου-, Αὐλο- [անձնանունների բաղադրիչ, ընդ որում Αὐλα-, Αὐλο<Αὐλου-. համմ. էտրուսկ. Aule, Aulni<Avile, Avule (լատ. Aules, Aulus, Aulenus, Avilius), լիկ. Αὐλανις. կելտ. Aulavius, Aulia, Aulo և այլն. սրբ. Αβλου-ζενθης անձնանունները. փռյուգ. Αὐλουτρίης տեղանունը. Αὐλουδηνος ցեղանունը, կար. Αὐλα տեղանունը] (հ.-ե. au-, aue- «գիշերել, քնել», որտեղից հայ. ագանիմ, աւթ, այլև հուն. αὐλή «բակ, տուն. տաճար. պալատ», αὖλις «իջևան, օթևան. գիշերելու վայր»)—Արեգևանք (նախարարություն և գավառի անուն)=ուրարտ. աղբյուրների Abiliani/ehi (տեղանուն և երկրանուն)։

Αὔρας (ցեղանուն. համմ. Αὔρα— հավերժահարս՝ նիմֆայի մասն հիշատակված) (հ.-ե. auer- «ջուր, անձրև. գետ»)—Հաւրաշ, Հաւրա, Հորա (անձնանուն)[68].

Βάβας (անձնանուն՝ տարածված Փոքր Ասիայում)—Բաբագ (անձնանուն).

Βαλας, Βαλης, Balius (անձնանուն), -βαλος, -bales, -balus, -βαλης, -βαλιος, -balli (անձնանունների և ցեղանունների բաղադրիչ) (հ.-ե. bhel- «փայլել»)—Վաղինակ, Վաղուտ, Վաղաշ (անձնանուններ).

Βύζας, -αντος (անձնանուն, այդ թվում Բյուզանդիոնի հիմնադրի անունը) (հ.-ե. bhug'- «այծ արու, քաղ»)—Բուզանդ, Բիւզանդ[69].

Γαζα (անձնանուն)—Գագաւոն (անձնանուն)[70].

Γαζωρος (անձնանուն), Γάζωρος, Γάσορος, Γαζωρός (տեղանուն, քաղաք՝ Γαζωρία-ի պաշտամունքով)—Գագրիկ[71].

Galatu, Κάλλατις, Καλλάτις, Callatis (քաղաքանուն) (հ.-ե. gʷel- «[illegible]»)—Գաղատ (անձնանուն) (??).

---

68 Ըստ Հ. Աճառյանի՝ Խորենացու կողմից հորինված։

69 Անհայտ Փավստոս Բուզանդի անվան հետ մեր համարվում է Փավստոս Բյուզանդացի։ Բուզանդ (Բիւզանդ) անձնանունը ավելի ուշ ավանդված է հունարենից։ Արդյոք որևէ կապ չկա՞ կելտ. անձնանունների Βρεττ- հավելիչի (որանից Βρεττονια անվուր անունը Թրակիայում) և հայ. Բրիթ գերանվան (պատրաստողա տարված) միջև։

70 Համմ. հայտ. Gazū թագավորանունը։

71 Հ. Աճառյանը հիշատակում է վրաց. gaziri «զուգակցելու» բառը և նշում հայ. անձնանվան ու այս բառի կրկն. ծագման հնարավորությունը։

Γεβελέιζις (դիցանուն) (հ.-ե. ghebhel- «գլուխ»)—Գաբաղ (Գաբեղեան նախարարության հիմնադրի առասպելական անունը. հմմ. և հայաս. Gabildijiš անձնանունը).

Γεζων (անձնանուն. հմմ. Γιζωνις կնանանունը և Γίζωνος քաղաքանունը՝ Γίζων—Դիոնիսոսի պաշտամունքում)—Գիզ, Գիզան (անձնանուններ).

-γενθης, -gentus (Καις-γενθης, Ditu-gentus անձնանուններում) (հ.-ե. gʷhen- «սպանել, խփել, կոտորել», որտեղից հայ. գան, -ջնք)—Գինդ, Գինթ և Գնիթ (անձնանուններ)[72].

Γενναῖος (անձնանուն), Γεννία (տեղանուն)—Գնել, Գնէլ (անձնանուն)[73].

Γιλ-γειλις (Γιλ-πορις, Gil-doba, Βεζε-γειλις անձնանուններում)—Գյակ, Գղակ (անձնանուններ).

Γωσις (անձնանուն)—Գուշար (անձնանուն).

Δαδα, Δαδας, Dades (անձնանուն. շատ տարածված է Փոքր Ասիայում և Միւթիայում)—Դադէ, Դադիա (անձնանուն).

Δανα-, -danus, -δανος, -δανα (անձնանունների բաղադրիչ)—Դանան (անձնանուն).

Δατας, Δατος, Datysus (անձնանուններ) (հ.-ե. dhē- «դնել», -to- դերբայական ածանցով. հմմ. իրան. dāt-)—Դատիս, Դատիա (??).

Δορ-, Δωρο-, Dor(i)-, Δουρα-, -δουρο- (անձնանունների բաղադրիչ. հմմ. լատ.<էտր. Dura-tenus, Duranius, Duronius, Durius)[74]—Դարոն.

-zaces, -ζακος, -ζακης, -ζηκος, Σακα-, Saci- (անձնանունների բաղադրիչ. հմմ. էտր. Sacu, Σαχυ>լատ. Saccus անձնանունը, այլև Σάκαι իրանական ցեղանունը) (հ.-ե. k̑ak- «օգնել»)—Զագիկ[75].

---

[72] Առաջինը Հ. Աճառյանը կապակցում է գինդ «ականջօղ» բառից՝ ենթադրելով, սակայն, կապը Գինթ, Գնիթ անձնանվան հետ։

[73] Ըստ Հ. Աճառյանի՝ գնել ձևից, որ անհավանական է։

[74] Համեմատվում է Δορισκος բաղադրանվան հետ, որ ըստ Դեչևի ծագում է հ.-ե. gʷher- «ջերմացնել» արմատից։

[75] Հ. Աճառյանը համարում է ձագ բառի փաղաքշականը, բայց այդ ժողովրդական ստուգաբանություն պետք է համարել. Զագիկը Սիսակի սերնդից էր, Սյունյաց նահապետ, նրա անունից է համարվում Զագենորը։ Սրա հետ ենք մենք համեմատել հայաս. Zag(g)a- ցեղանունը, թեև, հենվելով Ա. Կանանյանի վրա, բխեցրել ենք հ.-ե. ueg̑ʰ- «պաշտպանել» կամ sak- «օգտագործել» արմատից։

Zorte, Zortha (*անձնանուն*). Ζορδ- (*Ζορδ-ειγης, Ζορδ-ισανος անձնանունների բաղադրիչ. համեմ. Ζορθινης և* Sorsinos Justi-*ի մոտ՝* „Iranisches Namenbuch", *էջ 387)—Զորթ, Զորթաագ.*

Ζουθης (*անձնանուն)—Զութթ (անձնանուն. կան և Զութա, Զութգա ձևերը).*

Ἥρως, Ἧρως. Heros (*դիցանուն) (համեմ. հին հնդկ.* jūrim *«երգել», ռուս.* юркий)—Ἦρ. Ἦρος (*պամֆիլիացի հայի անուն, ըստ Պլատոնի՝ մեռել է և հարություն առել. համեմ. Արա— թրակյան* Ἀρεύς).

Κάδμιος, Καδμεῖος (*հարադրվում՝* Κάδμος). Κάσμιος, κασμεῖος, Κάσμιος (*դիցանուն)—Կադմոս (անձնանուն. Հայկի թոռան անունը. համեմ. հաթթ.* Qadmaša *և* Kašmiaḫa *քաղաքանունները).*

Καρδίη, Καρδία (*քաղաքանուն. համեմ. սկյութ.* Καρδήσσος, *այլև* Καρδ- *բաղադրիչով փոքրասիական քաղաքանունները)—Կարդոս (անձնանուն. Արա Գեղեցիկի որդու անունը)*[76].

Κορνας (*անձնանուն)—Կոռնակ (անձնանուն. Հայկի հաջորդներից մեկի անունը)*[76a].

Κότυς, Κοττώ, Coto, Κοτυτ(τ)ώ, Cotytto (*աստվածուհու անուն).* Κοτυς, Κοτυς, Κοττυς, Κοτιων, Κοττιων, Κοτος, Κοττυς Cottus, Κοτυττων (*անձնանուններ) (համեմ. փոքրասիական* Κοτυς, Κοττυς, *կիլիկյան* Cotus, *էտրուսկյան* Cutuś *անձնանունները) (համեմ. ռուս.* хотеть?)—*Կոտիս, Կոտիւս (Փոքր Հայքի թագավոր* I *դարում. համեմ. թրակյան* Κοτυς *անունը կրող թագավորներին).*

Κουντις (*անձնանուն. համեմ. կիլիկյան* Κονδης *անձնանունը, պիսիդ.-իսավր.* Κουνδοζατης *ժողովրդի անունը և կելտ.* Cun-.iana *տեղանունը)—Կունդիկ (անձնանուն, Թոնդրակեցու անուն.* XI *դ.).*

Cusaia, Κουσιας, Cusides, Κουσος (*անձնանուններ. համեմ. պիսիդ.* Κουσων, *լիկիան.* Κουσανις *և այլն)—Կուսան (անձնանուն. համեմ. լիկիան.* Κουσανις). *Կուսինա (կն. անձնանուն)*[77].

Μαζαιος (*անձնանուն).* Μαζαιον (*տեղանուն) (համեմ. իրան.* Μαζαῖος, Μαζάρης, Μαζαρος, Μαζις, Μάζουος *անձնանունները, այլև կապադ.* Μαζακα *տեղանունը, պիսիդ.* Μασας, *լիկ.* Μασης *անձնա-*

---

76 *Ըստ Հ. Աճառյանի՝ թերևս ասորական անուն։*

76a *Հ. Աճառյանը կասկածով բխեցնում է* կորիւն *բառից։*

77 *Ըստ Հ. Աճառյանի վերջինս նորակերտ անուն է՝* կոյս *բառից և* Վեր-գինէ *անվան խառնուրդից։*

նունները), -μαζος,-μαστης (անձնանունների բաղադրիչ) (հ.-ե. meg'h- «մեծ»)—Մաժան[78].

Mama, Μαμα (բզ.), Ma m(m)as, Μαμαῖος, Μαμᾶς, Μαμουτζης Mamutzis (ար.) (անձնանուններ) (mama, mamma մանկական բառից. տարածված է Փոքր Ասիայում և այլուր)—Մամակ (ար.), այլև թերևս Մամա (բզ.), Մամաք (բզ.), Մամէր, Մամէ, Մամոյ[79].

Μανης, Μανις, Μαννις, Μανιτης (ար.), Μανια (բզ.) (անձնանուն. համմ. փռյուգ. և պափլագ. Μανης. կիլ. և պամփիլ. Μαναις. լիկ. Μανιας. էտր. Manina, Manasa) (հ.-ե. mā- «լավ», mano-)—Մանան, Մանիթ.

Μαντα, Μαντας, Μαντις, Μαντανις, Μανταρους (անձնանուններ), -μαντοι,-μαντες (Ὀδό-μαντοι ցեղանվան մեջ, որ համեմատում են Ստրաբոնի մոտ հիշատակված՝ Հայաստանի 'Οδομαντίς գավառանվան հետ) (համմ. փռյուգ. Μάνταλος տեղանունը, լիկ. Μανδαεις անձնանունը, այլև իրան. Χορσο-μαντις անձնանունը)—Մանդակ (Մանդակունեաց նախարարական տոհմի առասպելական հիմնադրի անունը), Մանդակունիք (նախարարական տոհմի անուն).

Μεζηνιος (անձնանուն. համմ. էտր. Mezentius և լատ. Mezzaeus, Mezaeus անձնանունները), Μεζανεια (բզ. անձնանուն) (հ.-ե. meg'h- «մեծ»)—Մժէժ, Մեժէժ (անձնանուն. գրված հուն. Μεζέζιος).

Μελας (անձնանուն), Μελτο-, Μιλτο- (Μελτο-κλέος, Μιλτο-κυθης անձնանուններում), Μελτα (տեղանուն, որտեղից Meletinus ցեղանունը. համմ. թեսալական Μελίτεια, կապադովկիական Μελιτηνή քաղաքանունները և այլն) (հ.-ե. mel-—գունանիշ արմատ), թերևս նաև Μελιας (անձնանուն)—Մելի, Մելիս (անձնանուն)[80], Մեղտէս (անձնանուն), Մեղտի (տեղանուն. իբր Դեմետրի կամ Գիսանեի հնդիկ իշխաններից մեկի որդի Մեղտեսի կողմից հիմնված ավան).

---

[78] Ըստ Հ. Աճառյանի՝ իրանական ծագում ունի, բայց ստուգաբանությունը չի նշվում։ Կապադ. Μαζακα-ն ըստ Մ. Խորենացու ծագում է հայ. Մշակ (<Մը-շակ) նահապետի անունից, որ տեղացիները չկարողանալով արտասանել՝ դարձրել են Մաժակ։ Ըստ հուն. աղբյուրների՝ Կապադովկիայի առաջին իշխանի անունը Մոսոք կամ Մեսոք էր (համեմ. մուշկերի անունը)։ Մշակ հայ. բառը (որից Մշակ անձնանունը) ըստ Աճառյանի (Հայ. արմ. բառ., 4, էջ 1081—1083) կովկասյան փոխառություն է։

[79] Հ. Աճառյանը այս բոլոր անունները հանում է հայ. մամ «տատ կամ մայր» բառից։ Մամակ անունը ակնհայտորեն հայկական ուղ կազմություն չէ։ Հուն. փոխառություն է համարվում Մամաս անձնանունը։

[80] Ըստ Հ. Աճառյանի՝ թերևս հուն. μέλι «մեղր» բառից (?)։

Μαστας, Μαστακ, Μαστις, Μαστυς (անձնանուն) (հ.-ե. mad- «թաց, խոնավ. յագուրդ, հյութեղ», mad-to-)—Մաշտոց[81].

Μηδοκος, Μηδοκης, Μητοκος, Ματοκος, Μητακος, Μηθακος (անձնանուն՝ Αμα-δοκος ձևի՞ց. հ.-ե. mā- մանկական բառից. որից Mā դիցուհու անունը+δοκος<հ.-ե. dok'-՝ dek'-ի կրավորն)—Մնակես (անձնանուն).

Μινακος, Μινας, Μινω (անձնանուն. համմ. կար. Μιννις, Μιννων, էտր. Minate, Minati, Minia, Miniaś անձնանունները)—Մինաս[82].

Μοσεις, Μοσις, Μοσιας (անձնանուններ՝ կազմված Μοσοί, Μοσσοί ցեղանվան հետ)—Մուշ (անձնանուն)[83].

Ουαρζ-βαλος (անձնանուն. ըստ Ձգուստայի՝ սարմատական, թեև հնարավոր է նույնացնել թրակյան ծագում՝ Βαρζαβας անձնանվան հետ միասին)—Վարձ (անձնանուն)[84].

Ῥῆγ(σ)ος (անձնանուն), Ρηγσου-, Ραισκη-, Ραισκο-, Ρασκο- (անձնանունների բաղադրիչ) (հ.-ե. reg'- «ուղիղ, ուղղել», rēg'-s- «թագավոր», reg'io- «թագավորական»)—Հրասեկ (անձնանուն).

Σαβινι-οιβας (անձնանուն, որի առաջին մասը անձնանուն է պատահական. համմ. էտր. Sapini> լատ. Sabinius անձնանունը. այլև սրանից. Σαβινα անձնանունը)—Շար (անձնանուն) (?).

-sara, -σαρα, Σαρα- (անձնանունների բաղադրիչ) (հ.-ե. ser- «հսկել» կամ k'er- «գլուխ. եղջյուր. գագաթ», որտեղից հայ. սար)—Սարայ (անձնանուն).

-σαριος, -σαρις, -σαρης (անձնանունների բաղադրիչ) (համմ. գալլ. Sarius անձնանունը) (հ.-ե. k'er- «գլուխ» կամ հին հնդկ. śarya-ḥ «նետ»)[85]—Սարիայ, այլև թերևս Սարի և Սարուէն[86] (անձնանուններ).

---

[81] Սակայն հայ. բառը ստուգապես հավանականությամբ իրանական ծագում ունի, ինչպիսին ենթադրում են Ձգուստան և Յուստին նաև Μαστας և Μαστυς ձևերի համար:

[82] Ըստ Հ. Աճառյանի՝ ժողովրդական անուն էր, բայց աղբյուրը չի նշվում: Գործածված է XI դարից:

[83] Հ. Աճառյանը կասկածով կապում է Մուշ քաղաքի անվան հետ, որը իր հերթին կապում են Μυσοί ցեղանվան հետ:

[84] Հ. Աճառյանը գրում է. «Բնիկ հայ. փոքր բառից չէ. ծագումն անհայտ է»:

[85] Համմ. և -σαρα,-sara բաղադրիչը, որի հետ համեմատել նաև հայ. Սարայ անձնանունը:

[86] Վերջինս Յուստին կցում է պրուս. Šarvin անձնանվան հետ:

Sausa (*անձնանուն*)— *Սաւս* (*Անուշաւան Սաւսանուէր կամ պարզապես Սաւս*).

Sises, Sisus, Σισης (*ար.*), Σισι, Ζισι (*իգ.*), Sisinus (*ար.*) (*անձնանուն. Sis- բաղադրիչով անձնանունները տարածված են Փոքր Ասիայում և Եգիպտոսում. հմմտ. նաև էտրուսկյան և կելտ. անձնանունները. հավանական է համարվում դրանց իրանական ծագումը. հմմտ.* Σισάμενης, Σισιμάκης, Σισιμίθρης *անձնանունները Յուստիի մոտ*)—*Սիսակ* (*անձնանուն*), *Սիսիս* (Σισις—*Փոքր Հայքի թագավորի անունը*).

Σκαιοι (*ցեղանուն*) (*հ.-ե.* skāi- *«լուսավոր»*)—*Սկայ-որդի* (*անձնանուն*)[87].

Σοια (*իգ.*), Soio (*ար.*) (*անձնանուն. հմմտ. կելտ.* Soeanus, Soiana, Soiata, Soius *անձնանունները.* Soio *պաշտպանության աստվածուհու անունը*)—*Սոյեմ* (*անձնանուն*).

Sulu, Σουλος (*անձնանուն*)—*Սղուկ* (*անձնանուն. Սլկունի նախարարական տոհմի նահապետի անունը*).

Συρα-, Συρι-, Sure-, Συρο-, Συρ-, Syr- (*անձնանունների բաղադրիչ. հմմտ. էտր.* Sure, Surna, *կելտ.* Suriacus, Suricus, Surillus, *այլև իրան.* Αρτα-συρας, Suren *անձնանունները*) (*հ.-ե.* k'eu- *«ուռչել»*)—*Սուրմակ* (*անձնանուն. կա և վրացիների մոտ*).

Σπαρακης (*անձնանուն. ֆրիգիացու անուն՝ մակեդ. ծագմամբ*)—*Ասպուրակէս, Ասպրակես* (*Սպարակես*)[88].

Ταρκος, Ταρκυς (*անձնանուն*), -ταρκος (Ρεπτα-ταρκος *անձնանվան մեջ*) (*հմմտ. էտր.* Tarχna, Tarχi, Tarχu, *փոքրասիական* Ταρκονδας, Ταρκονδος *և այլ անձնանունները*) (*հ.-ե.* ter- *«անցնել», որտեղից խեթ.* tarḫ- *«հաղթել»*)—*Տորք* (*անձնանուն*)[89].

Tutius (*անձնանուն. հմմտ. էտր.* Tutna, Tutial, Tute, *կելտ.* Tutius, Toutius, *իլիր.* Tutia), Τευτα, Τευτη, Τευτα (*անձնանուն, նախորդը սրանից է կազմված*) (*հ.-ե.* teutā *«ժողովուրդ»*)—*Տուտէ* (*անձնանուն*)[90].

Trai-, Traii-, -τραις (*անձնանունների բաղադրիչ. հմմտ.*

---

87 Համարվում է (Ս)սկայ-որդի բառերից բաղադրված, ընդ որում (Ս)կայ բառը Գ. Ղափանցյանը կապում է ասկերի անվան հետ. ավելի հիշտ է կապել թրակյան սկայների անվան հետ:

88 Ծագումն իրանական՝ տարրական մեկնաբանությամբ (?):

89 Հայ. անունը հավանաբար փոքրասիական ծագում ունի:

90 Սակայն հայ. անձնանունը հանդիպում է XII դարից սկսած միայն:

կելտ. Tralus)—Տրէ (անձնանուն. Հայկի որդիներից մեկի անունը)[91].

2) Տեղանուններ.

Aci-dava (քաղաքանուն, որի Aci- բաղադրիչը *Ακις անձնանունն է. հմմտ. յն. Ακκα, փռյգ. Ακκισς, կելտ. Accis, լատ. Accius, Acceius և այլն. Ακις անձնանունները)—Ակէ (գավառ Վասպուրականում՝ Ակէացի նախարարական տան ժառանգական տիրակալությունը).

Αλβοκησιοι (Դակիայի հարավ-արևելյան մասի բնակիչները) (նախա-հ.-ե. alb- «լեռ, բարձունք», ավելի քիչ հավանական է հ.-ե. albh- «սպիտակ»)—Աղբակ (գավառ Վասպուրականում և Կորճեքում).

Αραζος, Arason (տեղանուն. հմմտ. Αραζια՝ Էգեյոսյի մատանու վրայի արձանագրության մեջ, այլև փռյգ. Αραζη տեղանունը)—Արած.-ոյ (գավառ Այրարատ նահանգում).

Ἄραυρος, Ἄραυρις, Ἄραιος (քաղաքանուն)—Արաւրակ (Arauraka, Ἀραύρακα (բերդ Բարձր Հայքում).

Ἀρτάνης (գետանուն, Դանուբի հարավային վտակը) (հ.-ե. ered- «հոսել. խոնավություն»)—Ἀρτάνη, „χωρίον ὑπὸ Ἀρμενίων" (ըստ Հեսիքիոսի).

Βαλας, Βαλης, Ballus (անձնանուն) (հ.-ե. bhel- «փայլել»)—Բալա-հովիտ (գավառ)[92], Բալու (բերդ, Ծոփքի կենտրոնը), թերևս նաև Բաղաղէշ (<Բաղէշ) (բերդ և գետ), Բեղ (Բեխ—գավառ).

Βασσανιαι (տեղանուն)—Բասեան (գավառ Այրարատ նահանգում).

Gabranus (գետանուն)—Գաւրէք (գավառ Չորրորդ Հայքում, ուրարտ. արձ. Gaurahi-ն).

Γάζωρος, Γάζορος, Γαζωρός (քաղաքանուն), այլև Γαζα (տեղանուն)—Գաձրիկ (ամրոց), Գաձրիկեան (գավառ Վասպուրականում), այլև Գաձրուրա (ավան Էլինադնոսում).

Γουνος, Γουνισα (անձնանուն)—Գուկանք (գավառ Վասպուրականում), Գուկանց (ավան՝ Գուկանք գավառում).

Δεζζιλας (անձնանուն), Δεζζιλας, Δεζζιλατης, Δεζζιλας, Δεζ-

---

91 Ըստ Հ. Աճառյանի՝ Տրէ անձնանունից։

92 Գոյկիոսը կոչում է «Բալեցին գավառ»։

-ζηνας, Δερζης (ցիցանուն), Derzenus, Derzizenus անձնանուն) (հ.-ե. dhereg'h- «պահել, ամուր»)—Դերջան (մարզ և գավառ).

-dina, -δινα, -δινα (տեղանունների բաղադրիչ) (հ.-ե. dheu- «ցնդել, սուրալ», որտեղից հին անգլ. dūn «բարձունք, բլուր, լեռ և այլն)—Դուին.

Καμισαος (անձնանուն. թերևս նույնը Καμσ-, Καμα-, Καμι-, Καμι-, κομης անձնանվանական բաղադրիչի հետ) (հ.-ե. kā-mo- «սիրել»)—Կամիսա (մարզ Փոքր Հայքում) (??).

Carsion, Corsium, Καρσος (քաղաքանուն, ընդ որում -ion, -ium-ով ձևերը՝ Καρσος անձնանունից են) (հ.-ե. kers- «սևանալ, սևով քաշել»)—Կարս[93].

Κορνας (անձնանուն. համմ. պիսիդ. Κορνος անձնանունը, կապադ. Κορνη, լիկիան. Κορνα տեղանունները)—Կոռնէ (Κόρνη, Corne) (ամրոց՝ Եփրատի աջ ափին)[94], թերևս նաև Կանի (Չորրորդ Հայքի Դեգիք գավառում).

Κοσας (ամրոցի անուն. համմ. կիլիկ. Κοσας անձնանունը)—Կոսաս (մարզ Մշո դաշտում).

Κολα (իգ.), Κολλος (ար.) (անձնանուն. համմ. պիսիդ. Κολας, լիկիան. Κολλανις, էտր. Culni անձնանունները. ըստ Զգուստի՝ իրանական)—Կողան (գետ), Կողանովիտ (գավառ Վասպուրականում).

Ἄβαντες (ցեղանուն)—Հաբանդ (գավառ Սյունիքում, Արցախում).

Μαζαιον (տեղանուն), Μαζαιος (անձնանուն), -μαζος, -mosos, -μασης (անձնանունների բաղադրիչ) (հ.-ե. meg'h- «մեծ»)—Մազազ (գավառ Այրարատում) (?).

Μάρις (գետանուն) (հ.-ե. me-ro- «մեծ»)—Մարի (գետանուն), Մարի (գավառ Պարսկահայքում) (?).

Melta (տեղանուն), Meletinus (տեղանուն)—Մելիտենէ (Μελιτηνή, այժմ՝ Մալաթիա)[95], Մեղդի [մարզ Մուշից հյուսիս-արևմուտք, ասուրա-բաբ. Melidu, Melidia (?), որի անունով Մշո դաշտը կոչվել է Melidu)[96].

---

93 -ս-ն ավելի ուշ գիտակցվել է որպես հոգն. հայց. վերջավորություն, և բառը հոլովվել է Կարուց ձևով:

94 Անունը մոտ է կապադովկյան տեղանվանը:

95 Համեմատությունը պատկանում է Գ. Դեչեյին:

96 Համմ. Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 70:

Μυσοί, Μοισοί, Moesi, Moeses (եզ. Μυσός, Mysus, Moes) (ցեղանուն)[97]—մուշկ (ասուրա. Muškini, հուն. Μόσχοι. հմմտ. փռյուգ. ամեկի «հայք»), Մուշ, -ոյ (հմմտ. և ասուրա. Mušuni—վայր Վանա լճի հարավային ափին).

Ὀδόμαντοι, Ὀδόμαντες, Odomanti (ցեղանուն)—Ὀδομαντίς (Հայաստանի մի գավառի անուն՝ ըստ Ստրաբոնի)[98].

Ὄρβηλος, Ὄρβηλον (լեռնանուն), Ορβηλία (այդ լեռան հարավում գտնվող վայրի անուն) (հ.-ե. rebh- «կամար ձևացնել, տանիք ձևացնել»)—Որբելեան (տոհմանուն) (?).

Παίονες (ժողովրդի անուն), այլև թերևս Παῖον (տեղանուն) —հայ,-ոց[99].

Σάλων, Σαλώνεια, Σαλωνία (տեղանուն և քաղաքանուն)—Սալնայ լեռինք, Սալնոյ ջուր (գետ), Սալնոյ ձոր (գավառ Աղձնիքում).

Σανη (տեղանուն), Σαναῖοι (ցեղանուն՝ նախորդից կազմված) —Սանասուն (ցեղանուն, Սասուն), Սանասունք (գավառ Աղձնիքում), Սանասնոց լեռինք, Սանասնոյ գետ (?).

Σίρβης (գետանուն և տեղանուն) (հ.-ե. ser- «հորդել, հոսել»)—Սերմանց լեռան (հետագայում՝ Բիւրակն, Բինգյոլ).

-σουος (Μουκα-σουος անձնանվան մեջ),-sucu,-σουκος, -σουος (անձնանունների բաղադրիչ), Σουκος, Συκος (անձնանուն. հմմտ. էտր. Suci, Sucnei, Zuzna անձնանունները) (հ.-ե. k'eug- «լուսավորել»)—Սոկ (բերդ Չորրորդ Հայքի Դեգիք գավառում), Սոկաւէտ լեռան.

-ταρας,-ταρος,-tarus (անձնանունների բաղադրիչ. հմմտ. էտր.>լատ. Tarrius, Taronius, Tarusius և այլն, լիկ. Ταρον, կիլիկ. Ταρωνος անձնանունները) (հ.-ե. dō-ro-, də-ro- «նվեր», որտեղից հայ. տուր-ք)—Տարոն (Ταρών, Ταρωνῖτις χώρα) (գավառ Տուրուբերան նահանգում), թերևս նաև Տարաւնոյ գետ (Պարսկահայքի Զարեհավան գավառում. այստեղ պետք է գտնվեր ասուրա-ուրարտական արձանագրությունների հիշատակած Tarauna երկիրը).

Τόμοι, Τόμις, Τόμις, Τομεύς, Thomi, Thomes (քաղաքանուններ) (հ.-ե. dem- «կառուցել», որտեղից հայ. տուն)—Թմոն,

97 Ըստ Վ. Գեորգիևի՝ հ.-ե. mūs- «մուկ» ձևից։

98 Վ. Տոմաշեկը դժվարանում է այս հնչյունական համապատասխանությունը գտնել որևէ պատահական։

99 Παῖον-ի և Παίονες-ի համեմատությունը պատկանում է Յոկլին։ Παίονες էթնիկական անունը թերևս կիլիկյան է։

Թմեիս (գյուղանուն). Թմեիս (ուրարտ. Tumeiški, հուն. Τόμισσα) (բերդ)[100].

§ 11. Ավելորդ չենք համարում նախորդ §-ում նշված սկզբունքներով մատնանշելու թրակա-հայաստանյան որոշ զուգահեռներ.

Αζ-, Ασ-, Ασα-, -αζιος,-αζος, -ασος (անձնանունների բաղադրիչ. համեմ. կել. Ασας և սկյութ. Αζιας, Αζος, Αζιαγος (անձնանունները), այլև ''Αζωρος (քաղաքանուն. համեմ. Αζωρ քաղաքանունը, այլև Հեսիքիոսի գլոսան՝ ἄζον «մեծ, բարձր»)— Azzi (երկրի անուն).

Almana, 'Αλμάνη (քաղաքանուն) (հ.-ե. al- «աճել, աճեցնել սնել», որտեղից լատ. almus «սնուցիչ, բարեշնորհ», alimonia «սնունդ, սնուցում», alimentum «կերակուր, սնունդ»)—Ḫalimana (քաղաքանուն)[101].

'Αρίσβη, 'Αρίσβα (քաղաքանուն. համեմ. խառմր. ''Ισβος քաղաքանունը և պամփիլ.-պիսիդ. ''Ισβα բնակավայրի անունը, որոնք ենթադրել են տալիս Αρ-ισβα կազմությունը) ''Αρισβος (գետանուն), 'Αρίσβας (անձնանուն՝ քաղաքանունից կազմված)—Aripša (քաղաքանուն)[102].

''Αρνη (տեղանուն) (հ.-ե. or-no- «հոսանք, գետ, հեղեղ», er- «շարժել»)—հայաս. Arnija (քաղաքանուն).

Βάλας, Βαλᾶς, Balius (անձնանուն. համեմ. փռյուգ. βαλήν «թագավոր», կելտ. Balanus, Balarus (անձնանունները), Βάλης (Թրակիայի մակդիրը), Βάλιος (Դիոնիսոսի մակդիրը), -βαλος, -bales, -βαλης (անձնանունների և գետանունների բաղադրիչ) (հ.-ե. bhel- «փայլել»)—Baltaik (գետանուն)[103].

---

100 Թրակյան քաղաքանունների առաջադրանությունը (հ.-ե. dem-ից) կասկածելի է, եթե լատ. th-ն և հայ. բ-ն իրար արտացոլում են նախնական հնչյուն:

101 Սակայն հեղինակը «Хайасский язык и его отношение к и.-е. языкам» աշխատության մեջ (էջ 73) համեմատում է խեթ. ḫali- «պահակ» բառի հետ և վերականգնում «պահակային, պահակատեղի» ընդհանուր իմաստը:

102 Համեմատությունը պատկանում է Յոկլին: Հեղինակի „Хайасский язык и его отношение к и.-е. языкам" աշխատության մեջ այն բացատրված է, որովհետև 'Αρίσβη-ի -ισβη մասը համեմատվում է լիկ. esbedi «ձի» բառի հետ (բառ կոմնուայի), և հայաս. քաղաքանունը բխեցվում է հ.-ե. rip- ձևից (rei- «ճարել, պոկել». համեմ. լատ. ripa «եզր, ափ»)։

103 Հ.-ե. նույն արմատից են ալբ. balash «սպիտակ. սպիտակ բծերով», balt: «ճահիճ» (համեմ. հայ. բալ «մշուշ») և ռում.<դակերենից. baltă

Βέρ(ρ)οια, Βερ(ρ)όη (քաղաքանուն) (հ.-ե. bher- «բերել» հայ. բերեմ, բերրի)—հայաս. Parraia (քաղաքանուն).

Γεβαλείζις (ցեղանուն) (հ.-ե. ghebh-el- «գլուխ»)—Gabildijis (անձնանուն).

Γάζα, Γασζα (անձնանուն), Γάζα և Γάζωρος, Γαζωρός (տեղանուններ)—Gazū- (քաղաքանուն)[104].

-ιγγας (Κοσ-ιγγάς անձնանվան մեջ. համեմ. կից. և բաղդ. Ιγγας, Ιγγαμις, Ιγγασις անձնանունները)—Ingalaya (քաղաքանուն)[105].

Κάσμιλος, Κασμεῖλος, Casmil(l)us, Κά(δ)μιλος, Κάδμῖλος, Κασμῖλος (ցեղանուն՝ Սամոթրակիայից, համեմ. Κάδμος, որի անունը բխեցվել է Κάδμῖλος-ից)—Kašmiaha, այլև թերևս Qadmaša (Kadkuša?) (քաղաքանուններ).

Μαρις (արքայացու անուն՝ թրակիան ցեղերի պատկանող), Μαρις, Μάρισος, Marus, Marisia, Μαρίσης (գետանուն), -μαρος, -μαρα, Μαρ-, Μαρο-, -μαρις (անձնանունների և տեղանունների բաղադրիչ) (հ.-ե. mē-ro- «մեծ, նշանավոր»)—հայաս. Marijaš.

Μουκα (Μουκα-πορα տեղանվան մեջ) (համեմ. լատ. Mucius անձնանունը)—հայաս. Muttiš[106].

Patavissa, Patabissa, Πατρούισσα, Potaissa (տեղանուն)—Pātteu- (քաղաքանուն)[107].

Tugugerum (տեղանուն)—հայաս. Duggama(na) (քաղաքանուն)[108].

«լինել. ճահճոտ» բառերը (տես. և ռուս. բառերի կապի մասին ան՛ս А. Врачу, „Linguistique balkanique", VIII, 1964, էջ 20)։

[104] Համեմ. և հայ. Գագաւան անձնանունը։

[105] Զուգադիպությունը պատահական է, եթե ճիշտ է հայաս. քաղաքանվան ստուգին մասի համեմատությունը հայ. անգղ բառի հետ։

[106] Թրակ. անվան ծագումը հայտնի չէ։ Հայաս. անունը, համեմատելով թեթև Muŋattiš-ի հետ, բխեցվում է հ.-ե. meu- «շարժել, հեռացնել» արմատից։

[107] Հայաս. քաղաքանունը հիմնականը համընկնում է հ.-ե. pet- «տարածել» արմատին, որից բխեցնում են թրակ. Pittacus, Φιττακός անձնանունը։ Կապ կա՞ արդյոք թրակ. տեղանվան և անձնանվան միջև։

[108] Թրակ. տեղանվան ծագումը հայտնի չէ, իսկ հայաս. քաղաքանունը հիմնական կազմից համեմատվում է թեթև dug(g)- «տեսնել, երևալ, հարգել» բայի հետ. վերջինս Զայը („Zbornik Filozofske Fakultete", Ljubljana, 2, էջ 402 և հհ.) համեմատում է ալբ. duket «թվալ, երևալ, տեսք ունենալ» բայի հետ (համեմ. J. Friedrich, Hethitisches Wörterbuch, I, Ergänzungsheft, 1957, էջ 21)։

Σακος (տեղանուն), Zaca- (անձնանուն)[109], -zaces, -Ζακος, -ζακος, -ζηκος, Σακα-, saci-[անձնանունների բաղադրիչ. հմմտ. էտր. Sacu, Sazu (լատ. Saccus) և սկյութ. Σακαι] (հ.-ե. k'āk- «կարողանալ, օգնել»)—հայաս. Zag(g)a- գիցանուն)[110].

Σαλλυρτεκι (տեղանուն, որտեղից Σαλλυρτεις (ցեղանո՞ւնը)—Šilliii (գիցանուն) (?)[111].

Ταρασι-δαυα [տեղանուն՝ Ταρασις անձնանունից] (հ.-ե. dā-mo-s «ժողովուրդ», dā(i)- «բաժանել»]— Tamatta (բաղադրանուն)[112].

-titha, -tita (germe-titha գիցանվան և Nusa-tita անձնանվան մեջ), Tithutes, Τιθουτα (անձնանուն) (հ.-ե. dei- «շողալ», որտեղից հուն. Τιθωνος—Էոսի ամուսինը, Τιτᾶν, -ᾶνος, հին. Τιτήν, -ῆνος «արևի աստված», τιτώ «արշալույս, աստված, օր», հայ. տիւ)—հայաս. Terit-titunis (գիցանուն)[113].

---

109 Հմմտ. V. Beševliev, „Linguistique balkanique", I, 1959, էջ 67։

110 Զուգադիպությունը պատահական է, եթե ճիշտ է հեղինակի կողմից հայաս. գիցանվան հետ համեմատվող էտր. zec «ուժեղ» և sac «սրբագործել» բառերի ծագման վերաբերյալ Ա. Կոռնուայի կարծիքը (հմմտ. հեղինակի „Хайасский язык и его отношение к и.-е. языкам" աշխատությունը, էջ 56։

111 Հեղինակը „Хайасский язык и его отношение к и.-е. языкам" աշխատության մեջ հայաս. գիցանունը բխեցնում է հ.-ե. sel- «բարյացակամ» արմատից և այս կապակցությամբ բացառում թրակ. ցեղանվան հետ ունեցած կապը։

112 Զուգադիպությունը պատահական է, եթե հայաս. բաղադրանունը ծագում է հ.-ե. dem- «կառուցել» կամ դրա հետ կապված dema- «տանել, ընտելացնել» արմատից, ինչպես կարծում է հեղինակը իր „Хайасский язык..." աշխատության մեջ։

113 Հմմտ. և թիթյուն. Tit(θ)ονος անձնանո՞ւնը։ Զուգադիպությունը պատահական է, եթե ճիշտ հայաս. գիցանվան -(t)titunis ձևի համեմատությունը հայ. տաւն բառի հետ (ըստ Գ. Ղափանցյանի, ընդունվում է հեղինակի կողմից իր „Хайасский язык..." աշխատության մեջ, էջ 52)։

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՊԵԼԱՍԳԵՐԵՆԸ

1 §. Պելասգները Հունաստանի հնագույն բնակիչներն են, որոնք նախքան հույների գալը զբաղեցնում էին Բալկանյան թերակղզու հարավային մասը, Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա շրջանը, այլև որոշ կղզիներ։ Հույների կողմից պելասգների համաձուլման պրոցեսը տեղի է ունենում աստիճանաբար։ Մ. թ. ա. I հազարամյակում պելասգները դեռևս պահպանվել էին Հելեսպոնտոսի հյուսիսային ծովափին, Կիզիկյան թերակղզում, Թեսալիայում և մի քանի կղզիներում (Իմբրոս, Սամոս, Լեմնոս)։ Այս մնացորդներն էլ աստիճանաբար ձուլվում են հույների հետ և դադարում որպես ինքնուրույն ժողովուրդ գոյություն ունենալուց։

Բնականաբար պելասգները մեծապես ազդում են հունական մշակույթի և լեզվի վրա։ Պելասգերենը հանդես է գալիս որպես հունարենի ենթաշերտ (սուբստրատ) հունարենի մեջ բացահայտված այսպես կոչված մինչհունական տարրերը համարվում են հիմնականում պելասգյան, և «մինչհունարեն» ու «պելասգերեն» անվանումները հետազոտողների գերակշռող մեծամասնության կողմից նույնացվում են։ Թե որքան մեծ դեր են խաղացել պելասգները հունական պատմության մեջ, երևում է նրանից, որ հին հեղինակները հույներին երբեմն կոչում էին պելասգներ։ Սրա հետ ըստ ամենայնի նույնն է աստվածաշնչյան հիշատակված փղշտացիների անունը, որ պահպանվել է Պաղեստին տեղանվան մեջ[1]։

[1] Ոմանք փղշտացիներին վերագրել են իլլիրական կամ մինոսական ծագում (հմմտ. R. Hauschild, Die indogermanischen Völker und Sprachen Kleinasiens, Berlin, 1964, էջ 69—70), ուրիշները նույնացրել են պելասգների հետ (В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, 1958, էջ 103—104)։ Վերջերս ցույց է տրված, որ այդ անվան տակ պետք է հասկանալ տրոյա-դանայյաններին (հույներ)։

§ 2. Երկար ժամանակ գիտության մեջ իշխում էր այն կարծիքը, որ պելասգերենը հնդեվրոպական լեզու չի եղել։ Այդ կարծիքը հատկապես լայն ճանաչում է ստանում Պ. Կրեչմերի հիմնական աշխատությունից հետո, որտեղ հավաքված էին մինչհունարենի (պելասգերենի) շատ փաստեր[2]։ Պելասգերենի՝ ոչ-հնդեվրոպական լեզու լինելու տեսակետը հատկապես հավանական էր երևում այն ժամանակ, երբ Փոքր Ասիայի ժողովուրդների լեզուները համարվում էին ոչ-հնդեվրոպական և Պ. Կրեչմերի կողմից միավորվում ցեղակցական կապով։ Խեթերենի և փոքրասիական հնդեվրոպական այլ լեզուների պատկանելության հարցի լուծումը, բնականաբար, առիթ է տալիս մինչհունարենի (պելասգերենի) բնույթի վերանայման համար։ 1930-ական թվականների երկրորդ կեսից Վ. Գեորգիևը, ապա նաև Ա. Յ. Վինդեկենսը, Վ. Մեռլինգենը, Օ. Հաասը և ուրիշները վերջնականապես ապացուցում են պելասգերենի հնդեվրոպական բնույթը։ Եղած նյութերի հիման վրա նրանք հիմնական գծերով վերականգնում են պելասգերենի հնչյունական և քերականական առանձնահատկությունները, այլև բառապաշարի շատ տարրեր[3]։ Եղած տվյալներով պելասգերենը բավական մոտ է թրակերենին։

§ 3. Պելասգերենը որպես հնդեվրոպական լեզու ունի հնչյունական հետևյալ կարևոր առանձնահատկությունները.

1. Բաղաձայնական համակարգը, հայերենի նման, ենթարկվում է տեղաշարժի՝ հ.-ե. bh, dh, gh > պել. b, d, g. հ.-ե. b, d, g > պել. p, t, k. հ.-ե. p, t, k > պել. ph, th, kh (հավանաբար բա-

---

[2] P. Kretschmer, Einleitung in die Geschichte der griechischen Sprache, Göttingen, 1896։ Իր «Հայոց լեզվի պատմության» մեջ Հ. Աճառյանը լիովին հենվում է Կրեչմերի տվյալների վրա։

[3] Մինչհունարենի կամ պելասգերենի համար հիմնական աղբյուրներ են ծառայել հետևյալ աշխատությունները. V. Georgiev, Vorgriechische Sprachwissenschaft, 1—2, Sofia, 1941—1945. В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958. A. J. Van Windekens, Le pélasgique, Louvain, 1952. Նույնի Contributions à l'étude de l'onomastique pélasgique, Louvain, 1954. Նույնի Etudes pélasgiques, Louvain, 1960. W. Merlingen, Das „Vorgriechische" und die sprachwissenschaftlich-vorhistorischen Grundlagen, Wien, 1955. Նույնի Zum „Vorgriechischen", „Linguistique balkanique", IV—V (1, 2), Sofia, 1962. O. Haas, Die Lehre von den indogermanischen Substraten in Griechenland, „Linguistique balkanique", I, Sofia, 1959.

ներում միայն ձայնեղացում չի նկատվում, որ բացատրվում է փո-խառության տարբեր շրջանների առկայությամբ)։

2. Բառի մեջ երկու ձայնեղ բաղաձայնների հանդիպելու դեպ-քում տեղի է ունենում առաջին բաղաձայնի տարնմանական ապա-ձայնեղացում։

3. Հնդեվրոպական քմայնացած հանալեզվայինները (g'h, g', k') փոխվում են առաջնալեզվային շփականների, որոնք հնա-կան փոխառություններում արտահայտվում են z-ով (ž ?) ու ձ-ով և s-ով ու ց-ով։ Այսպիսով, փռյուգերենը, հայերենի նման, satəm տիպի լեզու է, թեև քմայնացած բաղաձայնների փոփոխությունը, ինչ-պես տեղաշարժի դեպքում, տարբերվում է հայերենից։

4. Հնդեվրոպական շրթնայնացած հանալեզվայինները, ինչպես հայերենում, ապաշրթնայնանում են՝ հ.-ե. $g^{u}h$, g^{u}, k^{u} > փռյ. g, k, kh։

5. Հնդեվրոպական s-ն, ի տարբերություն հայերենի, բառա-սկզբի և բառամիջի դիրքում պահպանվում է։

6. Հնդեվրոպական ձայնորդները պահպանվում են, ընդ որում վանկարար ձայնորդները (r̥, l̥, m̥, n̥), ի տարբերություն հայերե-նի, տալիս են ur (ru), ul, um, un (հայերենում՝ ar, al կամ al, am, an)։

7. Հնդեվրոպական ձայնավորների և երկբարբառների քանա-կական և որակական տարբերությունները հիմնականում պահպան-վում են. նշելի է, սակայն, որ հ.-ե. o-ն, ինչպես ինքնուրույն գործածության դեպքում, այնպես էլ երկբարբառներում, փոխվում է a-ի (հայերենում այն հիմնականում պահպանվում է), իսկ ə-ն, ինչպես հայերենում, տալիս է a։

§ 4. Հնդեվրոպական հնչույթային համակարգի՝ փռյուգերե-նում, հունարենում և հայերենում տեղի ունեցած հիմնական փո-փոխությունները կարելի է արտահայտել 85-րդ էջի աղյուսակով (անցվում է բառասկզբի դիրքը)[1]։

§ 5. Փռյուգերենի հնագրությունները այս կամ այն չափով ուշադրության են գրավել հայ-փռյուգական հնչյունական և բա-

---

[1] Նկատի ունենալով բաղաձայնախմբերի, այլև հանալեզվային և ա-ռաջնալեզվային բաղաձայնների՝ քմայնացման հետևանքով առաջացած փոփո-խությունների բարդությունը՝ դրանք աղյուսակում չեն բերված, հմմտ., օրի-նակ, հ.-ե. gh, $g^{u}h$ > հայ. ջ, հ.-ե. ki̯ > հայ. չ, հ.-ե. di̯ < հուն. ζ, հ.-ե. ti̯, ki̯ > հուն. σ (τ), հ.-ե. pi̯ > հուն. πτ և այլն։

Հ.-ե.	Պելասգ.	Հուն.	Հայ.	Հ.-ե.	Պելասգ.	Հուն.	Հայ.
bh	b	φ	բ	r̥	ur/ru	αρ, ρα	ար
dh	d	θ	դ	l̥	ul	αλ, λα	ալ, աղ
g'h	z (ʒ), ð	χ	ձ	m̥	um	α	ամ
gh	g	χ	գ	n̥	un	α	ան
g^{u}h	g	φ (θ)	գ	i	i	ι	ի
b	p	β	պ	ī	ī	ι	ի
d	t	δ	տ	u	u	υ	ու
g'	s, θ	γ	ծ	ū	ū	ῡ	ու
g	k	γ	կ	e	e	ε	ե
g^{u}	k	β (δ)	կ	ē	ē	η	ի
p	ph	π	հ	o	a	ο	ո
t	th	τ	թ	ō	ō	ω	ու
k'	s, θ	κ	ս	a	a	α	ա
k	kh	κ	ք	ā	ā	ᾱ	ա
k^{u}	kh	π (τ)	ք	ei	ei	ει	է
s	s	ʽ (h)	հ, յ, —	oi	ai	οι	է
r	r	ρ	ր	ai	ai	αι	այ
l	l	λ	լ, ղ	eu	eu	ευ	ոյ
m	m	μ	մ	ou	au	ου	ոյ
n	n	ν	ն	au	au	αυ	աւ
i̯	h(?)	ʽ(h), ζ	ջ	ə	a	α	ա
u̯	u̯, h, —	F > —	գ				

ռայլին մի շարք զուգադիպությունների (բացառությունների) վրա։ Որպես ընդհանուր գծեր կարելի է մատնանշել հատկապես բաղաձայնական տեղաշարժի առկայությունը, առանձնային բնույթը. շրթնայնացած բաղաձայնների ապաշրթնայնացումը, ə > a փոփոխությունը և այլն։ Կարևոր տարբերիչ հատկանիշներից են հ.-ե. s-ի, o-ի, r̥, l̥, m̥, n̥ փոխկապակցված ձայնորդների, i̯-ի և u̯-ի տարբեր փոփոխությունները։

Առաջին հեղինակներից մեկը, որ հատուկ ուշադրություն է դարձրել հայ-պելասգյան ընդհանրությունների վրա, եղել է O. Հաասը[5]: Նա ոչ միայն նշում է հայ-պելասգյան ծագումնային կարևոր զուգադրությունների առկայությունը, այլև խոսում է հայերենում պելասգերենին մերձավոր ենթաշերտի առկայության մասին: Հաասը մատնանշում է բառային մի շարք ընդհանրություններ, որոնց մեջ առկա են հ.-ե. p *> պել.* ph(> phi, *հուն. նշանակմամբ* φ) *և հայ.* փ, *այլև հ.-ե.* o *> պել.* a *և հայ.* ա *հնչյունական զուգաձևերը և այլն:*

φαυκός *«արագաշարժ, թեթև, ընթացող»—փույթ*[6].

φῦσα *«շունչ, հոգի»—փուք.*

φυρρός *«նուրբ, աղացած»—փուխր.*

φώζων *«փշուր»—փոշի*[7]:

O. Հաասը բերում է նաև հայ-հունական մի շարք ընդհանրություններ, որոնք ըստ նրա «նախապելասգյան» բնույթ ունեն (հնդեվրոպական նախալեզվից չեն գալիս).

αἴξ *«այծ»—այծ.*

γέφυρα *«անցքակետ, կամուրջ»—կամուրջ.*

ἴξαλος *«ցատկող, աշխույժ» (այծի մասին)—քաղ «արու այծ, նոխազ».*

παρθένος *«կույս»—հարսն.*

σκίπων *«գավազան»—ցիւ-ք:*

§ 6. Հայ-պելասգյան բառային զուգադրությունների առաջին խումբը կազմում են այն բառերը, որոնք հանդես են բերում հատուկ մերձավորություն հետևյալ հատկանիշներով.

1) Հիմքակազմության տիպով.

ἀριθμός *«թիվ»—համարք,-ոյ (?).*

ἄφ(ε)νος *«հարստություն, առատություն»—աւն «ինչք, ունեցվածք».*

---

[5] O. Haas, Die Lehre der indogermanischen Substraten in Griechenland. LB, 1, *էջ 46—48. Նույնի* Armenier und Phryger, LB, III, 2 *էջ 50—51. Նույնի* Die griechischen Sprachdenkmäler, LB, X, 255—256:

[6] *Եթե* φαυκός *բառը ծագում է հ.-ե.* bheug- *«փախչել» արմատից, ապա թերևս հայերեն փախչիմ բայի ազգակցությունը հենց նա է և ոչ թե խեթ.* parh- *«հալածել, քշել, արշավել, ստիպել» բայը:*

[7] *Հմմտ. և փշուր: O. Հաասը հաշվի չի առնում այս բառերի կովկասյան զուգահեռները: Տե՛ս* Г. В. Джаукян, Новые урартско-индоевропейские параллели, „Известия АН АрмССР", 1965, № 3, *էջ 49—51:*

βολβός «սոխ»—բողբոջ[8].

κλώθω «հյուսել»—կլթել «հանգուցել, ամուր կապել» (?)[9].

κόρση «գագաթ»—կատարն[10].

ὄμβρος «անդադար անձրև, հեղեղ»—ամպրո-պ.

πρῖνος «կաղնի»—հարոս (հմմտ. Ղրբ. բրբռ. հարթն).

πλάθανον «(եփելու) տախտակ, տապակ, թիթեղ»—լայն:

2) Արմատի կազմության առանձնահատկություններով (լա-րանատակ բաղաձայնով, բաղաձայնի կամ ձայնավորի հերթագայ-ման տիպով).

καχάζω «քրքջալ»—խախանք.

μυχός «ներքին անկյուն»—մուխ, մխեմ.

σμύχω «դանդաղորեն այրել»—մուխ, -ոյ.

φοινός «ալ-կարմիր»—*հան, հն-ոց (հմմտ. հուր).

χαλάω «արձակել, թողնել»—խաղաղ (?)[11].

χαλί-φρων «թեթևամիտ»—խաղ (?)[12].

χόριον «ընկերք, թաղանթ, փորոտիք»—խոր (?)[13]:

§ 7. Մնացած դեպքերում բառային զուգադիպումների ձևա-վորմամբ և դրանց իմաստային առանձնահատկություններով հա-յերենը պելասգերենի հետ առանձին մերձավորություն չի ցուցա-բերում: Շատ բառեր հանդես են բերում իմաստային զգալի հե-ռավորություն՝ պատկանելով միմյանց արմատների իմաստային տարբեր զարգացում ներկայացնող խմբերի: Սակայն բերում ենք

8 Պել. բառը բխեցնում է հ.-ե. bhel- «ուռչել, փքվել» արմատից, հայ. բառը՝ նրա տարբերակը հանդիսացող bhel- «աճել, ծաղիկ, ծաղկել, բողբո-ջել, բողբոջ» ձևից:

9 Հայ. բառի ստուգաբանությունը հեղինակինն է:

10 Պել. բառը բխեցնում են հ.-ե. ger- «դառնալ, ոլորել» կամ gᵘer- «լեռ» արմատներից, որոնցից այս դեպքում ծագում է նաև հայ. բառը: Սակայն ավելի հավանական է երևում այն դիտել իբրև փոխառություն և բխեցնել հ.-ե. ker- «ամենից վերնամաս՝ գլուխ, եղջյուր, գագաթ» արմատից:

11 Ըստ Վ. Մեյերհոֆերի („Die Sprache", IV, 60, տես Zum „Vorgriechischen", LB, էջ 39), որ այստեղ է միացնում նաև ռուս. на-хальный բառը:

12 Ըստ Վ. Մեյերհոֆերի („Die Sprache", IV, 60, տես LB, V, էջ 39), որ այստեղ է միացնում նաև ռուս. холить «խնամել» բառը:

13 Խոր բառը չունի հավաստի ստուգաբանություն: Պել. բառի ստու-գաբանության հավաստիության դեպքում հայ. բառը շատ լավ կապվում է նրա հետ:

այդ զուգադիպումները՝ խմբավորելով ըստ հ.-ե. բաղաձայնների տիպերի[14]:

1) Հ.-ե. bh, dh, gh.

βαλιός «ճերմակ բծերով, խայտաբղետ, պտավոր» — բալ, -ի, -ից «մեգ, մշուշ, մառախուղ».

βαλλάντιον «քսակ, պարկ», ἀρύ-βαλλος «պարկ, աման (նեղ-անցք)», βόλινθος «վայրի ցուլ», βόλβιθος, βόλβιτον, βόλιτον «գոմ-աղբ, թրիք», βολεών «գոմաղբի կույտ» — բեղուն, բղջ(-ա-խոհ).

βάσκειν «ասել» (Հեսիքիոս), βάσκανος «չարախոս, զրպարտիչ, կախարդող, չար կախարդանք ազդեցող» — բան, -ի, -ից, բառ, -ի, -ից, բամբասել.

βαυνός, βαῦνος, βαύνη «հնոց, բով» — բով[15].

βλαστάνω «ծլել, բողբոջել, ծաղկել» — բող «ծիլ, բույս», բողկ, այլև բղխել (?).

βόνασος «վայրի ցուլ» — բուղ, բուն, բոյս.

βορέας «հյուսիսային քամի» — բուռն (?)[16].

ἄμβων «թմբլ, եզրը բարձ», ἄμβιξ «հաղփակակ» — ամբ, -ոյ.

ὄμβρος «առատատարափ անձրև, հեղեղ, ջուր» — ամբ, ամպ, -ոյ.

δονέω «թափահարել, շարժել, տատանել, հալածել, քշել», այլև թերևս τύμβος «դամբանայր, մահարձան, ամրապատ» (τυμβο-χόος և այլ բառերում) — դեղևիմ «երերալ, տատանվել».

ἔρδω «անել, կատարել» — դերբակ «խորդաբարդ անձ, աշա-կերտ», այլև դերբ[17].

πύνδαξ «ամանի տակ, հատակ» (հ.-ե. bhundh-) — անդունդ, -ոյ.

τάγγανον «քացախ» (*«դառնալ, խառնել խմորից») — դառ-նամ, դարձ, այլև թերևս դառն.

τρόχος «արագ ելք, քայլ» (*«վազող, փախչող») (հ.-ե. dhregh-) — դուրգն[18].

---

14 Անկասկած ենք համարում թվել հ.-ե. ծագում ունեցող վերջածանց-ները (-ակ, -ων-, -ιθος, -ις-, -ινθ-, -ξ-), որոնք կրում են սովորական փոփոխու-թյունները:

15 Հայերենի հետ համեմատությունը պատկանում է Վ. Պիզանիին:

16 Համեմատությունը կասկածելի է, որովհետև ռուս. буря բառը, որի հետ համեմատվում է βορέας-ը, չի հանգեցվում հ.-ե. bher-ին («եռալ»)

17 Այն մերժում են Վ. Պիզանին և ուրիշները, որոնք հ.-ե. dherbh-ը («աշխատել») բխեցնում են dher- «պահել, բռնել» արմատից:

18 Դուրգն ենք բխեցնում են dhrgh- նախաձևից, որ հավանական չէ (ṛ > ուր?), եթե չենթադրենք պելասգերենին մոտ մի լեզվի ազդեցությունը:

τύμβος «դամբան, գերեզմանաթումբ»—դամբան, դամբարան[19].

τύρσις «աշտարակ, բուրգ, ամրոց», ἀ-τύργωτος «անպարիսպ(?)» (<«չպարսպված») (հ.-ե. dhrg'h-, dhrg'h-)—դարբ, դաղար:

2) Հ.-ե. b, d, g.

δάμαρ «ամուսին, կին»[20]—տուն.

δέρτρον «աղաղ աղիքը (հատկապես ձկան), պահանջ, մամրիս» (>հայ. տառեխ), δαμάλης «զենանագ, մինչև կրունկները հասնող» («կաշվե»?), ἀτέραμνος «կարծր, կոշտ, դաժան[21]—տև, -ի, -ից «կոշտուկ», տևեմ «դիմանալ», տեւ «շարժ».

δῆλος «կատարյալ, վսեման. ամենայն. նպատակ, տարբ. տող, շարք»—տող, -ոյ.

τένθω «կծել» (հ.-ե. denk'-)—տատասկ (հ.-ե. dek'-).

τερέβινθος «տերեբինթի ծառ»—տարգալ, տրամ «ամուր, պինդ».

κέλετρον «խառնի»—կլանել, կուլ.

κόκκος «կուտար, փափուկ» (Հեսիքիոս), κόκκος «կորիզ», κόκκαλος «կոն, կոնդոմ, պտուղ»—կոկոն, կոնդոմ, այլև կոն[22].

κολεός, -όν «պատյան»—կաղամ.

κόρος, -υθος «սաղավարտ, գլուխ, գլխիկ», այլև κορυθαίολος «կո-րուն. արագաշ» (երկրորդ իմաստով՝ որպես «կատարավոր») (հ.-ե. g^{u}er-, g^{u}or-)—կատարն (?)[23].

κρίκος «օղակ, մատանի», κρικωτός «խառնել», κροσσός «գագաթ», κόριθον (հայց.) «կենդան, շրջան, օղակ» (Հեսիքիոս)—կոր[24].

---

19 Համանմանաբար պատահական է պկ. τύμβος-ի հայ. և թումբ-ի նմանությունը. վերջինս բխեցնում են հ.-ե. teu- «ուռչել» արմատից:

20 Հ.-ե. dem- «կառուցել» արմատից են dom-, dm- «տուն» և demə- «զսպել» (< «ընտելացնել») ձևերը. վերջիններիցս ծագում է պկ. δ-μώς «ծառա, ստրուկ, բանտ»:

21 Ըստ Հ. Աճառյանի՝ վերջին բառը ծագումով նույնն է τείρω «տրորել» բայի հետ (*τέρσω):

22 Բխեցնում են հ.-ե. gug-ից, բայց հմմտ. geng-, gong- «գունդ, կոշտ», gongu-s «գունդ, գնդակ»:

23 Հմմտ. § 6, κορυφή «գագաթ»—կատարի զուգադրանության ծանոթությունը: Հմմտ. նաև հայ. կատուցանել «կանգնեցնել, հաստատել, շինել», կարկառ «քարակույտ», որոնց հարաբերությունը սրանց նույնպես պարզ չէ:

24 Եթե վերջինս հ.-ե. ger- «պտտել, ոլորել» արմատից է և ոչ *gonero-ձևից, որ պատկանում է gen- «ծնել» արմատին:

κύμβη «գավաթ, մակույկ», κύμβος «աման», κυμβίον «գավաթ. ծնծղա» — կումբ «փայտանի տաշած մաս. գդալ» (?)[25].

3) Հ.-ե. p, t, k.

πάθος, πένθος «դժբախտություն» — հիվանդ.

φάτνη, πάθνη «մսուր» — հաւրան «հօտ (ոչխարի, այծի)», հաւտ, հովիւ (*oui-pā «ոչխարապահ»).

φαῦλος «աննշան, վատ» — ուլ, ինչպես նաև փոքր.

φιάλη «գավաթ» — ըմ-պել.

φέγγος «լույս» — փեղի[26].

φλέω «առատ լինել» — լի, լնում, լցի (?), յոլով, յեղեղ, ողողեմ[27].

φορμός «զամբյուղ, այլ. աղեղնաձև. հյուս. ամբողջին» — հոյ(ա-կապ), ինչպես նաև հոյ.

ἀσκέω «մշակել, զարդարել, վարժեցնել» (հ.-ե. op-s-k-) — ան «ինչք. ունեցվածք» (հ.-ե. op-)[28].

ὄμφαξ «խակ խաղող» — հաս (հ.-ե. pek$^{\underline{u}}$-) (?).

θάλαμος «անկյուն, առանձնասենյակ. տուն, բնակարան. բնակավայր», θαλάμη, θαλάμη (հգն.) «տարածք. հիմք. հիմունք» — թաղ, թաղեմ, թիթեղն.

θριγκός, θριγγός, θρίγκός, τριγχός «քիվ. կամար. պատի առանձնացող վերնամաս. պատ. բարձր առաջնամաս» — առիք (?)[29].

---

[25] Հայերենին ավելի լավ են համապատասխանում հուն. κύμβη «գլուխ», κύμβος, κύμβαχος «սաղավարտի սայր» բառերը, որոնք համարվում են միևնույն արմատից, ինչ պես. հնդկ. բառերը (keu-, kumbh-)։ Սրանք դիտվում են որպես նախահունական բառեր կամ փոխառություններ (դեռևս հ.-ե. շրջանում)։ Հայ. բառը Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1403—1404) բխեցնում է հ.-ե. gumb- ձևից (geu- «ծռել»), որ, սակայն, պետք տար *կումպ։

[26] Երկու պեղասգերեն և հայերեն բառերը կապված են արմատական բաղաձայնների ip/pt դրափոխությամբ։

[27] Սրա հետ են կապում և բխեցնում հ.-ե. pel- արմատից նաև ὀφέλλω «ավելացնել» բայը, որի համար ուրիշները, նկատի ունենալով հայ. յ-ավե-լում, առավելում բայաձևերը, վերականգնում են հ.-ե. obhel- նախաձևը (Pok., I, էջ 772)։ Համեմ. նաև ուրարտ. abilidu- «ավելացնել»։

[28] Համեմ. § 6, ὀψ(ε)—ամ զուգադրությունը։

[29] Վ. Պիզանին համեմատում է ռուս. стрюча. չեխ. (s)trčeti. ռուս. торчать «ցցվել» բառերի հետ, որ կասկածելի է։ Վ. Մերլինգենը (LB, V, էջ 24) վերականգնում է *trenq- նախաձևը՝ առանց համապատասխան զուգահեռների։ Եթե ճիշտ է համեմատությունը հայերենի հետ, ապա պետք է ենթադրել հ.-ե. tre(n)k- նախաձևը։

θρῖναξ «եռաժանի» — երեք, երի-.

θρίψ «ուտիճ, փայտուտիճ, որդ» — թրթուր, այլև թուր, թարթ, տրտմել (*trəg'-).

χόριον «ընկերք. թաղանթ. փորոտիք», χρόνος «ժամանակ» — քերել, քորել.

χωλός «կաղ» — խեղ։

4) Հ.-ե. g'h, g', k'.

ἄσθμα, ἆσθμα «շնչարգելություն» [հ.-ե. ang'h(u)-tm-], ἰσθμός «միացնող շերտ. նեղ անցք. պարանոց» [հ.-ե. eng'h(u-t-m-]— անձուկ.

σάλπιγξ «փող, փողի ձայն» (հ.-ե. k'u̯-ol-b-)— սուլել (հ.-ե. k'eu-lo-), շունչ.

σιγγοί «եղնիկներ» (Հեսիքիոս) (հ.-ե. k'eru̯-)— սար.

ἀθήρ «քիստ (հասկի)» — ասեղն[30]։

5) Հ.-ե. $g^{u}h$, g^{u}, k^{u}.

-γον «-ազան» (Καιρογονία — գերդաստան), κίνδαξ «արագաշարժ, շարժուն», ὀνο-κίνδιος «իշապան, էշ վարող» — գան, -ի, -իջ, ջին, ջնել, ջինջ, ջնջել.

κῶας «ոչխարի կաշի, բուրդ, գեղմ» — կով (?)[31]։

6) Հ.-ե. s, su̯.

σαλά(μ)βη «բացվածք, անցք», σελήνη «լուսին», σέλας «փայլ» (su̯el, sel- «վառվել») — քաղց, քաղցնում.

στιβάς «պանդարման, անկողին. փափկանկար» (Հեսիքիոս), այլև στείβω «տրորել, կոխել» — սանձ, ստիպել.

στρεβλός «ծուռ, թեք», στρεβλόω «ոլորել, փաթաթել, շիլ» — թարթ, թարթի «ծակ որպես կոպով. փանդակածն հյուսվածք. փանդակապատ», թերևս նաև թարթափել «եզրագծել» (Նոր. բառ.)[32].

σύργος «զամբյուղ, կողով», σκίρτος «հյուսված աման» (հ.-ե. (ser-) — լծում «շարել, միացնել»։

7) Հ.-ե. r, l, m, n, l̥, r̥.

ἀριθμός «թիվ», ῥυθμός «ռիթմ» — առնել, յար, յարել, արդ, զ-արդ, արդ «հիմա», արդար, յարմար.

---

[30] Նույն հ.-ե. արմատից են բխեցվում նաև ἄκανθα «փուշ», ἀκμή «ծայր, կատար», ἄκαινα «ծայր ծակող. թելեր», ἀκίς «թելիք» բառերը։

[31] Ըստ Վ. Գեորգիևի։ Այլ գիտնականներ κῶας բառը համարում են բուն հունական և բխեցնում հ.-ե. (s)keu- «ծածկել» արմատից։

[32] Հայերեն բառերի ստուգաբանությունը հեղինակինն է [հ.-ե. (s)terb(h)- «ոլորել, փաթաթել»՝ (s)ter- «պինդ, կոշտ, լայնահեղ» արմատից]։

ἀλείφω «օծել, քսել»—հայ. լիպ. լպիրշ. լպիրծ[33].

μινυρός «մանրագ, փշրող»(?), μινυρίζω «ալյուրը»—մանր «մանրիկ, փշրիկ», մրրքաց (մալ-), մեղի, մեղմ, մղմեղ «ցեց», մաղ «ցորենի ալյուր» (բրբռ.).

μανθάνω «սովորել, տեղեկանալ, իմանալ»—իմանամ.

μίλτος «կարմիր ներկ», μιλτόω «կարմիր գույն»—մեղեսիկ, մեղեսիկ «մի թանկագին քար, սուտակ» (?)[34].

μίνυνθα «մի քիչ», μινύθω «նվազեցնել»—մանր, մանուկ, մանչ[35].

ἀμείβω «թիակներ (կազմակերպ.)»—ու. -ոյ.

νη- «ան-» (νωθής, νωθρός «ծույլ»<«ոչ արագաշարժ»)—ան-

οἶσος, οἰσύα «ուռենու կամ գանձու ճյուղ» (հ.-ե. uois-)—գի, -ոյ (գինի) «մի տեսակ ծառ».

ἔλυτρον, ἐλυτρόω «փաթե ծածկոցներ» (հ.-ե. uel-), ἐλύμνια «ծածկոցներ» (Հեսիքիոս)—գելում, գել, գլեմ, գլորեմ, գալար, գեղձն, այլև լար. թերևս լամբ.

λάχνη «մազ, բուրդ» (հ.-ե. ulqn-?)—գեղմն։

§ 8. Հայ-պելասգյան ծագումնային զուգադիպումների նկարագրումը ավարտենք բնաձայն բառերի և ոչ հավասար մի շարք զուգահեռների մատնանշմամբ.

1) Հետևյալ՝ բառերում նկատվում է բնաձայնությունների համար սովորական շեղում հնչյունական համապատասխանություններից.

ἀπαφός «հոպոպ» (Հեսիքիոս)—հոպոպ։

2) Հետևյալ բառերում. հնդեվրոպական նախալեզվում արմատային զուգաձևերի առկայության հետևանքով, նկատվում է պելասգերենի և հայերենի առանձնային զուգահեռության թվացող խախտում.

γένυν «ծնոտ» [հ.-ե. g'(i)eu- «ծամել»]—կիւ, -ոյ «ծամոն», կռնենի «մի տեսակ ծառ» [հ.-ե. g(i)eu]։

3) Կան մի շարք կասկածելի զուգահեռներ, որոնց մեջ մըտ-

---

[33] Եթե հ.-ե. leip-ը ծագում է lei-ից։ Այդ դեպքում պետք է հայ. բառերը դուրս են տարբեր ածանցներով ձևերից [leip-, leib(h)-]։ Հետք ունենք նաև λιπαρός (Հեսիքիոս) բառը՝ հմմտ. և λιπαρής «ճարպոտ, ձեթոտներ» (Հեսիքիոս), λιπαρός «ճարպալից, ճրագ»։

[34] Հայ. բառի ծագումն անհայտ է, համեմատությունը ճիշտ է, եթե այն պատկանում է հ.-ե. զուգահեռից mei- արմատին։

[35] Մոտեցնում են հ.-ե. mei- (mi-nu- «փոքր» և men- արմատներից, որոնք իրար մոտ են համարվում։

նում են Օ. Հասսի նշած՝ պել. [illegible] (<*phi)—հայ. փ, պել. [illegible] (<*khi)—հայ. ք հնչյունական համապատասխանություններով բառերը (դրանց մեծ մասը բերվեց § 3-ում)[36]: Սակայն կնշվեն մի շարք այլ դեպքեր.

[illegible] «ականջօղեր, գինդեր» (Հեսիքիոս)—ունկն (*us-on-ko-m), ականջ.

[illegible] «երկիր»—գաւառ[37].

[illegible] «թրջել, ոռոգել»—ձև. ձոյլ, ձուլել (հ.-ե. g'heu-).

[illegible] «ցատկել»—խրտնում, խրտչել.

[illegible] «լու»—լու, -ոյ.

[illegible] «փառք, հառաք»—հա «շարավալից աչքն» (??)[38].

[illegible] «պահապան» («գանապան, դարպասապահ»)—փող[39].

[illegible] «կարկուտ», [illegible] «մանր քար, խիճ», [illegible] «քար, խիճ» (հ.-ե. kal-?)—խաղխաղ «ծովի խութք, խարակ», խաղաւարտ «պալար, ուռուցք», խաղճ «կաճիճ», խաղտաւրտ «դեղին վարունգի հունդ».

[illegible] «հրել, վերամարել» (հ.-ե. kreu-)—խրել:

4) Մի քանի խոսք կրետերեն և փյունիկերեն այն բառերի մասին, որոնք զուգահեռներ ունեն հունարենում և որոնց այդ նկատառումով հետազոտողները վերագրում են «փղշտացիների» (խմա՝ հույների) լեզվին[40]: Այդ բառերից mekera(h)-ին զուգահեռ [illegible] «սուր» բառը հետազոտողները սովորաբար կապում են [illegible] «մաքառել, կռվել, պայքարել» բայի հետ, որ համապատասխան զուգահեռներ ունի հայ. մարտ, մարտնել բառերի մեջ. հուն. բառերի համեմատությունը իրան. *ha-mazan (>'Αμαζών,

36 Վ-ով սկսվող հուն. բառերը կարող են բխեցվել և բխեցվում են հ.-ե. bhes-, bhs->ps- արմատից. հայերեն զուգահեռները կարող են ծագել հ.-ե. այլ հիմնաձևերից (pou-, per-s- և այլն)՝ անմիջապես (p-ին զուգահեռ ph-ով ձևերից) կամ միջնորդված կերպով (ենթաչերտ կամ փոխառություն):

37 Ըստ Վ. Գեորգիևի, որ բերում է նաև հայերենի հետ համահունչ հաձնանման գոթ. gawi «երկիր, շրջան», գերմ. Gau, այլև հուն. [illegible] «դատարկ տարածություն» բառերը (հ.-ե. ghəu-՝ g'heu-: g'həu- ձևի կողքին):

38 Ըստ Հ. Աճառյանի (Հայ. արմ. բառ., 4, էջ 389) հա բառը ծագում է պարսկերենից: Հայ. փաւտ-ը նույնպես փոխառություն է համարվում պարսկերենից.

39 Պել. բառը համեմատում են հուն. πύλη «դուռն փեղկ, դարպասամուտք, անցարան, անցք» բառի հետ, որի ծագումն անհայտ է: Ենթադրվում է փոխառյալ լինելը (մշակութային բառ):

40 Հմմտ. C. H. Gordon „Minos", 3, 1955, էջ 126 և հհ., В. Георгиев, Исследования.... 1959, էջ 103.

μάσσω-μάζα) բառի հետ (<հ.-ե. mag'h-) համարվում է կասկածելի[41]: Maṣṣā(h) «չխմորված հաց, բաղարջ» բառին զուգահեռ μᾶζα (միկեն. μάζα) «զարկ հաց» բառը զուգահեռ անի հայ. մածնում-ի մեջ («կպչել, թանձրանալ, մակարդվել»): Սակայն հուն. μᾶζα-ն μάσσω «ծամել, հունցել, տրորել» բայի հետ միասին բխեցնում են հ.-ե. mag'- արմատից, որտեղից և հայերենը[42]: Այս դեպքում էլ ամենք հակված են եբր. բառը փոխառություն համարելու հունարենից: Ինչ վերաբերում է lappīd—λαμπάς,-άδος «ջահ» զուգահեռներին, ապա դրանց համապատասխան հայ. լամբար (գրաբ. լամպար) բառը փոխառություն է համարվում հունարեն λαμπάς,-άδος-ից՝ հյուս. պահլավերենի միջնորդությամբ (հմմտ. հուն. δ-ի դիմաց հայ. ր-ի առկայությունը)[43], իսկ լապտեր-ը՝ հուն. λαμπτήρ-ից՝ մանիք. պարսկերենի միջնորդությամբ[44]. վերջին բառի մեջ ր-ի բացակայությունը հավանաբար նախնական չպետք է համարել:

Այս կապակցությամբ ավելորդ չենք համարում նշել, որ qrt-=qart- «քաղաք» բառը (<պել. *kardas<հ.-ե. ghordhos՝ gherdh-ից. հմմտ. հայ. գերդաստան) զուգահեռ անի քարթվ. լեզուներում՝ վրաց. kartwel- «վրացի»=մեգր., ճան. kortu-, ապա մեգր. karta «ամառային գոմ, փարախ» (*«ցանկապատված վայր»)[45], որոնց աղբյուրը թերևս հնարավոր է փնտրել պելասգերենում կամ մերձավոր որևէ լեզվում:

5) Վ. Գեորգիևը[46], լիկիերենը համարելով բուն լիկիերենի (լուվիերենի հաջորդը) և միլիերենի (պելասգերենի ուշ բարբառ) խառնուրդ, բերում է վերջինիս բնույթը որոշող մի շարք բառեր,

---

41 Տե՛ս H. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, Lief. 12, Heidelberg, 1961, էջ 188:

42 Տե՛ս Հ. Աճառյան, Հայ. արմ. բառ., 4, էջ 738—740: Յ. Պոկոռնին (Indogermanisches etymologisches Wörterbuch, I, էջ 694), հենվելով Շեֆտելովիցի վրա, բերում է mad- «թաց, թրջել, ճարպոտ, յուղոտ» արմատից: Եթե պելասգերենում հնարավոր է g'>c (ծ) անցումը, ապա ոչ միայն բացատրվում է այս ձևը (հմմտ. հուն. փոխառությունների միայն բացատրվում է այս ձևը (հմմտ. հուն. փոխառությունների հնչյունական տարբերությունները դանազան ձևերում), ապա հնարավոր է դառնում հուն. [illegible] «ցատկող, աշխույժ» (այծի ձագն) բառին վերագրել պելասգյան ծագում: Տե՛ս W. Merlingen, LB, V. 2, էջ 50—51:

43 Տե՛ս Հ. Աճառյան, Հայ. արմ. բառ., 3, էջ 150:

44 Նույն տեղում, էջ 161:

45 Տե՛ս Г. А. Климов, Этимологический словарь картвельских языков, М., 1964, ապա Г. А. Меликишвили, „Вестник древней истории", М., 1965.

46 В. Георгиев, Исследования..., էջ 153—162:

որոնց հատուկ են պելասգերենի առանձնահատկությունները. բերենք այն դեպքերը, որոնք հայերեն զուգահեռներ ունեն և որոնք բնորոշվում են հնչյունական հետևյալ հատկանիշներով.

ա) Բաղաձայնների անդաշնակում և երկու շնչեղներից առաջինի նախնական ապաշնչեղացմամբ.

kbi- (միջիներեն tbi-) «երկու» (հ.-ե. du̯i-), tuu̯eri «երկու» [հ.-ե. d(u)u̯-]—հայ. երկի- (հմմտ. երկեամ), երկու.

chatra «դուստր»—դուստր.

zi- «օր»—տիւ.

tideimi- «դիր, երեխա» [հ.-ե. dhidēi-mi(i̯o)-]—դիեմ, դալեակ, դալ[47]:

բ) Քմայնացած ետնալեզվայինների առաջնալեզվայնացմամբ.

sē «նրանց»—սա, -ս, սոյն, սմին.

-tāta (հ.-ե. k'ontə-)— -սուն (երե-սուն, քառա-սուն և այլն).

teri, terñ, ?erñ «ձեռք, գործ»—ձեռն[48]:

գ) Շրթնայնացած ետնալեզվայինների ապաշրթնայնացմամբ.

-ce «և»— -ք (ո-ք, ի-ք).

kadr-(ñna) «չորս»—չորս, քառ.

c-(ñma) «հինգ»—հինգ:

դ) ō>a անցումով.

-ahi (միջիներեն -asi) (հ.-ե. -osyo՝ -o-ով հիմքերի սեռական հոլովի վերջավորությունը)—-ոյ (-ո-ով հիմքերի սեռական հոլովի վերջավորությունը).

χuga- «պապ» (ḫauḫo-s) հաւ «պապ» (հմմտ. նաև հայաս. Ḫuggana- անձնանուն):

ե) Վանկարար ձայնորդների փոփոխության ձևով.

mñti, miñti «խորհուրդ»—իմանամ.

nuñ «ինն» (հ.-ե. neu̯n)—ինն, ինունք[49]:

---

47 Տես «տանթր», ինչպես «պալայեն բառերի մասին տե՛ս Ջահուկյանի «Հայերենի խեթա-լուվիական տարրերը» հոդվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 2, էջ 121, այլև սույն աշխատությունը:

48 Կապակցելի է esbe-di «հենակցորդով» ձևի անմիջական բնույթը հ.-ե. ek'uo-ծյ՝ առանց կրճատման մերձավորության:

49 Հայաստ-լիկիական կապերի մասին տե՛ս Ջահուկյանի «Հայերենի և խեթա-լուվիական լեզուների ձայնաբանական զուգադիպումները» հոդվածը «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, հմմտ. և «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 2, այլև սույն աշխատությունը:

§ 9. Եթե հայերը Բալկանյան թերակղզում, ապա և Փոքր Ասիայում գտնված ժամանակ շփման մեջ են եղել պելասգների կամ նրանց լեզվապես մերձավոր ցեղերի հետ, ապա բացի ծագումնային ընդհանրություններից հայերենի բառապաշարում պետք է լինեն բառեր, որոնք պելասգյան ենթաշերտի ազդեցության արդյունք կամ փոխառություններ են։ Սրանց թվից ամենից առաջ պետք է հանել այն բառերը, որոնք հայերենին են անցել հնդարենի կամ այլ լեզուների միջնորդությամբ համեմատաբար ուշ շրջանում (հմմտ. պել. πύργος, ուրարտ. burgana, սեմ. *burgā և հայ. բուրգն. պել.>հուն. τάπης և հայ. տապիս և այլն)։ Պետք է կարծել, որ *r̥>ur, *p>ph և այլ փոփոխություններով բնորոշվող հայերեն մի շարք բառերի աղբյուրը պելասգերենը կամ մերձավոր լեզուներն են. այսպես, հայ. փետուր բառը, որ հաճախ համեմատում են խեթ. pattar, -anaš «թև» բառի հետ, լիովին բացատրվում է պելասգյան հնչյունական օրենքներով՝ հ.-ե. petr̥>պել. *phetur (>հայ. փետուր)։ Թերևս պելասգերենից կամ մերձավոր լեզվից է գալիս նաև թուղթ -ոյ բառը (*tl̥to-՝ հ.-ե. tel- «հարթ տախտակ, թիթեղ» արմատից, որտեղից թաղ. թաղել. թիթեղ. թերևս թաղանթ և թաղթ «ծղի բարակ փառք»)[50]։

Ստորև բերենք մի շարք զուգահեռներ, որոնց դեպքում հայերեն բառերը կարող են ծագել պելասգերենից կամ մերձավոր լեզուներից.

ἄκανθα «փուշ. ողնաշար»—ականջակ (ակընդյան)[51].

κανθός «աչքի անկյուն»—կանթ (կոթ).

κάσας, κασσᾶς «ավթար, տապճակ, ձիու ծածկոց» (հ.-ե. k'ogiā)—կաշի, -ւոյ, -եայ.

σαλάκων «շաղակրատ, մեծախոս, պարծենկոտ»—շաղակրատ[52].

σέλας «փայլ», σελήνη «լուսին», σαλάξι «բացվածք, անցք»,

---

50 Հ. Աճառյանը թուղթ բառը կապում է լատ. titulus-ի հետ, որի ծագումը, սակայն, հայտնի չէ (նմանը բխեցնում են հիշյալ արմատից)։

51 Եթե հայերեն բառը ուշ շրջանի փոխառություն չէ կամ, ինչպես Հ. Աճառյանն է կարծում (Հայ. արմ. բառ., I, էջ 78), ականջակի ձևի արտացոլություն։

52 Պել. բառի σαλα- մասը մեկնաբանում են որպես «մեծ» (<հ.-ե. k'olo-?)։ Այդ նույն խմբավոր շաղակրատ բառի շաղ- մասն համադրում է Գ. Ղափանցյանը՝ համեմատելով խեթ. šalli- «մեծ» բառի հետ։

ամպչող»—շող[53], այլև շողաւար «ճեթեր» (կամ «ճեթերի մասերից մեկը»), շողուարից «լանի կամ ատաղերի շարժվելը».

σάργος «մի տեսակ ձուկ, սարգ», σάρδιον, σάρδιος «սարդիոն (ծանկագին քար)» (հ.-ե. ser- «կարմիր»)—շար «մուգ կարմիր, արյունագույն, շեկ».

σέρφος «զամբյուղ, կողով», σειρίσκος «հյուսված աման» (հ.-ե. ser-)— շարել.

σῖτος «հացահատիկ, հաց, պարեն, կեր» (հ.-ե. k'u̯ei-d-)—շամ-արան «ամբարանոց, ամբար».

ταμίας «տնտես, տեր»—տամալ, -ոյ «տանիք», տանու(տէր).

τενθός, τενθεύω «տաք, ջերմ»[54]—տենդ, -ոյ.

ψεῦδος «սուտ», ψευδής «ստոտ» (հ.-ե. bheudh-)—սուտ, -ոյ, ստ-տեմ.

*ψαχ- «փախչել» (? համե. ψαχρός «արագաշարժ, թեթև», որ Օ. Հաասը համեմատում է հայ. փաքր-ի հետ)—փախ, փախ-չ-իմ[55]:

Ձայնավորներ կան և անվանումների մեջ, որոնցից հատուկ նշանակության արժանի է հետևյալը.

Ἀχέρων, այլև Ἀχέλης, Ἀχελῷος (գետանուններ, հ.-ե. akᵘ- «ջուր, գետ»)—Ախուրյան (ուրարտ. արձանագրություններում՝ Ahuriani) (գետանուն):

Հայերենի՝ պելասգերենից կամ նրան մերձավոր լեզուներից ժառանգած (ննթաշերտային և փոխառյալ) բառերը ուղղակի քննության դեպքում մեծաթիվ չեն երևում: Սակայն հնարավոր է նման բառեր հայտնաբերել ոչ ուղղակի քննությամբ՝ նկատի առնելով պելասգերենի հնչյունական որոշ առանձնահատկությունները: Դրանցից *r̥>ur և *p>ph անցումներին առնչվող բառերի մասին խոսվեց վերևում: Այստեղ խոսենք երկու այլ դեպքի մասին. ա) եթե ճիշտ են պել. ս-ով և հայ. շ-ով զուգադրանները, ապա նշանակում է՝ պելասգերենում ս-ն արտասանվել է š[56]. այդ դեպքում հայ. շմոթիլ «ենթել, հատել» (հ.-ե. smer- «հատել») և շմոր-տակ

[53] Յ. Պոկոռնին (Idg. etym. Wörterbuch, I, էջ 594), հենվելով Պետերսոնի վրա, շող բառը բխեցնում է k'u̯o-lo- ձևից [հ.-ե. k'eu- «լուսավոր(ել)»], որ անհամոզական է:

[54] Ըստ Վ. Գեորգիևի din-lo- կամ di-nt ձևից (հ.-ե. dei- «շողալ»), ըստ Վ. Մեռլինգենի՝ tepent->tepnt->tent ձևից (հ.-ե. tep- «տաք, ջերմ լինել»):

[55] Համե. ծան. 5:

[56] Հավանաբար š չունի:

134—7

«ծնատախառն» (հ.-ե. smeru- «ճարպ») բառերի ազգակից կարող է լինել պելասգերենը. բ) քանի որ պելասգերեն բառերում տեղի է ունենում միևնույն բառի մեջ հանդիպող երկու շնչեղներից մեկի տարնմանական ապաշնչեղացում (bh—dh>p—d, p—t>p—th միջոցով), ապա հնարավոր է այս կարգի բառերի համար ենթադրել թրակյան կամ պելասգյան ծագում: Սակայն ընդունում ենք հայերեն բառերի մի զանի՝ առանց պնդելու դրանց պելասգյան կամ թրակյան ծագման վրա, որովհետև ա) որոշ հետազոտողներ կարծում են, որ պելասգյան բառերի մեջ նկատվող տարնմանական ապաշնչեղացումը տեղի է ունեցել հունարենում, որպես հունարենին հատուկ հնչյունական օրենքի (Գրասմանի օրենք) ներգործության արդյունք. բ) որոշ դեպքերում թերևս մենք գործ ունենք իրանական ազդեցության հետ՝ իրանականին հատուկ kh>x անցմամբ. գ) ոմանց կարծիքով հայ. փ-ն և թ-ն կարող են ծագել pi-ից և ti-ից:

պախ «խաշած միս», պախել «եփել»—հ.-ե. pekᵘ- «եփել».

պինդ, պնդեմ, պարապանծիմ— հ.-ե. bhendh- «կապել».

պոչ—հ.-ե. peuk-, pŭk- «բրդոտ. փրչոտ (բրդոտ պոչ)» (հմմտ. հ. հնդկ. púccha- «պոչ»).

տարփ, տարփամ, արփի, տռփի—հ.-ե. terp-, trep- «հագենալ, վայելել».

տափ, տափեմ, տափակ—հ.-ե. tap- «ցած սեղմել, ճնշել».

տենչ, տենչամ—հ.-ե. ten-k- «ձգել, լարել».

տրոփ, տրոփել, տրփալ—հ.-ե. trep- «տրոփել, զարկել, ոտք գնել» (հմմտ. հ. սլավ. трепетъ «դող, երերում», բուլղ. тро́пам «տրոփել, զարկել», ռուս. тропать «զարկել, տրոփել» և այլն).

կայթ «ցատկոտում, ուրախության պար», կայթել «ուրախանալ, ցատկոտել, պարել»— հ.-ե. kai-t- «լուսավոր» (հմմտ. հ. վ. գերմ. heitar, գերմ. heiter «ուրախ, պայծառ»).

կանթ (կոթ-ի կողքին)—հ.-ե. kamp-to- «կոր. անկյուն, թեքվածք» (kam-p-ից «թեքել») (հմմտ. հուն. <ակ. κανθός «աչքի անկյուն»).

կափ, կափել, կափուցանել, կափարիչ— հ.-ե. kap- «բռնել».

կարդամ «կանչել, գոչել, բարձրաձայն կարդալ»—հ.-ե. gher-dh- (gher-՝ բնաձայն բառերում) (հմմտ. հ. անգլ. groedan «կանչել, գոչել»):

կաթ, կաթիլ, կայլակ <*կաթլակ, կաթել, կիթ, կթել, կութ— հ.-ե. kēt- (skēt-ի կողքին) «ցատկել, ցայտել, թռել» (համա. վեստ-ֆալ. schot «ձկնկիթ», ն. ֆրանկ. schaiden «ձկնկիթ դնել», վեստ-ֆալ. schāden «ձվեր տալ»).

կախ, կախել, կախան, կախաղան— հ.-ե. kek- (keg-, kenk-, keng- ձևերի կողքին) «կախելու փայտ, կախարան, ճանկ» [համա. բուլղ. кáчъ, кáч(у)вам «բարձրացնել, կախել»].

կթիմ «տկարանալ, թուլանալ», կթոտ «թույլ, անհաստատ»— հ.-ե. kēth- (skēth-ի կողքին) «վնասել».

կինք «ներբան. հետք»—հ.-ե. kenk- «ծնկափոս, կրունկ»[57].

կիրթ, կրթել—հ.-ե. k^{u}-r̥-ti- (k^{u}er-ից «անել, կազմել»)[58].

կռիւ «կռիվ, վեճ, պատերազմ. ոտք դնելու, հաստատվելու տեղ, կռվան», կռուիմ «կառչել, կպչել»—հ.-ե. ghrebh- «բռնել, փորփրել»[59].

կուք, կքիմ—հ.-ե. keu-k-՝ keu-ից «ծռել, թեքել»։

---

[57] Եթե ք-ն նախապես հոգնակիի վերջավորություն չի եղել, այլ հետո արմատին ուշ է գիտակցվել (համա. գ-կնի «հետքը»)։ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, 1208) նշում է կովկասյան զուգահեռներ՝ առանց հայերենի հետ ունեցած փոխհարաբերությունը պարզելու։

[58] Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, 1210—1211) նշում է վրաց. զուգահեռներ (da-krt-oma «զարդանք, վախ», kirt-eba «սարքություն, աշխատանքը և այլն»)՝ ենթադրելով փոխառության ընդհանուր աղբյուր։ Համա. հուն. τίρας «նշան, նշանակ, հրաշք»՝ k^{u}er-ից։

[59] ОИДПАЯ-ում համեմատվում է հ.-ե. koro-s «կռիվ, պատերազմ. զորք» հիմքերին պատկանող բառերի հետ, այդ հիշվում է գերմ. Krieg «կռիվ պատերազմ» բառը։

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՓՌՅՈՒԳԵՐԵՆԸ

§ 1. Մինչև մ. թ. ա. XII դարը փռյուգացիները ապրում էին Բալկանյան թերակղզում՝ թրակացիների հարևանությամբ: XII դ. մոտերքը սկսվում է փռյուգացիների մասսայական արշավանքը Փոքր Ասիա, որի արևմտյան մասում հետագայում ստեղծվում է փռյուգական խոշոր պետությունը: Փռյուգական այս արշավանքի արձագանքները պահպանվել են Հերոդոտոսի (VII, 73) և Ստրաբոնի մոտ (VII, frg. 25): Հերոդոտոսը, մասնավորապես, նշում է, որ Եվրոպայում, մակեդոնացիների երկրում ապրելիս, փռյուգացիները կոչվում էին բրիգներ (Βρίγες), իսկ Ասիա վերաբնակվելուց հետո սկսում են փռյուգներ (Φρύγες) կոչվել: Փռյուգացիների տեղափոխության սկիզբը ավանդաբար կապում են այսպես կոչված «ծովային ժողովուրդների» արշավանքների հետ մ. թ. ա. XIII դ. վերջին և XII դ. սկզբներին: Խեթական հզոր պետության կործանումը վերագրվում է «ծովային ժողովուրդների» շարժումներին և հատկապես փռյուգացիների արշավանքին, թեև վերջին ժամանակներս այդ կարծիքը կասկածի տակ է առնվում:

Փռյուգացիները դառնում են փոքրասիական և հատկապես խեթական մշակույթի ժառանգորդը և հասնում զարգացման բավական բարձր աստիճանի: Փոքրասիական կրոնական պատկերացումների հետ շատ ընդհանուր բան ունի փռյուգական պանթեոնը. Ատիսի պաշտամունքը համափոքրասիական է, Կիբելայի (մայր-դիցուհու) պաշտամունքը թերևս կապված է խուռ. Կուբաբայի (Կու-բաբա) պաշտամունքի հետ: Կապ են տեսնում նաև փռյուգ. Σαβάζιος կամ Sebadius և ասոր. Šebitu դիցանունների միջև:

Մ. թ. ա. VIII դ. Փոքր Ասիայի արևմտյան մասում հիմնադրված և VII դ. ու VI դ. առաջին կեսում նշանակալից հզորության է հասնում փռյուգական պետությունը՝ Գորդիոն մայրաքա-

քաղ[1]։ Փռյուգացիների առաջխաղացումը դեպի արևելք կասեցված է ասորեստանցիների կողմից։ Հայտնի է, որ փռյուգացիները ասորեստանյան Սարգոն II թագավորի (722—705) ժամանակ ուրարտացիների հետ միասին մտան Ասորեստանին թշնամի մի դաշնակցության մեջ և Ուրարտուի թագավոր Ռուսա I-ի կրած պարտությունից հետո (714 թ. մ. թ. ա.) Ասորեստանի հետ հաշտություն կնքեցին (713 թ. մ. թ. ա.)։ Այդ ժամանակ Փռյուգիայի թագավորը Միդասն էր, որ ասորեստանյան աղբյուրներում կոչվում է Միտա։ Հավանաբար այս Միդասն է[2], որ VII դ. սկզբներին, պարտություն կրելով կիմերներից, ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին։ Կիմերների հաղթանակից որոշ ժամանակ անց (ենթադրում են, որ կիմերների դաշնակիցը այս անգամ ուրարտացիներն էին) սկսում է ուժեղանալ լյդիական պետությունը, որի կազմի մեջ մտնում է և Փռյուգիան։ 546 թ. լյդիական զորքերի՝ Կյուրոսի կողմից պարտություն կրելուց հետո, Փռյուգիան, Փոքր Ասիայի այլ վայրերի հետ միասին, մտնում է Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ, ապա ենթարկվում է Փոքր Ասիայի բախտի ընդհանուր փոփոխություններին՝ ընկնելով հույների, ապա հռոմեացիների գերիշխանության տակ։

§ 2. Փռյուգիան աշխարհագրողներին և ժամանակագրերին լեզվական միատարր ամբողջություն չի ներկայացրել։ Մի կողմ թողնելով այն, որ Փռյուգիա անվամբ տարբեր ժամանակներում տարբեր ընդարձակության տերիտորիաներ են հասկացել, և որ համեմատաբար ուշ շրջանում տարբերել են Մեծ Փռյուգիա (ներքին բարձրավանդակ մասը) ու Փոքր Փռյուգիա (Հելլեսպոնտոսին հարող մասը), նշենք, որ հետազոտողները, հատկապես O. Հաասը, վերջին ժամանակներս տարբերում են փռյուգացիների հետևյալ երեք հիմնական շերտերը.

1. Նախափռյուգացիների շերտը, որ Բալկաններից Փոքր Ասիա է գաղթել ամենից առաջ և որի ներկայացուցիչները փռյուգական հետագա ներգաղթերի հետևանքով պահպանվել են Փռյուգիայի արևմտյան, հարավային և արևելյան եզրամասերում մի-

[1] Գորդիոն անունը ծագում է հ.-ե. gherdh- «շրջապատել, ցանկապատել» արմատից, որտեղից ռուս. город և հայ. (<իրան.?) գերդաստան։

[2] Ըստ ոմանց՝ Գորդիաս և Միդաս հատուկ անուններ են։ Վ. Բրանդենշտայնը Միդաս անվանը վերագրում է հնդիրանական ծագում (Mitra-/Mith-ra->հայ. Միհր)։

ալի։ Ըստ Օ. Հաասի՝ սրանց լեզուն ունեցել է սատեմային բնույթ և մոտ է եղել հայերենին։ Նախափռյուգիական շերտին պատկանող էթնիկական անուններից հայտնի են մուշկերը (հուն. Μόσχοι) և տաբալները։ Առաջինները սկզբնապես շատ հեռու են տարածվել և այնքան կարևոր դեր են խաղացել փռյուգիական պետության մեջ, որ Փռյուգիան անվանել են և «Մուշկերի երկիր»[3]։ Ասկանների անունը պահպանվել է Փռյուգիայի հարավային մի շարք տեղանունների մեջ, որոնք կրում են Ἀσκανία անունը[4]։ Նրանք տարածվել են մինչև Պաղեստինի մերձակայքը, և Հին կտակարանում «աշքանազյաններ» անվամբ հանդիպում են փռյուգացիներին. հմմտ. «Պատուէր տուք լինէին Արարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին» (Aškənazim)[5]։ Հատկանշական է, որ Ասքանազ անունը հանդիպում է նաև Նոյի սերնդի ծննդաբանության մեջ, ըստ որում Ասքանազը համարվում է Հաբեթի թոռ և Թորգոմի եղբայրը։

Փոքր Ասիայի -nd-ով (հ.-ե. -nt-) տեղանունները զգալի մասով գտնվում են նախափռյուգացիների տարածման տերիտորիայում՝ բուն փռյուգերենի տարածման վայրերից արևմուտք, հարավ և արևելք (հմմտ. t-ի ձայնեղացումը n-ի մոտ, որ հատուկ է և հայերենին)[6]։

2. Հին կամ մեծփռյուգական շերտը, որ Բալկաններից Փոքր Ասիա է գաղթել նախափռյուգացիներից փոքր ինչ ուշ և զբաղեց-

---

[3] Հետազոտողները տարբեր կարծիքներ են հայտնել մուշկերի մասին։ Ոմանք նրանց նույնացնում են մոսխացիների (μόσχοι) (Դերզին), երկրորդները՝ հայերի (հմմտ. վրացիների կողմից հայերին տրված սոմեխի անվանումը), երրորդները՝ քարթվելական լեզվով խոսող ցեղերի հետ (ըստ Հեկատայոսի մուշկերը կոլխերից են, կոլխյան ցեղեր. հմմտ. մեսխեր, Մեսխեթիա)։ Մուշկ անվանումը անչափ բազմանշանակ է, և մուշկերի ցեղային պատկանելությունը բազմատարր։ Հետաքրքրական է նշել, որ հին. խեթ. արձանագրություններից մեկում [Arar(a)š թագավոր, շուրջ 800 թ. մ. թ. ա.] որպես աշխարհագրական հարևաններ ստորագրվում են Muši, Muš(i)kai և Šuri (երկ. ար. հոլ.), ընդ որում վերջինները սիրիացիներն են։ Հմմտ. *R. Hauschild*, նշվ. աշխ., էջ 7։

[4] Հմմտ. և Μὴν Ἀσκαηνός, Ἀσκάνιος, որոնք Դ. Դեչևը (Die thrakishen Sprachreste, Wien, 1957, էջ 31) կապում է թրակ. Ἀσκι-πρασι: անձնանվան հետ։

[5] Ֆ. Դելիչը և նրա հետևողությամբ շատ այլ հետազոտողներ Աշքանազ անունը նույնացնում են բևեռագիր արձանագրությունների Ašgūza-ի հետ, որով կոչվել են սկյութացիները։

[6] Հմմտ. և փռյուգ. այլ շերտի պատկանող -ντ-ով, այլև Փոքր Ասիայի արևմուտքում տարածված պելասգյան -νθ-ով և գերի արևելք ընկած -ν̃-ով տեղանունները (O. Haas, L. B. X, էջ 29–30)։

րել բավական ընդարձակ տարածություն՝ Մեծ Փռյուգիան, այն է հետագա Բյութանիան (Բիթյանիան), Պափլագոնիան և միջակա տարածությունը, որ մ. թ. ա. III դ., այլ տերիտորիաների հետ միասին, գրավվում է կելտական ծագում ունեցող գաղատների կողմից և կազմում հետագա Գաղատիայի մի մասը: Մեծ Փռյուգիայի այս հիմնական էթնիկական շերտի լեզուն եղել է կենտումային բնույթի և ուշ շրջանում արտացոլվել նոր կամ ուշ փռյուգական մեծաքանակ արձանագրությունների մեջ:

3. Մակեդոնական կամ հյուսիս-արևելյան փռյուգացիների շերտը, որ մ. թ. ա. մոտավորապես IX—VIII դարամիջին Մակեդոնիայից գաղթել է Փոքր Ասիա՝ հիմնվելով Գորդիոն, Անկարա, Պեսինոս և այլ քաղաքների շրջանում: Սրանք են, որ միանալով ասորեստանցիների կողմից մուշկեր կոչված ցեղերի հետ՝ հիմնում են փռյուգական հզոր պետությունը: Մակեդոնական փռյուգացիների լեզուն բավականին մոտ լինելով մեծփռյուգական ցեղերի լեզվին՝ ունի մի շարք առանձնահատկություններ, որոնց մեջ հատկապես հիշատակելի է շրթնայնացված ետնալեզվայինների փոփոխությունը շրթնայինների և ատամնայինների՝ ինչպես հունարենում և բուն մակեդոներենում:

Փռյուգիայի աշխարհագրական և ժամանակագրական լեզվատարբերակվածությամբ պետք է բացատրել, որ միևնույն հասկացությունների համար տարբեր աղբյուրներում փռյուգական տարբեր բառեր են մատնանշվում: Այս հանգամանքն էլ հիմք է տվել հետազոտողներին փռյուգերենի մեջ տեսնելու և՛ կենտումային, և՛ սատեմային գծեր:

Հայտնի է, որ փռյուգերենի մերձավոր ցեղակցական կապերի հարցի շուրջը եղել են և կան վեճեր: Երկար ժամանակ փռյուգացիները կապի մեջ էին դրվում թրակացիների հետ, և փռյուգերենն ու թրակերենը միացվում մեկ լեզվական միասնության մեջ: Թրակերենի բնույթի մասին հետագա ճշգրտված պատկերացումները և փռյուգերենի նորագույն ուսումնասիրությունները հիմք են տալիս այդ հարցին այժմ ավելի որոշակի պատասխան տալու: Գնալով կոպիտ ընդհանրացման ճանապարհով՝ կարելի է ասել, որ նախափռյուգերենը բավականաչափ մերձավոր կապեր ունի հայերենի, այլև բալթիկ-սլավոնական լեզուների հետ, մակեդոնական փռյուգերենը՝ (մակեդոներենի հավաքածը)՝ հունարենի հետ: Տարբերում են նաև հունականացված փռյուգական մի շերտ:

§ 3. Փռյուգերենի մասին մենք գաղափար ունենք արձանա-

գրություններից, զանազան աղբյուրներում հիշատակված փռյուգական բառերից ու գլոսսներից և զանազան հատուկ անուններից: Փռյուգական արձանագրությունները պատկանում են երկու տարբեր շրջանների. այսպես կոչված հին կամ վաղ փռյուգերենի արձանագրությունները մ. թ. ա. VI—IV դարերից են, նոր կամ ուշ փռյուգերենի արձանագրությունները՝ մ. թ. ա. I—IV դարերից: Այս արձանագրությունների լեզուն երկու դեպքում էլ տարբեր է այսպես կոչված նախափռյուգերենից: Փռյուգերենը որպես լեզու դադարում է գոյություն ունենալուց մ. թ. VI դարում:

§ 4. Փռյուգերենի և հայերենի մերձավոր ցեղակցության մասին խոսել են դեռ անտիկ աշխարհի հեղինակները: Ըստ հույն պատմագիր Հերոդոտոսի՝ «արմենները զինված էին փռյուգացիների նման և փռյուգական վերաբնակիչներ էին (Φρυγῶν ἄποικοι)» (VII. 73): Ըստ Եվդոքսոսի՝ «արմենները ծագումով Փռյուգիայից են և լեզվով շատ բանով փռյուգաբանում են (τῇ φωνῇ πολλὰ φρυγίζουσι)»:

Պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորումից և հայերենի բնույթի որոշումից հետո լեզվաբանները հայ-փռյուգական լեզվական ցեղակցության հարցին երկու տարբեր մոտեցում են հանդես բերել: Նշանավոր շատ հայագետներ, հատկապես Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն, Յ. Մարկվարտը, Հ. Պեդերսենը, հայ հեղինակներից Հ. Տաշյանը, Հ. Աճառյանը, ժխտում են փռյուգերենի հետ հայերենի մերձավոր ցեղակցության հնարավորությունը, թեև մատնանշում են հնչյունական և քերականական որոշ կարգի մերձավոր զուգադիպումներ:

Մի շարք այլ հեղինակներ՝ Ջ. Բոնֆանտեն, Վ. Գեորգիևը, Ի. Դյակոնովը, Վ. Բըրըցյանուն հակված են մերձավոր ցեղակցություն տեսնելու փռյուգերենի և հայերենի միջև՝ մինչև բարբառային մերձավորության աստիճանը[7].

Սկսած 1930-ական թթ. վերջերից հայ-փռյուգական ցեղակցության հարցին տարբեր առիթներով անդրադառնում է Օ. Հաու-

[7] G. Bonfante, Armenians and Phrygians, „Armenian Quarterly", I, 1, 1946, էջ 82—100. В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, էջ 138—145. Тракийският език, София, 1957, էջ 74—83. Ի. Մ. Դյակոնով, Խեթերը, փռյուգացիները և հայերը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 11 (ռուս. թարգմանքը՝ „Переднеазиатский сборник", Москва, 1961, էջ 333—368). В. Бэнэцьяну, Некоторые вопросы этногенеза армян, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 97—102:

ալ[8]։ Հատուկ ուսումնասիրության ենթարկելով փռյուգերենի փաստերը, առանձնացնելով աշխարհագրական և ժամանակագրական տարբեր շերտեր՝ Օ. Հաասը հայտնում է այն կարծիքը, որ խոսք կարող է լինել հայերենի ու այսպես կոչված նախափռյուգերենի մերձավոր ցեղակցության մասին, և որ հայերենի ու փռյուգական արձանագրությունների լեզվի միջև հատուկ մերձավոր կապեր չկան։ Այդպիսի մերձավորություն է տեսնում Հաասը հայերենի և փռյուգա-պիսիդական սահմանային շրջանի լեզվական մնացորդների միջև. առանձնապես նշվում է հ.-ե. eu-ի փոփոխությունը ou-ի և υ-ի՝ հայ. ոյ-ին զուգահեռ (հմմտ. Ευδαμενό-ի Ουδαμενό գրությունը և հ.-ե. leuk->հայ. լոյս փոփոխությունը), այլև նախաձայն վանկերի i-ի և u-ի թուլացումն ու սղումը, որ Օ. Հաասը համարում է ընդհանուր միտումի արտահայտում՝ միևնույն լեզվամիության սահմաններում[9]։ Օ. Հաասի բերած բառային զուգահեռներից ընտրել են հետևյալները՝ Ελαινος (գետանուն)—եղն. Σιβρος (գետանուն)—սուրբ, -ոյ. κορβαντ, κυβαντ «զավակս» (?)—կորիւն և այլն։ Այսպիսով, ըստ Օ. Հաասի, նախափռյուգերենի մնացորդները, պահպանված լինելով Փռյուգիայի եզրամասերում՝ արևմուտքում, արևելքում և հարավում, ցույց են տալիս, որ իրոք հնարավոր էր նախափռյուգերենի և նրա արևելյան հարևանը հանդիսացող հայերի ցեղակցությունը փռյուգերենի տարածման հարավ-արևելյան եզրամասերում։

§ 5. Փռյուգերենին հատուկ են հնչյունական հետևյալ առանձնահատկությունները.

1. Բաղաձայնները, ինչպես հայերենում, ենթարկվում են տեղաշարժի՝ հ.-ե. bh, dh, gh>փռյուգ. β, δ, γ. հ.-ե. b, d, g>փռյուգ. π, τ, κ. հ.-ե. p, t, k>փռյուգ. φ, θ, χ։ Սակայն շնչեղացումը փռյուգերենում շատ թույլ է և հաճախ չի նշանակվում։ Զայ-

---

[8] O. Haas, Die phrygischen Sprachreste und ihre Verhältnis zum Armenischen, «Հանդես ամսօրյա», 1939, № 7—12, էջ 225—235. Die sprachgeschichtliche Stellung des Phrygischen, „Езиковедски изследования в чест на Ст. Младенов", София, 1957, էջ 451—467. Die phrygische Sprache im Lichte der Glossen und Namen, „Linguistique balkanique", II, 1960, էջ 25—68. Armenier und Phryger, LB, III, 2, 1961, էջ 29—63. Die Phrygischen Sprachdenkmäler, LB, X, 1966.

[9] Ըստ Հ. Հյուբշմանի՝ հայերենում այդ փոփոխությունը իրականացել է մ. թ. II դ. վերջերին և III դ. սկզբներին։

ձայնորդների հարևանությամբ ձայնեղների տեղաշարժ կարող է չլինել:

2. Հ.-ե. քմայնացած ետնալեզվայինները (g'h, g', k') նախափռյուգերենում (նրա մնացորդներում) վերածվում են առաջնալեզվային շփականների և կիսաշփականների (ζ. σ). բուն փռյուգերենում և մակեդոնական փռյուգերենում մնում են որպես ետնալեզվայիններ (γ. κ):

3. Հ.-ե. շրթնայնացած ետնալեզվայինները ($g^{u}h$, g^{u}, k^{u}) ներկայացված են որպես պարզ ետնալեզվայիններ (γ, κ), ընդ որում i-ից առաջ նկատվում է վերածում առաջնալեզվայինների (δ, τ). գաղաթա-փռյուգերենում դրանք վերածվում են շրթնայինների (β, π):

4. Հ.-ե. s-ն, ի տարբերություն հայերենի, ամենուր պահպանվում է:

5. Հ.-ե. ձայնորդները հիմնականում պահպանվում են, ընդ որում ուշ շրջանում l-ն փոխվում է r-ի. m-ն, ինչպես հայերենում, բառավերջում փոխվում է ν-ի. Հ.-ե. վանկարար ձայնորդները՝ r̥, l̥, m̥, n̥ փոխվում են αρ, αλ, α(μ), α(ν)-ի: Փռյուգերենին հատուկ է μ/β հնչյունափոխությունը:

6. Հ.-ե. i̯-ն և u̯-ն (?) հիմնականում պահպանվում են:

7. Հ.-ե. ձայնավորների որակական տարբերությունները հիմնականում պահպանվում են, քանակական տարբերությունները՝ անհետանում. նշելի է միայն, որ առկա է ō > ū անցումը (ինչպես հայերենում), երբեմն էլ ē > ī փոփոխությունը:

8. Երկբարբառային հատուկ փոփոխություններից նշելի է u-ով երկբարբառների յուրահատուկ արտասանությունը (հմմտ. հ.-ե. eu > հայ. ոյ):

§ 6. Փռյուգերենի և հայերենի հնչյունական համապատասխանությունները կարելի է արտահայտել 107-րդ էջի աղյուսակով:

§ 7. Հայերենի և փռյուգերենի լեզվական տարբեր շերտերին պատկանող բառերի միջև կարելի է նկատել ծագումնային հետևյալ զուգադիպումները.

1. Հ.-ե. bh, dh, gh.

βαλος «phallus, առնանդամ» (հմմտ. βαλλιον «կանանց կողմից օգտագործվող՝ կաշվից պատրաստված կեղծ առնանդամ»), ἀρύ-βαλος «կաշվե քսակ», այլև թերևս βάγβαλον «սեռական օրգան» և «գործ-

հ.-ե.	Փռյուգ.	Հայ.	հ.-ե.	Փռյուգ.	Հայ.
bh	β	բ	r̥	αρ	ար
dh	δ	դ	l̥	αλ, αρ	ալ, աղ
g'h	γ (ζ)	ձ	m̥	α(ν)	ամ
gh	γ	գ	n̥	α(ν)	ան
$g^{u}h$	γ (β, δ)	գ	i	ι	ի
b	π	պ	ī	ι	ի
d	τ	տ	u	ου	ու
g'	κ (ζ)	ծ	ū	ου	ու
g	κ	կ	e	ε(ι)	ե
g^{u}	κ (π, τ)	կ	ē	α, ε(ι)	ի
p	φ	հ	o	ο	օ
t	θ	թ	ō	ου (ω)	ու
k'	χ (σ)	ս	a	α	ա
k	χ	ք	ā	α	ա
k^{u}	χ (φ, θ)	ք	ei	ει	է
s	σ	հ, ւ	oi	οι	է
r	ρ	ր	ai	αι	այ
l	λ, ρ	լ, ղ	eu	ευ (ου, ο, ω)	ոյ
m	μ	մ	ou	ου	ոյ
n	ν	ն	au	αυ	աւ
i̯	ι	ջ	ə	α	ա
u̯	ου	գ			

վածքը (Հեսիքիոս)[10] (հ.-ե. bhel- «ուռչել, բղխել»)—բեղուն, այլև թերևս բղխել (հմմտ. և բող, բողկ, բողբոջ).

-βερ- (αβ-βερ-ετ, αβ-βερ-εται, αβ-βερ-ετορ ձևերի մեջ) (հ.-ե. bher- «բերել, կրել, տանել»)—բերեմ.

Βερεκυντια (երկրանուն՝ «լեռնաստան» ?) (հ.-ե. bhereg'h- «բարձր»)—բարձր, -ու.

βρατερε «եղբորը» (տր. հ.) (հ.-ե. bhrāter «եղբայր»)—եղբայր, սեռ.-տր. եղբաւր.

ορβεων «որբին» (հայց. հ.)—որբ, -ոյ.

δα-, δακ- «անել» (ε-δα-ες, εγ-δα-ες, δακ-ετ, αδ-δακ-ετ, αδ-δακ-

[10] Փռյուգ. այս բառը համեմատում են լիտվ. bambalas «մանկիկ, թզուկ» բառի հետ, որ կամ բխեցնում են bámba «պորտ» բառից (ըստ Է. Ֆրենկելի), կամ համարում են ballos-ի կրկնությունը (Ֆ. Սոլմսեն)։ Է. Լիդենը (Armenische Studien. 1906, էջ 44) լիտվ. բառի հետ է կապում հայ. բամբ-ը «սրունքի մասը մաս»։

ζτος, δαι-ας, δαι-ορεν ձևերում), δουμος «ժողով, խումբ» (հ.-ե. dhē-, dhē-k- «դնել. անել», dhō-mo-)—դի-ր, դնեմ.

δαδιτι «amitae, հորաքրոջ» [հ.-ե. dhē-, dhe-dh(ē)- —մանկական բառ՝ ընտանիքի ավագ անդամներին նշանակելու համար]—դադա, դադո «քույր, ավագ քույր» (բրբռ.), դադե «ո՞վ քույր», դադո «ո՞վ հայր» (բրբռ.).

δαρεινς «պահպանող» (այլև զատանունների մի եղանակի անուն) (հ.-ե. dher- «պահել, բռնել»)[11]—դարեմ «կանգնել, մնալ», դադար.

-δουαι «դռներ» (Γριμενο-δουρίται, Γριμενο-θυρίται, Γριμενο-θύραι տեղանվան մեջ)—դուռն, հգն. դրունք.

Γορδιον (քաղաքանուն), -gordum (Mane-gordum տեղանվան մեջ) (հ.-ե. gherdh- «շրջապատել, ցանկապատել», որտեղից ռուս. город «քաղաք»)[12]—գերդաստան[13].

2. Հ.-ե. b, d, g.

τι- «dis-, ա-, ապա-» (τι-δρεγρουν «ան-մաքուր»)—ա- (ա-գէտ, ա-գեղ)

τιος «Աստծու», τιειον «աստվածային», Τι-ειον (քաղաքանուն՝ «աստվածային») (հ.-ե. dei- «շողալ»)[14]—տիւ.

ὕδος- «ջուր» (τὰ Ὕδρεια=τὰ Κύδραρα տեղանվան մեջ) (հ.-ե. au̯ed-, ud- «թացացնել, հոսել»)—գետ, -ոյ.

3. Հ.-ե. p, t, k.

παρτεν «հիմք, պատվանդան» (=հուն. πέτα<խեթ. palzahha- «պատվանդան»), Παλτε (*pl̥tu̯-ei) (Γῆ երկրի դիցուհու մականունը), φαλατα (Μαζ-φαλατα տեղանվան մեջ)—հող, լայն.

παρτης «զատավորներ» (հ.-ե. per- «անցկացնել. տեղափոխել. անցնել, թռչել», որտեղից խեթ.>հայ. պարտ, պարտավոր)—հորդեմ «ճանապարհ բանալ, պատրաստել», հորդիմ «գնալ, տարածվել», այլև հերթին.

---

11 Ստուգաբանությունը հեղինակինն է։

12 Manegordum-ը ունի և Manezordum ձևը, որ արդյունք է որևէ սատեմային լեզվի կողմից յուրացվելու։

13 Նոր հայ. բառը իրանական փոխառություն չէ։

14 Փռյուգ. Διειων, -ος անձնանունը, որ զուգահեռներ ունի թրակերենում և այլուր, համեմատում են լիտվ. didis «մեծ» բառի հետ. վերջինս թեև հակված են բխեցնելու հ.-ե. dei- «շողալ» արմատից, բայց այդ թեզ համոզական չէ։ Հմմտ. համապատասխան արմատները խեթերենում, խուռերենում, ուրարտերենում, քարթվելական լեզուներում։

πατερες «ծնողներ»—հայր, հգն. հարք.

περ «համար» (հ.-ե. per, peri «առաջ, գինը»)—առ.

πεντε (իգ. անձնանուն «հինգերորդ»), Πεντε- (անձնանուն) (հ.-ե. penkʷe, penkʷ-t- «հինգ, հինգերորդ»)—հինգ.

πουλος «որդի, տղա»[15] (հ.-ե. pōu- : pəu- : pŭ- «փոքրիկ, ձագ», pu-tlo- «երեխա»)—ուլ, ամ-ուլ, այլև լրի (?).

πουσυν(ν)σι (*pousunt-si «բարկացած» գերբայաձևից) [հ.-ե. (s)pen- «քաշել, լարել»]—հենում, հանում «հյուսել», հէն «հյուսվածք»[16].

Πριαμος (նախափռյուգ.) «սիրելագույն (?)» (անձնանուն), ն. փռյուգ. πριαις սիրելի (?)» (հ.-ե. prāi-, pri- «սիրել, խնայել», prii̯o- «սիրելի»)—երան-ելի, եր-ջ-անիկ[17].

πυρ «կրակ» (հ.-ե. peu̯ōr-, pŭr- «կրակ»)—հուր, -ոյ, հուն- (հնոց բառի մեջ).

οπι- «վրա, մակա-» (οπι-στραμεναν «վրան գրված» բառա-ձևում) (հ.-ե. epi, opi, pi «մոտը, վրան»)—ե, այլև թերևս հ- (<pi- ?) (հ-աղանդիմ).

θαλαμει(ν) «դամբարանի մի մաս»[18] (հ.-ե. stel- «դնել, կանգնեցնել», stl̥-mi- ?)[19]—տանեգծանեմ, տանեղն.

τος «նա», τα (և δα) (որոշիչ հոդի արժեք ունեցող ցուցական), τοι «այնտեղ», հին փռյուգ. το «այստեղ» (հ.-ե. to- «նա»)—դա, այդ, դոյն, -դ.

κακα(ν) «վատ, վատ կերպով», κακον «վատություն, չարություն»—քաք, քակոր.

4. Հ.-ե. g̑h, g̑, k̑.

ա) Փռյուգ. γ, κ, χ.

*γαλλος «կույր, կուրացած» (?)[20]—ձլեմ «ակոսել», ձող, -ոյ.

---

15 Համմ. և παι(ς): «սերունդ(?)»։

16 Թերևս այստեղից է նաև հենք(G) «ծառը. հենուկ, հակառակու-թյունը», որ ավելի լավ է համապատասխանում փռյուգ. բառի իմաստին։

17 Հայ. բառերի ստուգաբանությունն ըստ Հ. Աճառյանի։

18 Ըստ Օ. Հաասի՝ „Totenbank“ (=լեհ. hlrmmi)՝ հուն. θαλαμος-ին («սենյակ, ննջարան, տունը՝ փոքրաս. փոխառ.») մերձեցված։ Համմ. և հ. պրուս. varnis «փայտ»(?)։

19 Սակայն համմ. հ.-ե. stel(ə)- «տարածել», որտեղից հայ. տառա-տաղ. այլև tel(ə)- «հարթ. հարթ գետին, տախտակ», որտեղից հայ. թաղ, թաղեմ, թիթեղն, թաղար. Թերևս նաև թալը։

20 Իմաստը ենթադրվում է Հեսիքիոսի բառերի անվանումից, որոնք եր-բեմն ներքինացվում էին։

γλουρός «ոսկի» (=հուն. χλωρός «դեղնականաչ») (Հեսիքիոս), γλούρεα «χρύσεα, ոսկյա» (Հեսիքիոս)—ձաղ «ծաղր».

μάκεδος «մեծություն, չափ» (հուն. μέγεθος-ի սխալագրությունը) [հ.-ե. meg'(h)- «մեծ»]—մեծ, -ի, -աց.

-γν- (ανε-γν-ιω «սեփական ինքնա-ծին, ինքնահղացած» բառաձևի մեջ) (հ.-ե. g'en- «ծնել»)—ծին, ծնանիմ.

κερέδρια, κελεδρία (դամբանաման՝ «գլխամաս») (հ.-ե. k'er- «մարմնի վերնամաս, գլուխ»)—սար.

κύνες «շներ», թերևս նաև *κανες, *κανδας (κανδαύλης բառում, որ դատախազի հետ կապված մի անվանում է) (հ.-ե. kuon-, k'un-, k'uon- «շուն»)—շուն, թերևս նաև սկունդ.

ακεναν (հ. փռյուգ.) αἰκείνην, այն, նրան (հայց. հ.)»—սա, այս, սոյն, -ս, սատ.

Ἄκμων (Զևսի մակդիրը), Ἀκμονία (քաղաքանուն) (հ.-ե. ak'- «սուր, եզրավոր», ak'-men- «քար. երկինք»)—ասեղն.

Ἀκρισίας (դիցանուն) (հ.-ե. ak'- «սուր, եզրավոր», ak'-ri-, -ro-)—ասեղն.

բ) Փռյուգ. ζ, σ.

ζευμα «աղբյուր»[21]—ձև, ձուլ, այլև թերևս ձոր.

Ἔζαρα, Ἄζαρα «լիճ» (հ.-ե. eg'hero- «լիճ»)—եզր. -եր.

ἀ-ζήν, հայց. ἀ-ζένα «մորուք»—ծնաւտ, -ի, -ից[22].

Ασεις (Զևս—այծատված) (հ.-ե. ag'- «քաղ, արու այծ. այծ»)—այծ, -ի, -ից (հ.-ե. aig'-)[23].

Σίβρος, Σίρβις, Σίρμις (գետանուն=ξανθός «ոսկեգեն, շեկ») (հ.-ե. k'eu- «լուսավորող, լուսավոր»)—սուրբ, -ոյ.

*Ασμγν (ըստ արձանագրության՝ Վ. Գիրգանիի առաջարկած ընթերցման. հմմտ. Ἀκμονία քաղաքանունը) (հ.-ե. ak'- «սուր, եզրավոր», ak'-men- «երկինք. քար»)—ասեղն.

5. Հ.-ե. $g^{u}h$, g^{u}, k^{u}.

ա) Փռյուգ. γ, κ, χ.

Γέρμα (տեղանուն) հ.-ե. $g^{u}her$-, $g^{u}her$-mo- «տաք. ջերմ»)—ջերմ, -ոյ. ջեր «տաքություն. տաք», ջեռնում, ջերմն.

---

21 Հնարավոր են համարում և այլ մեկնաբանություններ

22 Մակոյն O. Հաաս, LB, էջ 48, համեմատելով հուն. πώγων «մորուք» բառի հետ և նկատի ունենալով հայերենին մոտ մի լեզու՝ հնարավոր է համարում ընծեղնել *pogen ձևից:

23 Հավանական է ենթադրել, որ հայ. այծ-ը և հուն. αἶξ-ը ծագում են ag'-lo- ձևից, ընդ որում հայերենը՝ որևէ լեզվի միջնորդությամբ:

γναις «կնոջ, ամուսնու» (հ.-ե. $g^{u}en\bar{a}$ «կին»)—կին, սեռ.-տր. կնոջ.

Κορύβαντες, Κύρβαντες «կորիբանտներ՝ Մեծ Մոր զավակներ» (հ.-ե. $g^{u}er$-, $g^{u}rebh$-, $g^{u}er\partial bhut$- «սաղմ, երեխա, ձագ»)—կորյուն.

κε «և», -κε (մասնիկ՝ ακε, ακκε „at-que", այլև ιοσ-κε, τισ-κε բառերում) (հ.-ե. $k^{u}e$ «և»)— -ք (ո-ք, ի-ք բառերում).

κικλην (Մեծ արջի համաստեղություն, «սայլ») (հ.-ե. $k^{u}el$- «պտտել, պտտվել, բնակվել»)—եղ-, եղան, եղանակ, յեղ.

κιντι «ինչ էլ որ» (հ.-ե. $k^{u}ei$-՝ $k^{u}o$-, $k^{u}e$-ի կողքին)— ի-նչ, ի-ք, ի-մն, ի-ր, -չ (ո-չ, ի-ն-չ).

κος «ով, ով որ» (հ.-ե. $k^{u}o$- «ով»)—ո, ով.

οκκαβος «Կիբելայի քրմի ապարանջան» («օղակ» կամ «զանձ» իմաստից) (հ.-ե. ok^{u}- «տեսնել, աչք»)[24]—ակն, ական.

բ) Փայլուզ. β (δ), π (τ), φ (θ).

*βατος (νι-βατισμος «զինապար՝ ցած ցցելու, գետին զարկելու պար») (հ.-ե. $g^{u}hen$-, $g^{u}hn$-to- «խփել, սպանել»)—գան, ջին, ջինջ, ջունջ, ջնջեմ.

βεννος «ընդհանրավորության զոհաբերություն», βεννεν «salve, ողջ եղիր (?)», βεννευς «բարբազմանեիր», Βένιος անձնանուն) (հ.-ե. $g^{u}hen$- «ուռչել, թրխել. լիություն»)—յոգն, -ունք.

δεωσσειν «կենդանիներին», δεωσιας «ζώσης, կենդանու»—կեանք, կեամ, կենդանի.

τι(τ) «ինչ», τισκε «ով էլ որ» (հ.-ե. $k^{u}ei$-)—ի-նչ, ի-ք, ի-մն, ի-ր, -չ (ո-չ, ի-ն-չ).

διθυρ (διθυρ-αμβος; θρι-αμβος-ի կողքին՝ «քառաքայլ», «եռաքայլ» իմաստներով, որպես պարի տեսակի նշանակում), θιδρα (θιδρακινη=հուն. τετρακίνη)—չորք, քառ.

գ) Փայլուզ. ζ (<հ.-ե. $g^{u}j$-).

ζως «ապրելիս, կենդանի ժամանակ», ζειρα, ζειραι «ապրելու ժամանակ»—կեամ, կեանք, կենդանի.

6. Հ.-ե. s.

ա) Փայլուզ. σ.

σταρνα «սյուն, հուշասյուն, հուշարձան» (հ.-ե. stel- «կանգնեցնել. կանգուն. հենակ, սյուն, յուն, ցողուն»)—ստեղծանեմ, ստեղն, -ունք.

---

[24] Հնարավոր է բառի հուն. ձագումը՝ ὄκκος «աչք» բառից.

σταυρός «գերան», στατός «հաստատված է (?)» (հ.-ե. stā- «դնել, կանգնել»)—ստանամ.

σε- «լինել» (σε-μου, σε-μουν, σμουν «եղե՛ք» ձևերում)—եմ (ես, է). ք) Փռյուգ. — (գրո).

Σεβρι (հ. փռյուգ.) «քույր» (հ.-ե. syesór «քույր», սեռ. syesrí)—քոյր, սեռ. քեռ.

Fε Fετει (հ. փռյուգ.) «ինքն իրենն»[25], σι (ն. փռյուգ.) «իրենն», σεεν «իրենն», σοα «իր, յուր», σοε- (σοεγνο «ինքնածին, ինքնահրդացած» բառաձևում, sye-g'no-s), ευσειν «իրենց», σετ «իրենն» [հ.-ե. s(e)ye «ինքը», s(e)yo- «իր, յուր»]—ին-քն, սեռ. ին-քեան (-i-<sy-), իւր (*եւր).

σεαχρο «սկեսրայրն» (?) (տր. հ.), Οσεχρεκωρη (անձնանուն)[26]—սկեսուր, սկեսր-այր.

7. Հ.-ե. r, l, m, n, i, u.

δρόγγος «քիթ» [Τασκο-δρου(γ)γῖται «փրկատանկական աղանդ, որին պատկանողները աղոթելիս մատը դնում էին քթներ», հուն. πασσαλορυγχῖται] (հ.-ե. srenk- «խռռալ, փնչացնել» կամ srungh-) —ռունգն, ռնգունք.

ἀρμάν «կռիվը, մարտը» (հայց.) (հ.-ե. er- «շարժվել, շարժել, հուզել, բարձրացնել»)—յառնեմ, որեար, յորդոր, արմ, զ-արմ, թերևս նաև որդի.

ερροι «երեխաներ» (հ.-ե. er-io-), ερoα, ορoα «ընտանիք» (հ.-ե. er- «շարժվել, շարժել, հուզել, բարձրացնել»)—որեար «մարդիկ», այլև յառնեմ, յորդոր, արմ, զ-արմ, թերևս նաև որդի.

ελεινος (գետանուն՝ «եղնիկ»)—եղն, եղնիկ.

ριμενια «բանգի (թմնավոր բույս)»<«ճահճարույս», Rimenia (անձնանուն) [հ.-ե. (s)lei- «լպրծուն, սայթաքուն, սահել»]—լպիրծ, լպիրշ, լիրբ.

Mā, Bα, սեռ. Mας «մայր, մայր երկիր» (=փռյուգա. Ma «մայր», հմմտ. հ.-ե. mā-tēr «մայր»), Bα (կց. անձնանուն)—մա, մամա (մանկ., բրբռ.), մամ «տատ» (բրբռ.), այլև մայր.

μανκα (հ. փռյուգ.), μανη, μανκα (նոր փռյուգ.) «հուշարձան» (հ.-ե. men- «մտածել»)—ի-մանամ[27].

---

[25] Մի այլ տեղում որան համապատասխանում է Fεν αυτον արտահայտությունը։

[26] Հմմտ. և σεχρα<*syekra(?)։

[27] Համապատասխան Μανης, Μανις անձնանունը (այլև թերևս μαν «հրաժեշտ տված հոգին», μανια «գիժգիժ բառերը), որ զուգահեռներ ունի

ματαρ «մայր», Ματαρ (անձնանուն) (հ.-ե. mātēr)—մայր.

με «մի՛»—մի՛.

μ(ε) (հ. փռյուգ.), μεμ «ինձ», μοι (նոր փռյուգ.) «ինձ» (տր. հ.) (հ.-ե. me- —«ես»-ի թեք. ձևը)—իմ, ինձ (*eme-g'h-), իս (eme-g'e).

νι «էլ» (ιος νι «ով էլ»)—նա, այն, -ն, նույն.

νι- (νι-βατοσμος «գինապատ. ցած գցելու, գետին զարկելու պար») (հ.-ե. nei-, ni- «ցած»)—նի- (նստել բառի մեջ).

αν (բայական նախդիր և նախածանց) (հ.-ե. an- «թեք հարթության վրա»)—ան- (ան-բանի, ան-ձևացիկ, ան-կողին բազմում)[28], ամ- (ամ-բառնամ).

ιανατέρα «անգրանկնոջը, տալին» (հայց. հ.)—ներ (նէր, նեար) «անգրանկին, տալ».

ονοραν «անուն. գամբանագիրը»—անուն, սեռ. անուան.

ες (նախդիր) (հ.-ե. en-s «մեջ»)—ի, ըն.

οουιτ «գտնել. տեսնել» (οουιτετου «գտնված. տեսնված» ձևի մեջ), νι-ουιδος «անգետի» (*ni-uid-ios)[29]—գիտ, գտանեմ, գէտ, գիտեմ.

α-ουργ (հ.-ե. uerg'- «գործել, անել»)—գործ, -ոյ, գործեմ.

8. Հ.-ե. a, ā, e, ē, o, ō, ei, eu և այլն։

αι «եթե», αιν «կամ» (հ.-ե. e-, ei-, i- «նա», որտեղից հուն. εἰ «եթե»)—և-թէ.

ει (αδ-ει-του «թո՛ղ գնա...մոտ» ձևի մեջ) (հ.-ե. ei- «գնալ»)—էջ, իջանեմ.

§ 8. Կան մի շարք ոչ հավաստի կամ կասկածելի զուգահեռներ.

1. Փռյուգական համարվող բառերի պատկանելիության հարցը վիճարկվում է.

βεδυ «ջուր» (հ.-ե. ued- «ջուր»)[30]—գետ, -ոյ.

αξις «ազնիւ»[31]—ազնիւ.

թրակերենում և այլուր, ոմանք հակված են բխեցնելու հ.-ե. ma- «ձեռք, պահել» արմատից (հմմտ. լատ. mānus «ձեռք»)։

28 Ըստ Գ. Ղափանցյանի։

29 Հմմտ. ռուս. не-на-висть.

30 Բառի փռյուգական պատկանելությունը վերջերս մերժվում է. այն համարվում է թրակյան. նշանակությունը վիճելի է (արտաքվում է ըստ «կենդանատու» կամ «փրկիչ» մեկնության)։ Ըստ ոմանց՝ «ող» հ.-ե. ue- «փչել» արմատից։

31 Համարվել է փռյուգական, բայց իրականում բիթյունիական է. հմմտ. O. Haas, LB, X, էջ 213։

ζαν «ծովք»[32]—ծով, -ու.

ἰσθιγ, ἰσθιδα, ἰσσιδα, ἰσσιδα, ἰσσιγ, ἰσσια. ἰξελδ «այծի մորթ» (համա. հուն. ἴξαλος «կրտոլած արու այծ, քաղ»)[33]—քաղ «արու այծ».

2. Փռյուգ. բառերի համար վերականգնվող իմաստը որոշ չէ կամ կասկածելի է.

Βαζος (Զեսի մականունը)—բողի «արևգակ» (ըստ Երեմիայի բառարանի).

ζετνα απόιγν. «դարպաս, մուտք» (հ.-ե. g'hed- «կպչել. անցք»)[34]—ձեռ «պուչ».

Καρνα (Մեն լուսնաստծու մականունը՝ «եղջյուրե», իմա «լուսնեղջյուրե») (հ.-ե. k'er- «մարմնի վերնամաս՝ գլուխ, եղջյուր»)—սար.

σουFοι «ամթ»—ամթ.

Ποτας, Ποτης (Զեսի փռյուգա-պիսիդա-լիկ. մականունը. համա. և թրակ. Ποτας) (հ.-ե. poti-s «տեր. այր, ամուսին»)—հոլ(-ու-կալ), թերևս նաև հայ.

3. Փռյուգ., երբեմն էլ հայ. բառերի ստուգաբանությունը հավաստի չէ.

-αμβος (Θρι-αμβος «հաղթալլ» և այլ բառերում)—անկիւն[35].

Βρία (քաղաքանուն. համա. թրակ. Βρία քաղաքանուն, βρία «քաղաք») (հ.-ե. uer- «բարձր տեղ»)[36]—վեր «վեր, բարձր».

Ζευζας (անձնանուն. համա. թրակ. Ζευραζας, Ζευραξης=Ζευραζης, որ ծագում է թերևս Zyras գետանունից=հայ. ջուր+ζης, ξης= ավեստ. xšaya- «իշխող, իշխան, թագավոր»)—ջուր. -ոյ[37].

---

32 Բառը համարվում է ոչ փռյուգական, թերևս կառակով կարծված՝ հուն. ζάλη-ի («ալեկոծություն») համեմատությամբ, ուստի և որոշ չափով կասկածելի է համարվում հայերեն բառի հետ համեմատելը։ Հմմտ. և Ծափի։

33 Հուն. բառը հանված են բխեցնելու ակնառուդերենից [հ.-ե. (s)kel- «կտրել», որտեղից հայ. քաղեմ. քեղի.ջցեղուամ]։

34 [illegible] տառադասությունը ζέτνα-ը ազգում է ճախչն «հնացայլ», որ չի ընդունում Օ. Հասսը (հնարավոր է համարում բխեցնել հ.-ե. g'hē- «բերանը բանալ, հորանջել» արմատից)։

35 Եթե փռյուգականի և դրա հետ համեմատվող հին հնդկական angam «անդամ» բառի համար վերականգնվող angʷ- ձևը կապված է ang- «թեքել» բառի հետ։

36 Սակայն թրակ. բառը հնարավոր են համարում բխեցնել նաև հ.-ե. uer- «փակել, ծածկել, պաշտպանել, փրկել» արմատից։ Կասկածով uer- «բարձր տեղ» արմատից են բխեցնում նաև փռյուգ. βρια «վեր, վերև» բառը։

37 Եթե ջուր բառը ծագում է gʷhedoro- ձևից և ոչ ŭdro-ից։

ισγει «փրինգ» (հ.-ե. s-gʷhei)[38]—ին-քն, սեռ. ին-քեան. իր.

καραιβας «հովվական ցուպ, մահակ» (հ.-ե. gel- «սեղմել, սեղմվել. կլոր բան»)—կոզափոց «կեռ»[39].

Κωκας (անձնանուն. հմմտ. թրակ. Coca, Κοκκας, Cocus, կար. Κωκος անձնանունները)—կոկոն, կոնդում[40].

λαυ- «ժողովուրդ (?)» (Λαυαιτααι բառի մեջ, որը որպես Մի-դասի մակդիր Պ. Կրեչմերի կողմից մեկնվում է որպես «ժողովր-դասին»)—լաւ[41].

μορα, μορου(ν) «չարություն (?)», μοροσα «չար մտադրու-թյամբ (?)» (հ.-ե. mer-, mer-s- «խանգարել, բարկացնել, արհա-մարհել, մոռանալ») (?)[42]—մոռանամ.

ου-κε «ոչ էլ» (=հուն. οὔ-τε)—ոչ.

σεμουν «սրան», այլև σα, σι, σαι, σαν (ցուցականի ձևեր) (հ.-ե. k'o-, k'e- «սա»)[43]—սա. սոյն, ար. ամէն, այս, -ս.

τιγ- (ετι-ττε-τιγ-μενος<*eti-ste-tig-menos «նշանակիր, նշա-վածը բառում), հ. փռյուգ. εξ-ετιζ, τιζες (հ.-ե. «ծակել, սուր»)—ստեծ «սուսայրի կարճ ձողը, որով գործվածքը դարձնում կամ պըր-կում են»[44].

---

38 Ըստ Օ. Հաասի, բայց հ.-ե. այս ձևի վերականգնումը կասկածելի է։

39 Հայ. բառի նոր ստուգաբանությունը մերն է։ Հայունին համեմատում է հուն. κολοφών «գագաթ, գնդակ» բառի հետ (Մեր „Очерки по истории дописьменного периода армянского языка" գրքում, 1967, էջ 145. Հայ. բառը դիտվում է որպես միջնհայկական հնդեվրոպական չերաի բառ՝ հ.-ե. (s)kel- «թեքել, ծռել. մարմնի հոդավոր անդամ» արմատից։

40 Անձնական բառ, որ տարածված է զանազան լեզուներում և լեզվա-բնատարածքներում։ Ամենայն, ըստ Դ. Դեչևի (Die thrakischen Sprachreste, Wien, 1957, էջ 251), կապված չէ հուն. κόκκος «կորիզ», κόκκων «նռան հա-տիկ» բառերի հետ։ Հմմտ., թերևս, հ.-ե. gōg-, gug- «կլոր բան», geng-, gong- «գունդ, գունդ», geu- «ծռել»։

41 Փռյուգ. λαυ-ը համեմատում են հուն. λαός, λεώς «ժողովուրդ» բա-ռի հետ։ Հիշյալ համեմատությունը հնարավոր է, եթե այդ բառը կապված է հուն. λαύειν «վայելել լավը» և ἀπο-λαύω «վայելել» բառերի հետ։ Հնարավոր է նաև, որ փռյուգ. բառի իմաստը «ժողովուրդ» չէ։

42 Փռյուգ. բառի ստուգաբանությունը հիպոթետիկ է։

43 Ուրիշ հետազոտողներ (այդ թվում Օ. Հաասը) բխեցնում են հ.-ե. so- ցուցական արմատից։

44 Ըստ Օ. Հաասի, որ *τιγ- արմատը հանում է stigiō-ից, բայց հայ. ծ-ն, եթե համեմատությունը ճիշտ է, ցույց է տալիս նաև զուգահեռ steig'- ձևը։ Հմմտ. նաև Հեսիքիոսի θιγματών „«բծերի» բառաձևը՝ առանց լեզվական պատկանելության նշման։

4. Բացակայում է բաղաձայնների փռյուգական տեղաշարժը, որ կասկածելի է դարձնում առաջարկվող ստուգաբանությունը.

δίως, δεως, δεω «աստվածների(ն)» (հ.-ե. dei- «շողալ», dejeu-, djeu- «շողացող, որպես աստված պաշտվող երկինք, շողացող օր»)[45]—տիւ.

γέλαρος «տալ, եղբոր կին» (Հեսիքիոս) (համեմ. և γάλαρος, թերևս γελαFος-ի սխալագրությունը) (հ.-ե. gelōu- «տալ»)[46]—տալ։

§ 9. Կան փռյուգա-հայկական բառային մի շարք զուգահեռներ, որոնց գոյությունը հայերենում պետք է բացատրել որպես անմիջական կամ միջնորդված փոխառություն փռյուգերենից կամ թերևս փռյուգական այլ բառերին զուգահեռ բառեր ունեցող այնպիսի լեզուներից, որոնք չեն պահպանվել։ Հատուկ անունների դեպքում հնարավոր է և պատահական զուգադիպություն։

1. Հայկական հասարակ անուններ.

Γδαν (=հուն. χθών «երկիր, հող, գետին») (հ.-ե. g'hdēm- «երկիր, հող, գետին»)—գետին, -ոյ.

γρ- «գրել» (γεγρειμενο- «գրված», γεγαριτμενο- «նշված, նշավոր» բառաձևերում և Γριμενοδορίται անվանման մեջ) (հ.-ե. g'her- «քերել, քերծել»)—գիր, -ոյ.

Παφθε (*pl̥tu-ei) (Γῆ երկրի դիցուհու մականունը) (հ.-ե. pelə-, plā-, plat-, plēt- «լայն և հարթ», որտեղից հայ. հող, լայն)—հարթ[47].

πουτρος «որդի, տղա» (*pu-tro-)—փոքր, սեռ. փոքու.

Σαβάζιος, Σαβάδιος, Σαουάζιος, Σεβάζιος (փռյուգ. դիցանուն)—աստուած, -ոյ.

2. Հայկական հատուկ անուններ.

Αζαρα, Εζαρα (հ.-ե. eg'hero- «լիճ», որտեղից հայ. եզր)—Ազարա (*Αζαρα—հայ. քաղաք Արտաշատից արևմուտք, Արաքսի ափին).

Αρασι (տեղանուն. համեմ. թրակ. *Αραζος, Arason)—Արասաքս (Arasaxe—կայան Կեսարիայից արևելք, այժմ Զերեզեկ գյուղ), թերևս նաև Արասխ, Երասխ (գետ).

---

45 Վ. Գեորգիևը հնարավոր է համարում և dhųesōis ձևից բխեցնելը։

46 Ստուգաբանությունը խիստ կասկածելի է, մանավանդ որ փռյուգերենին հատուկ տեղաշարժ չկա։

47 Իրանական փոխառություն չի կարող լինել, որովհետև իրան. փոխառությունները հաջորդել են հ.-ե. p > հայ. h անցմանը։

ἀργὰν «հսկել» (հայց.) (?) (հ.-ե. er- «շարժվել, շարժել, հուզել, բարձրացնել», որտեղից հուն. ὄρμενος «շարժվող»)—արմեն (ցեղանուն), Արա (անձնանուն)[48].

Βαβα (անձնանուն)—Բաբագ (անձնանուն՝ V դ. հիշված).

Βοῦτας, Βουτον (փռյուգիական անձնանուններ)—Բութ, Բուտ (անձնանուն)[49].

Δαδα, Δαδων (անձնանուն)—Դադէ, Դադիա (անձնանուն. Թադեոս առաքյալի աշակերտի անունը).

Δουδα (անձնանուն. համեմ. և թրակ. Δουδης, լիտ. Duda)—Դուդայ (կիլ. անձնանուն՝ XIII դարից)[50].

Μανες, Μανης (անձնանուն) (հ.-ե. men- «մտածել, հոգեպես հուզված լինել», որտեղից հայ. ի-մանամ)—Մանէս (անձնանուն՝ XVI դարից հիշված. Սսի Թորոս կաթողիկոսի որդու անունը).

Ὀτρεύς, Ὀτρῆος (անձնանուն, փռյուգ. թագավորի անունը՝ ըստ Հոմերոսի)—Ոտրիոս (անձնանուն, Փոքր Հայքի եպիսկոպոսի անունը), Ոտրեոս [անձնանուն, հայկական Մելիտինեի (Մալաթիայի) եպիսկոպոսի անունը][51].

Σαβάδιος, Σαβάζιος (դիցանուն)—Սաբաս (և Ἀσβάδης) (անձնանուն)[52]։

Ավելորդ չենք համարում փռյուգա-հայկական ոչ ծագումնաբանական զուգադիպումների կապակցությամբ մի քանի խոսք ասել հայերենի՝ փռյուգիական մի քանի փոխառությունների մասին։

Սայլ[53] բառի մասին երկու կարծիք է հայտնվել։ Հայ-փռյուգական մերձավոր ցեղակցության վարկածի կողմնակիցները այդ բառը փռյուգ. համարվող σατῖνα «Մեծ արջի համաստեղություն» ու դրա հետ կապված σατίνη «կառք» բառերի հետ միասին բխեցնում են հ.-ե. k'at- «պտտվել, գլորվել» արմատից՝ ենթադրելով «մարտակառք» սկզբնական իմաստը և սայլ ու σατῖνα բառերի

48 Հմմտ. թրակ. Ἄρζας, Ἀρζος—պատահական նմանություն։

49 Ըստ Հ. Աճառյանի՝ ասոր. bud «եկեղեցական անոթ» բառից, բայց հնչյունական տեսակետից դժվար է հիմնավորել (բառավերջային խլացում)։

50 Կասկածելի է։ Ըստ Հ. Աճառյանի թերևս պրսկ. dūda «հին անդր-վական ցեղ» բառից։

51 Հայ. անձնանունների ստուգաբանությունը Հ. Աճառյանինն է։

52 Հ. Աճառյանը ծագումը համարում է անհայտ, Գ. Ղափանցյանը հակված է կապելու սաբեր բառի հետ։

53 Ընդհ. «Մեծ արջի և Փոքր արջի համաստեղությունները» իմաստը՝ արված նմանությամբ։

համար վերականգնելով փռյուգա-հայկ. *satilja նախաձևը: Այլ լեզվաբաններ հայ. բառը համարում են պարզապես փոխառություն[54]: Այժմ կարելի է հաստատված համարել, որ հիշյալ բառերին փռյուգական ծագում վերագրելը խիստ կասկածելի է: Չի կարելի ապացուցված համարել նաև հիշյալ բառերի «մարտակառք» նախնական իմաստը և այդ բառերը հ.-ե. k'at- արմատից բխեցնելու փորձը: Եթե հայ. սայլ բառը փոխառյալ է փոքրասիական որևէ լեզվից, ապա պետք է կարծել, որ միջձայնավորային t-ի փոխվելը j-ի և դրան հաջորդող ձայնավորի անկումը տեղի է ունեցել հնագույն հայերենի շրջանում՝ մ. թ. ա. XII դարից հետո:

Կառք բառը Հ. Հյուբշմանը և վերջերս O. Հաասը փոխառյալ են համարում գաղատացիներից, որոնք կելտական ծագում ունեն և մ. թ. ա. III դ. տեղափոխվել են Փոքր Ասիա: Սրան հակառակ Ա. Մեյեն և Հ. Աճառյանը պնդում են բառի լատինական ծագումը, ընդ որում լատ. բառը իր հերթին ծագում է կելտական աղբյուրից[55]:

Վերջին ժամանակներս պարզված է, որ սուին բառի բուն աղբյուրը մակեդոներենն է՝ անմիջաբար կամ միջնորդված կերպով: Այդ բառն ավանդված է ոչ միայն σιβύνα, συβίνη ձևերով, այլև σιγύνη ձևով, որ կիլիկիական է համարվում: Քանի որ մակեդ. բառի բուն իմաստն է «վարազորսի կարճ նիզակ», ուստի և O. Հաասը այդ բառը բարդված է համարում երկու մասից, որոնցից մեկը ծագում է հ.-ե. sū- «խոզ», մյուսը՝ gʷhen- արմատից կազմված gʷhoniā ձևից (հմմտ. հայ. գան)[56]:

Վերջապես փռյուգացիների անվանումը պահպանված է մի շարք տարբերակներով, որոնք սկսվում են β-ով և φ-ով: Վերջին դեպքում ենթադրվում է հունարենի ազդեցություն կամ սկզբնական β-ի նույնատիպ խլացում, ինչպես հայ. բարբառներում: Բան Βρύγες, Βρύγοι, Βρίγες, այլև տեղաշարժի ենթարկված Βρίγας, Βρύχαι ձևերը բխեցվում են հ.-ե. bhrūg- «վայելել, օգտվել» ձևից: Սակայն հաշվի առնելով Հեսիքիոսի մոտ տրված «ազատություն» իմաստը („Ἴβρος δὲ ὑπὸ Λυδῶν ἀποφαίνεται βρίγα λεγέσθαι τὸν ἐλεύθερον"), կարելի է ենթադրել երկու տարբեր ձևերի կոնտամինացիա՝

---

54 Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I մաս, 1940, էջ 141 և Հայ. արմատական բառարան, հատ. VI, էջ 71:

55 Հետաքրքրական է նշել, որ Հեսիքիոսը պահպանել է սատեմային հ.-ե. մի լեզվի պատկանող σαρσα: «կառք», այլև բառը, որ հիշյալ բառի համապատասխանն է (հ.-ե. k'ers- «վազել», k̑rso-s «կառք»):

56 O. Haas, LB, X, էջ 253—254:

հ.-ե. bhrūg- (bhreu- «կտրել» ձևից) և (s)p(h)reu-g-, -k- [(s)p(h)er- «ցանել, ցրել» արմատից], որոնցից լիտվ. sprūgsti «փախչել», լատվ. spraukt «փախչել, փրկվել, ազատվել»: Այս դեպքում հայ. փրկեմ բառի ազգակիցը կարելի է թերևս համարել փռյուգերենը:

§ 10. Փռյուգերենի և հայերենի միջև առկա են հետևյալ մերձավոր ընդհանրությունները[57]:

1. Հնչյունական տեսակետից մասնանշելի են բաղաձայնների տեղաշարժը՝ ձայնեղների մոտ այդ տեղաշարժի մասնակի սահմանափակումը, վանկարար ձայնորդների՝ a երանգն ստանալը. ə>a, ō>u[58] և բառավերջի m>n փոփոխությունները, s-ով սկսվող բաղաձայնական կապակցություններից առաջ ձայնավորի հավելումը (փռյուգերենում՝ i, հայերենում՝ ը) և այլն:

Հայերենի և նախափռյուգերենի հնչյունական համապատասխանությունները է՛լ ավելի բնորոշ են. հնչյունական տեղաշարժին միանում է քմայնացած ետնալեզվայինների վերածումը կիսաշփականների և շփականների, փռյուգա-պելասգյան համանմանասում eu-ի փոխվելը ou-ի կամ ou-ի (գրության մեջ ω, o)՝ հայերենի eu>ոյ փոփոխությանը զուգահեռ և այլն: Հմմտ. նաև նախաշեշտ վանկերում հայերենի ու-ի, ի-ի և փռյուգերենի տարածման որոշ վայրերում (այլև հունական որոշ բարբառներում) ω-ի, մասամբ նաև e-ի, ı-ի թուլացումը, Σίβρος (=հայ. սուրբ, -ոյ) գետանվան նաև Σίρβις հնչումը Սարդուրի մոտ (βρ>ρβ) և այլն:

2. Ձևաբանական տեսակետից հատուկ հիշատակության արժանի են երկու այնպիսի կարևոր զուգաբանություն (իզոգլոս), ինչպիսիք են անցյալ ժամանակի կազմությունը e նախահավելվածի օգնությամբ (հմմտ. հին փռյուգ. εδαες «կառուցեց» և հայ. եդ «դրեց»), միջին-կրավորական (մեդիոպասսիվ) սեռի կազմության հատուկ եղանակը r-ի միջոցով (հմմտ. փռյուգ. αβ-βερετορ և հայ. բերէր, բերիր): Ջ. Բոնֆանտեի և այլոց կողմից մատնանշվում է նաև փռյուգ. -μενος դերբայակազմ և հայ. -մն բայանվանակազմ ածանցների, դերանվանական տրական հոլովի -m-ի (հմմտ. փռյուգ. σεμουν և հայ. սմին) ընդհանրությունը և այլն:

---

[57] Հմմտ. G. Bonfante, „Armenian Quarterly", I, 1946, էջ 81 և հհ., O. Haas, Die Phrygischen Sprachdenkmäler, էջ 245 և հհ.:

[58] Ըստ Ջ. Բոնֆանտեի՝ այս գիծը առկա է նաև մակեդոներենում, հունարենի թեսալական բարբառում, թերևս նաև խեթա-լուվիական լեզուներում և այլն:

3. §§ 7—8-ում բերված բառային զուգադիպումների մեջ քիչ չեն այնպիսիները, որոնք ի հայտ են բերում կազմության, իմաստի, արմատի ձևավորման և այլ կողմերի մերձավորություն.

ἀνήρ «այր»—այր, սեռ. առն.

*γέρμα «ջերմ»—ջերմ, -ոյ.

δα(=τα) (որոշիչ հոդի արժեք ունեցող ցուցական)—դա.

θύραι «դռներ»—դուռն, հգն. դրունք.

ῥύγχος «քիթ»—ռունգն.

*ἄζαρα, ἄζαρα «լինձ (?)» («եղր» ?)—եղր. սեռ. եղեր.

*ἔλεινος «եղնիկ»—եղն.

κορύβαντες «զավակներ»—կորիւն.

με «մի»—մի՛.

ονομαν «անուն. դամբանագիր»—անուն, սեռ. անուան.

πυρ «կրակ»—հուր.

*σίρβις, *σίβρος «ջինջ»—սուրբ, -ոյ.

στερνα «արձան, հուշաքար, հուշարձան»—ստեղն:

§ 11. Նշված փռյուգա-հայկական հնչյունական, ձևաբանական և բառային մի շարք կարևոր զուգադիպությունների առկայությունը՝ չի կարելի ընդունել այն լեզվաբանների կարծիքը, որոնք փռյուգա-հայկական մերձավորությունը հասցնում են մինչև բարբառային ընդհանրության աստիճան:

1. Հիշյալ զուգադիպություններից շատերը հատուկ են ոչ միայն հայերենին ու փռյուգերենին, այլև ցեղակից այլ լեզուներին: Դրանց թվին են պատկանում, օրինակ, այնպիսի կարևոր զուգադիպություններ, ինչպիսիք են բաղաձայնների տեղաշարժը, վանկաբար ձայնորդների՝ a երանգն ստանալը, e նախահավելվածը, r-ով միջին-կրավորականը և այլն: Հետազոտողները մասնավորապես նշում են փռյուգա-հունական խիստ կարևոր զուգադիպությունների առկայությունը՝ ոչ միայն ընդհանուր e նախահավելվածը, με—μή ժխտականը, վանկաբար ձայնորդների՝ a երանգն ստանալը, որոնք հատուկ են և հայերենին, այլև ος—ὅς հարաբերականը, ο-ով հիմքերի οι-ով հոգնակի ուղղականը, αι-ով հոգնակի տրականը[59], -μενος-ով դերբայները, միջին սեռի -τω— -σθω կազմիչներով հրամայականը, բառային և շարահյուսական մի շարք կարևոր ընդհանրություններ և այլն: Առանձնապես մոտ է հունա-

[59] Հայերենում և հնդկականում s-ն բնութագրում է ներգոյականը, բայց ոչ տրականը:

րենը մակեդոնական փռյուգերենին, որին նույնպես հատուկ է շրթնայնացած ետնալեզվայինների (g^uh, g^u, k^u) փոփոխությունը առաջնալեզվային և շրթնային բաղաձայնների: Կարևոր է ասել, որ հայերենը հատուկ մերձավորություն է ցույց տալիս միայն նախափռյուգերենի հետ, մի մերձավորություն, որ բնութագրվում է հնչյունական, բառակազմական, բառային և թերևս ձևաբանական կարևոր զուգաբանությունների ամբողջությամբ: Բավական է մատնանշել տեղաշարժի, սատեմայնության, կարճ ձայնավորների և վանկարար ձայնորդների փոփոխության ընդհանրությունը:

2. Ընդհանուր գծերի կողքին փռյուգերենը և հայերենը ունեն շատ կարևոր տարբերիչ գծեր, որոնց մի մասը մատնանշվեց նախորդ կետում՝ հունա-փռյուգական զուգաբանությունների կապակցությամբ: Սրանց միանում են տեղաշարժի դրսևորման, դ-ի և ղ-ի փոփոխության առանձնահատկությունները, ē-ի, l-ի փոփոխության տարբերությունները, բուն փռյուգերենի կենտումայնությունը, e-ից և i-ից առաջ ետնալեզվայինների տարբեր փոփոխությունը և այլն, և այլն, որոնք խոսում են մասնավորապես հայերենի և բուն փռյուգերենի ու մակեդոնական փռյուգերենի միջև եղած տարբերությունների մասին:

Ինչպես արդեն նշվել է, «փռյուգերեն» անվամբ հայտնի լեզվական երեք շերտերի համար ընդհանուր են բաղաձայնների տեղաշարժը և ձայնորդների, ձայնավորների ու երկբարբառների փոփոխությունների վերաբերող մեծամասնությունը: Նախափռյուգերենը տարբերվում է մյուս երկուսից սատեմայնությամբ և մի շարք այլ հատկանիշներով: Մակեդոնական փռյուգերենը տարբերվում է մյուս երկուսից հատկապես շրթնայնացած ետնալեզվայինների փոփոխության տիպով:

Թեև «փռյուգերեն» անվամբ հայտնի լեզվական երեք շերտերից հայերենի հետ ամենից ավելի մոտ է նախափռյուգերենը, բայց այս դեպքում էլ հավանաբար չի կարելի խոսել միևնույն լեզվի բարբառների, այլ երկու մերձավոր լեզուների մասին: Նախափռյուգերենը զգալի մերձավորություն ունի նաև բալթիկ-սլավոնական լեզուների հետ և, կարելի է ասել, միջին տեղն է գրավում հայերենի և բալթիկ-սլավոնական լեզուների միջև. Համեմատապես նախափռյուգ. Κέζρα (Λέζρα)—լիտ. ēžeras (ռուս. озеро)—հայ. եզր. նախափռյուգ. ζέρβαν (ζέρβαντ)—ռուս. жеребе-

нок—հայ. կորիւն, նախամայրը. Ἐλεινος—հին սլավ. елень (ռուս. олень)—հայ. եղն[60]։ Բուն («հին») փոխառությունները (Մեծ Փոխառության փոխառությունները) և մակեդոնական (հունա-արևելյան) փոխառություն-ները, նույն իրավունքով կարելի է ասել, միջին տեղն են գրավում հայերենի և հունարենի միջև. ընդ որում մակեդոնական փոխառություն-ները ավելի մոտ է հունարենին։

Ընդհանուր առմամբ փոխառական երեք շերտերը,—շնորհիվ հնդեվրոպական լեզվամիավորման շրջանում գրաված դիրքի, հունական և հայկական ցեղերի հետ ունեցած հնագույն համակեցության, այլև որոշ շրջանում միևնույն տիպի լեզվական միջավայրերի առկայության,—բնութագրվում են այնպիսի առանձնահատկություններով, որ մերձավորության և ընդհանրության տարբեր աստիճաններով նրանց կապում են հունարենի, հայերենի և բալթիկ-սլավոնական լեզուների, ապա նաև ալբաներենի և թրակերենի հետ։

[60] Հատկանշական է նշել փոխառ. Ξεννη (նք. առձնաձայնուն) և լիտվ. kiáune, ռուս. куница «կզաքիս» զուգահեռը, որի համար հմմտ. և բարբ. kwenr «կզաքիս»։

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ԽԵԹԱ-ԼՈՒՎԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ

§ 1. *Խեթա-լուվական լեզուներ ասելով հասկանում են առաջին հերթին խեթերենը (հիթիթերենը), լուվերենը, պալայերենը և հիերոգլիֆյան խեթերենը (հիերոգլիֆյան լուվերենը), որոնցից առաջին երեքը հայտնի են մ. թ. ա.* XVIII—XIII *դդ. փոքրասիական բևեռագիր արձանագրություններից, վերջինը՝ մ. թ. ա.* XIV—VIII *դդ. հիերոգլիֆյան զանազան տեքստերից, որոնք հայտնաբերվել են Փոքր Ասիայում և Ասորիքում (Սիրիա): Խեթա-լուվական լեզվախմբին են հատկացվում նաև մ. թ. ա.* I *հազարամյակում հունական այբուբենի ձևափոխված տարատեսակներով գրի առնված մի շարք լեզուներ՝ լիկիերենը և միլիերենը (լիկիերեն* B)[1] *(մ. թ. ա.* V—IV *դդ.) լիդիերենը (մ. թ. ա.* VII—II *դդ.), կարիերենը (մ. թ. ա.* VIII—IV *դդ.): Այսպիսով, խեթա-լուվական լեզուները գրության տիպով և ժամանակագրական հաջորդականությամբ բաժանվում են երկու խմբի, որոնք պայմանականորեն կարելի է կոչել վաղ խեթա-լուվական և ուշ խեթա-լուվական լեզուներ: Խեթա-լուվական լեզուները հայտնի են նաև «խեթական լեզուներ» և «հին անատոլիական հնդեվրոպական լեզուներ» անուններով:*

Վերջին ժամանակներս փորձեր են արվում խեթա-լուվական լեզուները խմբավորելու ըստ ցեղակցական մերձավորության: Տարբերում են երկու ենթախումբ՝ խեթական կամ խեթա-լիդիական (խեթերեն, պալայերեն, լիդիերեն, կարիերեն) և լուվական կամ լուվա-լիկիական (լուվերեն, հիերոգլիֆյան խեթերեն կամ հիերոգլիֆյան լուվերեն, լիկիերեն):

---

[1] *Վ. Գեորգիևը լիկիերենը համարում է երկու տարբեր լեզուների խառնուրդ, որոնցից մեկը խեթա-լուվական է, մյուսը մոտ է պելազգերենին. հմմտ.* В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, *էջ 159—162:*

Որոշ գիտնականներ ոչ միայն խոսում են էտրուսկերենի հնդեվրոպական բնույթի մասին, այլև մերձավոր կապեր որոնում նրա և խեթական ենթախմբի լեզուների միջև: Դեռ ավելին. Վ. Գեորգիևը հանգել է նույնիսկ էտրուսկերենի՝ խեթերենի հետագա զարգացման շառավիղը լինելու վարկածով[2], որ ընդունելություն չի գտել գիտական շրջաններում:

Տողերիս գրողը խեթա-լուվիական լեզուների շարքն է դասում նաև հայասերենը, որ այժմ հայտնի է միայն խեթական սեպագիր արձանագրություններում մ. թ. ա. XIV—XIII դդ. հիշատակված հատուկ անուններով (անձնանուններ, դիցանուններ, տեղանուններ)[3]:

§ 2. Խեթա-լուվիական բնագրեր առաջին անգամ հայտնի են դարձել 1906—1912 թթ. Բողազքյոյ կոչված վայրում (Անկարայից 150 կմ արևելք) Հ. Վինկլերի կատարած պեղումների հետևանքով: Հայտնաբերվեց խեթական թագավորների գրադարանը՝ շուրջ 13 000 կավե աղյուսներով: Հետագայում դրանց թիվը ավելացավ ևս 3000-ով:

Խեթերենի վերծանման և լեզվի բնույթի պարզաբանման պատիվը պատկանում է չեխ գիտնական Բ. Հրոզնուն, որ 1915 թ. նախնական հաղորդում է կատարում իր ուսումնասիրության արդյունքների մասին, իսկ երկու տարի անց հրատարակում է խեթերենին նվիրված մի ծավալուն աշխատություն[4]: Պարզվում է, որ խեթերենը հնդեվրոպական լեզու է, թեև նրա բառապաշարի մեջ մեծ չափով են հանդիպում ոչ հնդեվրոպական տարրերը: Այդ լեզուն կրողներին վերագրվող «խեթ» անվանումը իրականում պատկանում է խեթական պետության բնիկներին, որոնց լեզուն հնդեվրոպական չէ և արմատապես տարբերվում է հին անատոլիական հնդեվրոպական լեզուներից. խեթերը այդ լեզուն կոչում էին «խաթթերեն» (ḫattili), իրենց լեզուն՝ «նեսերեն» (nāšili կամ nešumnili): Գիտական գրականության մեջ «խաթթերենի» կողքին գործածվում է նաև «նախախեթերեն» անունը, որ պետք է անհաջող համարել:

---

[2] V. Georgiev, Hethitisch und Etruskisch, Sofia, 1962.

[3] G. B. Jahukian, The Hayaša Language and its Relation to the Indo-European Languages, „Archiv orientálni", 1961, № 3, էջ 353—403: Վերաշարադրված տարբերակը՝ Г. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к и.-е. языкам, Ереван, 1964.

[4] B. Hrozný, Die Sprache der Hethiter, ihr Bau und Zugehörigkeit zum indogermanischen Sprachstamm, Leipzig, 1917.

Բևեռագիր տեքստերում, բացի խեթերենից, հայտնաբերվեցին նաև երկու այլ հնդեվրոպական լեզուների՝ լուվիերենի և պալայերենի նմուշներ։ Դրանցից հատկապես առաջինի ուսումնասիրությունը այժմ մեծ առաջադիմություն է կատարել։

§ 3. Հիերոգլիֆային խեթերենի տեքստերը հայտնի են դեռևս XIX դ. կեսերից, բայց դրանց ուսումնասիրությունը երկար ժամանակ, որևէ դրական արդյունքի չէր հասցնում։ Առաջադիմություն կատարվում է միայն XX դ. 30-ական թվականներից, երբ գտնվում են վերծանման ճիշտ ուղիները։ Հ. Բոսերտի կողմից 1947 թ. Կարաթեփեում հայտնաբերված երկլեզվյան արձանագրությունը ճշգրտում է նախորդ փորձերը և նպաստում հետագա մեկնաբանություններին։

§ 4. Տարբեր է եղել ու շրջանի խեթա-լուվիական լեզուների տեքստերի ընթերցման ու մեկնաբանության ճակատագիրը։ Եթե լիկիերենի ուսումնասիրությունը առանձնակի առաջադիմություն է կատարում XIX դարից սկսած, ապա լիդիերենի տեքստերի մեկնաբանությունը սկսվում է առաջին համաշխարհային պատերազմից հետո և կարճ ժամանակում զգալի արդյունքներ տալիս։ Կարիական տեքստերը, չնայած նրանց վրա կատարված բազմաթիվ աշխատանքներին, երկար ժամանակ գիտական ճշգրիտ մեկնաբանության չէին ենթարկվում. միայն վերջին ժամանակներս այդ բնագավառում խիստ կարևոր արդյունքներ ձեռք բերվեցին ռուս երիտասարդ գիտնական Վ. Վ. Շևորոշկինի կողմից[5]։

§ 5. Հայերենի և խեթերենի փոխհարաբերության հարցը գիտնականների ուշադրությունը գրավել է դեռևս այն շրջանում, երբ խեթերենի գիտական ուսումնասիրության հիմքերը չէին դրվել, և չէին տարբերում բուն խեթերենը հիերոգլիֆային խեթերենից։ Այսպես, Պ. Եսենը XIX դ. վերջերին իր «Խեթերը և հայերը» աշխատության մեջ[6] հայտնում է այն կարծիքը, թե խեթերը հայերի նախնիներն են։ Ըստ Եսենի՝ խեթերի անունը, որ այն ժամանակ հայտնի եգիպտական, ասորական և ուրարտական արձանագրություններում հանդես էր գալիս ḫt, ḫate, ḫatti, ḫati ձևերով (ասորերենում՝ ḫittim), օրինաչափ կերպով հանգել է ḫay անվանը՝ հայերենի համար սովորական t > y անցմամբ։ Հիերոգլիֆային նշան-

[5] Տե՛ս հատկապես В. В. Шеворошкин, Исследование по дешифровке карийских надписей, Москва, 1965.

[6] P. Jensen, Hittiter und Armenier, Strassburg, 1898.

ները համարելով խեթական (իմա՛ հայկական) մտքի ստեղծագոր-ծություն՝ Յենսենը դրանք հատուկ քննության նյութ է դարձնում. այդ նշանները նա բաժանում է երեք խմբի և փորձում որո-շել դրանց արժեքը: Այս կապակցությամբ հարկ ենք համարում հիշատակել այն հաճախակի փորձերը, որոնց նպատակն է հայկական ձեռագրերում պահպանված «իմաստունների նշանագրերը» («նշանագիրք իմաստնոց») կապել խեթական հիերոգլիֆների հետ: Հարցի վերջնական լուծումը թողնելով ապագային՝ ուշադրություն ենք հրավիրում երկու հանգամանքի վրա. առաջին՝ «իմաստնոց» նշանագրերի՝ Հ. Աճառյանի կողմից կատարված վերլուծությունը պարզել է, որ դրանք գերազանցապես միջին շրջանի աստղաբանական նշաններ, պատկերագրեր ու գաղափարագրեր են, և որ պատկերա-գրային ու գաղափարագրային արժեք հնարավոր է վերագրել մի-այն երեք տասնյակից ոչ ավելի նշանների[7]. երկրորդ՝ մինչև այժմ կատարված զուգադրումները որևէ համոզիչ արդյունքի չեն հան-գեցրել:

Ավելորդ չենք համարում նշել, որ խեթական բնագրերի ար-ձանագրությունների հայտնագործումից ու վերծանումից հետո էլ որոշ գիտնականներ (Հ. Տաշյան, Ի. Մ. Դյակոնով)[8], մերժելով Յենսենի ընդհանուր սխալ տեսակետը, այնուամենայնիվ շարունա-կում են պաշտպանել նրա կարծիքը հայ անվան՝ hate, hati անու-նից ծագելու մասին:

§ 6. Եթե մի կողմ թողնենք հնդեվրոպական լեզուների, այն հայերենի ու խեթերենի համեմատական քերականության և ստու-գաբանության հարցերին նվիրված ընդհանուր բնույթի աշխատու-թյունները, որոնց մեջ այս կամ այն չափով արծարծվում է հայ-խեթական լեզվական առնչությունների հարցը, ապա հարկ կլինի խոսել այն աշխատությունների մասին, որոնք նվիրված են հատ-կապես այդ հարցին: Խեթագիտության առաջին իսկ քայլերից սկսած հայ-խեթական լեզվական առնչությունների հարցը գրավել է շատ հետազոտողների, որոնց մեջ հատուկ հիշատակման

---

[7] Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 22—59:

[8] Հ. Տաշյան, Ուսումն դասական հայերէն լեզուի, Վիեննա, 1920; Ի. Մ. Դյակոնով, Խեթերը, փռյուգացիները և հայերը, ՀՍՍՀ ԳԱ «Տե-ղեկագիր», 1956, № 11 (ռուս. տարբերակը տե՛ս „Переднеазиатский сбор-ник"-ում, Москва, 1961, էջ 333—368):

արժանի են Ն. Մարտիրոսյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Տ. Շուլտհայսը[9]։

Այս բոլոր հետազոտողների ձեռք բերած արդյունքները կարևոր համարելով հանդերձ՝ չենք կարող չնշել, որ այնուամենայնիվ կարիք է զգացվում հարցի հանգամանալից և գիտության արդի նվաճումներին համապատասխանող քննարկման։

1. Ն. Մարտիրոսյանը, լինելով այս բնագավառի նախակարապետներից մեկը, չունի մեթոդի ճշգրտություն և հենվում է գերազանցապես արտաքին նմանությունների վրա։ Նա հատկապես չի տարբերակում բնիկ լեզվից ժառանգված զուգահեռները փոխառությամբ բացատրվող զուգադիպություններից։ Այսպես, խեթ. parku- —հայ. բարձր, խեթ. paḫḫur—հայ. հուր, խեթ. genu—հայ. ծունկ և այլն տիպի զուգահեռների հետ միասին նա առանց տարբերակման բերում է հայերենում ակնհայտորեն փոխառության հանգեցնող զուգահեռներ՝ խեթ. ušk- «տեսնել»—հայ. ուշ-ք, խեթ. pai- —հայ. պահեմ, խեթ. ṷar- —հայ. վառ և այլն։ Կան ակնհայտորեն սխալ զուգադրումներ, ինչպես՝ խեթ. karū «կանուխ»—հայ. գարուն, որոնցից երկրորդը ծագում է հնդեվրոպական *u̯esr- նախաձևից։

2. Գ. Ղափանցյանի համեմատությունները, բավականաչափ լայն լինելով հանդերձ, չեն հենվում որոշակի չափանիշների վրա։ Գ. Ղափանցյանը հետևողականորեն չի անցկացնում հնչյունական ստույգ օրենքներ սահմանելու սկզբունքը, ելնում է խեթերենի և հայերենի՝ «ասիանիկ» լեզուներ լինելու սխալ գաղափարից, հստակ տարբերակում չի դնում բնիկ բառերի և փոխառությունների

---

[9] Ն. Մարտիրոսյան, Հայերենի հարաբերությունը հիթիթերենի հետ, «Հանդես ամսօրյա», 1924, № 9—10, էջ 433—459, և 1926, № 7—8, էջ 369—375։ Նույնի Հայ լեզվի հնագույն պատմության մասին, «Հանդես ամսօրյա», 1929, № 8—9, էջ 532—545։ Հ. Աճառյան, Նոր հրատարակություններ հիթիթերենի մասին, «Նորք», 1925, № 5—6, էջ 383—393։ Նույնի Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, 1940։ Г. Капанцян. Chetto-armeniaca, Ереван, 1931։ Նույնի Хеттские боги у армян, Ереван, 1940։ Նույնի Հայերի և հայերենի ծագման մասին, «Սովետական գրականություն», 1941, № 1, էջ 47—62։ Նույնի К происхождению армянского языка, Ереван, 1946։ Նույնի Хайаса—колыбель армян, Ереван, 1947։ Նույնի Историко-лингвистические работы, Ереван, 1956։ Նույնի Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961։ T. Schultheiss, Hethitisch und Armenisch, „Zeitschrift für vergleichende Sprachforschung", B. 77, H. 3/4, 1961, էջ 219—234։

միջև. խեթական բառերի իմաստը մեկնաբանելիս երբեմն թույլ է տալիս անհարկի ազատություն: Ճիշտ է, ամենաքիչն ընդգրկում, հասկանալի էր «Հայոց լեզվի պատմության» մեջ նա փորձում է սահմանազատել բնիկ բառերն ու փոխառությունները և նույնիսկ նշել փոխառությունների տարբեր տիպեր, բայց մեթոդի թերությունները հնարավորություն չեն տալիս հասնելու դրանց հետևողական տարբերակմանը:

3. Հ. Աճառյանի և Տ. Ճուլհայանի համեմատությունները ելնում են ճիշտ նախադրյալներից, բայց պակասավոր են: Առանձնապես պետք է նշել, որ Հ. Աճառյանի աշխատությունների լույս տեսնելուց հետո խեթագիտությունը հսկայական նվաճումներ է ունեցել, իսկ Տ. Ճուլհայանի բոլոր եզրակացությունները հենվում են միայն Գ. Ղափանցյանի տվյալների վրա:

4. Որպես ընդհանուր թերություն պետք է նշել, որ հետազոտողները սովորաբար բավարարվում են միայն խեթերենի տվյալներով՝ առանց դիմելու խեթա-լուվիական լեզվախմբի մյուս լեզուներին:

Այսպիսով, հայերենի և խեթա-լուվիական լեզուների փոխհարաբերության ուսումնասիրությունը շարունակում է մնալ համեմատական լեզվաբանության առաջնահերթ խնդիրներից մեկը: Ընդհանրացնել այդ բնագավառում կատարված ուսումնասիրությունների արդյունքները, դրանք ճշգրտել ու լրացնել խեթագիտության և հայագիտության վերջին շրջանի ձեռք բերած արդյունքներով, հստակ կերպով սահմանազատել բնիկ և փոխառյալ բառերը, օգտագործել խեթա-լուվիական մյուս լեզուների տվյալները, — ահա այն հարցերը, որոնք դրված են մեր առջև և որոնց լուծումը նպատակն է կազմում ներկա ուսումնասիրության: Հայերենի և խեթա-լուվիական լեզուների քերականական առնչությունների հարցը սերտորեն կապված համարելով հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության ընդհանուր հարցերի հետ՝ մենք ներկա ուսումնասիրության մեջ նկատի կունենանք միայն բառային ընդհանրությունները:

§ 7. Քանի որ և՛ հայերենը, և՛ խեթա-լուվիական լեզուները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին՝ կազմելով անկախ ճյուղեր, ապա նրանց միջև գոյություն ունեցող բառային ընդհանրությունները կարող են լինել երկու տիպի՝ 1) ծագումնային (ցեղակցական) և 2) ոչ-ծագումնային (ոչ-ցեղակցական): Ոչ-ծագումնային ընդհանրությունները ընդգրկում են ա) փոխառու-

թյունները լայն իմաստով՝ հայերենի փոխառությունները խեթա-լուվական լեզուներից և հայերենի ու խեթա-լուվական լեզուների փոխառությունները այլ լեզուներից, բ) ենթաշերտային (սուբստրատային) ազդեցության արդյունք հանդիսացող բառերն ու բառաձևերը (փոքրասիական բնիկներից խեթա-լուվական լեզուներին ու հայերենին անցած բառերը և Հայաստանի բնիկներից հայերենին անցած բառերը՝ այդ բնիկների ձուլման և էթնիկական փոխազդեցության պրոցեսում)։ Կարելի է ասել, որ ծագումնային և ոչ ծագումնային ընդհանրությունների տարբերակման հարցը համեմատական լեզվաբանության զարգացման այդ էտապում ընդհանուր առմամբ կարող է գոհացուցիչ լուծում ստանալ։ Դժվարությունները կապված են հայերենի և խեթա-լուվական լեզուների պատմական փոխհարաբերության ընդհանուր բարդության և խեթա-լուվական լեզուների հնչույթային համակարգի իրական բնույթի՝ դեռևս լրիվին պարզ չլինելու հետ։ Այսպիսի դեպքերը կնշվեն ստորև՝ կոնկրետ քննարկման ընթացքում[10]։

Հայերենի և խեթա-լուվական լեզուների ոչ-ծագումնային ընդհանրությունների քննությունը թողնելով առանձին հոդվածի՝ այստեղ կզբաղվենք ծագումնային ընդհանրությունների հարցով։

§ 8. Հայերենի և խեթա-լուվական լեզուների ծագումնային ընդհանրությունների քննության ժամանակ բնականաբար որպես ելակետ և էտալոն պետք է ծառայեն հնդեվրոպական հիմնալեզվի վերականգնված նախաձևերը։ Հնդեվրոպական հիմնալեզուն բնութագրվում է հնչույթների հետևյալ տիպերով (կասկածելի վերականգնումները նշանակում ենք հարցականով). 1) բաղաձայններ՝ ա) պայթականներ՝ bh, dh, g'h, gh, $g^{u}h$, b(?), d, g', g, g^{u}, p, t, k', k, k^{u}, ph(?), th(?), k'h(?), kh(?), $k^{u}h$(?). բ) շփականներ՝ s, þ(?), đ(?). գ) ձայնորդներ՝ r, l, m, n, i̯, u̯ (վանկարար տարբերակներով՝

---

[10] Հետագա քննության ժամանակ խեթա-լուվական լեզուների համար հիմնական աղբյուրներ են ծառայելու հետևյալ աշխատությունները.

J. Friedrich, Hethitisches Wörterbuch, Heidelberg, 1952 (+ 1. Ergänzungsheft, 1957, 2. Ergänzungsheft, 1961). H. Kronasser, Vergleichende Laut- und Formenlehre des Hethitischen. Heidelberg, 1956. E. Laroche, Dictionnaire de la langue louvite, Paris, 1959. P. Meriggi, Hieroglyphisch-Hethitisches Glossar, 2. Aufl., Wiesbaden, 1962. R. Gusmani, Lydisches Wörterbuch, Heidelberg, 1964. В. В. Шеворошкин. Исследование по дешифровке карийских надписей, Москва, 1965 և ուրիշներ։

, ḷ, ṃ, ṇ, i, u). 2) ձայնավորներ՝ ա) բուն ձայնավորներ՝ e, ē, o, ō, a, ā. բ) երկբարբառներ՝ ei, eu, oi, ou, ai, au և այլն:

Ելակետային հնչույթային այս համակարգի վերաբերյալ հարկավոր է իմանալ նաև հետևյալը.

1) Հնդեվրոպական լեզուները սովորաբար բաժանում են երկու խմբի՝ կենտումային և սատեմային. առաջին գնդում քմայնացած ետնալեզվայինների դիմաց (g'h, g', k', k'h) առկա են ետնալեզվայիններ, երկրորդ գնդում՝ առաջնալեզվային շփականներ, կիսաշփականներ և նույնիսկ պայթականներ. խեթա-լուվիական լեզուները պատկանում են կենտումային խմբին, հայերենը՝ սատեմային խմբին (համմ. հ.-ե. *k'erd-> խեթ. kard- «սիրտ» և հ.-ե. *k'ērd-> հայ. սիրտ). Ճիշտ է, հիերոգլիֆյան խեթերենի մասին կարծիք է հայտնվել, որ այն սատեմային լեզու է, բայց հետազոտողները հակված են կամ որպես ապացույց բերվող սակավաթիվ բառերը համարել փոխառություններ, կամ հ.-ե. *k'-ի դիմաց š-ի առկայությունը բացատրել որպես հաջորդ u-ի ազդեցության արդյունք (բոլոր բառերում š հնչույթը գտնվում է u-ից առաջ): Կենտումային լեզուներում, այսպիսով, գործում է ետնալեզվայինների k: kᵘ հակադրությունը, սատեմային լեզուներում՝ k' :k հակադրությունը:

2) Հնդեվրոպական հիմնալեզվում, ինչպես նշվում է վերջերս, ամենայն հավանականությամբ չի եղել շնչեղ խուլերի, որպես անկախ հնչույթների շարքը. պետք է կարծել, որ դրանք եղել են պարզ խուլերի դիրքային և ուժեղացված (էմֆատիկ) տարբերակներ, որոնք անկախ հնչույթների են վերածվել առանձին լեզվախմբերում: Այս է պատճառը, որ հ.-ե. շնչեղ խուլերի համար տարբեր լեզուներում որոշակի համապատասխանություններ չկան:

3) Այսպես կոչված կոկորդայինների հիպոթեզի կողմնակիցները առանձնացնում են հնդեվրոպական հիմնալեզվի զարգացման հնագույն շրջանի համար հատուկ կոկորդային տիպի հնչյուններ (մեկից մինչև հինգ), որոնք խեթերենում պահպանվել են որպես ḫ, ḫḫ, հայերենում՝ որպես հ, ընդ որում որոշակի համապատասխանություններ առկա են ոչ բոլոր դեպքերում:

§ 9. Հայերենի (այժմ դեպքում հիմք է ընդունվում հայերենի գրի առնված հնագույն վիճակը՝ գրաբարը) հնչույթային համակարգը հնդեվրոպականի համեմատությամբ բնորոշվում է մի շարք առանձնահատկություններով, որոնք արդյունք են հայերենի՝ որպես անկախ լեզու կրած փոփոխությունների:

1) Հայերենի բաղաձայնական համակարգի համար ամենից առաջ բնորոշ է այսպես կոչված տեղաշարժը, այն է՝ հ.-ե. բաղաձայնների հիշյալ շարքերի մեկ աստիճան դեպի ձախ տեղափոխվելը՝ հ.-ե. bh, dh, gh, gh ($g^{u}h$) > հայ. բ, դ, գ. հ.-ե. b, d, g (g^{u}) > հայ. պ, տ, կ. հ.-ե. p, t, k (k^{u}) > հայ. հ, թ, ք: Հայերենի բաղաձայնական տեղաշարժը ունի մի շարք առանձնահատկություններ. ա) հ.-ե. p-ն վերածվում է ոչ թե փ-ի, ինչպես սպասելի էր, այլ հ-ի, որ ենթադրում է հնչյունային և հնչյունական հատուկ նախադրյալներ կամ ենթաշերտային (սուբստրատային) ազդեցություն. բ) այսպես կոչված շնչեղ խուլերը կրում են սովորական խուլերից տարբեր փոփոխություն՝ ph, th, kh ($k^{u}h$) > փ, թ, խ. գ) հ.-ե. խուլ պայթականները՝ p, t, k (k^{u}) հետձայնորդային դիրքում փոխվում են ձայնեղների՝ բ, դ, գ, ընդ որում ռնգայիններից հետո երկրորդաբար տեղի է ունենում ձայնեղների և խուլերի չեզոքացում. դ) հ.-ե. sp, st, sk կապակցություններից առաջին երկուսում p-ն և t-ն տեղաշարժի չեն ենթարկվում, իսկ sk-ն (այլև sk'-ն, sk^{u}-ն) փոխվում են ց-ի. ե) հ.-ե. p-ն և t-ն բառամիջի տարբեր դիրքերում տալիս են յ (միջձայնավորային դիրքում) և ւ (բաղաձայնից առաջ):

2) Հայերենի բաղաձայնական համակարգի համար բնորոշ են քմայնացած բաղաձայնների շփականացումն ու կիսաշփականացումը հետևյալ ձևով՝ հ.-ե. g'h, g', k' > ձ (բառամիջում՝ զ), ծ, ս. հ.-ե. gh (e-ից, i-ից, i̯-ից առաջ գտնված դիրքում), g (e-ից, i-ից, i̯-ից առաջ գտնված դիրքում), k (i̯-ից առաջ գտնված դիրքում) > հայ. ջ (բառամիջում՝ ժ), ճ, չ. այլ կերպ ասած՝ հ.-ե. քմայնացած բաղաձայններից առաջանում են սուլական կիսաշփականներ ու շփականներ, հ.-ե. ոչ քմայնացած ետնալեզվայիններից՝ դրանց հետագա քմայնացման հետևանքով՝ շշական կիսաշփականներ և շփականներ[11]: Կիսաշփականները կարող են առաջանալ նաև առաջնալեզվայինների քմայնացման հետևանքով (համեմ. *dhi > հայ. ջ):

3) Հ.-ե. շփականները հայերենում ներկայացված են հետևյալ կերպ. ա) s-ն հայերենում բառասկզբում՝ ներկայացված է որպես հ, յ կամ զրո, բառամիջում՝ որպես զրո, բառավերջում՝ որպես ք. բ) հ.-ե.

---

11 Հնչյունական այս օրենքը սահմանված է հեղինակի կողմից նրա «Очерки по истории дописьменного периода армянского языка» գրքում, Երևան, 1967:

ոչ-վանկարար (բաղաձայն) r, l, m, n, i̯, u̯ ձայնորդները սովորաբար ներկայացված են որպես ր, լ (ղ), մ (բառավերջում՝ ն), ն, յ, գ, ընդ որում հ.-ե. rs կապակցությունը տալիս է հայ. ռ կամ րշ, sr կապակցությունը՝ ռ. գ) հ.-ե. վանկարար (ձայնավոր) r̥, l̥, m̥, n̥, i, u ձայնորդները ներկայացված են որպես ար, ալ (աղ), ամ (ան), ան, ի, ու:

4) Հ.-ե. ձայնավորները և երկբարբառները հայերենում ներկայացված են հետևյալ կերպ. ա) հ.-ե. կարճ e, o, a ձայնավորները ներկայացված են որպես ե, ո, ա (ռնգայիններից առաջ՝ ի, ու, ա), երկար ē, ō, ā ձայնավորները՝ որպես ի, ու, ա. բ) հ.-ե. երկբարբառների կրած մասնակի փոփոխություններից նշելի են ei, oi > է և eu, ou > ոյ անցումները:

§ 9. Խեթա-լուվական լեզուների հնչույթային առանձնահատկությունների նկարագրությունը կապված է որոշ դժվարությունների հետ: Ամենից առաջ՝ եթե հայկական ճյուղը ներկայացված է միայն մեկ լեզվով, ապա խեթա-լուվականը կազմում է լեզուների մեկ ամբողջություն: Այս դեպքում կամ պետք է օգտվել այդ լեզուների համար վերականգնվող ընդհանուր նախաձևերից, կամ հիմք ընդունել լեզուներից մեկը, և մյուս լեզուների տվյալները բերել նրա հետ կապված: Քանի որ խեթա-լուվական ընդհանուր նախաձևերի վերականգնումը առայժմ չի կարելի կատարել անհրաժեշտ լրիվությամբ ու ճշգրտությամբ, մենք ընտրում ենք երկրորդ ուղին և համեմատության համար հիմք ընդունում խեթերենը: Սակայն խեթերենի հնչույթային համակարգի պատկերը մեզ համար լիովին պարզ չէ: Բևեռագրությունը, փոխ առնված և հարմարեցված լինելով խեթերենին, անկատար ձևով է արտացոլում նրա հնչույթային համակարգը. անհրաժեշտ հետևողականություն չկա ձայնեղությունն ու խլությունը (եթե այդ հակադրությունը իրոք գոյություն է ունեցել) կամ շնչեղությունն ու ոչ-շնչեղությունը նշանակելու հարցում. լավ չեն տարբերակվում e և i ձայնավորները, այլև չկա o և u ձայնավորների տարբերակում, լիովին պարզ չէ ḫ և z բաղաձայնների հնչումը (հնարավոր է, որ այդ նշանների տակ թաքնված լինեն տարբեր տիպի հնչյուններ), կան միևնույն բառերի տարբեր տիպի գրություններ և այլն, և այլն: Ճիշտ է, է. Ստուրտևանտը բաղաձայնների պարզ և կրկնակի գրությունը փորձում է դիտել որպես հնչույթային որոշակի հակադրության արտացոլում, բայց նախ՝ լիովին պարզ չէ այդ հակադրության իսկական բնույթը, երկրորդ՝ տարբերակումն անց է

կացվում միայն ոչ բառասկզբնային դիրքում, երրորդ՝ ստուգաբանության օրինակները այդ օրենքի կիրառման հետևողականություն ցույց չեն տալիս, չորրորդ՝ ոմանք գրության այդ տարբերությունները կապում են շեշտի դիրքի հետ։ Վերջին ժամանակներս տարբեր հետազոտողներ (Ա. Հոյրեն, Հ. Միխայլերգեր, Թ. Գամկրելիձե) փորձում են ցույց տալ խեթերենի բաղաձայնական համակարգի տարբեր տեղաշարժեր։ Այսպես, Թ. Գամկրելիձեն, խոսելով բաղաձայնների խեթական տեղաշարժի մասին, այն համեմատում և տարբերում է հայկական և գերմանական տեղաշարժերից։ «Ընդունելով հնդեվրոպական բաղաձայնների հայկական և գերմանական տեղաշարժերից,— գրում է նա,— բաղաձայնների խեթական տեղաշարժի պրոցեսը կարելի է պատկերացնել հետևյալ կերպ. հ.-ե. խուլ պայթականները՝ *p, *t, *k, *kᵘ̯ տվել են համապատասխան շնչեղ խուլեր՝ ph, th, kh, khᵘ̯, որոնք խեթական գրության մեջ արտահայտվել են տվյալ բաղաձայնին համապատասխանող նշանի կրկնությամբ[12]. հ.-ե. ձայնեղ պայթականները՝ (*b)[13], *d, *g, *gᵘ̯ փոխվել են խուլերի՝ (p), t, k, kᵘ̯, որոնք գրության մեջ արտահայտվում են համապատասխան բաղաձայնների պարզ գրությամբ (մեծ մասամբ պայթականների նշաններով). հ.-ե. շնչեղ-պայթականները՝ *bh, *dh, *gh, *gᵘ̯h ապաշնչեղացման հետևանքով տվել են մաքուր ձայնեղ պայթականներ, որոնք իրենց հերթին փոխվել են խուլ պայթականների՝ անհայտ պատճառների ազդեցության տակ, որոնք նույն տիպի են, ինչ հ.-ե. ձայնեղ պայթականների խուլերի փոխվելը պայմանավորող պատճառները»[14]։

1) Այսպիսով, հ.-ե. բոլոր չորս կարգի պայթականների դիմաց խեթերենը բառասկզբում ունի p (b), t (d), k (g), ku (gu), ընդ որում k-ի և kᵘ̯-ի դիմաց երբեմն կարող են հանդես գալ խեթ. ḫ-ն և ḫu-ն։ Բառամիջում, ինչպես նշվեց, կրկնակ և ոչ կրկնակ գրությունը դիտվում է որպես հնչույթային որոշակի հակադրության (շնչեղների և ոչ-շնչեղների) արտացոլում։ Քանի որ խեթե-

---

12 Հ.-ե. *k-ն բառասկզբում որոշ դեպքերում փոխվել է շփական ḫ-ի՝ *kh-ից։

13 Դրեթե անհնար է գտնել *b-ով հ.-ե. հավաստի ձևեր։ *B հնչույթը ամենայն հավանականությամբ հ.-ե. բաղաձայնների համակարգում լրիվին բացակայում էր։

14 Т. В. Гамкрелидзе, Передвижение согласных в хеттском (неситском) языке, „Переднеазиатский сборник", Москва, 1961, էջ 252—253։

րենում կրկնակի բաղաձայնով բառ չի սկսվում, սակայն և հ.-ե. sd, st, sk կապակցությունները խեթերենում կարող են ներկայացվել išp, šip, išt, išk, šak, zak ձևերով, որոնք թերևս արտացոլում են հնչման որոշակի առանձնահատկություններ։ Հ.-ե. շրթնայնացված ետնալեզվայինները խեթերենում արտացոլված են որպես ku (gu)։ Քանի որ, ինչպես նշվել է, չնչեղ խուլերը հնդեվրոպական հիմնալեզվում առանձնակի հնչույթներ չեն եղել, ապա և՛ խեթերենում և՛ հայերենում p, t, k-ի և ph, th, kh-ի տարբերակման որոշակի համապատասխանություն չկա։

2) Խեթերենում չկան քմայնացման հետ կապված այն բաղաձայնային փոփոխությունները, որոնք նշվեցին վերևում։ Այդ կարգի փոփոխություններից նշելի են *di>ši և *ti>zi անցումները։

3) Հ.-ե. շփականները խեթերենում ավելի քիչ են փոխվել, քան հայերենում. ա) հ.-ե. s-ն ներկայացված է որպես š, հազվադեպ որպես z. բ) հ.-ե. ոչ վանկարար r, l, m, n, i̯, u̯ ձայնորդները ներկայացված են որպես r (բառասկզբում՝ որևէ նախահավելվածային ձայնավորով, ինչպես հայերենում), l, m, n, i (i̯), u (ḫu, u, u̯?), ընդ որում u̯e-ն խեթերենում կարող է փոխվել u-ի. գ) հ.-ե. վանկարար r̥, l̥, m̥, n̥, i, u ձայնորդները խեթերենում ներկայացված են որպես ar, al, a, an, i, u։

4) Հ.-ե. ձայնավորներն ու երկբարբառները խեթերենում ներկայացված են հետևյալ կերպ. ա) հ.-ե. կարճ e, o, a ձայնավորների դիմաց առկա են e (a, i), a, a, երկար ē, ō, ā ձայնավորների դիմաց՝ e, a, a կամ սրանց և ḫ-ի (ḫḫ-ի) զուգորդումներ. բ) հ.-ե. ei, oi, ai երկբարբառները ներկայացված են որպես e, իսկ eu, au երկբարբառները՝ որպես u։

§ 10. Հնդեվրոպական, հայկական և խեթական հնչյունական համակարգերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 134-րդ էջի աղյուսակով (բառամիջի դիրքը նշանակում ենք -y-, -w- և այլն ձևով, բառավերջի դիրքը՝ -kᶜ, -n ձևով)։

§ 11. Հայերենի և խեթա-լուվական լեզուների բառային զուգադիպումների մեջ առաջին հերթին պետք է նշել այն բառերն ու բառաձևերը, որոնց համար բնորոշ են կառուցվածքային մի շարք կարևոր ընդհանրություններ։

1) Բառակազմական (հիմքակազմական) մերձավորություն.

խեթ. parku- «բարձր»—հայ. բարձր,-ու[15].

---

[15] Հմմտ. В. Порциг, Членение индоевропейской языковой области, Москва, 1964, էջ 278։

հ.-ե.	հայ.	խեթ.	հ.-ե.	հայ.	խեթ.
bh	b	p	r̥	ar	ar
dh	d	t	l̥	al, ał	al
g´h	ǰ (-z-)	k	m̥	am, -an	a
gh	g (ǰ)	k	n̥	an	an
gu̯h	g (ǰ)	ku	i	i	i
b	p	p	ī	i	i
d	t	t	u	u	u
g´	c	k	ū	u	u
g	k (č)	k	e	e	e (i, a)
gu̯	k (č)	ku	ē	i	e, eḫ(ḫ)
p	h	p	o	o	a
t	tʿ (-y-, -w-)	t	ō	u	a, aḫ(ḫ)
k´	s	k	a	a	a
k	kʿ (ç̌)	k, ḫ	ā	a	a, aḫ(ḫ)
ku̯	kʿ (ç̌)	ku, ḫu	ei	ē	e
ph	pʿ	p	oi	ē	e
th	tʿ	t	ai	ai	e
k´h	ç	k	eu	oi	u
kh	x	k, ḫu	ou	oi	u(?)
ku̯h	x	ku, ḫu	au	au	u(?)
s	h, y, —, (-kʿ)	š, z	ə	a, h, —	a, ḫ, —
r	(e, a)r	r			
l	l, ł	l			
m	m (-n)	m			
n	n	n			
i̯	ǰ	i̯			
u̯	g (-w-, -v-)	u̯			

2) Արմատների հերթագայական ձայնավորման մերձավորություն.

խեթ. u̯eten- (u̯atar *«ջուր» բառի թեք հոլովների հիմքը*

կրճատ գործածությամբ՝ ụit-), լուվ. ụid- «ջուր»— հայ. գետ-, -ոյ[16].

3) «Հավելվածային» նախաձայնավորի առկայություն.

խեթ. amm- [uk «ես» դերանվան թեք. հոլովների հիմքի ընդ-հանուր տարրը՝ ammuk «ինձ (զիս)» («նոր թագավորության» շրջանում նաև «ես»), ammēl «իմ» ammedaz(a) «ինձնից»՝ -mu «ինձ», -ma-, mi- «իմ» (ստաց. դեր.) ձևերի կողքին], հիեր. խեթ. amu «ես» [-mu «ինձ», am(i)a «իմ» (ստաց. դեր.) ձևերի կողքին], լիդ. amu, լիկ. ēmu «ես, ինձ», ēmi- «իմ» (ստաց. դեր.)— հայ. իմ, (զ)իս (*eme-g'e), ինձ (*eme-g'h-).

հիեր. խեթ. átamaī «անուն» [խեթ. lāman (*nāman-ից՝ տարնմանությամբ) ձևի կողքին]— հայ. անուն,-ուան[17].

4) Նախահնդեվրոպական կոկորդայինների պահպանում բառասկզբնային դիրքում.

խեթ. ḫanna-, լիկ. χñna «տատ» [խեթ., պալ. anna-, լուվ. anni-, լիկ. ēni-, լիդ. ēna- «մայր» ձևերի կողքին]— հայ. հան «տատ».

լուվ. ḫaụi-, հիեր. խեթ. ḫaụa- «ոչխար»— հայ. հովի-ւ (բառ. «ոչխար-ա-պահ»).

խեթ. ḫink- (ḫenk-), ḫik- «հասցնել, մեկնել, մատուցել. բաժին հանել» (այլև ḫink-, ḫik- «գլուխը խոնարհել, ակնածել, խոնարհվել»)— հայ. հասանեմ.

խեթ. ḫuḫḫa-, հիեր. խեթ. ḫuḫa, լիկ. χuga- «պապ» (այլև թերևս հայաս. Ḫuggana- — անձնանուն՝ «պապ» նախնական իմաստից)— հայ. հաւ «պապ».

Հաճախակի մատնանշվող խեթ. ḫuụant- «հողմ, քամի» և հայ. հով զուգահեռը կասկածելի է, որովհետև առաջինը համեմատում են լատ. ventus, գոթ. winds «հողմ, քամի» բառերի հետ, իսկ երկրորդը հոգի, ողի զուգաձևերի հետ բխեցնում հ.-ե. *poụ-

---

16 Նույն տեղում։

17 Հմմտ. В. В. Иванов, Хеттский язык, Москва, 1963, էջ 107։ Այստեղ բերված խեթ. adant (at-, et- «ուտել» բայից կազմված դերբայական ձև)—հայ. ատամն զուգահեռը խեթերենի և հայերենի միջև մերձավոր կապ սահմանելու համար հիմք չի տալիս։ Լիդ. ētam բառը, որին հիեր. խեթ. átamai-ի նմանությամբ վերագրվել է «անուն» իմաստը, այժմ մեկնում են որպես «սահմանում, կարգադրություն» և համեմատում հին հնդկ. dhāman «օրենք, կանոնադրություն» բառի հետ. Հմմտ. R. Gusmani, Lydisches Wörerbuch, Heidelberg, 1964, էջ 108—109։

նախաձևից (համա. և ճևալ՝ նույն *peu- արմատից ածանցված *peu̯ā- ձևից)։

§ 12. Հայերենի և խեթա-լուվական լեզուների այլ կարգի զուգահեռները գերազանցապես հնդեվրոպական արմատների ընդհանրությամբ կապված բառաձևեր են, որոնք հաճախ տարբերվում են և՛ կազմությամբ, և՛ իմաստային զարգացմամբ։

Ստորև բերում ենք խեթա-լուվական լեզուների և հայերենի այս կարգի ընդհանուր բառերն ու բառարմատները՝ դրանք խմբավորելով ըստ հնդեվրոպական բաղաձայնների տիպերի արտացոլման։ Այս դեպքում հեղինակը չի ձգտում լիակատար ընդգրկման՝ բացառելով իրարից խիստ հեռացած կազմությունները, այլև նկատի ունենալով, որ խեթա-լուվական լեզուների և հայերենի ստուգաբանության անընդհատ զարգացման պայմաններում այդպիսի լրիվության հնարավորությունն ընդհանրապես բացառվում է։

1) Հ.-ե. bh, dh, gh, $g^{u}h$.

լիդ. *braira- (brairsi-, brairli) «ֆրատրիա(?), պաշտամունքային միություն (?), եղբայրություն(?)»— հայ. եղբայր.

լիդ. bu- *«լինել» (bu-k «բայց», buv-aś)— հայ. բայս, բոյն, բուն.

խեթ. (<լուվ?) arpa- «անբարենպաստություն, անհաջողություն», այլև խեթ. arpu- «դժվարություն ունենալ(?), անվճռական լինել (?)», arpuu̯atar «դժվարություն», arpuu̯ant- «դժվարին, անբարենպաստ», լուվ. arpuu̯an(n)i- «դժբախտ»— հայ. որբ, -ոյ(?)[18].

խեթ. nepiš- «երկինք»— հայ. ամպ, ամպ.-ոյ (-պ-ի երկրորդական խլացում մ-ի մոտ).

խեթ. dai-, tai- (teḫḫi «դնում եմ»), լուվ. duu̯a-, հիեր. խեթ. tu(u̯a)-, լիկ. ta-, tuwe- «դնել», լիդ. cuve- «կառուցել», ca- «նվիրել»— հայ. դնեմ.

խեթ. kuen- «խփել, սպանել»— հայ. գան, -ի, -իւ. ջնեմ, ջնջեմ:

2) Հ.-ե. b, d, g, g^{u}.

խեթ. da-, հիեր. խեթ. ta- «վերցնել»[19], լիդ. dā- «տալ»— հայ. տամ.

---

[18] Եթե ճիշտ է խեթ. բառերի ստուգաբանությունը Է. Լարոշի („Revue hittite et asianique", 16, էջ 98) համեմատում է լիկ. erbbe «[illegible]» հետ։

[19] Խեթ. բառը բխեցնում են նաև հ.-ե. *dhe- «դնել» արմատից, որտեղից հյ. դնեմ։

լիկ. tam- «կառուցել (??)»[20]— հայ. տուն[21].

խեթ. taru- «փայտ»— տարգալ «գդալ», տրամ «ամուր».

լուվ. tup(a)i- [dup(a)i-], հիեր. խեթ. tupi-, լիկ. tub(e)i- «խփել»— հայ. տոփեմ (բրբռ. տփել) «ծեծել, ոտնատակերենը փայտով ծեծել, կոխել»[22].

tūṷa- «հեռու»— հայ. տևեմ, այլև երկար, երկայն.

խեթ. šiṷatt- «օր», šiu-, šiun-, šiuni-, šiṷann-, šiṷanni- «աստված», պալ. Tiṷaz «արևի աստված, արև», լուվ. Tiṷaz «արևի աստված, արև. օր», լիկ. civ- «աստված»[23], թերևս ç̀ «օր(?)»[24]— հայ. տիւ.

խեթ. ed-, ad-, պալ., հիեր. խեթ. at-, լուվ. az- «ուտել»— հայ. ուտեմ.

խեթ. ḫatuki- «սարսափելի»— հայ. ատեամ[25].

galaktar «մեղմացում»(?) կամ «թարմացում»(?), «քաղցր բան, քաղցրավենիք» (?), «հաճելի, քաղցր ուտելիք՝ բուսական ծագման» (?) (*galakt «կաթ» ?)— հայ. կաթն (բրբռ. կախց, կախս <*կաղց).

հիեր. խեթ. ṷaṷaš «եզ»— հայ. կով(?)[26]։

3) Հ.-ե. p, t, k, k^{u} և ph, th, kh, k^{u}h.

խեթ. paḫḫur (paḫḫuṷar), լուվ. paḫur «կրակ»— հայ. հուր, -ոյ.

խեթ. paḫš- «պաշտպանել», թերևս նաև լիկ. faza- «պաշտ-

---

[20] Արմատը ենթադրվում է և հիեր. խեթերենում։ Համտ. հ.-ե. *dem- «կառուցել» արմատի հետ կապված *demə- «սանձել, զսպել», որից խեթ. damaš- «ճնշել, նեղել», լուվ. damaš- «ճզմել»։

[21] Համտ. և տանուտէր, տամալի։

[22] Հ.-ե. *deph- «տրորել, կոխել, ճմռել, խփել»։ Հայ. դոփեմ բառը թերևս փոխառություն է։ Տոփեմ բայը Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 2, էջ 1275—1276) բխեցնում է *(s)teb- «հենել, ամրացնել, տրորել, ճզմել» արմատից։

[23] Հ. Կրոնասերը („Die Sprache", 5, 1959, էջ 55 և հջ.) խեթ. šiu(ni)-ն համարում է ոչ հ.-ե. ծագման (համտ. խուռ. Šimigi, ուրարտ. Šiuni—արևի աստված)։

[24] Այս դեպքում համտ. ուրարտ. šali «օր»։

[25] Համտ. նաև լուվ. adduṷali-, հիեր. խեթ. atuṷara-, այլև թերևս խեթ. idālu- «չար»(?). Ռ. Ղուկասյանն սրանց է միացնում և լիկ. c-itolla- (c-itala-) «չար»(??) բառը՝ c-ն թողնելով անբացատրելի։

[26] Ստուգաբանությունը հնարավոր է, եթե հիեր. խեթ. համար ենթադրենք g^{u}>(ḫ)u անցում։

պատկանելություն» —հայ. հաւրան «հոտ (այծի, ոչխարի)» (*pā-tro-), -ւ (հովի-ւ «ոչխարա-պահ» բառում).

խեթ. palḫi- «լայն»— հայ. լայն, այլև հող.

խեթ. papparš- «սրսկել, ցողել, ցանել»— հայ. փռեմ, սփռեմ[27].

խեթ. parā «առաջ, դուրս, հեռու, -ից», piran «առաջ, առջև», parija(n) «միջով, դենը, այն կողմը», լուվ. parran «առաջ, դուրս»— հայ. առ.

խեթ. parḫ- «հալածել, քշել»— հայ. հորդ «կոխված, շիտակ (ճանապարհ)», հորդեմ «ճանապարհ բանալ», հորդիմ «գնալ, տարածվել».

խեթ. pata-, լուվ. pati-, հիեր. խեթ. pat(a?)- «ոտք», լիկ. pededi «հետիոտն, ոտքով»— հայ. ոտն, ոտք, հետ, -ոյ.

խեթ. piddai- «վազել, շտապել, թռչել (?). խուսափել», pattar, -anaš «թև»— հայ. թիռ, թռչիմ, թեր, թերր.

լիկ. epi «դեպի, առ»[28]— հայ. և.

խեթ. ep(p)-, ap(p)- «բռնել, որսալ, գրավել»— հայ. ունիմ (*ōp-n-?).

խեթ. ḫappinaḫḫ- «հարստացնել», ḫappinant-, լուվ. ḫapina- «հարուստ»—հայ. աւն «սեփականություն, ունեցվածք».

խեթ. išpāi- «հագենալ, կուշտ ուտել»— հայ. փարթամ[29].

խեթ. (DUG)iš-pandu(ya)- «փոքրիկ աման (մետաղյա)» [(DUG)išpanduzzi-?]— հայ. փունդ «մի տեսակ աման կամ չափ»[30].

խեթ. išpar- «տարածել»— հայ. սփռել, փռել, սփիռ, սփիւռ.

խեթ. išpart- «բարձրանալ, դիմանալ, հաղթահարել, մազապուրծ լինել, փրկվել»— հայ. սպրդել «սողոսկել, ծածուկ մտնել», սպրդիլ «վրիպել, ձեռքից սահել՝ փախչել», Նոր-Նախիջ. բըրթ.

---

[27] Խեթ. բառը ծագում է *pers-ից, հայերեն բառերը՝ այդ արմատի *spher-s-, *pher-s- տարբերակներից:

[28] Այլ ձևերը խեթ., լուվ. appa(n) «հետո, ետ, նորից», հիեր. խեթ. apan, լիկ. «epā հետո», եթե խեթ. appa-ի և մյուսների մեջ իրար համընկել են հ.-ե. *epi-ն և *apo-ն (հայ. և <*epi), Հ. Աճառյանը և Գ. Ղափանցյանը հայ. ապա-ն հնարավոր են համարում կապել խեթ. appa-ի հետ:

[29] Կապը խիստ հեռավոր է (միայն արմատային)՝ հ.-ե. *(s)p(h)e(i)- «բարգավաճել, աճել, ընդարձակվել, հաջողություն ունենալ»:

[30] Եթե խեթ. բառը կապված չէ šipand- «զոհել, զոհաբերել» բայի հետ (ինչպես կարծում է Զոմերը), ապա հայ. բառի հետ միասին ծագում է հ.-ե. *(s)ph(o)ndho- «փայտե դույլ, աման» նախաձևից, որ վերջին հաշվով կապված է *sphē-, sphə- «երկար, տափակ փայտի կտոր» արմատի հետ:

սփփռել «ստանել, պղտորել, ձեռքից սայթել, աչքից վրիպել»[31].

խեթ. išpatar «անկող, ներքնակ»— *հայ.* փայտ[32].

խեթ. šipand- (šippand-) «զոհել, զոհաբերել»— *հայ.* սպանդ, -ի, -ից «զոհ, մատաղ»[33].

խեթ. ta «և», *լիկ.* te «այստեղ, ապա»— *հայ.* դա, այդ, դոյն, -դ (*հ.-ե.* t-*ի գիրքային ձայնեղացում*), *այլև* թէ, եթէ.

խեթ. dala-, dalija- «թողնել»— *հայ.* թողում (*հ.-ե.* tel- «բարձրացնել, տանել, կրել»).

խեթ. tar- «ասել»— *հայ.* ըն-թեռնուլ, թրթռուկ (*թուրթու-րակ <*tōr-tōr-o-) «ճարտարախոս».

խեթ. teri- «երեք», *լիկ.* trisñni «երեք անգամ»— *հայ.* երեք.

խեթ. tuk, tukka «քեզ», *պալ.* ti «դու(?)», tu «քեզ(?)», *հիեր. խեթ.* tuya- «քո»— *հայ.* դու (*հ.-ե.* t-*ի գիրքային ձայնեղացում*).

լուվ. dūr- «մեզ»— *հայ.* թորեմ, թարախ[34].

խեթ. aštira- «աստղ»(?)— *հայ.* աստղ[35].

լիկ. statti «դնում է, կանգնեցնում է»— *հայ.* ստանամ.

խեթ. ḫalija- «ծնկի գալ»— *հայ.* խեղ(?).

խեթ. kalleš- (kalliš-) «կանչել», *թերևս նաև* kallikalli- «բացել» *և* ḫalzāi-, *լուվ.* ḫalt(a)- «կանչել, կոչել»— *հայ.* աքաղաղ.

խեթ. karš- karšija- «հատել, կտրել, անջատել. հաշմել», kartāi- «հատել, կտրել, կտրել-հանել»[36], *պալ.*, *լուվ.* karš- «հա-

---

[31] *Եթե կարելի է համեմատել հ.-ե.* *sp(h)erd(h)-*ին «դողալ, ցատկել», որից հին իռլ.* spretta *«բարձրանալ, ելնել, վեր ցատկել, ծագել», պաշտ. «փրթել, ազատել, բաժանել» և այլն։ Նաև չունե՞նք արդյոք խեթ. բայի հետ հայ.* փրթանեմ, փրծանեմ, պրծանեմ, պուրծ, *բրբռ.* փրցնել *բայերը, որոնք ավելորդ կազմում են* այսօր. ապրել *ձևերի հետ։ Դժվար հավանական է խեթ.* parkunu- *«մաքրել, անմեղացնել. ազատել, փրկել» բայի հետ կապել հայ.* փրկեմ *բայը, որ Աճառյանը համարում է ասորերենից։*

[32] *Եթե խեթ. բառը իրոք բխում է* *sp(h)e-, sp(h)ə-dh- *«երկար, տափակ փայտի կտոր», ապա հայերենը՝ որպես մերձավոր* *(s)p(h)ē̆i-//(s)p(h)ī- *«սուր, սուր փայտի կտոր» արմատից։*

[33] *Եթե հայ. բառը նույնպես ծագում է հ.-ե.* *spend- *արմատից* (դ<տ՝ n-*ի մոտ) և ոչ թե* պարթևերեն *բայից, ինչպես կարծում են Ա. Մեյեն և Հ. Աճառյանը։*

[34] *Եթե լուվ. բառը զուգահեռ չէ խեթ.* šeḫur-*–ին և եթե այն կարելի է բխեցնել հ.-ե.* *(s)ter- *«անձրևաջուր հեղուկ, հեղա, զոմաղբը» արմատից։*

[35] *Եթե խեթ. բառը ճիշտ է վերականգնված։*

[36] Kuer-, kur- *«կտրել, հատել» բայը* u-*ի պատճառով ավելի հավանական*

տել, կարել(?)», թերևս նաև լիգ. fa-karse- «քանդել»— հայ. քե-րեմ, քերթեմ, քերծեմ.

լիգ. kave- «քսուքմ», ko- «հրապարակել, հայտնի դարձ-նել(?)» [թե՞ «լսել(?)»]— հայ. ցոյց, ցուցանեմ[37].

խեթ., պալ., լուվ. kuiš «ով», խեթ., պալ. kuit «ինչ», խեթ. kuit «քանի որ, որովհետև, զի», kuu̯at «ինչպես» kuu̯atta(n) «ուր», պալ. kāt(<kuu̯at) «որովհետև(?)», լուվ. kuu̯atti(n) «ինչպես(?)», հիեր. խեթ. ku̯a(?)— հարար. դերանուն, ku̯atan(?) «որտեղ», լիկ. -ke «ինչ որ» (ti-ke «ինչ որ մեկը»), լիդ. -k «ինչ որ» (pis-k «ինչ որ մեկը»), kot «ինչպես», kud(-) «ուր», qe-, qi- «որը»— հայ. ո (ո-ք), ով, ի- (զ-ի, ի-նչ, ի-ք, ի-մն), ուր, -չ (ին-չ)[38].

խեթ. ḫar-, ḫark- «պահել, ունենալ»— հայ. արգել-ք, ար-գելում.

խեթ. iškallāi «պատռել, ճղել, ճեղքել, պոկել(?)»— հայ. ցելում[39].

խեթ. išgar- «ծակել, խոթել» (*sker-)— հայ. քերել, քորել (*ker-, *kor-) (?).

խեթ. šakkar, zakkar (r/n-ով հիմք) «կեղտ, աղբ, կղկղ-ղանք»— հայ. ցեխ (*ցեխն)։

4) Հ.-ե. g'h, g', k', k'h(?).

խեթ. keššera-, keššar-, լուվ. iššari-, išri- «ձեռք», լիկ. izre «ձեռք?» —հայ. ձեռն, հգն. ձեռք,-աց.

խեթ. gim- (gem-), gimmant- (gemmant-) «ձմեռ»— հայ. ձմեռն.

խեթ. genu- (ginu-) «ծունկ»— հայ. ծունգ, ծունր.

խեթ. ḫarki- «սպիտակ, լուսավոր»— հայ. արծաթ, արծնեմ.

խեթ. iuga- «լուծ»— հայ. լուծ[40].

խեթ. uk, ug(g)a «ես»— հայ. ես.

են ընդունելու Հ.-ե. *ku̯er- «անել, կազմել, կերպարանել» արմատից, բան (s)ker- «կտրել» արմատից, որից ծագում են վերևում բերված բառերը։

37 Հ.-ե. *(s)keu- «ուշադրություն դարձնել, նայել» արմատից։

38 Հ.-ե. *ku̯o-, *ku̯e-, *ku̯ei-, *ku̯u- և այլն։ Այս արմատի հետ կապված է *-ku̯e «և, ինչ որ» արմատը, որից լիգ. k(-) «և» (թերևս նաև միլ. -ce, լիկ. -ce «que», որ» և հայ. ք- (ո-ք, ի-ք), -չ (ո-չ)։

39 Ըստ ոմանց նաև ճեղքեմ (*kel-kh-?), քեղի։

40 Հայ. լ-ն լուծանեմ բայի ազդեցությա՞մբ (կան նաև այլ մեկնաբա-նություններ)։

խեթ. kā-, kī- «այս», այլև պալ. kiat «այստեղ» (?), kāt «այս պատճառով, ուստի»— հայ. սա, այս, սոյն, -ս.

karaųar «եղջյուրներ», ḫaršan(a) «գլուխ», ḫaršar «գլուխ»(?), լուվ. ḫaršan- «գլուխ»— հայ. սար.

խեթ. kard- kardi-, պալ. kart- «սիրտ»— հայ. սիրտ, -ի, -ից.

խեթ. aku- «սրածայր քար, խութ, ժայռ»— հայ. ասեղն:

5) Հ.-ե. s.

լիկ. senñahije «ավելի ծերը»— հայ. հին.

խեթ. šepta(m)? «յոթ» (šiptamiįa=VII-miįa)—հայ. եւթն.

խեթ. šup- «քնել»— հայ. քուն,-ոյ (*sųop-no-).

խեթ. zamangar (zamakur) «մորուք»— հայ. մաւրուք, մօրուք.

խեթ. eš-, aš-, պալ., լուվ., հիեր., խեթ. aš- «լինել», լիկ. essti «է» (թե՞ «գնում է»), esste «էր»— հայ. եմ (*es-mi).

խեթ. ešḫar «արյուն»— հայ. արիւն.

խեթ. ḫaštāi- «ոսկր. ոսկորք, կմախք», լուվ. ḫašša- «ոսկր» — հայ. ոսկր (*ost-ųer կամ ost-ko-).

խեթ. ḫašduir- «ցախ»— հայ. ոստ,-ոյ:

6) Հ.-ե. r[41], l, m, n.

խեթ. ar- (er-) «գալ, հասնել», ar- «կանգնել. կանգ առնել», arnu- «շարժել, հեռացնել, հեռու տանել, մոտեցնել, մոտ բերել»— հայ. յառնեմ, արի՛[42].

խեթ. arra- «հետույք, նստատեղ»— հայ. ոռ,-ոյ.

խեթ. arš- «հոսել», aršaniįa- «նախանձել. բարկանալ»[43], ḫaršalant- «բարկացած», լուվ. aršiįa- «հոսել?», ḫaršala- «բարկություն»— հայ. հեռ (հմմտ. և խեռ), եռամ, զ-եռամ.

լիդ. arvo- «լուսացնել?»— հայ. առնում[44].

խեթ. ḫartagga- «գիշատիչ կենդանի՝ արջ?»— հայ. արջ,-ոյ.

խեթ. laḫ(ḫ)uųāi-, laḫ(ḫ)u- «թափել, լցնել»— հայ. լոգանամ.

խեթ. luk(k)- «լուսանալ», lukkāi- «վառել», պալ. lukk- «վառել», այլև թերևս լուվ. luḫa- «լույս?»— հայ. լոյս, -ոյ, լուցանեմ.

---

41 Ե՛վ խեթերենում, և՛ հայերենում բառասկզբում r չի հանդիպում:

42 Սակայն ոմանք խեթ. arnu- բայը համեմատում են հայ. առնում, հուն. ἄρνυμαι «վաստակել, ձեռք բերել, ստանալ» բայերի հետ (հ.-ե. *ar- «բաժին հանել. յուրացնել»)

43 Aršanier ձևը ընդունված է երկու թեր ընտանեցման արդյո՞ք փոխառության

44 Լիդ. բայի ստուգաբանությունը հեղինակինն է:

խեթ. NINDAladdari, aladdari *(մի թխվածք)*— *հայ.* աղանձ *«խարկած ցորեն»*, աղանձանել *«այրվել, խարկվել»*, *այլև թերևս* աղանդեր *«դեսերտ»*[45].

լիդ. aλa- *«ուրիշը»*, aλida-d- *«փոփոխություն?»*, *այլև թերևս* aλēλ.[o.] *«փոփոխել??»*— *հայ.* այլ, աղաւաղ[46].

խեթ. alpa- *«ամպ»* (*«սպիտակ»*)— *հայ.* աղաւնի (*«սպիտակ»*), ալաւ(ս)ունք *«համաստեղություն, բույլ»*.

խեթ. malla- *«աղալ»*, mališku- *«թույլ»*— *հայ.* մալեմ, մամուլ, մլ-աղաց, մլ-ուկն *«փայտոջիլ»*, մլմլեմ, մեղ-կ, մեղ-մ, մըղմող *«ցեց»*.

խեթ. mald- *«զոհել»*— *հայ.* մաղթեմ[47].

խեթ. marriḷa- *«փշրել(?), մանրել?»*, *պալ.* mareššа- *«փշրել, մանրել»*— *հայ.* մաշեմ (<*մարշեմ), մարտ *«կռիվ»*, մուրճ.

խեթ. mekki- *«շատ (մեծ)»*— *հայ.* մեծ, -ի, աց.

խեթ. mer- (mir-) *«անհետանալ, կորչել, մահանալ»*— *հայ.* մեռանիմ.

խեթ. milit-, *պալ.* malit-, *լուվ.* mallit- *«մեղր»*, *պալ.* malit- *«մեղր(?)»* —*հայ.* մեղր, -ու.

խեթ. nata- (nati-) *«եղեգ, նետ»*— *հայ.* նետ, -ի, -եց.

խեթ. neụa- *«նոր, թարմ»*— *հայ.* նոր, -ոյ.

լիկ. nu[...] *«ինը»*— *հայ.* ինն.

խեթ. anniš *«այն»*— *հայ.* նա, այն, նոյն, -ն.

խեթ. andan, *պալ.* anta, *լուվ.* anda, *հիեր. խեթ.* a(n)ta, *լիկ.* ñte *«մեջ»*, ēn, ān *«մեջ»*— *հայ.* ի, ըն, ն *(լատինատառ տեքստերում)*[48].

---

45 *Հայ.* աղանձ *բառը Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., I, էջ 79) համեմատում է սանսկ.* randh- *«եփել, կերակուր պատրաստել», հին պրուս.* landan *«կերակուր» և այլ բառերի հետ՝ ընդունելով* *lṇdh- *արմատից (չունի Պոկորնին)։ Ըստ Հ. Աճառյանի՝ հայերենից են վրաց.* լանձվի *«տապակ, կաթսա»,* լանձվա *«մի քիչ այրել՝ խորովել»։ Խեթ. բառի և հայ.* աղանդեր*-ի համեմատությունը պատկանում է Գ. Ղափանցյանին։*

46 *Համեմ. և* աղճատ *(?)։*

47 *Հ.-ե.* *meldh-*ի դիմաց հայ.* մաղթ *ձևի առկայությունը հիմք է տալիս ենթադրելու հայերեն բառի՝ փոխառյալ կամ* dh-*ի՝ աճական լինելը* (*mel-dh-, *mel-th-)*։*

48 *Համապատասխանությունը կա, եթե անատոլիական բառերի մեջ առկա է հ.-ե.* en-*ը «մեջ»։*

խեթ. anturiɪa- (anduriɪa-) «ներքին», andurza «ներսում»— հայ. ընդեր-ք.

խեթ. ḫant- «առաջնամաս, ճակատ», ḫanza «առջևից», ḫantezzi- «առաջին, առջևի», լուվ. ḫantili- «առաջին»— հայ. անդ. ընդ.

խեթ. innara- «ուժ(?)», innarauant-, լուվ. annarummi «ուժեղ» — հայ. այր, առնական, արի[49]։

7) Հ.-ե. u̯[50].

խեթ. ḫuek- (ḫuik-, ḫuk-) «երդվել»— հայ. գոչեմ(?).

խեթ. ḫuis- (ḫueš-) «ապրել, փրկվել», ḫuišu̯ātar, լուվ. ḫuitu̯alaḫi- «կենդանի»— հայ. գոմ (գոլ, գոյ), գոյ, -ի, -ից.

խեթ. ḫulaliɪa- «փաթաթել», լուվ. u̯alip- «փաթաթել, ծրարել»— հայ. գելում «ոլորել», գալար, գիլ, գլորեմ, գաղձն, գեղձ «պատատուկ, բաղեղ».

խեթ. *ḫulana- (*ḫulani-), լուվ. *ḫulani- «բուրդ, գեղմ»— հայ գեղմն.

խեթ. utne- «գետին»— հայ. գետին[51].

խեթ. u̯aš- «գնել, ձեռք բերել», u̯ešɪa- «գին»— հայ. գին, -ոյ (*u̯es-no-).

խեթ. u̯aš(š)- [ueš(š)-], u̯aššiɪa-, լուվ. u̯aš(š)- «հագցնել, հագնել»— հայ. զ-գեստ, բրբռ. գեստ.

խեթ. u̯iɪan(a?), լուվ. u̯iniɪant-, հիեր. խեթ. u̯a(ɪ)ana- (u̯aā-na-s] «գինի»— հայ. գինի[52].

խեթ. u̯itt- (*u̯ett-), լուվ. ušša/i-, հիեր. խեթ. uša- «տարի»— հայ. հեր(ու) (*perut-i) «(անցյալ) տարի»։

8. Հ.-ե. ei//i-.

խեթ. iɪa- «գնալ, քայլել», it «գնա՛», itten «գնացե՛ք»— հայ. էջ, իջանեմ:

§ 13. *Հայերենի և խեթա-լուվական լեզուների ձայնաբանական ընդհանրությունների քննությունը ավարտենք մի շարք այլ զուգահեռների մատնանշումով.*

---

[49] Հ.-ե. *ǝner- (*Hner-) արմատից. հմմտ. A. Kammenhuber, Zur Stellung des Hethitisch-Luvischen innerhalb der idg. Sprachen, KZ, 77, 1/2, 1961, էջ 58։

[50] Հ.-ե. բառասկզբնային u̯-ի համար հայերենի զուգահեռներ չկան։

[51] Ըստ Ա. Գյոցեի և Հ. Պեդերսենի (Muršiliš Sprachlähmung, 79 և հջ.)։ հավանական է։

[52] Հնարավոր է, սակայն, որ հին անատ. և հայ. բառերը ընդհ. չեն, այլ փոխառյալ։

1) Կան բնաձայնական ծագում ունեցող մի շարք զուգահեռներ, որոնց ծագումնային կապը կասկածներ է հարուցում.

խեթ. alalam(m)a- (alalima-) («աղմուկ (?), կանչ (?)» (ավելի հավանական է համարվում «գետից անցկացվող խրամ, ջրանցքի ճյուղավորում» իմաստը = աքքադ. ḫatidu, այն է՝ ḫattitu?)—հայ. աղմուկ (հ.-ե. el-, ol-)[53].

խեթ. ḫaḫḫarš- «ծիծաղել»—հայ. խախանք[54].

խեթ. ḫapupi-(MUŠEN) (մի թռչուն)—հայ. հոպոպ[55].

խեթ. kakkapa- «կաքավ»(?)—հայ. կաքաւ[56].

խեթ. uu̯ai- «ցավ, վիշտ, դժվարություն»—հայ. վայ.

խեթ. uu̯ai- «գոռալ, բառաչել»—հայ. գայլ[57]։

2) Կան այլ կարգի մի շարք զուգահեռներ, որոնց մեջ հայկական կամ խեթա-լուվական ձևերի, երբեմն էլ և՛ առաջինների, և՛ երկրորդների բնիկ լինելը կասկածելի է, հաճախ էլ չի հաստատվում ձայնավորման բնույթով.

խեթ. ḫandāiš- «ջերմություն, տաքություն», ḫantii̯āi- «հոգալ, խնամել»—հայ. խանդ, խանձ, խանդաղատել[58].

խեթ. ḫattāi- «ծակել, կտրել, հատել», այլև ḫattarāi- «խաչաձևո-(վ)ել», ḫatk- «(դուռը) փակել», ḫatkišnu- (ḫatkiššana-) «ճնշել», ḫazzii̯a- «ծակել, գիցցնել», ḫazzik(k)- «զարնել, նվագել»—հայ. խայթ, խայթել, այլև խոթել, խեթել, խիթել, խիթ, խաչ, խաչել, խոչ[59].

---

53 Համեմատությունը պատկանում է Գ. Ղափանցյանին, որ հենվում է խեթ. բառի հնում տրվող «վախ, երկյուղ» իմաստի վրա։ Հայ. բառը Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., I, էջ 155) համեմատում է հուն. πόλεμος «կռիվ, վեճ» բառի հետ։

54 Խեթ. բառի պատկանելությունը հ.-ե. *kha kha բնաձայնական արմատին կասկածելի է։

55 Եթե խեթ. բառն ունի «հոպոպ» իմաստը։

56 Հ.-ե. *kakk- բնաձայնական արմատի տակ բերվող հուն. κακκάβη «կաքավ» բառը զուգահեռներ ունի կովկասյան և սեմական լեզուներում. Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1113—1114) հակված է հայ. բառը բխեցնելու ասորերենից։

57 Եթե խեթ. uu̯ai-ը uu̯ai- «վիշտ» բառի հետ միասին պատկանում է հ.-ե. *u̯ai- «վայ, ավաղ» բնաձայնական արմատին և եթե ճիշտ է հայ. բառի տվյալ ստուգաբանությունը։

58 Համմ. հ.-ե. (s)kand- «լուսավորել, վառվել»։

59 Ո՛չ հայերենի խոթ, խեթ, խաչ, խոչ ձևերի, ո՛չ էլ խեթերենի ձևերի ձայնավորումը չի համապատասխանում հ.-ե. մյուս լեզուների ձևերի և խայթ-ի ձայնավորմանը՝ հ.-ե. *(s)kai-, -t-, -d- «խփել, հարվածել, ընդդիմահարել» արմատից։ Հ. Աճառյանը, նշելով հայերեն բառերի կապը, չի բացատրում ձայնավորման բնույթը։

խեթ. (É)ḫila- *«բակ. փարախ. գոմ»—հայ.* խուղ (հիւղ. հիղ. հեղ. հուղ *ձևերի կողքին)*[60].

խեթ. zena- *«աշուն»—հայ.* աշուն[61]:

3) Կան բազմաթիվ զուգադիպումներ, որոնց հնդեվրոպական միասնական ծագումը չի ապացուցված, բայց որոնց մեջ առկա է խեթ. š—*հայ.* հ *կամ դրա (հ.-ե.* s) *համապատասխանությունը.*

խեթ. šalpa- (šalpi-) *«(շան) կղկղանք»—հայ.* աղբ[62].

խեթ. šamana- *«հիմնաքար. հիմք»—հայ.* հիմն, -ան.

խեթ. šannapiles *«դատարկել, պարպվել»,* šannapili- *«դատարկ. միայնակ»*[63]*—հայ.* հանեմ:

4) Մի շարք բառերի դեպքում խեթական և հիեր. խեթ. բառերի մեջ š, ś *շփականների առկայությունը ոմանք բացատրում են որպես հաջորդ* u*-ի ազդեցությամբ նախնական կոկորդայինի քմայնացման արդյունք, մյուսները այդ բառերը համարում են փոխառություններ (ավելի հավանական է երկրորդ կարծիքը).*

հիեր. խեթ. aśuya- *«ձի» ([համմ. հ. հնդկ.* aśva-(?)]*—հայ.* էշ.

խեթ. šuppi- *«մաքուր» (համմ. հ. հնդկ.* šubha- *«գեղեցիկ. հաճելի»,* subhrá- *«գեղեցիկ, փայլուն»)—հայ.* սուրբ,-ոյ.

հիեր. խեթ. śurna- *«եղջյուր(?)»—հայ* սար *«ծայր. գլուխ. գագաթ. լեռան գագաթ, լեռ».*

հիեր. խեթ. śuyana- *«շուն(?)»—հայ.* շուն[64]:

§ *14. Եթե ճիշտ է այն վարկածը, որ հայերենի բուն կրողները՝ արմենները, Փոքր Ասիայում մասսայաբար երևացել են փռյուգական ցեղերի հետ միասին մ. թ. ա.* XII *դ. մոտերքը, ապա խոսք կարող է լինել ոչ թե բուն խեթական պետության ժողովուրդների*

---

60 *հ.-ե.* *(s)k(h)eu- *«ծածկել, փաթաթել, վարագուրել»: Խեթ. բառի ձայնավորումը բացատրելի չէ: Համեմատությունը պատկանում է Գ. Ղափանցյանին:*

61 *հ.-ե.* *es-en-, *os-en- *(ռուս.* осень*) նախաձևերի դեպքում: Խեթ. բառի առնչությունը կասկածելի է, հայերենի շ-ի առկայությունը՝ անբացատրելի (կողմնակի հ.-ե. չե՞րտ):*

62 *Սովորաբար կամ բխեցնում են հ.-ե.* *l̥-bh-o- (*el *«մզել, հոսել, փտել»), կամ համարում կովկասյան փոխառություն (Հ. Աճառյան, Հայ. արմ. բառ., 3, էջ 131):*

63 *Կապված չէ՞ արդյոք* šanḫ- *«փնտրել, որոնել. ձգտել, պահանջել. ավլել, մաքրել» բայի հետ, որը բխեցնում են հ.-ե.* *sen- *«պատրաստել, ավարտել» արմատից: Համմ. և խեթ.* ḫan- *«դատարկել, ջուրը հանել»:*

64 *Եթե հիեր. խեթ. բառի «շուն» իմաստը ճիշտ է (հնարավոր է և «խոզ» իմաստը):*

այլ խեթական պետության կործանումից հետո այդ ժողովուրդների մնացորդների հետ հայերի անմիջական շփման մասին: Այս դեպքում չի կարելի խոսել նաև հայերենի վրա խեթական ուժեղ ազդեցության և դրա հետ կապված բազմաքանակ փոխառությունների մասին, որ հնարավոր կլիներ խեթական հզոր պետության գոյության պայմաններում: Մնում է ենթադրել հայերենի վրա խեթա-լուվական ժողովուրդների ազդեցության երկու հիմնական աղբյուր. 1) հայ ժողովրդի հետ ձուլված խեթա-լուվական հատվածների ենթաշերտային ազդեցությունը. դրանցից առաջին հերթին հիշատակելի են հայասերենը (եթե այն իրոք ցեղակցորեն կապված էր խեթա-լուվական լեզուների հետ) և հիերոգլիֆյան խեթերենը. 2) այն փոխառությունները, որոնք խեթերենից և նրան ցեղակից մյուս լեզուներից խեթական պետության գոյության շրջանում կատարվել են զանազան ժողովուրդների կողմից և ապա դրանցից անցել հայերենին: Պետք է կարծել, որ համեմատաբար փոքր է հայերենի՝ խեթերենից, լուվերենից, պալայերենից անմիջաբար կատարած փոխառությունների քանակը: Հայ-խեթա-լուվական որոշ կարգի բառային ընդհանրություններ ամենայն հավանականությամբ գալիս են շրջակա լեզուներից, որոնց մեջ առաջին հերթին հիշատակելի են կովկասյան և խուռաուրարտական լեզուները[65]:

§ 15. Հայ-խեթա-լուվական լեզուների բառային ընդհանրությունների բոլոր խմբերի տարբերակումը համարելով ապագայի գործ՝ առայժմ բավարարվենք ընդհանրությունների հնչյունական խմբերի առանձնացմամբ: Հասկանալի է, որ այս դեպքում կմատնանշվեն այն բոլոր ընդհանրությունները, որոնք ծագումնային բնույթ չունեն և որոնց հնչյունական առանձնահատկությունները

---

[65] Հայտնի է, որ մեծ թիվ են կազմում խեթա-լուվական լեզուների և խուռերենի՝ միմյանցից կատարած փոխառությունները: Ավելի քիչ են ուսումնասիրված խեթա-լուվական և ուրարտական ընդհանրությունները, որոնց մասին տե՛ս Գ. Ղափանցյանի և ուրիշների գրքերի՝ ուրարտերենին նվիրված աշխատությունները: Նշենք այստեղ մի քանի զուգահեռ. հիեր. խեթ. ḫarṷa «ճանապարհ, ուղի», ḫarṷana- «ուղարկել, հղել»—ուրարտ. ḫare (խուռ. ḫari), «ճանապարհ, ուղի. արշավանք». խեթ. kuera «դաշտ, հանդ, արտ», լիկ. qira (qyra-, qiraa-) «ունեցվածք, ինչք»—ուրարտ. qi(u)ra «երկիր, հող». խեթ. taninu- «կարգավորել, ամրացնել», հիեր. խեթ. tanu(ṷa)—«բարձրացնել, կառուցել»—ուրարտ. tanu- «անել, ստեղծել, կառուցել». խեթ. kinun «այժմ»—ուրարտ. ḫini «այժմ» և այլն:

շեղվում են այդ կարգի ընդհանրությունների համար բնորոշ համապատասխանություններից:

1. խեթ. p, t, k—հայ. փ, թ, ք.

խեթ. parḫ- «հալածել, քշել, որսալ. արշավել, սուրալ (ձիու մասին)», parḫeššar- «շտապում, աճապարանք» (հ.-ե. *perə- «անցկացնել, փոխադրել, անցնել, թռչել»)—հայ. փախ (փախչիլ, փախճուլ, փախուստ) (?).

խեթ. paškuu̯āi- «արհամարհել (?), մոռանալ (?)»—հայ. փասքուս «քսու, բամբասող»[66].

խեթ. pattar «թև» (հ.-ե. petr «թև»)—հայ. փետուր.

խեթ. pattar «զամբյուղ (?)» (հ.-ե. pet- «ձեռքերը տարածել»)—հայ. փար (փարարեմ, փարույր, փարել), փոր.

խեթ. DUGpulla- (մի աման), DUGpulluri(ia?) (մի աման)—հայ. փող «նեղ անցք, խողովակ».

խեթ. u̯appu- «գետափ»—հայ. ափն[67].

խեթ. tarup(p)- «հավաքել, միացնել. միահյուսել»—հայ. թոռուպ «զրահ. վառ զգեստ» (?).

խեթ. telipuri- «շրջան (?), գավառ (?), եզրամաս (?) «կառավարման շրջան քաղաքի և երկրի միջև՝ սահման» (?)—հայ. թիփ «եզր, եզերք, ծայր».

խեթ. etri- «ուտելիք, կերակուր. կերակրում»—հայ. ընթրի-ք (?).

խեթ. NINDA kaggari-= NINDA gaḫari-) (մի տեսակ թխվածք, կարկանդակ)—հայ. քաքար «մի տեսակ խմորեղեն, կարկանդակ»[68].

խեթ. kartimii̯a- «բարկանալ, չարությամբ տածել», kartimii̯att- «բարկություն» karitmii̯au̯ant- «բարկացած», kartimnu-, kartimii̯anu- «բարկացնել»—հայ. քրթմնջել:

2) խեթ. ḫ— հայ. խ.

---

66 Ըստ Հ. Աճառյանի՝ կազմված է փաս (?) և քուս (հմմտ. քսու) արմատներից:

67 Գ. Ղափանցյանը խեթ. բառի հետ համեմատում է ափ «խորշ, փոս» բառը (նկատի է ունենում խեթ. բառի՝ հնում վերականգնվող իմաստը, որ այժմ մերժվում է): Վերջինիս համար հմմտ. խուռ. abi > խեթ. api «զոհափոս»:

68 Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., Ե, էջ 1440) համարում է փոխառություն ասորերենից՝ kakarṯā «մեղրահաց» բառից:

ḫaḫḫaliįa- «պնդանալ» կամ թերևս, «անմարդաբնակ դառնալ (??)», ḫaḫḫima- «պնդություն (??)»—հայ. խախուտ «մակարդ».

խեթ. ḫaḫri- «ստոծանի», ḫaḫreššar «թոք (?)» կամ «ստոծանի(?)»—հայ. խորխ «օձի շապիկ. մորթ, կաշի».

խեթ. ḫalāi- «շարժել»—հայ. խաղամ «շարժվել, գնալ արշավել, վազել»[69].

խեթ. ḫalanta- «գլուխ»—հայ. խալամ «անասնի չորացած գանգ» (հմմտ. նաև խել-ք).

խեթ. (É)ḫalentuųa- «հանգստարան, հանգստատուն»—հայ. խաղաղ.

խեթ. ḫaliįa «ծնկի գալ»[70]—հայ. խաղ «հող, խաղ. ափը թևին միացնող հոդը՝ դաստակի ոսկրը» (այստեղից խաղ «խաղ, ծաղր, կատակ», հմմտ. խեղ), այլև խաղալ «հոդել, կցել», խալիկ «ծղի».

խեթ. LÚḫaliįari-(LÚḫaliįariįa-) «քրմերգիչ(?)» («Priester-sänger»)—հայ. խաղ, -ոյ, խաղալ «խաղ խաղալ, ծաղրել. խաղալ. խայտալ, ուրախանալ», խաղ-ասաց (երգասան), բրբռ. խաղ «երգ».

խեթ. ḫallu- «խոր»—հայ. խաղ, -ի, -ից «ճահիճ, կանգնած ջուր»(??)[71].

խեթ. ḫalųani- «կուժ(?), գավաթ (?)»—հայ. խաղախ «նավակ, նավ».

խեթ. ḫarnai- [մի տեսակ հեղուկ՝ «կաթ (?)»]—հայ. խեր «մի տեսակ կաթնեղեն ուտելիք»[72].

խեթ. ḫarnamniįa- «խառնել (?), գրգռել, հալածել»[73], ḫar-

---

69 Պետք է տարբերել խաղալ «խաղ խաղալ, ծաղրել. խաղալ, խայտալ, ուրախանալ» բայից։

70 Ա. Գյոցեն (JAOS, 74, 188) միացնում է ḫalāi- «շարժել» բայի հետ, որ հաստատվում է հայերենի խաղալ «շարժվել» և խաղ «հող» զուգահեռների առկայությամբ (բառարանագիրները որանք միացնում են)։ Գ. Ղափանցյանը համեմատում է խաղողատիմ բայի հետ՝ մեկնաբանելով վերջինս որպես «ծնկի գալով փաթաթվել», բայց Հ. Աճառյանը տալիս է «լալով փաթաթվել» նշանակությունը՝ առանձնացնելով խաղ «լաց» արմատը (Հայ. արմ. բառ., Բ, էջ 342)։

71 Համեմատությունը կասկածելի է։ Տ. Շուլտհայսը (BB, 77, էջ 220), հետևելով Գ. Ղափանցյանին, տալիս է „Flussniederung" իմաստը։

72 Սակայն համեմատությունը կասկածելի է դարձնում հայ. բառի ե ձայնավորումը։

73 Ի՞նչ հարաբերության մեջ է խեթ. այս բայը ḫarra- «ճեղքատվել,

nammar- «մակարդ. խմորում. հալվածք, անհանգստություն», լուվ. harnant— խառն, խառնել.

խեթ. hat- «չորանալ, թառամել»—հայ. խարել «նվաղել, թուլանալ»[74].

խեթ. É hešta-, hešti- «դամբարան (?)»—հայ. խիշտ «անկողին», խշտի-ք «աղքատիկ անկողին, գաղտնի որջ», ատորա-խշտեցուցանել «լռեցնել, հանդարտեցնել» (այս բոլորը ենթադրում են «հանգչելու, ննջելու, հանգստի վայր» ընդհանուր իմաստը).

huek- (huik-) «երդվել» (հ.-ե. uekᵘ- «խոսել»)— հայ. խոկ. խոկալ «մտածել. կարդալ».

խեթ. huelpi- «մատաղ, քնքուշ. թարմ, խակ»—հայ. խեղբ (խիղբ) «ծիլ, ընձյուղ. արմատի մազմզուք».

խեթ. UZU huhariti-, լուվ. UZU huharta- «կոկորդ»—հայ. բրբռ. խախուրք «կոկորդ»[75].

խեթ. hūja- «վազել», huuāi- «վազել, փախչել, մազապուրծ լինել», (LÚ)hūjant «փախստական»—հայ. խույ-ս (խույս տալ)[76].

խեթ. hullāi-, hullija- «հաղթել», hulhulija- «պայքարել, կռվել»—հայ. խոլել «ցրել, վանել», այլև խողխողել «մորթել, փողոտել, չարաչար սպանել»[77].

խեթ. humant- «ամեն մի, յուրաքանչյուր. ողջ, ամբողջ բոլորը»—հայ. խումբ (հմմտ. և համբ).

խեթ. hunhumazzi- (?) «մակընթացություն (?), հոսանք (?), ողողում (?), հեղեղ (?)», այլև hunhuuan- (նույնը), hunhuešna- «ալիք (?)», hunhuneššar, huuanhuuešsar «ալիք»—հայ. խոխոմ,

բծավորվել, ճնշվել» բայի հետ (ըստ Ա. Գոյցեի. Ց. Ֆրիդրիխը տալիս է «տրորել, մանրացնել» իմաստը)։

[74] Եթե հայ. բառը իրոք գոյություն ունի (հանդիպում է միայն Երեմիայի թարգմանում) և կապված չէ խարարել բայի հետ, որ բխեցնում են հ.-ե. (s)keth- : (s)kәth- «վնասել» արմատից։

[75] Ըստ Գ. Ղափանցյանի, որ համեմատում է կոկորդ բառի հետ. սակայն վերջինս ծագում է հ.-ե. *gᵘer- «կլանել» արմատից, որտեղից և հայ. կեր. (կերա)կուր։

[76] Ավելի քիչ հավանական է համեմատել huiš- (hueš.) «ապրել. փրկվել» բայի հետ, որ բխեցնում են հ.-ե. *ues- «անցկացնել, բնակվել, գիշերել» արմատից (հմմտ. հայ. գամ. գոյ)։

[77] Սակայն հմմտ. հ.-ե. kel- «ծակել», որ կապված է (s)kel- «կտրել» և kel- «խփել, կոտրել» բայերի հետ. հմմտ. ռուս. колоть։ [illegible] բայերը ոմանք հակված են բխեցնելու հ.-ե. *ol- «ոչնչացնել» արմատից, ոմանք էլ *uel- «պոկել. վիրավորել» արմատից։

-ի, -ալ, «ձոր», խոխոմել «ոռոգել, ջրել», խոխոմեալ «ջրառատ»[78].

խեթ. ḫanink- «ջարդել, կոտրել»—հայ. խանգարել «խառնել, խանգարել, փչացնել, ապականել, հալածել».

խեթ. ḫup(p)-, ḫuu̯app- «վատ վարվել, կոտրել»—հայ. խուփն «կափարիչ», խփանել, խփել «փակել>խփել», այլև, Թիֆլիս, խափ «որոգայթի մեջ բռնվելը, արգելք, խափանում», խափան «արգելք, ընդհատում» (հմմտ. և կափ «փակում, գոցում, որոգայթում, խըփելը»)[79].

խեթ. ḫuršakniia- «(կրակից) ճաքճքել»—հայ. խորշ «խորշակ, տաք քամի», խորշակ «տոթ. տաք և վնասակար քամի. երաշտ, չորություն»[80].

խեթ. ḫušt(i)ia-?) «(ձայնը) խլացնել»—հայ. խոշտանգել (?)։

3) *խեթ.* š—հայ. շ.

խեթ. šallakartai- «անմտորեն վարվել», šallakartaḫḫ-«անմտորեն վարվել, բարկացնել»—հայ. շաղակրատել «դատարկաբանել» (?)[81].

խեթ. šallija- «լուծվել, հալչել»—հայ. շաղ, շաղել, շաղախել[82].

խեթ. šarāi- «քաշել (?), ձգել (?), հյուսել (?)»—հայ. շարել (?).

---

78 Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, 351) խում (խմել) և խնում ձևերի հետ միասին համարում է կովկասյան (քարթվելական) փոխառություն. հմմտ. վրաց. խմա «ցանել, ընդունել», խմեվա «գործածել, ուտել, խմել» և այլն. սակայն քարթվելական բառերի իմաստը հեռու է հայկականներից։

79 Կապ ունի՞ արդյոք ḫuu̯app-ը հայ. խաբ-ի հետ, որ կապակցված համարում են սեմական աղբյուրից (Լեյն համեմատում է հին սլավ. хабити «ապականել, փչացնել» բառի հետ)։

80 Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 627—628) որոշ կասկածով, փոխառություն է համարում սեմական աղբյուրից (հմմտ. եբր. xarīšī «արևելյան հեղձուցիչ քամի (?)») և հայերենից փոխառյալ է համարում վրաց. խորշա. խորշակի. խվարշակի «հեղձուցիչ տաքություն»։

81 Ըստ Լարոշի և Գյուտերբոկի՝ «անմտածածությամբ վիրավորել, կոպտել» (=šalli- «մեծ» և kard- «սիրտ»)։ Գ. Ղափանցյանը շաղակրատ. շաղաշուրթն. շաղաշոյտ բառերի մեջ առանձնացնում է շաղ- «մեծ» բաղադրիչը (=խեթ. šalli-)։

82 Հայ. բառերը համեմատում են լիթվ. švelnùs «մեղմ, քնքուշ, փափուկ, կակուղ» բառերի հետ և վերականգնում հ.-ե. *k'u̯el- արմատը։ Սակայն հավանաբար ճիշտ է Շուլցենհայմը (BB. 37, էջ 221), որ շաղախել ձևի մեջ տեսնում է խեթ. -aḫḫ- բաղադրիչը։

խեթ. šeli- «հացահատիկի, ցորենի շեղջ (?)»—հայ. շեղջ (շիղջ), -ոյ «(հացահատիկի, ցորենի) կույտ, շեղջ»[83].

խեթ. šešd- (šišd-) «բարգավաճել, աճել, ավելանալ»—հայ. շեշտ «շեշտակիորեն, ուժգնորեն, խստորեն, ուղիղ կերպով».

խեթ. šippai- «կեղևը հանել, կճպել». šap-, šapijāi- «քերել (?). մաքրել (?). կեղևը հանել (?)», լուվ. šappa- «կեղևը հանել»— հայ. շփել, շաւշափել (*շափշափել).

խեթ. alšant- «կողոպտված, գերված, բռնված, բանտարկված», alš- «կողոպտել (?), գերել (?). բռնել(?), բանտարկել (?)»—հայ. աղշկորել (աղչկորել, աղջուկորել) «ավերել, բռնագրավել»[84].

խեթ. išḫa-, *լուվ.*, ųašḫa-, *հիեր. խեթ.* ųasha-s «տեր»—հայ. իշխան, իշխել[85].

խեթ. išḫaḫru- (ešḫaḫru-) «արտասուք, լաց», išḫaḫruųa— «լալ»— հայ. աշխար «ողբ, լաց. կոծ», աշխարել «ողբալ, կոծել».

խեթ. išpāi- «հագենալ, կշտանալ, կուշտ ուտել»—հայ. շփանամ (?):

4) *խեթ.* r, l, m, n—հայ. ր. լ. (ղ). մ. ն[86].

խեթ. laḫlaḫima- «շարժում, հուզմունք». laḫlaḫḫija- «հուզված լինել (?)»—հայ. բրբռ. լոլոալ «թույլ լինելով կամ խախտվելով շարժվել. շարժվել, տատանվել».

խեթ. lippai- «ճզմել (?). տրորել (?). փշրել (?)[87]—հայ. աղիփ «անկարություն, խախտություն, փտածություն».

խեթ. ^{SAL}alḫuitra-, ^{SAL}alḫuešra- *(տաճարի մի գործարար)*—հայ. աղախին[88].

---

[83] Ճիշտ չէ համեմատությունը շեղ բառի հետ (հմմտ. և շիղ, շեղ)։

[84] Ընդունելի է, թեև կասկածելի է աղշկորել-ը աղշ և կոր արմատների բաժանելը. ավելի հավանական է -որ-ը դիտել իբրև ածանց (հմմտ. խառնշտորել, տրորել և այլն)։

[85] Սակայն հնարավոր է հայ. բառերի իրանական ծագումը (հմմտ. հին պրսկ. xšāyaθiya- «թագավոր, իշխող»)։

[86] Քանի որ այս համապատասխանությունը գործում է նաև ծագումնային ընդհանրությունների դեպքում, ուստի ոչ ծագումնային ընդհանրությունների տարանջատման համար նկատի ենք ունենում հնչյունական այլ համապատասխանությունների առկայությունը կամ դիմում այդ բառերի ստուգաբանության վերաբերյալ լրացուցիչ տվյալների։

[87] Ստուգաբանությամբ տալիս է «քսել, ճարպ քսել, օծել, ծեփել» իմաստը և բխեցնում հ.-ե. leip- «ճարպ քսել, կպչել» արմատից։

[88] Այս բառը կապված չէ՞ արդյոք աղխ «փականք, օղակ, ունեցվածք, բազմություն» բառի հետ։

խեթ. annaneka- *«քույր (?), պառնիկ (?)»—հայ.* անդաի *«քույր».*
լուվ. niu̯alli *«անմեղ»—հայ.* նուաղ.

5) խեթ. u̯—*հայ.* վ (*խեթ.* u̯a, u̯e>u—*հայ.* ու, ո)[89].

խեթ. ur-, u̯ar- *«այրել, վառել»—հայ.* ուռան *«աշտանակ, վառարան, հրացան»*[90].

խեթ. u̯aggariia- *«խարխլել, բաժանել, արոհել. բաժանվել, ընդվզել, ապստամբել»,* u̯aggariiau̯ar *«հուզում, խռովություն»—հայ.* ոգորիմ[91].

խեթ. u̯ar- *«այրել, վառել»—հայ.* վառ, վառեմ.

խեթ. u̯atar, *սեռ.* u̯itenas (u̯etenaš), *լուվ.* u̯id- *«ջուր»—հայ.* ուրդ *«պարտեզները ջրելու փոքրիկ առու»*[92]։

§ 16. *Հայ-խեթա-լուվական ընդհանրությունների երկրորդ խումբը կազմում են այն բառերը, որոնց հատուկ են հետևյալ կարգի հնչյունական համապատասխանությունները.*

1) խեթ. p, t, k—*հայ.* պ, տ, կ (*ձայնորդներից հետո նաև* բ, դ, գ).

խեթ. paknu- *«զրպարտել (??), պարսավել (??)»*[93]—*հայ.* պակ. պակնում. պախ *և* վախ (?).

խեթ. parkueš- (parkuiš-, parkuš-) *«մաքրվել, անմեղ լինել» (ներկայի 3-րդ դ.* parkueszi, *հոգն. 2-րդ. դ.* pankuešteni, *անց. 3-րդ դ.* parkuišta)—պարկեշտ,-ի, -ից *«համեստ, ողջախոհ, մաքուր, անարատ».*

խեթ. pattar- *«զամբյուղ (?)»* (*pet- *«ձեռքերը տարածել»)* —*հայ.* պատ, պատին, պատեան, պատատ *«կապոց, բեռ»,* պատատիմ *«զբաղվել, պարապել. խափանվել, արգելակվել»,* պատաղին *«բաղեղ»*[94] *(հմմտ. և* փաթ, փաթեթ, փաթաթեմ).

խեթ. puri- *«շուրթ»—հայ.* պռունկ, պռոշ.

---

[89] *Այս համապատասխանությունը կասկածելի է, որովհետև* u̯>գ *անցումը հայերենում հավանաբար տեղի է ունեցել բավականին ուշ (հմմտ. ուրարտ.* U̯elikuni *կամ* U̯elikuhi *և հայ.* Գեղարքունի)։

[90] *Ըստ Գ. Ղափանցյանի։*

[91] *Ըստ Գ. Ղափանցյանի։*

[92] *Ըստ. Ղափանցյանի, որ ենթադրում է* u̯e> ու *անցումը (հմմտ.* վերջ>ուրջ)։

[93] *Ըստ Մոուրավյանի՝ «փառաբանել (?), գովել (?)»։*

[94] *Գ. Ղափանցյանը համեմատում է* patallii̯a- *«ներքևից (ոտքերը) շղթայել (?)» բառի հետ, որը սակայն, ծագում է* pata- *«ոտք» բառից։*

լիդ. tam- «կառուցել (??)»—հայ. տամալի.

խեթ. tekan, սեռ. dagnaš «գետին, երկիր, հող»—հայ. յատակ[95].

խեթ. tita(n?)- [UZUtida(n?)-], լուվ. titani- «ծիծ. ըստինք», titai- «ծծել»[96]—հայ. տիտ «ծիծ, ստինք» (հմմտ. և ծիծ, այլև թերևս ծուծ. ծծել)[97], տիտան «դայակ»[98].

խեթ. türija- «լծել»[99]—հայ. տուռն «չվան. կապանք», տուռնիլ «չվանով կապվել».

խեթ. kapina- (gapina) «թել»—հայ. կապ.

խեթ. kiš- «լինել, դառնալ, պատահել. արվել»[100]—հայ. ս-կիս- (<*զ-կիս-), սկսանիմ. սկիզբն[101].

խեթ. kurur «թշնամություն. կռիվ»—հայ. կռիւ.

խեթ. kuššan- «ռոճիկ, աշխատավարձ, վարձատրություն. գին»—հայ. կոշնել «ձոնել, ընծայել» (ըստ Երեմիայի բառարանի), այլև թերևս կոշիկ «վարձ, վարձատրություն» (եթե վերջինս կոշիկ «ոտնաման» բառից չէ, ինչպես կարծում է Հ. Աճառյանը)[102], ըստ Գ. Ղափանցյանի՝ նաև ան-գոսնել (գրված նաև անկոսնել, անկուսնել, անկուշնել, անգուշնել, անկոշնել) «արհամարհել, անարգել».

---

[95] Ըստ Հ. Աճառյանի («Նորք», 1925, № 5—6, էջ 393), Գ. Ղափանցյանը համեմատում է տակ բառի հետ, որ, սակայն, փոխառություն է պահլավերենից։

[96] Խեթ. և լուվ. բառերը մանկական են (Lallwort). ինչպես և համապատասխան հայերենները։ Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 819) վերջինները փոխառյալ է համարում կովկասյան (քարթվելական) լեզուներից. թեև նշում է նաև հ.-ե. զուգահեռներ, որոնք պատկանում են tata, teta, tuta և այլն նախաձևերին։

[97] Հայ. ծիծ բառի համար հմմտ. նաև հ.-ե. g'eid- «ծծել» արմատը։

[98] Այս բառի ծագումը համարվում է անհայտ, թեև Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 6, էջ 912) որոշ կասկածով համարում է հուն. τιτθίον «ծիծ», τίτθη «դայակ» բառերից կազմված։

[99] Ֆ. Զոմերը (Die Sprache der Hethiter, 1, էջ 162) համեմատում է հին հնդկ. dhur- «լծասարք», dhurya- «զրաստ» բառերի հետ։

[100] Ոմանք համեմատում են լատ. gero, gestum «տանել. կատարել» բայի հետ՝ վերականգնելով հ.-ե. *ges- արմատ։

[101] Ըստ Գ. Ղափանցյանի՝ համեմատությունը հնարավոր է, եթե սկ-ը կապ չունի հ.-ե. -sk- բաղադրանքի հետ [հմմտ. լատ. սկսողական (inchoativa) բայերը]՝ որևէ լեզվի միջնորդությամբ։

[102] Հմմտ. և կաշառք։

խեթ. kušduṷai- *«նախատել»—հայ.* կշտամբել[103].

խեթ. ark- *«ճղել, ճեղքել. բաժանել»—հայ.* արգատ *«որթատունկի մատ, էտված ճյուղ»։*

2) խեթ. ḫ—*հայ.* հ.

խեթ. ḫalāi- *«շարժել»—հայ.* հալածեմ.

խեթ. ḫan- *«դատարկել, պարպել, ջուր հանել»—հայ.* հանեմ.

խեթ. GIŠ ḫanza(n)- *(մի տեսակ կարասի, աման)—հայ.* հըն-ձան *«խաղողի հնձան»*.

խեթ. ḫapati- *«հնազանդ, հպատակ. ծառա»—հայ.* հպատակ (?)[104].

խեթ. ḫattāi- *«ծակել, կտրել, հատել»—հայ.* հատանեմ.

խեթ. ḫink (ḫenk-) *«հասցնել, մեկնել, մատուցել. բաժին հանել»—հայ.* հանգ, հանգչիմ, հանգիստ.

խեթ. hinganiiaṷar *«հաճույք, ուրախություն»—հայ.* հենգ(ն) *«ծայր. հենուկ, հակառակություն»*[105].

խեթ. hušk- *«սպասել»—հայ.* հսկեմ *(և* սկեմ, *տե՛ս* ušk-*)։*

3) խեթ. š—*հայ.* ս.

խեթ. šagai- *«նախանշան», կանխանշան»,* šakiia- *«հայտնել, հայտարարել»*[106]*—հայ.* սակ *«պայման, սահմանված չափ, կշար, կարգ, դաշն, օրենք»*[107].

---

103 *Գ. Ղափանցյանը խեթ. բայի հետ է համեմատում* գժղմիլ *«նեղանալ, բարկանալ, դայրանալ» բայը՝ հենվելով խեթ. բայի համար նախկինում ենթադրվող «չարություն անել» իմաստի վրա։*

104 *Հայ. բառը համարում են փոխառյալ պահլ.* *hu-pātak *«լավ պաշտպանված» բառից, իսկ խեթ. բառը՝ արեմտասեմ. ձեւից (համեմ. նախասեմ.* ʿabadim *«ստրուկները». տե՛ս* H. Kronasser, Vergl. Laut- und Formenlehre des Heth., *էջ 23)։ Կասկածելի է համարվում խեթ. բառի համեմատությունը հուն.* ὀπαδός (ὀπηδός) *«ուղեկից» բառի հետ (նույնպես սեմական աղբյուրի՞ց), թե՞ ծագում է հ.-ե.* seku- *«հետևել» արմատից)։*

105 *Ըստ Գ. Ղափանցյանի՝ ի՞նչ հարաբերություն ունի* հենուկ *և* հաճ *արմատների հետ. վերջինս ոմանք բխեցնում են հ.-ե.* sādṷo-*ից, ուրիշները՝ իրանական աղբյուրից։ Համեմ. և* խնջույք. խնծիղ, *որ կապում են* խինդ *արմատի հետ։*

106 *Սրա հետ կապ չունի՞ արդյոք* šaklai- *«սովորույթ. եղանակ. ծես» բառը, որ բխեցնում են հ.-ե.* sak- *«սրբագործել. դաշն կապել» արմատից։ Ոմանք* šagai-*ը կապում են խեթ.* šakui- *«աչք» բառի հետ. տե՛ս* H. Kronasser, Vergl. Laut- und Formenlehre des Heth., *էջ 67։*

107 *Ըստ Գ. Ղափանցյանի։*

խեթ. ušk «*տեսնել*»—*հայ.* սկեմ (*այլև* հսկեմ, *տես* ḫušk-).

խեթ. išḫarišḫ- «*հիվանդանալ իշխարա աստվածային հիվանդությամբ*»—*հայ.* սխրիմ «*ներհարել, տկարանալ*»։

խեթ. iškallāi- «*պատռել, ճեղքել, հերձել. պոկել* (?). *շուրթել* (?)» (*հ.-ե.* skel-)—*հայ.* սկալիմ «*չորանալուց կավի պես ճաքճքել*»։

խեթ. ṷaš(š)- [ṷeš(š)-], ṷaššiia-, *լուվ.* ṷaš(š)- «*հագցնել*»—*հայ.* ուստիկ «*մի տեսակ հագուստ* (?)»[108]։

§ *17. Կան մի շարք ընդհանրություններ, որոնց դեպքում տալիս են վերևում հիշվածներից տարբեր համապատասխանություններ.*

1) խեթ. p, t, k—*հայ.* բ, դ, գ.

խեթ. pargaṷeš- «*բարձրանալ*»—*հայ.* բարգաւաճ[109].

խեթ. palluri(ia?) (*մի աման*)—*հայ.* բղուղ[110].

խեթ. takš-, takkeš,- taggaš- «*միացնել, շաղկապել. ձեռնարկել. ամրացնել. կառուցել* (?)», «*կապ, շաղկապ. միջանք*», takšul- «*բարեկամական, բարեկամ. բարեկամություն. խաղաղություն-բարեկամության պայմանագիր, դաշինք*».—*հայ.* դաշն.

լուվ. tup(a)i- [dup(a)i-], *հիեր. խեթ.* tupi-, *լիկ.* tub(e)i- «*խփել*» (*հ.-ե.* deph-)—*հայ.* դոփեմ.

խեթ. kurk(a?)- «*ծածկոց* (??)»—*հայ.* գորգ։

2) խեթ. k—*հայ.* խ *և խեթ.* ḫ—*հայ.* կ[111].

խեթ. ^{LÚ}kaena (^{LÚ}gaena) «*խնամի, ազգական*»—*հայ.* խընամի (?)[112].

---

108 *Հայտնաբերվե՞ց (համեմ. -ակ, որ խեթերենում չկա. բնիկ են հայ.* զգեստ, *բրբռ.* գեստ *բառերը)։*

109 *Ըստ Գ. Ղափանցյանի՝ համեմատությունը ամենայն հավանականությամբ ճիշտ չէ. հայ. բառը թերևս ծագում է իրան. աղբյուրից. համեմ. ավեստ.* brǯw- «*բարձրություն*» (*Հ. Աճառյան, Հայ. արմ. բառ., I, էջ 1003*)։

110 *Ըստ Գ. Ղափանցյանի՝ Ստուգաբանությունը ակնհայտորեն ճիշտ չէ.* բղուղ-*ը ամենայն հավանականությամբ* բղուկ-*ի տարբերակն է, որ ծագում է թուրք.* bāluk-*ից (կա և* balx)։

111 *Այս համապատասխանությունները ենթադրել են տալիս խեթ. (հայատիպ՞) լրացուցիչ* k>kh>ḫ *անցում կամ հնարավոր* kh-*ով ձևի առկայություն։*

112 *Հայ. բառը ծագում է* խնամ-*ից*։

խեթ. E'karimni- (E'karimn-) «տաճար»—հայ. խորան «վրան, տաղավար. խորան»[113].

խեթ. kupaḫ(ḫ)i- (մի տեսակ գլխարկ)—հայ. խուփն (և կափարիչ).

խեթ. kušduṷai- «նախատել. զրպարտել»—հայ. խշարել «արհամարհել» (հմմտ. և կշտամբել).

խեթ. ḫatrāi- «գրել. հաղորդել»—հայ. կարդալ (?):

3) խեթ. t—հայ. ծ.

խեթ. tuḫḫuṷāi- «ծուխ», այլև tuḫḫāi- «հևալ», tuḫḫiiatt- «հևոց, շնչարգելություն, խեղդվելը», tuḫḫima- (հ.-ե. dhū-mo-> հուն. θυμός, լատ. fumus)—հայ. ծուխ,- ոյ, այլև թերևս բուխ, բխել[114]:

4) խեթ. ṷ—հայ. բ.

խեթ. ṷalḫ- «խփել»[115]—հայ. բաղխել[116]:

§ 18. Մի քանի խոսք հայ-խեթա-լուվական կասկածելի, պատահական կամ երկուստեք այլ լեզուներից փոխ առնված զուգադիպումների մասին.

1) Կան բառեր, որոնք ընդհանուր են խեթա-լուվական լեզուների, հայերենի ու կովկասյան (հատկապես քարթվելական) մի շարք լեզուների համար և որոնց բուն աղբյուրի հարցը մնում է կասկածելի[117].

---

113 Ղափանցյանը համեմատում է խեթ. ḫarnau- «ծննդյան աթոռ» բառի հետ:

114 Վերջին արմատը ըստ Տ. Շուլցհայսի: Սակայն Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 2, էջ 1299) բուխ և բխել ձևերի նախնական իմաստն է համարում «խփել, զարնել»:

115 Բխեցնում են հ.-ե. ṷel- «պոկել, կորզել, չորթել. վիրավորել» արմատից: Ըստ ոմանց՝ այստեղից է նաև ḫallai-, ḫallija- «հաղթել» բայը, որ ըստ այլոց հ.-ե. ol- «ոչնչացնել» արմատից է:

116 Սակայն հին ձևը համարվում է բախ-ը. հմմտ. Հ. Աճառյան, Հայ. արմ. բառ., 1, էջ 902: Հիշյալ համեմատությունը ճիշտ է բաղխ ձևի հնությունը հաստատելու դեպքում:

117 Խեթա-լուվական և կովկասյան լեզուների հնագույն փոխհարաբերությունների մասին են խոսում մի շարք ընդհանրություններ, որոնք մասամբ արտացոլված են մեր „Взаимоотношение индоевропейских, хуррито-урартских и кавказских языков" գրքում (1967): Բերենք այստեղ մի քանի զուգահեռներ. խեթ aku- «սրածայր քար, ժայռ, խութ» (հ.-ե. ak'u-)—վրաց.-զան. kwa- (վրաց. kwa-, մեգր. kua, ճան. kwa-) «քար». լուվ. taui- «աչք. նայել»—քարթվ. twal- «աչք». հիեր. խեթ. ṷaṷa-s «եզ»—քարթվ. wac₁-

խեթ. ant- «տաք»—հայ. անթեղ «տաք մոխիր, մոխրացած կրակ»[118].

խեթ. peš- «տրորել, շփել, քսել», paššila- «խիճ (?) կայծքար», լուվ. pašiḫa(i)- «տրորել. մանրել, փշրել» (>խեթ. pašiḫāi-)—հայ. փոշի, փշուր. փսոր[119].

խեթ. zahḫḫija- «կռվել», zaḫrāi-, zaḫḫurāi- «ջախջախել, փշրել, մանրել»—հայ. ջախել, ջախջախել[120]։

2) Կան բառեր, որոնք երկու լեզուներում էլ պետք է դիտել որպես փոխառություններ հնդիրանական աղբյուրներից.

խեթ. լուվ. tapašša- «ջերմություն, տաքություն» (<հին հնդկ. tapas-)—հայ. տապաստ (բրբռ. տապաս) «մի տեսակ ցավ, բորբոքում»[121]։

3) Կան մի շարք համեմատություններ, որոնք կասկած են հարուցում, քանի որ խեթ. և հայ. բառերի ծագման վերաբերյալ եղած տվյալները տարամիտվում են.

«խոչ, պոռ. ածու» և այլն. Համեմ. նաև խեթ. kašt- (թոխ. kaṣt) «քաղց»—գաղտ.՝ ռուս. кашш, լեհ. кaш, թարգմ., ալբան. ram, ռումբ. rem «քաղց» և այլն։

118 Ըստ Գ. Ղափանցյանի, որ այստեղ է միացնում նաև վրաց. anteba «կրակ վառել, բորբոքել» նաև հուն. ἄνθραξ «ածուխ» բառերը։ Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 1, էջ 326) հայ. բառը փոխառություն է համարում կովկասյան աղբյուրից, իսկ հուն. բառի հետ ունեցած նմանությունը դիտում է որպես պատահական։

119 Համեմ. նաև վրաց. փշերի «փոշի», փշրնա «ծեծել, մանրել», արաբ փշախա «ավազ» և այլն։ Վ. Գիգանովին հայ. փոշի բառը համեմատում է խեթ. parš- «փշրել» արմատի հետ և բխեցնում հ.-ե. phorsilo- նախաձևից. փշուր բառը շատ մոտ է հնչում խեթ. paršūr- «բրդոշ (?), կերակուր՝ մանր կտորներից(?), ապուր», paršulli-, paršial-, լուվ. paršul- «բեկոր, փշուր» բառերին, որոնք կարող են նրա աղբյուրը լինել։ Զուգահեռ փուխր բառը ևս զուգահեռներ ունի կովկասյան լեզուներում և ուրարտերենում (iphu- «ջարդել»)։ Համեմ. և խեթ. pūųāi-, լուվ. puųa- [որից -šš- ածանցով puššāi- (puuaššiia-) տեսակն բայը] «տրորել, մանրել, փշրել», որ թերևս ծագում է հ.-ե. pēu- «ծեծել, կտրել» արմատից։

120 Բառը զուգահեռներ ունի կովկասյան լեզուներում (քարթվելական լեզուներում, ուտիերենում). վրաց ջախ-երա «բաշխել, ցրվել», ճան. ջախ «մուրճով ցրվել», ուտիերեն ճախ-փեսուն «ծեծել, փշրել, կոտրել», ցախ-փեսուն «բամել ճմլել, ճզմել»։

121 Հայ. բառի ծագումը Հ. Աճառյանի Հայ. արմ. բառարանում համարվում է անհայտ։ Ավելորդ չէ նշել, որ անհնար է իրանական փոխառություն է լիկ. espe-di «տպրումով. հեծելազորով» բառը (Վ. Գեորգիևը համարում է բնիկ հնդեվրոպական)։

լիդ. bili- «նրա» (bi- «նա» դերանվան սեռականը՝ հին անատոլիական զուգահեռներով)—հայ. բեղուն «համակիր, սիրող»[122].

լիդ. isko «ողջ, բոլոր»—հայ. իսկ (?)[123].

լիդ. ist «մեջ (?)»—հայ. ըստ (?)[124].

խեթ. ḫarra- «տրորել, փշրել, մանրել» (ըստ Յոհրիխի. Գյոցեն տալիս է «կեղտոտել. ճնշել-ցրել» իմաստը), ḫarrant «մի կողմ հրած, վտարված, խաթարված. փչացած, վատ»—հայ. հրեմ[125].

խեթ. ḫark- (ḫarganu) «կործանվել, խորտակվել. փչանալ»- (ḫarganu) «կործանել, ոչնչացնել»—հայ. հարկանեմ[126].

խեթ. ḫarš- «պատռել, հերձել. հերկել»—հայ. հերձել, հերկել[127].

խեթ. ḫašša-, լուվ. ḫaššanitti- «կրակարան, օջախ»—հայ. խաշել[128].

խեթ. URUDUkuruzzi (կտրելու գործիք) (ծագում է kuer-, kur- «կտրել» բայից)—հայ. քորոց (ծագում է քորել բայից).

հիեր. խեթ. latar-, lar- «ընդարձակել»—հայ. լայն[129].

խեթ. šeḫur «մեզ» (հ.-ե. seikʷ—հայ. շեռ[130],

4) Չնչին թիվ են կազմում հայերենում զուգահեռներ ունեցող խեթական այն բառերը, որոնք բնագրային տեքստերում որպես

---

122 Այդ ձևը է Պ. Կրեչմերը (IF, 45, 1927, էջ 268 և հջ.), որ հուն. φίλος-ը («1. սիրելի. համակրելի. 2. բարեկամ») համեմատում է այս բառի հետ (հին իմաստը՝ «նրա»)։ Հուն. բառը այժմ համեցնում են հին անատոլիականին մերձավոր նախահունական ենթաշերտին. հմմտ. R. Gusmani, Lyd. Wörterbuch. 1961. էջ 81։

123 Այդ իսկ-ը կապված չէ որևէ կերպ ռուս. истый բառի հետ։

124 Ըստ Մերիջիի, ամկայն ըստ-ը բխեցվում է հ.-ե. posti-ից, որի ճշտության գնահատում Մերիջիի ստուգաբանությունը դրվում է հիմքից։

125 Ամկայն հայ. բայը հեղինակը, ՊԲՀ, 1965, № 1, էջ 258, համեցնում է հ.-ե. per-ին, որտեղից և հայ. հարեմ, հարկանեմ։

126 Ամկայն հայ. բայը հարեմ ձևի հետ միասին համեցնում են հ.-ե. per- «խփել, հարվածել» արմատին։

127 Ամկայն հայ. բայերը համանաբար գալիս են հ.-ե. perk'-ից («հերձել, ճեղքել, ակոս»)՝ մի այլ հ.-ե. լեզվի միջնորդությամբ։

128 Ամկայն այս բառը խարշեմ ձևի միջոցով բխեցնում են հ.-ե. kh̥rs-ից (*ker- «այրել, տաքացնել»)։

129 Հայ. բառը բխեցնում են plətn- նախաձևից. եթե հիեր. խեթ. բառը կապ ունի սրա հետ, ապա ծագում է հայերենին մերձավոր որևէ լեզվի plə-taro- նախաձևից։

130 Ստուգաբանությունը կասկածելի է. հայ. շ-ն թերևս ծագում է skh-ից. հմմտ. և գեռ (*գեռն) <sk'er-no-։

փոխառյալ բառեր առանձնացված են հատուկ նշանով (երկու թեք բևեռանիշով)։ Դրանք առնված են գլխավորապես լուվիերենից, բայց կարող են լինել նաև հայասերենից, որ մեզ համար հատկապես կարևոր է։ Գ. Ղափանցյանը իր «Հայոց լեզվի պատմության» մեջ (Երևան, 1956, էջ 154—160) բերում է այդ բառերի ցանկը՝ ըստ Է. Ստուրտևանտի բառարանի[131]։ Անցած ժամանակաշրջանում այդ բառերի մի մասը արդեն անվերապահորեն հաստատված է որպես լուվիերեն, բերված են այդ կարգի բառերի նոր ցանկեր[132], ճշտված են շատ իմաստներ։

Ստորև մենք կտանք այդ բառերից միայն նրանք, որոնց լուվական ծագումը չի հաստատված և որոնք զուգահեռներ ունեն հայերենում։ Պետք է կարծել, որ դրանց զգալի մասը հայասական ծագում ունի. կան թերևս նաև կովկասյան ծագում ունեցող բառեր։ Շատ հավանական է, որ հայերեն, կովկասյան և խեթերեն բառերի աղբյուրը լինի հայասերենը, մանավանդ երբ հնարավոր է նշել այդ բառերի հնդեվրոպական աղբյուրը[133]։ Խեթական և լուվական զուգահեռների ցանկում հիմնական ծանոթությունները տվել ենք այդ լեզուների և հայերենի զուգահեռների քննության կապակցությամբ։

խեթ. akkuša «զարդանախշեր, ծաղկեներ»—հայ. ական[134],
ḫattalla- «ածուխ»—հայ. անթեղ[135].

---

[131] E. Sturtevant, Hittite Glossary, Philadelphia, 1936. Supplement to a Hittite Glossary, Philadelphia, 1939.

[132] Հմմտ. հատկապես H. Güterbock, „Orientalia", № 5, 1953, էջ 120—134։ Այս ցանկն արտատպված է Յ. Ֆրիդրիխի բառարանի I հավելվածում, էջ 10—11։ Բուն ցանկը տրված է նույն բառարանի հիմնական հատվածում, էջ 330—334։

[133] Ըստ հեղինակի վարկածի՝ հայասերենը հնդեվրոպական լեզու է՝ մոտ հին անատոլիական հնդեվրոպական լեզուներին. Հմմտ. Г. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964. Ըստ Գ. Ղափանցյանի՝ հայասերենը «ազիանիկ» լեզու է՝ խուռի-ուրարտական շատ զուգահեռներով։

[134] Եթե համեմատելի է հայ. ական, ակն բառերի հետ, ապա, թերևս բառն ունի հայաս. ծագում և գալիս է հ.-ե. okᵘ-, okᵘ(e)s- «աչք» հիմքերից։ -ša-ն համարվում է լուվ. չեզոք սեռի հոգնակի վերջավորություն, որ հնարավոր է և հայասերենի համար։

[135] Հմմտ. խեթ. ant- «տաքը», այլև վրաց. anteba «կրակ վառել, բորբոքել», հուն. ἄνθραξ «ածուխ»։ Տե՛ս ծան. 55։

putalliti «քշտում է, բարձրացնում է [ծխնոցները (?)], պատրաստում է արագ քայլի»—հայ. փոյթ, փութամ[136].

titaimmiš «ծծած, ծծկեր» [համեմ. լուվ. tita(n?)-, UZU tida(n?-), լուվ. titani- «ծիծ, ստինք», titai «ծծել», լիկ. tideimi «զավակ < ծծկեր»]— հայ. տիտ, այլև թերևս ծիծ, ծծել, տիտան «զավակ»[137].

uarku- [շարամանությամբ՝ «բարկություն(?)», «կեղտ(?)»]—հայ. վարկ- (վարկապարտել «զրկել», վարկ-պարագի «վայրիվերո, անփութորեն, աննշան, չնչին, նախն, հասարակ, անզարդ, պարզ» բառերում)[138].

zammurāi- «վիրավորել»[139]—հայ. զմ(ր)րիմ «թմրել, ընդարմանալ, հարբեցողությունից հիմարանալ, խայտառակվել և պապանձվել, ձիուց հարված ստանալ, գլխապտույտ ունենալ»:

§ 19. Մասնանշենք որոշ ցուցահեն հատուկ անուններ՝ դրանց մանրամասն ուսումնասիրությունը թողնելով ապագային.

հիեր. խեթ. Amatuuana (ցեղանուն)—հայ. Ամատունի.

խեթ. arma-, լուվ. arma-, հիեր. խեթ. Arma, լիկ. Arm-, Erm- «լուսին. ամիս. լուսնաստված»—հայ. Հարմա.

ուր. Armāv- (անձնանուն՝ հին անուն. Arma- «լուսին. լուսնաստված» անունից)—հայ. Արմավիր.

հիեր. խեթ. A'-s-ti-ua-su-s (անձնանուն), A-s(?)-ti (թե -hi?), Astuuatimaīs (իշխանի անուն՝ «այն թող լինի անունը»)—հայ. աստուած[140].

---

136 Բխեցնում են հ.-ե. (s)p(h)eu-d- «ճնշել, սեղմել, շտապեցնել, շտապել, փութալ» արմատից, որ ճիշտ է, եթե d-ն անհետ է. Հնարավոր է գնալ որպես փոխառություն հայերենից:

137 Անհնար չէ, որ տիտ և տիտան բառերը փոխառված լինեն հայերենից, թեև որպես մանկական բառեր դրանք զուգահեռներ ունեն հ.-ե. և ոչ հ.-ե. լեզուներում: Այս ստուգաբանությունը որոշ կասկած է հարուցում երկու առումով. ա) titaimis բառը ավելի մոտ է հնչում լիկ. tideimi-ին, որ ոմանք բխեցնում են *dhideimi-(i̯o-) նախաձևից (համեմ. հայ. դիեմ, դայեակ). բ) այն թերևս գալիս է սկզբնաղբյուրներից, և այդ դեպքում կարող չունենք խեթա-լուվ. ու հայերեն բառերի հետ:

138 Համեմ. և վարկ «համարում, կարծիք, որոշում, վճիռ»:

139 Է. Լարոշի և Յ. Ֆրիդրիխի կողմից արդեն դիտվում է որպես խեթերեն բառ:

140 Սովորաբար այս բառին վերագրում են փռյուգիական ծագում (համեմ. Σαβάζιος և այլն): Ավելի հավան է լիդ. aśtrko- (aśturko-) «հովանավոր(?)» (ըստ Չեխերի՝ «աստվածային») բառը:

հիեր. խեթ. ḫamasa-s «թոռ»—հայ. Ամասիա[141].

խեթ. Muršili-š—հայ. Մուշեղ.

խեթ. Tarḫuna-, լուվ. Tarḫund-, հիեր. խեթ. Tarḫu(n)t-, լիկ. Trqqñt- (որոտի աստված)—հայ. Տորք[142].

լուվ. šantaš (որոտի աստված) (համմա. նաև šānt- «բարկացած, զայրացած»?)—հայ. շանթ (շանդ), -ի,-ից[143]։

---

[141] Նվազ հավանական է բառի համեմատությունը. լուվ. maššani/a «աստված» բառի հետ։

[142] Տորք Անգեղեայ (ըստ Մ. Աբեղյանի՝ ճիշտ ձևն է Տուրք)։ Անգեղեայ մականվան «անգեղ», «տգեղ» ստուգաբանությունը ժողովրդական է։ Որանից սերված է համարվում Անգեղտան նախաքրիստոնեական տոհմը։ Ն. Ադոնցը („Revue des études arméniennes", 7) նույնացնում է փռյուգիական հիշյալ աստծու հետ, իսկ անգեղ համարում է անգղ բառից, որովհետև այդ աստվածությունը ներկայացվում է անգղի ձևով (համմա. հուն. τύργος «անգղ», ասոր. atarku «անգղ»)։ Հմմտ. հայաս. Ingalaua քաղաքանունը։

[143] Պետերսոնը բխեցնում է *k'ṷnti- նախաձևից, որ գալիս է հ.-ե. k'eu- «լուսավորել» արմատից։ Ստուգաբանությունը քիչ հավանական է։ Հմմտ. նաև խանդ. խանձ, որ թերևս գալիս են հ.-ե. kand- «լուսավորել, վառվել» արմատից՝ մի այլ լեզվի միջնորդությամբ (*khand-?)։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 1. Հայերենի և Բալկանյան թերակղզու ու Փոքր Ասիայի հնդեվրոպական հին լեզուների հնչյունա-քերականական կարևոր առանձնահատկությունների փոխհարաբերությունը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

Հայերենի հնչյունական և քերականական հիմնական առանձնահատկությունները	Իլլիրերեն	Հին մակեդոներեն	Թրակերեն	Պելասգերեն	Փռյուգերեն	Խեթերեն
Բաղաձայնների տեղաշարժ	—[1]	—	+	+	+	+[2]
Սատեմայնություն	+[3]	—	+	+	—(+)[4]	—
*s>h-	—	+	—	—	—	—
-m>-n	+	+	+	+	+	—
Վանկարար ձայնորդների a ձայնավորում	—	+	—	—	+	+
*ŏ>o	+	—	—	—	+	—
o-ի փակություն (հատկապես անցումով u-ի)	+(?)	+	+	—	+	—
*eu>oi	—	—	—	—	—(+)[4]	—
Սկզբնային կոկորդայինների պահպանում	—	—	—	—	—	+
Նախադիր ձայնավորի առկայություն	—	+	—	—	—	+
-l-ով բայական վերջավորությունների առկայություն	?	?	?	?	+	+
Բայական նախահավելվածի առկայություն	?	+(?)	?	?	+	—

[1] Իլլիրերենի ձայնեղ և խուլ բաղաձայնների գրության մեջ նկատվող տատանումների պատճառների մասին տե՛ս էջ 9—10։

[2] Խեթերենում բաղաձայնների տեղաշարժի հնարավորության մասին տե՛ս էջ 132—133։

[3] Իլլիրերենի սատեմայնության մասին տե՛ս էջ 8—10։

[4] Փակագծերով նշված է նախափռյուգերենը։

Աղյուսակը ցույց է տալիս, որ հայերենին ամենից ավելի մոտ է նախափռյուգերենը, եթե նրան հատուկ էին բուն փռյուգերենի մյուս կարևոր առանձնահատկությունները։ Ըստ մերձավորության աստիճանի նրան հաջորդում են փռյուգերենը և հին մակեդոներենը։ Ավելի քիչ մերձավոր են խեթերենը, թրակերենը և պելասգերենը։ Ամենից ավելի հեռու է կանգնած իլիրերենը։

